

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 (26)

2 0 2 3

Գյումրի 2023

«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն հիմնադրվել է 1998թ.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտխորհրդի որոշմամբ:
Ընդգրկված է ՀՀ ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի կողմից ընդունված պարբերականների ցանկում:

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԵՐԳՈ՝ (գլխավոր խմբագիր) բան. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՄԿՈՊՈՎ ԱՐԿԱՂԻ՝ (գլխ. խմբագրի տեղակալ), պատմ. գիտ. թեկն., ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ԲԱԶԵՑԱՆ ԿԱՐԻՆԵ՝ (պատ. քարտուղար) պատմ. գիտ. թեկն., ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ

ԲԱՂԱՅԱՆ ՍԵՐԳԵՑ՝ բան. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՀԱԻ, Երևան, ՀՀ
ԲԱՒՅԱՆ ԿԱՐԵՆ՝ ճարտ. թեկնածու, պրոֆեսոր, IAAM թղթակից անդամ Մոսկվա, ՌԴ
ԳՐԻԳՈՐՅԱՆ /Հայկազուն/ ԱՇՈՏ՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր, ՃԱԹԻ, Երևան, ՀՀ
ԴԵՎԵՆԴԵՐ ԿՈՒՄԱՐ՝ բան. գիտ. դոկտոր PhD, ԲՀՀ, Կուրուկչետրա, Հնդկաստան
ԽԱՉՍՏՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՎՊՀ, Վանաձոր, ՀՀ
ԽԱՉՍՏՅԱՆ ԼԱԼԻԿ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ, Երևան, ՀՀ
ԽԵՄՉՅԱՆ ԷՍԹԵՐ՝ բան. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՀԱԻ, Երևան, ՀՀ
ԽՈՍՐՈՇՎԱՆ ԱՆԱՀԻՏ՝ պատմ. գիտ. թեկնածու, Նորթ Փարք համալսարան, Չիկագո, ԱՄՆ
ԿԱՆԿՈՐ ՌՈՒՍԼԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՄՊՀ, Մայկոպ, ՌԴ
ԿԱՎՐԵԼԻՇՎԻԼԻ ՌՈՒՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, ՍՁՊՀ, Ախալցխա, Վրաստան
ԿՐՑՈՒՉԿՈՎ ԻԳՈՐ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀԿԴՀ, Ստավրոպոլ, ՌԴ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՄՍԻԿ՝ արվ. թեկնածու, դոցենտ ԵՊԿ ԳՄ, Գյումրի, ՀՀ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ ԵՊՀ, Գյումրի, ՀՀ
ՀՈՒՍԿՈ ՖԱԹԻՍԵՑ՝ բան. գիտ., թեկնածու, ՄՊՏՀ, Վորոնեժ, ՌԴ
ՂԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ՝ աստվածաբանության դոկտոր, ԱՊՀ, Աթենք, Հունաստան
ՄԱՀԵ ԺԱՆ - ՊԻԵՐ՝ հայագետ, ԱԳԱ անդամ, Փարիզ, Ֆրանսիա
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԱՔՄ՝ արվ. թեկնածու, դոցենտ ԵԳԱ ԳՄ, Գյումրի, ՀՀ
ՄԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՄԵՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՊԻ, Երևան, ՀՀ
ՄԿՈՅԱՆ ԱՐՏԱՇԵՄ՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ, Գյումրի, ՀՀ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԳՐԻՄ՝ պատմ. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՌՈՒՆԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ՝ արվ. դոկտոր, ԳԱԱ ԱԻ, Երևան, ՀՀ
ՍԱՂԱՎՄԿԻ ՄԻՒՍԱԼ՝ պատմ. գիտ. դոկտոր PhD, ՎՀ, Վարշավա, Լեհաստան
ՍԱՀԱԿՅԱՆ ԿԱՐԻՆԵ՝ հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՑԱԿԱՆՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ԱԻ, Երևան, ՀՀ
ՕՐԴՈՒՄԱՆՅԱՆ ԷՄԻԼ՝ քաղ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՓՄԻԻ, Երևան, ՀՀ

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ». N 1 (26) /
Հայագիտություն և հասարակական գիտություններ // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի հոդվածների
ժողովածու Խմբ. խորհուրդ՝ Ս. Հայրապետյան և այլք.- Գյումրի, «Ռ.Ավետիսյան» ԱԶ, 2023,-230 էջ:

Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ.Սարգսյան 5ա:
էլ. հասցեն՝ scient.works@shirakcenter.sci.am
կայքէջը՝ www.shirakcenter.sci.am
Հեռախոսը՝ +374/94/ 411 228

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2023

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК

1 (26)

EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre of Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Гюмри 2023 Gyumri

Периодический сборник статей «Научные труды» учрежден Ученым советом ШЦАИ НАН РА в 1998.
Входит в перечень периодических изданий, утвержденных ВАК-ом МОНКС РА.

The periodical collection of “Scientific Works” established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS, is indexed in the list of SCC MESCS RA.

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

АЙРАПЕТЯН СЕРГО - главный редактор, РА
АКОПОВ АРКАДИЙ- зам. гл. редактора, РА
БАЗЕЯН КАРИНЕ- отв. секретарь, РА

АЙРАПЕТЯН АРМЕН, РА
АРУТЮНЯН АСМИК, РА
БАДАЛЯН СЕРГЕЙ, РА
БАЛЪЯН КАРЕН, РФ
ВАРДАНЯН БЕНИК, РА
ГРИГОРЯН (АЙКАЗУН) АШОТ, РА
ДЕВЕНДЕР КУМАР, Индия
ЖАН-ПИЕР МАЭ, Франция
КАВРЕЛИШВИЛИ РОИН, Грузия
КАЗАРЯН ГЕВОРГ, Греция
КАНДОР РУСЛАН, РФ
КРЮЧКОВ ИГОРЬ, РФ
МАРГАРЯН АРАКС, РА
МАРУКЯН АРМЕН, РА
МКОЯН АРТАШЕС, РА
ОГАНИСЯН АРТАК, РА
ОРДУХАНИЯН ЭМИЛЬ, РА
ПЕТРОСЯН САРГИС, РА
РУХКЯН МАРГАРИТ, РА
СААКЯН КАРИНЕ, РА
САДЛОВСКИЙ МИХАЛ, Польша
ХАЧАТРЯН ГУРГЕН, РА
ХАЧАТРЯН ЛАЛИК, РА
ХЕМЧЯН ЭСТЕР, РА
ХОСРОЕВА АНАИТ, США
ХУАКО ФАТИМЕТ, РФ
ЦАКАНЯН РУСЛАН, РА

EDITORIAL BOARD

HAYRAPETYAN SERGO editor-in-chief, RA
AKOPOV ARKADI vice editor, RA
BAZEYAN KARINE secretary, RA

HAYRAPETYAN ARMEN, RA
HARUTYUNYAN HASMIK, RA
BADALYAN SERGEY, RA
BALYAN KAREN, RF
VARDANYAN BENIK RA,
GRIGORYAN (HAYKAZUN) ASHOT, RA
DEVENDER KUMAR, India
JAN-PIER MAHE, France
KAVREISHVILI ROIN, Georgia
GHAZARYAN GEVORG, Greece
KANDOR RUSLAN, RF
KRYUCHKOV IGOR, RF
MARGARYAN ARAKS, RA
MARUQYAN ARMEN, RA
MKOYAN ARTASHES, RA
HOVHANNISYAN ARTAK, RA
ORDUKHANYAN EMIL, RA
PETROSYAN SARGIS, RA
RUKHKYAN MARGARIT, RA
SAHAKYAN KARINE, RA
SADLOVSKI MIKHAL, Poland
KHACHATRYAN GURGEN, RA
KHACHATRYAN LALIK, RA
KHEMCHYAN ESTER, RA
KHOSROEVA ANAHIT, USA
HUAKO FATHIMET, RF
TSAKANYAN RUSLAN, RA

“Научные труды” ШЦАИ НАН РА NN 1(26). Арменоведческие и общественные науки / НАН РА:
Сборник статей: Редакционный. совет: С.Айрапетян и др.: -Гюмри, “ЧП Р.Аветисян”, 2023, 230 с.

“Scientific Works”N1(26)of SCAS of NAS RA: Ed.Board:S.Hayrapetyan & others:Gyumri, "IE RA".2023,230p.

Адрес: 3101, РА, Гюмри, ул. В.Саргсяна 5а
Address: 30101, 5 a V. Sargsyan Street, Gyumri, RA
E-mail: scient.works@shirakcenter.sci.am
hppt: www.shirakcenter.sci.am
тел./tel.: +374/94/411-228

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316

@ Ширакский центр арменоведческих исследований НАН РА. 2023
@ Shirak Center for Armenological Studies of NAS RA. 2023

ՀԱՅԱՍՏԱՆԻՅ ԱՐՏԱԳԱՂԹԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ. ՍՓՅՈՒՈՒՔԻ
ՄԻԳՐԱՅԻՈՆ ՑԱՆՅԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Միհրան Վ. Գալստյան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Գայանե Լ. Հակոբյան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Անվտիում.

Նախաբան. Հոդվածում անդրադառնում ենք արևմտյան երկրներում հայկական սփյուռքի միգրացիոն ցանցի միջոցով հետխորհրդային Հայաստանի բնակչության արտագաղթի խնդրին՝ համակողմանիորեն քննարկելով ցանցի դերն այդ գործընթացում՝ նոր միգրանտների ներգրավման, նրանց տեղափոխման ծախսերի կրճատման, ռիսկերի նվազեցման, ցուցաբերած աջակցության ձևերի և օտար միջավայրում հարմարման հարցերում: *Մեթոդներ և նյութեր.* հոդվածը հիմնված է 2021թ. Հայաստանում քանակական և որակական մեթոդով հավաքված տվյալների վրա: *Վերլուծություն.* Հոդվածի ներածությունը բաժնում բերվում են վիճակագրական տվյալներ վերջին տարիներին Հայաստանի բնակչության արտագաղթի մասին, սահմանվում են նպատակը, խնդիրները, մեթոդաբանական հիմքերը: Երկրորդ բաժնում քննարկվում է միգրացիոն ցանցի վերաբերյալ գոյություն ունեցող տեսական հիմքերը և մոտեցումները: Մյուս երեք բաժիններում քանակական և որակական տվյալներով հիմնավորում ենք Հայաստանից արտագաղթի ուղիների կազմակերպման, երկրների ընտրության, արտագաղթի որոշումների կայացման, ընտանեկան, ազգակցական, ընկերային ցանցերի կողմից նոր միգրանտներին ցուցաբերված օգնության և աջակցության ձևերը: *Արդյունքներ.* հետազոտության տվյալները հնարավորություն են տալիս կատարելու այն եզրակացությունը, որ հայկական սփյուռքի բազմազանության պայմաններում Հայաստանից արտագաղթի ձևավորման և նոր միգրանտների ներգրավման հարցում կարևոր դերակա-

տարություն են ունենում ոչ թե ավանդական, այլ 1990-ական թվականներին Հայաստանից մեկնած՝ «անդրմիգրանտների» ցանցերը: Դրանով իսկ հողվածը նոր քննարկումների ոլորտ է բացում Հայաստանից արտագաղթի տնտեսական պատճառներից զատ, սփյուռքի միգրացիոն ցանցի ունեցած դերակատարության վերաբերյալ: Հեղինակների ներդրումը, հետազոտությունն իրականացվել է երկու հեղինակների անմիջական մասնակցությամբ: Հողվածում առաջին հեղինակի ներդրումը տեսական մոտեցումների և բովանդակային նյութի ձևակերպումն է, իսկ երկրորդ հեղինակինը՝ քանակական հետազոտության տվյալների ամփոփումը և ներկայացումը:

Բանալի բառեր՝ սփյուռք, արտագաղթ, միգրացիոն ցանց, որոշումների կայացում, ազգակցական կապեր, սոցիալական կապիտալ, անդրմիգրանտներ, ջրակցություն:

Ինչպես հղել՝ Գալստյան Մ., Հակոբյան Գ. Հայաստանից արտագաղթը արևմտյան երկրներ. Սփյուռքի միգրացիոն ցանցի դերակատարությունը: // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 1 (26): 5-18 էջեր:

DOI:10.52971/18294316-2023.26.1-5

EMIGRATION FROM ARMENIA TO WESTERN COUNTRIES: THE ROLE OF THE DIASPORA MIGRATION NETWORKS

Mihran V. Galstyan

Institute of Archaeology and Ethnography NAS, Yerevan, RA

Gayane L. Hakobyan

Institute of Archaeology and Ethnography NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The article addresses the problem of emigration of the post-Soviet population of Armenia through the migration network of the Armenian diaspora in Western countries. It comprehensively discusses the role of a migrant network in the process of attracting new migrants, reducing their transportation costs, reducing risks, providing support, and adapting to a foreign environment. Methods and materials: The paper is based on quantitative and qualitative research conducted in Armenia in 2021. Analysis: The introductory part of the paper considers the statistical data about the emigration of the population of Armenia in recent years, and defines the purpose, problems, methodological foundations. The second part discusses the existing theoretical foundations and approaches on migration networks. Finally, in the other three sections, we substantiate with quantitative and qualitative data the ways emigration from Armenia is organized, the reasons for migration countries' choices, emigration decisions, and the forms of help and support provided to new migrants by family, kinship, and friendship networks. Results: The data of the research makes it possible to conclude that, in the conditions of the diversity of the Armenian diaspora, not the traditional diaspora networks, but networks of "transmigrants" who left Armenia in the 1990s play an essential role in the formation of emigration waves from Armenia, and in the engagement of new migrants. In doing so, the article opens up a field of new discussions regarding the role of the diaspora migration network apart from the economic reasons for emigration from Armenia. Authors contribution: The research was carried out with the direct participation of the two authors. The first author's contribution is the formulation of the theoretical

approaches and content material and the second author's contribution is the summary and presentation of the quantitative research data.

Key words: *Diaspora, emigration, migration network, decision-making, kinship ties, social capital, transmigrants, support.*

Citation: Galstyan M., Hakobyan G., *Emigration from Armenia to Western Countries; the Role of the Diaspora Migration Networks.* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 1 (26). 5-18pp. DOI:10.52971/18294316-2023.26.1-5

ЭМИГРАЦИЯ ИЗ АРМЕНИИ В ЗАПАДНЫЕ СТРАНЫ: РОЛЬ МИГРАЦИОННОЙ СЕТИ ДИАСПОРЫ

Мигран В. Галстян

Институт археологии и этнографии НАН, Ереван, РА

Гаяне Л. Акопян

Институт археологии и этнографии НАН, Ереван, РА

Аннотация

Введение: В статье содержится обращение к проблеме эмиграции населения постсоветской Армении в западные страны посредством миграционной сети армянской Диаспоры с всесторонним рассмотрением роли сети в этом процессе - по вопросам привлечения новых мигрантов, сокращения расходов на их перемещение, уменьшения рисков при их перемещении, форм оказания им содействия и их устройства в чужой среде. **Методы и материалы:** Статья основана на данных, собранных в Армении в 1921 г. посредством количественно-качественного метода. **Анализ:** В вступительном разделе статьи приводятся статистические данные об эмиграции населения Армении в последние годы, устанавливаются цели, задачи, методологические основы. Во втором разделе рассматриваются теоретические основы и подходы, имеющие место в отношении миграционной сети. В других трех разделах посредством данных, собранных количественно-качественным методом, обосновываются формы помощи и содействия, оказываемых новым мигрантам семейными, родственными, дружественными сетями в организации направлений миграции из Армении, в выборе стран, в вынесении решений о миграции. **Результаты:** Данные исследования дают возможность сделать заключение о том, что в условиях разнообразия армянской Диаспоры в вопросе формирования эмиграции и привлечения новых мигрантов из Армении важную роль играют не традиционные сети, а сети "трансмигрантов", выехавших из Армении в 1990гг. Тем самым, статьей открывается новая область обсуждений относительно имеющейся роли миграционной сети Диаспоры отдельно от экономических причин миграции из Армении. **Вклад авторов:** Исследование было осуществлено при непосредственном участии двух авторов. Вклад первого автора заключается в формулировании теоретических подходов и содержания материала, а второго автора – в подведении итогов и представлении данных, собранных количественно-качественным методом.

Ключевые слова: *диаспора, эмиграция, миграционная сеть, вынесение решений, родственные связи, социальный капитал, трансмигранты, содействие.*

Как цитировать: Галстян М., Акопян Г. *Эмиграция из Армении в страны западные; роль миграционной сети диаспоры.* // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 1 (26). 5-18 сс.. DOI:10.52971/18294316-2023.26.1-5

ՆԱԽԱԲԱՆ. Հայաստանից վերջին երեսուն տարիներին արտագաղթի հիմնական նպատակակետ երկիրը շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնությունը: Միգրացիայի հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների կողմից տրված գնահատականներով՝ 1988-2019 թթ. Հայաստանից արտաքին միգրացիոն բացասական մնացորդի մեծությունը կազմել է շուրջ 1600-1700 հազար մարդ [1, էջեր 52-66]: 2022թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ից տեղաշարժերի 69.8%-ը եղել է միջպետական, որի գերակշռող մեծամասնությունը՝ 80.3%-ը, իրականացել է Ռուսաստանի Դաշնություն [2]: Հայաստանի անկախությունից հետո հանրապետությունից ընդլայնվել է արտագաղթի հոսքերի աշխարհագրությունը, որը ներառում է նաև եվրոպական մի շարք երկրները, ԱՄՆ-ը և Կանադան: Եվրոպական երկրներում և ԱՄՆ/Կանադայում հայկական ավանդական սփյուռքի խնդիրը հետազոտողների կողմից լավ ուսումնասիրված թեմաներից է, մինչդեռ այդ երկրներում ժամանակակից սփյուռքի ձևավորումը ցանցային միգրացիայի դերակատարության տեսանկյունից համակողմանի վերլուծության կարիք ունի: Ավանդական կամ դասական սփյուռքի հայեցակարգը կառուցված է էթնիկ պատկանելության, բռնի տեղահանման, ինչպես նաև հայրենիքի նկատմամբ կողմնորոշման շուրջ [4, pp. 393-408; 12, pp. 437-441]: Խ. Թոլոյանը, զուգահեռներ անցկացնելով «սփյուռք» հասկացության նախկին և ներկա բովանդակային ըմբռումների միջև, նշում է, որ էթե նախկինում այն հիմնականում կիրառվում էր բռնի տեղահանումների հետևանքով հայրենիքը լքած խմբերի նկատմամբ, ապա ներկայումս այդ հասկացությունն ունի ավելի լայն իմաստ և ընդգրկում է նաև «ներգաղթյալ», «հայրենիքից վտարված», «փախստական», «աշխատանքային միգրանտ», «աքսորված համայնք», «էթնիկ համայնք» և այլ կատեգորիաները [14, pp. 3-36]: Այս մոտեցմամբ նա կարևորում է սփյուռքյան համայնքների ոչ միատարր լինելու խնդիրը: Սփյուռքի փորձի, ներհամայնքային տարբերությունների գաղափարին և դրա միջոցով սփյուռքի բազմազանության ճանաչման հարցին անդրադարձել են նաև այլ հեղինակներ [8, pp. 222-237]: Այդ երկրներում հայկական ավանդական սփյուռքի համայնքում տեղի է ունենում նաև հետխորհրդային Հայաստանից միգրացիոն հոսքերի հաշվին, որոնց համար Խ. Թոլոյանը կիրառում է «անդրազգային» տերմինը, քանի որ նրանք դեռևս «սփյուռքահայեր չեն» և դեռևս սերտորեն կապված են Հայաստանի հետ [15, pp. 83-101]: Սփյուռքին վերաբերող հետազոտություններում, որոնք, օրինակ, առնչվում են չինական, մեքսիկական, թուրքական, Մարոկկոյի կամ ուկրաինական սփյուռքին, միգրացիայի համար ոչ միայն քննարկվում են տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ վանող գործոնները, այլև միգրացիոն ցանցերի դերը, որոնք նպաստում են նոր միգրանտների ներգրավմանը այդ գործընթացում [5, pp. 113-133]: Բացի դրանից, էթնիկ ցանցերի գործառնությունները՝ որպես միգրացիոն երևույթի, հիմնականում ուսումնասիրված են առաջին սերնդի միգրանտների մակարդակով, իսկ երկրորդ և երրորդ սերնդի փորձն այդ կապերի պահպանման հարցում համակողմանի պարզաբանման կարիք ունի:

Հոդվածում նպատակ է դրված քննարկել սփյուռքի միգրացիոն ցանցի դերը Հայաստանից դեպի եվրոպական երկրներ և ԱՄՆ/Կանադա արտագաղթի հարցում, վեր-

լուծել դրա ազդեցությունը նոր էմիգրացիոն հոսքերի ձևավորման գործում¹: Մասնավորապես, հողվածում միգրացիոն ցանցը դիտարկվել է որպես կարևոր գործոն Հայաստանից արտագաղթի հոսքերի ձևավորման և ընդլայնման, նոր միգրանտների առջև ծառայած ռիսկերի նվազեցման և աջակցության հարցերում:

Ըստ քանակական հետազոտության արդյունքների՝ 639 ընտանիքներից 1259 հոգի արտագաղթել և մշտական բնակություն է հաստատել արտերկրում: Բացի Ռուսաստանի Դաշնությունից և ԱՊՀ երկրներից (ընդհանուր 65.5%), քիչ չեն նաև եվրոպական երկրներ (21.0%), ԱՄՆ և Կանադա (10.0%) արտագաղթած ընտանիքները: Եվրոպական երկրների մեջ առաջին տեղում գտնվում է Գերմանիան, ապա՝ Ֆրանսիան, Իսպանիան, Բելգիան, Հունաստանը, Լեհաստանը (համապատասխանաբար, 33.8%, 22.8%, 12.5%, 5.9%, 5.9%, 5.2%), նաև՝ Նիդեռլանդները, Շվեյցարիան, Անգլիան և այլն:

Արտագաղթը ներկայում անվտանգային, տնտեսական, ժողովրդագրական առումով Հայաստանի առջև ծառայած կարևոր հիմնախնդիրներից է, որի համակողմանի ուսումնասիրությունը կունենա տեսական և գործնական նշանակություն: Հողվածը կարևոր ներդրում է Հայաստանից միգրացիայի պատճառների ուսումնասիրության հարցում, քանի որ մինչ այժմ գոյություն ունեցող հետազոտությունների մեծ մասը կենտրոնացած է արտագաղթ առաջացնող տնտեսական գործոնի վրա, մինչդեռ մենք այդ հարցում խնդիր ենք բարձրացնում՝ համակողմանիորեն քննարկել նաև հայկական սփյուռքի միգրացիոն ցանցի խաղացած դերը:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 20TTSH.040 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում՝ 2021 թ. Հայաստանի բոլոր մարզերի 20 քաղաքային, 37 գյուղական բնակավայրերում և Երևան քաղաքում: Քանակական հետազոտության ընտրանքային համախմբության ծավալը հաշվարկվել է հատուկ վիճակագրական բանաձևով, և, որպես գլխավոր համախմբություն, դիտարկվել է ՀՀ տնային տնտեսությունների (SS) քանակը (ըստ 2011 թ. մարդահամարի տվյալների՝ այն կազմում է 763 584): Ընտրանքային համախմբությունը հաշվարկվել է 99% վստահության միջակայքում $\pm 5\%$ սխալի մեծության սահմաններում: Կիրառվել է բազմաստիճան շերտավորված տարածական ընտրանքի մեթոդը: Առաջին փուլում շերտավորումը կատարվել է ըստ մայրաքաղաքի և մարզերի, ապա՝ ըստ Երևանի համայնքների, մարզային քաղաքների և գյուղական համայնքների՝ SS-ների թվի համամասնությամբ: Երկրորդ փուլում պատահական քայլի ընթացակարգով ընտրվել են SS-ները՝ թիրախային համարելով նրանք, որտեղ եղել են արտագաղթած անդամներ: Յուրաքանչյուր հաջորդ SS-ի ընտրության քայլը երեքն է: Երրորդ փուլը հարցվողի ընտրությունն է. հարցմանը մասնակցել են ընտանիքի անդամների արտագաղթի պատմությամբ լավատեղյակ անձինք:

Հետազոտության շրջանակում նաև փորձագիտական հարցազրույցներ են անցկացվել տարբեր մասնագետների և գերատեսչությունների շրջանում, մասնավորապես, ՀՀ ԱԺ-ի ԿԳՄՄԸ հանձնաժողովի, ՀՀ ՏԿԵՆ Միգրացիոն ծառայության, Մփյուռքի գործերի հանձնակատարի գրասենյակի, մարզպետարանների համապատասխան վարչության, ժողովրդագիրների, վիճակագիրների, սփյուռքագետների, տնտեսագետների հետ:

Տեսական քննարկումներ միգրացիոն ցանցի վերաբերյալ

Արևմտյան միգրացիոն տեսություններում լայն տարածում գտած Դ. Մասսեի աշխատություններում ցանցը բնութագրվում է որպես միջանձնային հարաբերությունների ամբողջություն, որը ձևավորվում է ազգակցական, բարեկամական, ինչպես նաև ընդհանուր սոցիալական ծագման հիման վրա՝ երեք խմբերի մարդկանց միջև. նրանց, ովքեր մնացել են մեկնման երկրում, իրենց՝ միգրանտների, և նրանց, ովքեր հաստատվել են նոր վայրում [9 p. 449]: Նա, անդրադառնալով էմիգրացիայի խնդրին, կարևորում է աշխարհում ստեղծված միգրացիոն ցանցերի առկայությունը, որոնց միջոցով միգրանտները մեկնման համար հակված են ընտրելու այն երկրները, որտեղ ունեն արդեն իսկ ձևավորված ազգակիցների, բարեկամների, ընկերների ցանց [9, pp. 449]: Ցանցերը, որոնք աջակցում են նոր միգրանտներին և նրանց համար օտար միջավայրում վերածվում են սոցիալական կապիտալի, գրականության մեջ լավ ուսումնասիրված թեմաներից է: Հետազոտողները համաձայն են նաև այն գաղափարին, որ ցանցերը նոր միգրանտներին կապում են նպատակակետ երկրներում գտնվող ընտանիքի անդամների, հարազատների հետ, և հնարավորություն են տալիս շարունակական միգրացիայի ձևավորմանը [11, pp. 672-690]:

Ցանցի էթնիկություն ասելով՝ մենք նկատի ունենք միգրանտների էթնիկ պատկանելությունը, որն այլէթնիկ միջավայրում ապահովում է համայնքի անդամների ներքին հաղորդակցությունը և համախմբումը՝ ուրվագծելով սահմաններ «յուրայինների» և «օտարների» միջև: «Էթնիկություն» հասկացության բնութագրման համար կարևորում ենք Ա. Սմիթի մոտեցումները [13, p. 32]: Միգրանտները, հաստատվելով ընդունող հասարակությունում, շարունակում են պահպանել կապն իրենց ծագման համայնքի հետ և նպաստում են համայնքում միգրացիայի ավանդույթի ձևավորմանը: Մա նոր միգրանտներ ձգելու հնարավորություն է ստեղծում դեպի այդ համայնքներ: Էթնիկության սկզբունքով արևմտյան երկրներում ձևավորված հայ համայնքների առկայությունն ազդում է ծագման երկրում միգրացիոն վարքագծի ձևավորման և նոր միգրացիայի որոշման կայացման վրա: Նոր սփյուռքի այդ համայնքային ցանցերը նոր միգրանտների ներգրավման առումով դառնում են վստահելի և աջակցում են միգրացիոն ծախսերի կրճատմանը: Էթնիկ ցանցերը նպաստում են նաև կոնկրետ ուղղությամբ իրականացվող միգրացիայի ակտիվացմանը:

Միգրացիոն ցանցերը և արտագաղթի երկրների ընտրության խնդիրը

Հայաստանից արտագաղթի տնտեսական պատճառները չանտեսելով՝ այդ հարցում համակողմանի վերլուծության կարիք ենք տեսնում նաև սփյուռքի սոցիալական ցանցի դերի բացահայտման:

Մեր հետազոտության արդյունքները ևս ցույց են տալիս, որ էթնիկ սոցիալական ցանցը դառնում է միգրացիոն ուղիների կազմակերպման կարևոր միջոց՝ ազդելով Հայաստանից դեպի արևմտյան երկրներ բնակչության տեղաշարժերի տեմպերի վրա: «Որո՞նք են տվյալ երկիրն ընտրելու հիմնական պատճառները» հարցում, ըստ տրված պատասխանների առաջնահերթության, եվրոպական երկրների ընտրության համար հարցվածների 31.6%-ը կարևորել է այնտեղ ունեցած ազգակիցների (23.4%-ը՝ ընտանի-

քի անդամներ, հարազատներ) և ոչ ազգակիցների (8.2%-ը՝ ընկերներ, ծանոթներ) գործունը: ԱՄՆ-ի և Կանադայի պարագայում այդ ցուցանիշն ավելի մեծ է՝ կազմելով 41.1% (ազգակիցներ և ոչ ազգակիցներ, համապատասխանաբար, 37.0%, 4.1%):

Նշված ցուցանիշներից ելնելով՝ կարող ենք ասել, որ արտերկրում հարազատների, ընկերների բնակվելու փաստը կարևոր ազդեցություն է ունենում Հայաստանից էմիգրացիայի երկրների ընտրության վրա:

Աղյուսակ 1. Արտագաղթի երկրի ընտրության գործոնները (%)

Գործոնները	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա
Ընտանիքի անդամների, հարազատների առկայությունը	23.4	37.0
Ընկերների, ծանոթների առկայությունը	8.2	4.1
Երկիր մուտք գործելու հասանելիությունը	5.7	0.0
Բնակության պետական ծրագրից օգտվելու հնարավորությունը	0.6	13.7
Աշխատանքի հնարավորությունը/առաջարկը	9.5	12.3
Բարձր վարձատրությունը	3.8	1.4
Նախկինում այդ երկրում աշխատելը, ծառայելը, հանգիստը	2.5	0.0
Երկրի զարգացվածությունը	12.0	13.7
Լեզվի իմացությունը	3.8	0.0
Ամուսնությունը	10.1	8.2
Կրթությունը	8.9	6.8
Առողջապահական համակարգից օգտվելու անհրաժեշտությունը	7.6	1.4
Այլ	0.6	0.0
Դժվ. եմ պատ.	3.3	1.4
Ընդամենը	100.0	100.0

Աղյուսակ 1-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ այդ երկրների ընտրության հարցում կարևոր դեր են կատարում նաև այնտեղ կուտակված «ձգող» գործոնները և ստեղծված բարենպաստ պայմանները՝ երկրի զարգացվածությունը (ԱՄՆ-ի և Կանադայի դեպքում այդ ցուցանիշը 13.7% է, եվրոպական երկրների դեպքում՝ 12.0%), որից ելնելով՝ մարդիկ օրինական, երբեմն նաև ոչ օրինական ուղիներ են փնտրում՝ այդ երկրներ հասնելու և բնակություն հաստատելու համար: Եվրոպական երկրների պարագայում շատ են ամուսնությամբ (10.1%), կրթությամբ (8.9%) և առողջապահական համակարգից օգտվելու անհրաժեշտությամբ (7.6%) պայմանավորված միգրացիայի դեպքերը: ԱՄՆ և Կանադա արտագաղթած ընտանիքների որոշ մասն էլ օգտագործել է պետական ծրագրերի ընձեռած հնարավորությունը՝ մասնակցելով Գրին քարտերի խաղարկությանը (13.7%):

Փորձագետների հետ իրականացրած հարցազրույցի արդյունքները նույնպես

փաստում են այդ գործոնի դերը Հայաստանից արտագաղթի հարցում. «Միգրացիան ինքնավարակող երևույթ է, և խմբերի արտագաղթելու հավանականությունը մեծանում է՝ կախված նրանից, թե իրենք արտասահմանում կապի ինչ փորձ ունեն՝ հանձինս արտասահմանաբնակ մոտիկ և հեռու բարեկամների, ընկերների և արտասահմանում նախկինում բնակվելու և աշխատելու սեփական փորձի: Այստեղ տատանումը բավականին մեծ է, այսինքն՝ արտագաղթելու տրամադրություններն ավելի ինտենսիվ են այն մարդկանց մեջ, որոնք արտասահմանում ունեն սոցիալական առումով հատուկ տեսակի բարեկամներ, քան նրանց մեջ, որոնք ուրիշ տեսակի կապեր ունեն կամ ընդհանրապես դրանք բացակայում են՝ հաշվի առնելով, իհարկե, երկիրը, հաշվի առնելով՝ ինչ է ինքը էստեղ կորցնում և այլն» (փորձագիտական հարցազրույց ԵՊՀ-ի սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիայի հարցերով զբաղվող դասախոսի հետ):

Արտագաղթողների որոշումների կայացման վրա սիյուռքի միգրացիոն ցանցի դերը և աջակցության ձևերը

Էթնիկ ցանցի առկայությունն ազդում է ոչ միայն արտագաղթի երկրի ընտրության վրա՝ նպաստելով նոր ընտանիքների ու անհատների ներգրավմանը և արդեն ձևավորված համայնքների համալրմանը, այլև ի սկզբանե մեծ դերակատարություն ունի էմիգրացիայի դիմելու որոշման կայացման հարցում: Հարցման մասնակիցների մեծ մասը նշել է, որ արտագաղթողների որոշումների վրա ազդել է (մեծ կամ որոշ չափով) բարեկամների/ընկերների բնակվելու փաստը: Եվրոպական երկրների պարագայում նրանք կազմում են 51.5%, ԱՄՆ և Կանադայի դեպքում՝ 57.8% (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Որոշումների կայացման վրա ցանցի ազդեցությունը (%)

Ազդեցությունը	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա
Ազդեցություն չի ունեցել (գրեթե, ընդհանրապես)	27.9	31.3
Ազդեցություն ունեցել է (որոշ չափով, մեծ)	51.5	57.8
Բարեկամներ/ընկերներ չունի արտերկրում	20.6	10.9
Ընդամենը	100.0	100.0

Էթնիկ ցանցը մեծապես նպաստում է նաև արտերկրում հայ միգրանտների առջև ծառայած խնդիրների հաղթահարմանը: Միգրացիայի գործընթացը թեթևացնելու նպատակով նրանք աջակցում են նոր միգրանտներին, և Ա. Պորտեսն այն որակում է որպես «կապված համերաշխություն», [10, pp. 1-24], քանի որ, ըստ նրա, նույն էթնիկ, կրոնական, տարածքային խմբի անդամներին ռեսուրսներ են տրամադրում: Էթնիկ սոցիալական ցանցերն այդ համայնքներում միգրանտների ներգրավման առումով կատարում են ուղղորդող, նպաստող և աջակցող դեր: Ցանցային կապերը նաև սոցիալական կապիտալի արժևորման ձև են, որոնք հեշտացնում են նրանց մուտքն աշխատաշուկա [6, pp. 281-314]: Այս են վկայում նաև մեր հետազոտության արդյունքները՝ ամփոփված աղյուսակ 3-ում: Օրինակ, Եվրոպական երկրների պարագայում էթնիկ ցանցն ավելի շատ օժանդակել է արտերկրում անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք բերելու, ապա՝ համատեղ բնակվելու, աշխատանք գտնելու և նոր ծանոթությունների հաստատ-

ման հարցերում (համապատասխանաբար՝ 35.3%, 30.9%, 29.4%, 29.4%), 27.9%-ը եվրոպական երկրներում գտնվող բարեկամների/ընկերների օգնությամբ գտել է բնակարան, 26.5%-ը՝ ստացել է ուղևորության գործընթացի կազմակերպման հարցում աջակցություն, 27.9%-ը՝ նյութական աջակցություն:

Աղյուսակ 3. Էթնիկ ցանցից ստացած աջակցության ձևերը (%)

Աջակցության ձևերը	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա
Աշխատանք գտնել	29.4	42.2
Բնակարան գտնել	27.9	35.9
Համատեղ բնակվել	30.9	39.1
ՀՀ-ում անհրաժեշտ ձևակերպումներ	14.0	15.6
Արտերկրում անհրաժեշտ ձևակերպումներ	35.3	29.7
Ուղևորության գործընթաց	26.5	34.4
Նյութական աջակցություն	27.9	35.9
Նոր ծանոթությունների հաստատում	29.4	31.3

ԱՄՆ-ի և Կանադայի պարագայում համեմատաբար շատ են այն մարդիկ, որոնք տարբեր հարցերում ցանցից օժանդակություն են ստացել: Նոր տեղափոխվածների համար ցանցի ամենամեծ օգնությունը եղել է աշխատանք գտնելու, ապա՝ համատեղ բնակվելու, բնակարան գտնելու, ուղևորության գործընթացի կազմակերպման հարցերում, նաև նյութական աջակցություն (համապատասխանաբար, 42.2%, 39.1%, 35.9%, 34.4%, 35.9%): Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ էթնիկ ցանցն օգնում է լուծելու նորեկների առջև ծառայած կարիքները և նոր միջավայրում հեշտացնում է նրանց հաստատումը: Նրանք, հենվելով ավելի վաղ այդ երկիր մեկնած ազգականների, ընկերների, ծանոթների կողմից ձևավորված ֆորմալ և ոչ ֆորմալ կապերի վրա, հնարավորություն են ունենում ստանալու տեղեկատվություն, նյութական և ոչ նյութական աջակցություն: Ցանցը դառնում է ռեսուրսների փոխանակման կարևոր միջոց: Միգրանտների առաջին սերունդը՝ որպես սոցիալական ցանցեր ձևավորող և վերարտադրող, նորեկների համար դառնում է կարևոր մարդկային ռեսուրս, որոնց միջոցով նրանք ստանում են «թույլտվություն»՝ այլ կառույցներ մուտք գործելու համար: Այնուհետև այդ կապերը՝ որպես կարևոր սոցիալական կապիտալ, նրանք փոխանակում են կապիտալի այլ ձևերի՝ սեփական դիրքը հասարակության մեջ ամրապնդելու համար [3, c. 87]: Նոր համայնքները և այնտեղ ձևավորված էթնիկ ցանցերը դառնում են այն կարևոր կառույցը, որի միջոցով տեղի է ունենում օտար միջավայրում նորեկ միգրանտների տնտեսական, սոցիալական և մշակութային ադապտացիան:

Ցանցային միգրացիան և մարդկային կապիտալի խնդիրը

Այս առումով կարևոր ենք համարում բացահայտել արտերկրում բնակվող այն մարդկանց շրջանակները, որ իրենց ազդեցությունն են ունենում այդ հարցում: Հետազոտությունը ցույց տվեց, որ, որպես աջակցող ցանցի դերակատարներ, առաջին հերթին հանդես են գալիս արտերկրում բնակվող նրանց հարազատները և ընկերները:

Եվրոպական երկրներում աջակցող անձանց մեջ մեծ կշիռ ունեն հարազատները (57.5%)։ Բացի անմիջական ազգականներից (ծնողների, երեխաների, քույր/եղբայրների խումբը միասին կազմում է 29.8%), մեծ է նաև այլ ազգականների դերն այս հարցում (27.7%, այս խմբի մեջ մտնում են հորեղբայր, մորեղբայր, հորաքույր, մորաքույր և նրանց երեխաները)։ Նոր տեղափոխվածներին անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրել են նաև ընկերները, գործընկերները, հարևանները, ծանոթները (42.5%, աղյուսակ 4)։

Աղյուսակ 4. Արտերկրում աջակցող սոցիալական ցանցը (%)

Ցանցի անդամները	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա
Հայր/մայր	13.8	15.2
Որդի/դուստր	3.4	13.0
Հարս/փեսա	1.1	0.0
Եղբայր/քույր	11.5	17.4
Ընկեր/ընկերուհի	24.1	17.4
Գործընկեր/կոլեգա	3.4	4.3
Այլ ազգական	27.7	28.3
Ծանոթ/հարևան	12.7	2.2
Այլ	2.3	2.2
Ընդամենը	100.0	100.0

Ելնելով նշված ցուցանիշներից՝ կարող ենք եզրակացնել, որ աջակցող ցանցի դերակատարները եվրոպական երկրներում հաստատված ազգակիցներ են, որոնք ցանցում ապահովում են «ուժեղ» սոցիալական կապեր (57.5%)։ Մնացած անձիք բնութագրվում են որպես «թույլ» սոցիալական կապեր (42.5%), և երբեմն վիճարկվում է նրանց ամրության խնդիրը [7, pp. 201-233]։ ԱՄՆ-ի և Կանադայի պարագայում, համեմատած եվրոպական երկրների, ավելի մեծ է եղել «ուժեղ» սոցիալական կապերի դերակատարությունը՝ 73.9%։

Ըստ քանակական հետազոտության տվյալների՝ միգրանտներին աջակցող այդ անձանց համապատասխանաբար, 68.9%-ը և 54.3%-ը Հայաստանից եվրոպական երկրներ և ԱՄՆ/Կանադա բնակության են տեղափոխվել 1991 թվականից հետո (ի դեպ, այս խմբի մեջ մեծ զանգված են կազմում 1992-2000 թթ. տեղափոխվածները և՛ եվրոպական երկրների (33.3%), և՛ ԱՄՆ/Կանադայի դեպքում (30.4%)), իսկ համապատասխանաբար, 11.5%-ը և 30.4%-ը՝ մինչև 1991 թվականը (աղյուսակ 5)։ Հետևաբար, կարող ենք ասել, որ ավանդական սփյուռքը տոկոսային հարաբերությամբ շատ քիչ դեր է ունեցել, և այդ հարցում մեծ է հետխորհրդային շրջանի արտագաղթածների ձևավորած միգրացիոն ցանցերի դերակատարությունը։

Աղյուսակ 5.

Աջակցող ցանցի արտերկիր տեղափոխման տարեթիվը՝ ըստ երկրների (%)

Երբ են տեղափոխվել	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա
1940-1970-ական թթ.	1.2	0.0
1971-1991 թթ.	10.3	30.4
1992-2000 թթ.	33.3	30.4
2001-2011 թթ.	26.4	10.9
2012-2020 թթ.	9.2	13.0
Դժվ. եմ պատ.	19.6	15.3
Ընդամենը	100.0	100.0

Միգրանտները և սիյուռքի համայնքային կառույցների համագործակցությունը

Պարզելու համար, թե սիյուռքի գործող կառույցների հետ ինչ փոխհարաբերություններ ունեն նոր միգրանտները, և ինչքանով են դրանք ծառայում ինքնության պահպանման նպատակի իրացմանը, հետազոտության շրջանակներում անդրադարձել ենք նաև այս հարցերին: Ինչպես ցույց են տալիս քանակական տվյալները, արտագաղթածների՝ համայնքային որևէ կազմակերպության անդամակցելու միջին ցուցանիշը չի գերազանցել 9.7%-ը, որը վերաբերում է ԱՄՆ-ում, Կանադայում բնակվողներին: Ամենացածրը եվրոպական երկրներում է՝ 6.6% (աղյուսակ 6):

Աղյուսակ 6.

Հայ համայնքի հետ առնչության ձևերը՝ ըստ արտագաղթի երկրի (%)

Առնչության ձևերը	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա
Անդամակցում են որևէ համայնքային կազմակերպության	6.6	9.7
Երեխաները հաճախել են կիրակնօրյա դպրոց	9.8	16.1
Հայ համայնքը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել	4.1	3.2
Հայ համայնքը ոչ ֆինանսական աջակցություն է ցուցաբերել	12.3	9.7
Մասնակցել են համայնքային միջոցառումներին	32.0	33.9
Մասնակցել են հայ համայնքի կազմակերպած ակցիաներին, ցույցերին	29.5	37.1
Մասնակցել են հայ համայնքի կազմակերպած դրամահավաքներին	34.4	54.8

Վերոնշյալ տվյալներից կարող ենք եզրակացնել, որ նրանց անդամակցությունն արևմտյան, հատկապես եվրոպական երկրների համայնքային կառույցներին թույլ է՝ կապված վերջիններիս պահպանողական գործունեության, միգրանտների՝ համայնքա-

յին կյանքի մասնակցության փորձի պակասի հետ, որը հանգեցնում է նրանց մոտ խմբային կամ անհատականացված գործելաոճի: Այս երկրներում նաև ավանդական սփյուռքի և նոր արտագաղթածների արժեքային և աշխարհայացքային տարբերությունն է պատճառը, որ վերջիններս չեն ինտեգրվում սփյուռքյան համայնքային կազմակերպություններին:

Սփյուռքահայ համայնքների և նոր միգրանտների փոխառնչությունը համեմատաբար շատ է կոլեկտիվ գործողությունների ժամանակ, որոնք վերաբերում են Եղեռնի հիշատակման, Արցախին նվիրված միջոցառումներին: Համայնքային միջոցառումների մասնակցության ցուցանիշները վերլուծելով՝ տեսնում ենք, որ ամերիկյան երկրներում անհամեմատ մեծ է, նախ, հայ համայնքի կողմից կազմակերպված դրամահավաքներին մասնակցած նոր միգրանտների զանգվածը՝ 54.8%, ապա՝ ակցիաներին/ցույցերին և համայնքային միջոցառումներին մասնակցածների զանգվածը (համապատասխանաբար, 37.1%, 33.9%, աղյուսակ 6): Նշված ցուցանիշները բարձր են նաև եվրոպական երկրներում՝ համապատասխանաբար, 34.4%, 32.0%, 29.5%:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ելնելով հետազոտության արդյունքներից՝ կարող ենք եզրակացնել, որ եվրոպական երկրներում և ԱՄՆ/Կանադայում միգրացիոն ցանցերը գլխավորապես ձևավորվել են հետխորհրդային Հայաստանի արտագաղթածների կողմից, որոնք ներկայում դառնում են կարևոր գործոն՝ հանրապետությունից նոր միգրացիոն հոսքերի ձևավորման համար: Ըստ հետազոտության արդյունքների՝ միգրացիոն ցանցերը ձևավորվում են երկու մակարդակով. առաջին՝ անհատական կամ անձնական մակարդակ, որը գերակշռող է, և որպես ցանցի դերակատարներ, հանդես են գալիս ընտանիքի անդամները, հարազատները, ծանոթները, ընկերները: Այդ ցանցերը դառնում են Հայաստանից նոր միգրանտների ներգրավման կարևոր միջոց, ձևավորում են միգրացիայի մեկնելու խթաններ, սպասելիքներ, ազդում են միգրացիայի մեկնելու որոշումների կայացման վրա, կատարում են ուղեկցող դեր, կրճատում են նրանց առջև ծառայած ռիսկերը և արտաքին ճնշումները, աջակցության, օգնության, աշխատաշուկա մուտք գործելու հարցում վերածվում են կարևոր սոցիալական կապիտալի:

Երկրորդ՝ ինստիտուցիոնալ կամ ավանդական սփյուռքի կազմակերպությունների մակարդակ, որոնց դերակատարումն այդ հարցում շատ թույլ է: Այն պայմանավորված է ավանդական և ժամանակակից սփյուռքի հատվածների միջև լեզվական, մշակութային և արժեքային տարբերություններով: Նոր միգրանտների համագործակցությունն այդ կառույցների հետ, ընդհանուր առմամբ, կրում է հատվածային բնույթ, և նրանք շատ քիչ են ընդգրկված այդ ցանցերում: Սփյուռքի այդ երկու հատվածների միջև այն ակտիվանում է, երբ համայնքային կառույցների գործունեությունը հանրային/հրապարակային դրսևորում է ստանում, որը հիմնականում կապված է Հայաստանում և Արցախում տեղի ունեցող իրադարձությունների հետ:

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. Եզանյան Գ. *Միգրացիոն իրավիճակը և բնակչության տեղաշարժերի կառավարման ռազմավարությունները* ՀՀ-ում//Բանբեր Երևանի համալսարանի (տնտեսագիտություն): Հ. 3 (33): 2020: 52-66 էջեր:

2. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու: Միգրացիա: 2022:
https://www.armstat.am/file/article/demog_2022_7.pdf (նիսվել է՝ 06.03.2023):
3. Садовская Е. *Социология миграций и современные западные теории международной миграции* // Социальная политика и социология. 2004. № 1. 83-88 сс.
4. Armstrong J. *Mobilized and Proletarian Diasporas* // The American Political Science Review. 1976. № 70 (2). 393-408 pp..
5. Collins, J. *Chinese Entrepreneurs: the Chinese Diaspora in Australia* // International Journal of Entrepreneurial Behaviour and Research. 2002. № 8 (1/2). 113-133 pp.
6. Damm A. *Ethnic Enclaves and Immigrant Labor Market Outcomes: Quasi-experimental evidence* // Journal of Labor Economics. 2009. № 27 (2). 281-314 pp..
7. Granovetter M. *The Strength of Weak Ties: A Network Theory Revisited* // Sociological Theory. 1983. Vol 1. 201-233 pp.
8. Hall S. *Cultural identity and diaspora* // Identity: Community, Culture, Difference. London. Lawrence and Wishart. 1990. 222-237 pp..
9. Messey D., Arango J., Hugo G., Kouaouci A. Pellegrino and Tayllor E. *Theories of International Migration: A Review and Appraisal* // Population and Development Review. 1993. Vol. 19. № 3. 431-466 pp.
10. Portes A. *Social Capital: Its Origins and Applications in Modern Sociology* // Annual Review of Sociology. 1998. № 24 (1). 1-24 pp.
11. Ryan L., Sales R., Tilki M., & Siara B. *Social networks, social support and social capital: The experiences of recent Polish migrants in London* // Sociology. 2008. № 42 (4). 672-690 pp.
12. Safran W. *Recent French Conceptualizations of Diaspora* // Diaspora: a Journal of Transnational Studies. 2003. № 12 (3). 437-441 pp.
13. Smith A. *The Ethnic Origins of Nations*. Oxford. Blackwell. 1986. 312 p..
14. Tölölyan Kh. *Rethinking diaspora (s): Stateless Power in the Transnational Moment* // Diaspora: a Journal of Transnational Studies. 1996. № 5 (1). 3-36 pp.
15. Tölölyan Kh. & Papazian T. *Armenian Diasporas and Armenia: Issues of Identity and Mobilization, An interview with Khachig Tölölyan* // Études arméniennes contemporaines. 2014. № 3. 83-101 pp.

References

1. Yeganyan G., Migration Situation and Strategies of Population Movement Management in RA [*Migratsion iravichaky ev bnakchutyan teghasharzheri karavarman razmavarutyuny*], Bulletin of Yerevan University (Economics). № 3 (33). 2020. 52-66 pp.. (in Armenian)
2. The Demographic Handbook of Armenia. Migration. 2022.
https://www.armstat.am/file/article/demog_2022_7.pdf (has been viewed: 06.03.2023). (in Armenian)
3. Sadvskaya E. Sociology of migration and modern western theories of international migration [*Sotsiologiya migratsii i sovremennie zapadnie teorii mezhdunarodnoy migratsii*] // Social policy and sociology. № 1. 2004. 83-88 pp.. (in Russian)
4. Armstrong J. *Mobilized and proletarian diasporas* // The American political science review. 1976. № 70 (2). 393-408 pp..
5. Collins, J. *Chinese entrepreneurs: the Chinese diaspora in Australia* // International Journal of Entrepreneurial Behaviour and Research. 2002. № 8 (1/2). 113-133 pp..
6. Damm A. *Ethnic enclaves and immigrant labor market outcomes: Quasi-experimental evidence* // Journal of Labor Economics. 2009. № 27 (2). 281-314 pp..

7. Granovetter M. *The Strength of Weak Ties: A Network Theory Revisited* // Sociological Theory. 1983. Vol 1. 201-233 pp..
8. Hall S. *Cultural identity and diaspora* // Identity: Community, Culture, Difference. London. Lawrence and Wishart. 1990. 222-237 pp..
9. Messey D., Arango J., Hugo G., Kouaouci A. Pellegrino and Tayllor E. *Theories of International Migration: A Review and Appraisal* // Population and Development Review. 1993. Vol. 19. № 3. 431-466 pp..
10. Portes A. *Social Capital: Its Origins and Applications in Modern Sociology* // Annual Review of Sociology. 1998. № 24 (1). 1-24 pp..
11. Ryan L., Sales R., Tilki M., & Siara B. *Social networks, social support and social capital: The experiences of recent Polish migrants in London* // Sociology. 2008. № 42 (4). 672-690 pp..
12. Safran W. *Recent French Conceptualizations of Diaspora* // Diaspora: a Journal of Transnational Studies. 2003. № 12 (3). 437-441 pp..
13. Smith A. *The Ethnic Origins of Nations*. Oxford. Blackwell. 1986. 312 p..
14. Tölölyan Kh. *Rethinking diaspora (s): Stateless power in the transnational moment* // Diaspora: a journal of transnational studies. 1996. № 5 (1). 3-36 pp..
15. Tölölyan Kh. & Papazian T. *Armenian Diasporas and Armenia: Issues of Identity and Mobilization, An interview with Khachig Tölölyan* // Études arméniennes contemporaines. 2014. № 3. 83-101 pp..

Ընդունվել է / Принята / Received on: 24.03.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 15.04.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.05.2023

Տեղեկություններ հեղինակների մասին

Միհրան Վարդգեսի ԳԱԼՍՏՅԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի վարիչ, Երևան, ՀՀ
Էլ. հասցե՝ akoonk@yahoo.com, <https://orcid.org/0009-0009-1537-2847>

Գայանե Լևոնի ՀԱԿՈԲՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, գիտաշխատող, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ gayik20@gmail.com, <https://orcid.org/0009-0009-0663-5377>

Mihran Vardges GALSTYAN: Doctor of Historical Sciences, Head of Ethnosociological department, Institute of Archaeology and Ethnography NAS Yerevan, RA,
E-mail: akoonk@yahoo.com, <https://orcid.org/0009-0009-1537-2847>

Gayane Levon HAKOBYAN: PhD in History, Researcher, Institute of Archaeology and Ethnography NAS, Yerevan, RA,
E-mail: gayik20@gmail.com, <https://orcid.org/0009-0009-0663-5377>

Мигран Вардгесович ГАЛСТЯН: доктор ист. наук, заведующий этносоциологическим отделом, Институт археологии и этнографии НАН, Ереван, РА,
эл. адрес: akoonk@yahoo.com, <https://orcid.org/0009-0009-1537-2847>

Гаяне Левоновна АКОПЯН, кандидат ист. наук, научный сотрудник, Институт археологии и этнографии НАН, Ереван, РА,
эл. адрес : gayik20@gmail.com, <https://orcid.org/0009-0009-0663-5377>

ՇԻՐԱԿԻ ԱՋԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ ԱՎ. ԻՄԱՀԱԿՅԱՆԻ
«ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊՈՒՄ

Կարինե Ռ. Բազեյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Անվտոմում

Նախաբան. Ազգագրական գիտության գրավոր աղբյուրների շարքում իր ունեցած տեղով ու դերով առանձնանում է գեղարվեստական գրականությունը, որը վաղուց դարձել է տարբեր երկրների ազգագրագետների ուսումնասիրության առարկան: Ազգաբանության համար մեծ նշանակություն ունի հատկապես կենցաղամշակութային այն ֆոնը, որտեղ կատարվում են իրադարձությունները, կերպարներին շրջապատող կենսոլորտը, բնական ու մշակութային միջավայրը: Սովորաբար այն վերարտադրվում է մեծ հավաստիությամբ և դրան նպաստում է այն հանգամանքը, որ տաղանդավոր արվեստագետը ավելի դիտողունակ է, ավելի շատ նրբություններ է նկատում, քան շարքային դիտորդը: Մեթոդներ և նյութեր. Ավ. Իսահակյանի «Ուստա Կարո» վեպի աղբյուրագիտական վերլուծությունն իրականացվել է ինչպես ազգագրական, այնպես էլ կոնկրետ իրողություններին վերաբերող մասնագիտական գրականության քննական – համեմատական մեթոդով: Հիմնվելով համատեքստային հետազոտության և գոյություն ունեցող տեսությունների վրա՝ փորձ է կատարվել արժևորելու մեծ վարպետի արձակ ստեղծագործություններում առկա այն հարուստ ազգագրական նյութը, որը ներկայացնում է Շիրակի ավանդական կենցաղամշակութային համալիրն իր բազում դրսևորումներով: Վերլուծություն. Քննության առնված ստեղծագործությունների ուսումնասիրության արդյունքում ներկայացվում են շիրակցիների էթնիկ մշակույթի այն բնագավառներն ու երևույթները, դրանց այն կոնկրետ դրսևորումները, որոնց վերաբերյալ ազգագրական նյութերը կա՛մ բացակայում են կա՛մ շատ թերի են արձանագրված: Արդյունքներ. Հետազոտության արդյունքում լուսաբանվել են Շիրակի բնակչության առաջնային ար-

տաղրության մաս կազմող գյուղական արհեստներն ու հոգևոր մշակույթը ներկայացնող Մբ Գևորգի տոնը:

Բանալի բառեր՝ Շիրակ, ազգագրություն, Բասհակյան, ավանդական մշակույթ, արհեստ, Մբ Գևորգի տոն:

Ինչպես հղել՝ Բազեյան Կ., Շիրակի ազգագրական համայնապատկերը Ավ. Բասհակյանի «Ուստա Կարո» վեպում: // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 1(26): 19-29 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.1-19

THE ETHNOGRAPHIC OVERVIEW OF SHIRAK IN AV. ISAHAKYAN'S NOVEL "USTA KARO"

Karine R. Bazeyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

Abstract

Introduction: Among the written sources of ethnology, fiction is distinguished by its place and role, which has long been the subject of study by ethnographers of different countries, because it reproduces the life, lifestyle, and biophilosophies of the people with great reliability. From this point of view Av. Isahakyan's literary heritage is of great interest, the analysis of which the article is devoted to. **Methods and materials:** The source analysis of Av. Isahakyan's works was carried out by using the examinational-comparative method of both ethnographic and professional literature related to concrete realities. Based on contextual research and existing theories, an attempt was made to evaluate the rich ethnographic material in the prose of the master, which represents the traditional household and cultural complex of Shirak in its lots of manifestations. **Analysis:** The article presents the manifestations of the traditional culture of Shirak population, regarding the ethnographic materials are either absent or very incompletely recorded. **Results:** As a result of the research, by subjecting Isahakyan's prose for the first time to a source-based analysis, the author has used many values of the traditional culture of the Shirak inhabitants into scientific circulation.

Key words: Shirak, ethnography, Isahakyan, "Usta Karo", traditional culture, craft, St Gevorg Feast.

Citation: Bazeyan K. *The Ethnographic Overview of Shirak in Av. Isahakyan's Novel "Usta Karo"* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 1 (26). 19-29pp..

DOI:10.52971/18294316-2023.26.1-19

ЭТНОГРАФИЧЕСКИЕ ЗАРИСОВКИ ШИРАКА В РОМАНЕ АВ. ИСААКЯНА "УСТА КАРО"

Карине Р. Базеян

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

Аннотация

Предисловие: Среди письменных источников этнологии особое место занимает и важной ролью выделяется художественная литература, которая издавна является предметом изуче-

ния этнографов разных стран, поскольку она с большой достоверностью воспроизводит быт, образ жизни, психологос (жизненная философия) народа. С этой точки зрения большой интерес представляет литературное наследие Ав. Исаакяна, анализу которого посвящена статья. *Методы и материалы:* Источниковедческий анализ произведений Исаакяна осуществлялся с использованием критико-сопоставительного метода как этнографической, так и специальной литературы, связанной с конкретными реалиями. Опираясь на контекстуальные исследования и существующие теории, сделана попытка оценить богатый этнографический материал в прозе Исаакяна, представляющий традиционный бытовой и культурный комплекс Ширака во многих его проявлениях. *Анализ:* В статье представлены те проявления традиционной культуры ширакцев, относительно которых этнографические материалы либо отсутствуют, либо зафиксированы в неполном объеме. *Результаты:* В результате исследования, впервые подвергнув прозу Исаакяна источниковедческому анализу, автор ввел в научный оборот многочисленные ценности традиционной культуры ширакцев.

Ключевые слова: *Ширак, этнография, Исаакян, «Уста Каро», традиционная культура, ремесло, праздник св. Геворга.*

Как цитировать: Базеян К. *Этнографические зарисовки Ширака в романе Ав. Исаакяна "Уста Каро"* // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 1(26). 19-29 сс..

DOI: 10.52971/18294316-2023.26.1-19

ՆԱԽԱԲԱՆ. Իր յուրահատկությունների շնորհիվ գեղարվեստական գրականությունը, համեմատած գրավոր աղբյուրների այլ տեսակների հետ, ձեռք է բերում մի շարք առավելություններ: Յուրաքանչյուր կոնկրետ ստեղծագործության համեմատական արժեքը ազգագրության համար որոշվում է նրա ոճական ու ժանրային առանձնահատկություններով, թեմատիկայով, հեղինակի իրազեկության աստիճանով և այլն: Այս տեսակետից հատկապես արժեքավոր է ռեալիստական գրականությունը: Ռեալիստ գրողները ձգտում են տալ կյանքի, երևույթների, մարդկանց ու իրերի առավել ամբողջական ու ճշմարտացի պատկերը, դրանք ներկայացնելով այնպիսին, ինչպիսին են իրականում: Գեղարվեստական գրականությունը որպես սկզբնաղբյուր ընդունելով, դրանց հեղինակները դիտվում են որպես ականատեսներ, յուրատեսակ բանասացներ և խիստ գնահատելի են ազգագրագետների կողմից:

Ազգագրագետի համար մեծ նշանակություն ունի հատկապես կենցաղամշակութային այն ֆոնը, որտեղ կատարվում են իրադարձությունները, կերպարներին շրջապատող կենսոլորտը, բնական ու մշակութային միջավայրը: Սովորաբար այն վերարտադրվում է մեծ հավաստիությամբ և դրան նպաստում է այն հանգամանքը, որ տաղանդավոր արվեստագետը ավելի դիտողունակ է, ավելի շատ նրբություններ է նկատում, քան շարքային դիտորդը: [20, էջ 28]

Աղբյուրագիտական գրականության մեջ բազմիցս արժարժվել է գեղարվեստական գրականության՝ որպես պատմական սկզբնաղբյուրի թեման, ինչը ի վերջո բերել է այն համոզման, որ գեղարվեստական գրականությունը մեծ արժեք կարող է ներկայացնել ժամանակաշրջանի մշակույթի, կենցաղի, բարքերի ու սովորույթների, հասարակական մտքի պատմության ուսումնասիրության ժամանակ: Ըստ այդմ՝ ակնհայտ է դառնում, որ ազգագրության համար գեղարվեստական գրականությունը, այլ սկզբնաղբյուրների հետ միասին, դառնում է արժեքավոր և բավական հավաստի սկզբնաղբյուր:

Հայ ազգագրության մեջ գրականության դերը առաջինը կարևորել է անվանի ազգագրագետ Վ. Բդոյանը՝ գրելով. «Հայոց ազգագրական իրողությունները, իբրև գրական նյութ օգտագործվել են շատ գեղարվեստական ստեղծագործություններում: Այդ ձևով մեծ քանակությամբ նյութեր են օգտագործել Խ. Աբովյանը, Պ. Պռոշյանը, Բաֆֆին և ուրիշներ»: [4, էջ 19] Վերջիններիս աղբյուրագիտական վերլուծությունն իրականացրել են հետազայում Ա. Պետրոսյանը և Ռ. Նահապետյանը, որոնք մի շարք ուշագրավ հոդվածներ են հրատարակել այդ հեղինակների աշխատանքներում առկա ազգագրական նյութի վերաբերյալ: [17; 18; 15]

Հովհ. Թումանյանի գրական ժառանգության մեջ ազգագրական նյութերի ուսումնասիրությամբ զբաղվել են Կ. Մելիք-Փաշայանը, Հ. Հարությունյանը: [13; 12] Մ. Արմենի «Հեղնար աղբյուրը» վեպը՝ որպես Ալեքսանդրապոլի ազգագրության սկզբնաղբյուր, ուսումնասիրվել է մեր կողմից: [1]

Ա. Իսահակյանի ստեղծագործության ազգաբանական վերլուծություն մինչ օրս չի իրականացվել, ուստի այս հոդվածով փորձել ենք վերլուծել ու արժևորել մեծ վարպետի մի շարք պատմվածքներում և հատկապես «Ուստա Կարո» վեպում առկա այն հարուստ ազգագրական նյութը, որը ներկայացնում է Շիրակի ավանդական կենցաղամշակութային համալիրն իր բազում դրսևորումներով: Ազգագրական նյութը գերազանցապես վերաբերում է գյուղական կենցաղին, որը մանկական ու պատանեկան հիշողությունների հիման վրա, ամենայն մանրամասնությամբ նկարագրել է Վարպետը:

Ազգագրությունը Իսահակյանի պատմվածքներում

Շիրակի ավանդական մշակույթի առանձին երևույթներին Իսահակյանն անդրադարձել է մի քանի պատմվածքներում՝ դրանք ներկայացնելով սեփական հուզական գնահատմամբ: «Հովվերգություն» պատմվածքում, որտեղ նկարագրված են շիրակցիների անասնապահական մշակույթն ու մասնավորապես՝ հովվությունը, հեղինակը մեծ ջերմությամբ է հիշում իր մանկության տարիները: Պատմվածքի հենց առաջին նախադասությունը հաստատում է դրա՝ որպես ազգագրական սկզբնաղբյուրի իսկությունը. «Ավանդաբար կիրառվող մի սովորույթ կար Շիրակում, որ մեր քուրդ հովիվներն արածացնում էին մեր հոտերը մինչև աստվածածնա պասի երկուշաբթին, այսինքն մինչև օգոստոսի սկիզբները:» [7, էջ 28] Այնուհետև նկարագրում է, թե նրանցից հետո ինչպես էին գյուղի տղաները, որոնց թվում և ինքը, ոչխարները հովվում մինչև ուշ աշուն:

«Հայրենի հուշերում», վերհիշելով իրենց տան կյանքը, նա պատմում է իրենց ընտանեկան աշուղի մասին. «Ամեն շաբաթ, կեսօրից հետո, սազը պատյանի մեջ վզից կախ, գալիս էր նա մեր տունը, մնում ամբողջ կիրակի օրը մինչև երկուշաբթի: Եվ երկուշաբթի առավոտ, մեկնում էր սազը վզից կախ, առատ վարձատրված:» [7, էջ 119] Շիրակցիների երաժշտական մշակույթի հետաքրքիր մաս կազմող ընտանեկան աշուղի մասին հիշողություններ է թողել նաև մշակութային և հասարակական գործիչ Կարապետ Կոստանյանը: [10] Իսահակյանի պատմվածքը լրացնում և ամբողջացնում է Շիրակի բնակչության հոգևոր կյանքում այս երաժիշտների գրաված տեղի մասին մեր գիտելիքները:

ՀՀ-ի 2016 թ. ՀՆԱ-ում սպասարկման ոլորտին բաժին է ընկել 54,8% [8, էջ 238]: Կարծում ենք՝ նույնն է պատկերը նաև Շիրակի մարզում: Համեմատության համար նշենք, որ նույն ցուցանիշը 1985 թ. կազմել է 9,1% [9, էջ9]: ՀՀ-ում, այդ թվում Շիրակի մարզում XX դ. վերջին և XXI դ. սկզբին տնտեսության կառուցվածքում սպասարկման ոլորտի տեսակարար համաթվի շեշտակի աճը պայմանավորված է հասարակարգի և տնտեսակարգի շրջադարձային փոփոխությունով, երբ սոցիալիզմից անցում է կատարվում կապիտալիզմի: Արդյունքում, տնտեսության երկրորդային հատվածում, այն է՝ վերամշակող արդյունաբերությունում գրանցվում է շեշտակի հետընթաց: Դրա լավագույն ապացույցն է այն, որ 1985 թ. մեր հանրապետությունում արդյունաբերության մեջ աշխատել է զբաղվածություն ունեցող բնակչության 39,0%, իսկ 2016 թ.՝ 14,9% [8, էջ 60]: Նույն ցուցանիշները Շիրակի մարզում կազմել են համապատասխանաբար 36,1% [3, էջ123] և 6,8% [2, էջ 158]:

Շիրակի ժամանակակից աշխատաշուկային բնորոշ է զբաղվածության ցածր և գործազրկության բարձր մակարդակը: Այժմ մարզի աշխատունակ տարիքի բնակչության զգալի մասը զբաղված է սպասարկման ոլորտում: Աղյուսակ 1-ի թվային ցուցանիշների վերլուծությունից պարզ է դառնում, որ 1987-2021 թթ. ընկած ժամանակահատվածում մարզի նյութական ոլորտում զբաղվածների թիվը նվազել է 2,5 անգամ, իսկ

Աղյուսակ 1

Շիրակի բնակչության զբաղվածությունն ըստ տնտեսության ոլորտների¹

հազար մարդ

1987թ.	1989թ.	1997թ.		2005թ.	2010թ.	2015թ.	2017թ.	2021թ.
85.4	85.7	49.7	Նյութական ոլորտ	41.3	40.9	45.4	40.4	34.8
30.3	37.1	40.1	Սպասարկման ոլորտ	45.0	41.5	40.1	33.4	50.3
15.3	16.6	18.8	Այլ ոլորտ	3.8	3.1	1.1	1.3	5.0
-	-	35.8	Գործազուրկներ	17.1	9.6	20.3	24.1	12.1
131.0	139.4	144.4	Ընդամենը	107.2	95.1	106.9	99.2	102.2

սպասարկման ոլորտինը ավելացել է 1,7 անգամ: Նյութական ոլորտում զբաղվածների թվի շեշտակի անկումը պայմանավորված է մարզի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքների դադարեցմամբ, որը հետևանք էր Սպիտակի աղետալի երկրաշարժի հասցրած վնասի, ԽՍՀՄ-ի լուծարման, որը հանգեցրեց արտադրատնտեսական կապերի գրեթե խզման և արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման, ինչը վերջնական մեծ հարվածը հասցրեց այդ ոլորտին: Դրան զուգահեռ՝ մարզի սպասարկման ոլորտն արագընթաց զարգացում գրանցեց, մասնավորապես՝ առևտրի և ծառայությունների մատուցման ճյուղերում: Սակայն հիշատակենք, որ սպասարկման ոչ բոլոր ճյուղերում է գրանցվել զբաղվածության թվի աճ:

Պայմանականորեն մարզի սպասարկման ոլորտը կարելի է բաժանել պետական և ոչ պետական ուղղությունների: Ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական ուղղությունները ներառում են կրթությունը, առողջապահությունը, մշակույթը, ֆինանսական և ապահովագրական ընկերությունները և այլն: Հիշատակենք, որ վերը թվարկածները խորհրդային տարիներին եղել են պետական հաստատություններ: Այժմ սպասարկման ոլորտում զբաղվածների մեծ մասն աշխատում է ոչ պետական հաստատություններում, իսկ պետական հատվածին բաժին են ընկնում հիմնականում կրթությունը, առողջապահությունը և մշակույթը:

Շիրակի մարզի սպասարկման ոլորտի ավանդական ուղղություններից են առողջապահությունը, կրթությունը և մշակույթը: Երկրաշարժից տուժեց մարզի առողջապահական համակարգի մոտ 70%-ը [12, էջ 115]: Նույնպիսի վնաս են կրել կրթական և մշակութային հաստատությունները: Մինչև օրս գոյություն ունեն վթարային բուժօգնություններ և սանիտարահիգիենիկ նորմերին չհամապատասխանող հարմարեցված կառույցներ: Աղյուսակ 2-ի թվային ցուցանիշների վերլուծությունից պարզ է դառնում, որ առողջապահական համակարգում զբաղվածների թիվը 1987-2021 թթ. պակասել է 2.5

¹ Այս և հետագա աղյուսակները կազմելիս օգտագործվել է՝ Բոյաջյան Ա., Շիրակի մարզի օղջիպ տնտեսական զարգացման մի քանի հարցեր (մասն II) // ՀՀ ԳԱԱ ԾՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. 9, «Գիտություն» հրատ., Գյումրի, 2006թ., էջ 122: <https://www.armstat.am> 7.pdf, 20.05.2020թ., www.armstat.am/file/article/marz_99_15.pdf, https://www.armstat.am/file/article/9.trud_2016_4.1.pdf, www.armstat.am/file/2022_4.1.pdf (դիտվել է 18.03. 2023թ.):

անգամ: Բուժաշխատողների թվի շեշտակի անկումը պայմանավորված է մի շարք գործոններով՝ նախ մարզի, մասնավորապես Գյումրու բնակչության թվի շեշտակի նվազումով, երկրորդ՝ բուժհաստատությունների թվի կրճատումով: XXI դ. սկզբին մարզի առողջապահական համակարգում գործում էին 47 ՓԲԸ, որից 11-ը՝ հիվանդանոց, 12-ը՝ պոլիկլինիկա (9-ը՝ Գյումրիում, մնացածը՝ Մարալիկ, Ախուրյան և Արթիկ բնակավայրերում), իսկ վեց գյուղական բնակավայրեր ունին բժշկական գրասենյակներ[12, էջ 115]: Շիրակի մարզում 2020 թ. առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատություններից (բացառությամբ բուժական մանկաբարձական կետերի, մասնավոր բուժական և ստոմատոլոգիական կաբինետների) մնացել էր ընդամենը 32-ը [14, էջ 81]: Մեր ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ վերջին 25 տարիներին պետական առողջապահական հաստատությունների և աշխատողների թիվը նվազել է, իսկ ոչ պետական, մասնավորապես առամնաբուժական և բժշկական դիագնոստիկ ծառայություններ մատուցող հաստատությունների, դեղատների և աշխատողների թվի շեշտակի աճ է գրանցվել: Վերջին տասնամյակում մարզի առողջապահության ոլորտում կառուցվածքային լուրջ փոփոխություններ են արձանագրվել: Կառավարման ապապետականացման շնորհիվ տեղի է ունեցել մասնավոր բուժօգնության սպասարկման դերի բարձրացում: Իսկ պետական բյուջեից հատկացված գումարները չեն բավականացնում անվճար բուժօգնություն մատուցելու մարզի սոցիալապես անապահով բնակչությանը:

Աղյուսակ 2

Շիրակի մարզի սպասարկման ոլորտում զբաղվածության շարժընթացը

հազ.մարդ

Ծառայությունների տեսակ	1987թ.	1997թ.	2005թ.	2010թ.	2015թ.	2021թ.
Ընդամենը	30.3	40.1	45.0	41.5	40.1	50.3
Առողջապահություն	4.3	3.9	2.3	3.3	2.0	2.3
Ֆինանսական և սպահովագրական գործունեություն	0.5	0.9	0.8	1.5	1.7	2.3
Մշակույթ, զվարճություն և հանգիստ	1.2	0.7	1.0	1.3	1.7	2.3
Տեղեկատվություն և կապ	0.6	5.7	6.2	2.8	3.4	4.5
Տրանսպորտ	1.2	1.7	2.5	3.2	3.5	5.1
Կացության և հանրային սննդի կազմակերպում	6.2	7.5	10.3	11.2	11.4	13.1
Մասնագիտական,գիտական և տեխնիկական գործունեություն	0.4	0.4	0.5	0.6	0.7	0.9
Վարչական և օժանդակ գործունեություն	0.9	4.7	5.5	4.1	4.3	4.4
Կրթություն	9.4	8.7	6.5	8.6	5.1	3.0
Սպասարկման այլ ծառայություններ	5.6	5.9	9.4	4.9	6.3	12.4

Առողջապահական համակարգը համարվում է ավելի արդյունավետ, եթե բուժ-
 ծառայության դեպքում մարդիկ առավելապես դիմում են առողջապահական առաջնա-
 յին օղակներին՝ բուժկետերին, ամբուլատորիաներին, ընտանեկան բժիշկներին, տեղա-
 յին թերապևտներին [1, էջ 19]: Ըստ ՀՀ ԱՎԿ պաշտոնական տվյալների՝ Շիրակի մար-
 գում առողջապահական համակարգի առաջնային օղակներ դիմողների թիվը 2021 թ.-
 ին 2016 թ.-ի համեմատ նվազել է 11,2%-ով: Դաշտային էթնոսոցիալական հետազոտու-
 թյամբ պարզել ենք, որ այդ տարիներին դիմողների թվի պակասումը պայմանավոր-
 ված է բնակչության, մասնավորապես 60 և բարձր տարիքի բնակչության բացարձակ
 թվի նվազումով, երկրորդ, աճել է Երևանի առաջնային բուժօղակներ դիմողների թիվը
 [4, էջ 4]: Կարծում ենք՝ այդ երևույթը բացատրվում է մարզի բուժօգնության անարդյու-
 նավետությամբ: Սակայն նշենք, որ հիմնականում վճարովի ծառայությունների աճը,
 նաև տարեցտարի բուժօգնության մատուցման թանկացումը այն բնակչության համար
 դարձնում են անատշելի [4, էջ 5]:

Շիրակի մարզի սպասարկման ոլորտում իրենց ուրույն տեղն ունեն կրթությու-
 նը և գիտությունը: Ինչպես առողջապահական համակարգում, այնպես էլ կրթության
 ոլորտում գրանցվել է աշխատողների թվի շեշտակի անկում: 1987-2021 թթ. կրթության
 համակարգում աշխատողների թիվը պակասել է 3.1 անգամ, իսկ հանրակրթական
 դպրոցների թիվը՝ պակասել է 18-ով (181-ից իջնելով 163-ի) [5, էջ 6]: Հանրակրթական
 դպրոցների թվի նվազումը պայմանավորված է աշակերտների թվի շեշտակի
 անկումով: Ներկայացվող ժամանակահատվածում աշակերտների թիվը պակասել է
 շուրջ 52%-ով, ինչն էլ հանգեցրել է ուսուցիչների թվի էապես նվազմանը: Աշակերտնե-
 րի և ուսուցիչների թվի նվազմանը զուգահեռ՝ ավելացել է ուսանողների և դասախոսնե-
 րի թիվը (տե՛ս աղյուսակ 3): Ներկայումս Շիրակի մարգում կրթության առաջնահերթ
 խնդիրներն են կրթական հաստատությունների պահպանումը, հիմնանորոգումը, նյու-
 թատեխնիկական վերազինումը և ջեռուցումը, որոնք հսկայական ծախսեր են պահան-
 ջում: Այժմ մարզի մեկ դպրոցում սովորող աշակերտների թվի միջինը 190 աշակերտ է,
 իսկ 1990-ական թվականներին՝ 320:

Աղյուսակ 3

Բուհի ուսանողների և դասախոսների թվի շարժընթացը

	Բուհերի (մասնաճյուղերի քանակը)	Ուսանողների թիվը	Այդ թվում՝ վճարովի	Դասախոսների թիվը
1996 թ.	1(1)	2103	723	210
1998 թ.	1 (5)	2389	1261	274
2002 թ.	3(5)	4335	3805	530
2006 թ.	1 (5)	6781	3836	648
2012 թ.	3(5)	5 236	4 959	545
2017 թ.	3(5)	3 576	2 988	539
2021թ.	3(5)	2801	2282	575

Շիրակը Հայաստանի Հանրապետության մշակութային կյանքի կարևորագույն կենտրոններից է: 2001թ. դրությամբ մարզում գործել են 328 մշակութային օբյեկտներ, այդ թվում՝ 32 երաժշտական և գեղարվեստի դպրոցներ, 2 թատրոն, 147 գրադարան, 10 թանգարան, 125 մշակույթի տուն, 3 կինոթատրոն և 9 նվագախումբ [12, էջ 118]: Նույն ցուցանիշը 2021թ. կազմել է համապատասխանաբար՝ 130 [11, էջ 85]: Այսինքն՝ քսան տարիների ընթացքում մարզի մշակութային հաստատությունների թվաքանակը պակասել է 198-ով, այդ թվում խիստ որոշակի նվազել է գրադարանների թիվը: Հիշատակենք, որ պաշտոնական վիճակագրությունը տեղեկություններ չի ներկայացնում մշակույթի տների ներկայիս թվաքանակի մասին:

Հայտնի է, որ սպասարկման ոլորտից Շիրակի մարզում մեծ պահանջարկ ունեն մշակութային զբոսաշրջությունը և գաստրոտուրիզմը: XX դ. 1970-80-ական թվականներին Շիրակի մարզ, մասնավորապես Լենինական (ներկայիս՝ Գյումրի) այցելած զբոսաշրջիկների թվի տարեկան միջինը կազմել է 20 հազար մարդ(սրա մեջ չի մտնում չգրանցված զբոսաշրջիկների քանակը) [13, էջ 38]: Ըստ 2020 թ. ԱՎԿ-ի տվյալների՝ Շիրակի մարզում գործել է 23 հյուրանոց և 39 հյուրատուն: Դրանց ճնշող մեծամասնությունը տեղաբաշխված է մարզկենտրոն Գյումրիում, որտեղ 2019 թ. զբոսաշրջիկների թվի շեշտակի աճ է գրանցվել՝ 60 հազար մարդ [10, էջ 89]: Շիրակի մարզում զբոսաշրջային ենթակառուցվածքները տեղաբաշխված են խիստ անհավասարաչափ, ինչը լուրջ խոչընդոտ է զբոսաշրջության զարգացմանը:

Շիրակի մարզում զբոսաշրջային ծառայությունների մատուցումը սեզոնային բնույթ է կրում: Զբոսաշրջիկների հոսքի աճ գրանցվում է ապրիլ-օգոստոս ամիսներին: Մարզի զբոսաշրջային ծառայությունների մատուցման գործում առանցքային նշանակություն ունեն հասարակական սննդի օբյեկտները, հյուրանոցները և թանգարանները: Զբոսաշրջության զարգացման գլխավոր նախադրյալները Գյումրու քաղաքային պատմական միջուկը և մարզի պատմամշակութային հուշարձաններն են, մասնավորապես՝ միջնադարյան եկեղեցիները:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ուսումնասիրվող ժամանակահատվածում Շիրակի մարզում արագորեն զարգանում է սպասարկման ոլորտի մասնավոր հատվածը, մասնավորապես՝ զբոսաշրջության, ֆինանսական և ապահովագրական գործունեությունը, տեղեկատվությունը և կապը, հանրային սննդի կազմակերպման ուղղությունները:

Պետական սպասարկման ոլորտում զբաղվածների թվի և հաստատությունների թվաքանակի, հատկապես առողջապահության և կրթության համակարգում գրանցվել է շեշտակի անկում, իսկ առողջապահական համակարգի մասնավոր հատվածում, ընդհակառակը՝ շեշտակի աճ է գրանցվել:

Վերջին հինգ տարիներին զբոսաշրջիկների թվի էական աճը հատկապես Գյումրիում աշխուժացրել է թանգարանների, հյուրանոցների և հյուրատների գործունեությունը, բացվել են մի քանի մասնավոր թանգարաններ:

Գ ր ա կ ան ու թ յ ու ն

1. Առողջապահության համակարգի գործունեության գնահատում, վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՆ «Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, Եր., 2022.– 299 էջ:
2. Բոյաջյան Ա., Շիրակի մարզի բնակչության զբաղվածությունը XXդ. վերջին և XXIդ. սկզբին, // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի Հ.23, N2, 2020: 149-162 էջեր:
3. Բոյաջյան Ա., Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր, (մաս II) //ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, Հ.9, 2006: 121-125 էջեր:
4. Բոյաջյան Ա., Առողջապահական ծառայությունների մատուցումը Շիրակի մարզում, ԴԱՆ(Դաշտային ազգագրական նյութեր), Գյումրի: Տետր 3: 2021: 25 էջ:
5. Բոյաջյան Ա., Շիրակի հանրակրթական ուսումնական հաստատությունները, ԴԱՆ(Դաշտային ազգագրական նյութեր), Գյումրի, Տետր 4, 2021: 30 էջ:
6. ՀՀ ԱՎԿ, ՀՀ Շիրակի մարզը թվերով, Երևան: 2022, <https://armstat.am /file/doc/99533623.pdf>, (դիտվել է 15.12.2022թ.):
7. ՀՀ բնակարանային տնտեսության և հողային ռեսուրսների կառավարում, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, Երևան, 2017: 180 էջ:
8. ՀՀ վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԿ , Երևան 2018: 607 էջ: <https://armstat.am/ am/?nid=586&year=2017> (դիտվել է 07.01.2023թ.):
9. Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսությունը 1989 թ., վիճակագրական տարեգիրք, ՀՀ վիճակագրում, «Հայաստան», Երևան: 1991: 260 էջ:
10. ՀՀ ԱՎԿ, Շիրակի մարզի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակն անվճար և վճարովի ուսուցման համակարգերում, <armstat.am/file/doc/99533623.pdf> (դիտվել է 18.03. 2023թ.):
11. ՀՀ ԱՎԿ, Շիրակի մարզի մշակութային հաստատությունները, <armstat.am/fdoc/99533623.pdf> (դիտվել է 18.02. 2023թ.):
12. Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Պոտոսյան Ա., Շիրակի մարզ (բնությունը, բնակչությունը, տնտեսությունը): Երևան: 2002: 132 էջ:
13. Սարտիրոսյան Լ., Աբրահամյան Վ., Սարգսյան Ռ, Սարգսյան Հ., Հյուրանոցային սերվիսը Շիրակի մարզում և նրա զարգացման հեռանկարները, // Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Գիտական տեղեկագիր: Գյումրի: 2020: Պրակ Ա: N 1: Էջեր 38-48:
14. Շիրակի մարզի սոցիալական ոլորտը, ՀՀ ԱՎԿ, <https://armstat.am/file/ doc/99527583.pdf> (դիտվել է 10.02.2023թ.):
15. Շիրակի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունը: Գյումրի: 2017թ.: Էջ 23, <http://shirak.mtad.am/files/docs/37621.pdf> (դիտվել է 10.01.2023թ.):
16. Инновационное развитие сферы услуг в национальной экономике, Под научной редакцией доктора экономических наук Я. П. Силина. Екатеринбург Издательство Уральского государственного экономического университета, Екатеринбург. 2016. 340с.

References

1. Assessment of health care system performance, statistical yearbook [*Arorjhapahutyam hamakargi gorcuneutyam gnahatum, vichakagrakan taregirq*], "Academician S. Avdalbekyan National Institute of Health" CJSC, Yerevan, 2022. - 299 p. (in Armenian)
2. Boyajyan A., Employment of the Shirak marz population in the 20th century. last AND XXI century. at the beginning, [*Shiraki marzi bnakchowt'yan zbaghvac'owt'yowny' XXd. verjin EV XXId. skzbin,*] // "Scientific Papers" of the Shirak Armenological Research Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Gyumri vol.23, N2, 2020. 149-162 p. (in Armenian)
3. Boyajyan A. Some issues of socio-economic development of Shirak marz, (part II) [*Shiraki marzi social-intesakan zargacman mi qani harcer, (mas II)*] // "Scientific works" of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Gyumri vol. 9, 2006. 121-125 p. (in Armenian)
4. A. Boyajyan, Provision of health care services in Shirak Marz, [*Aroghjapahakan carayowtyowwnneri matowcowmy Shiraki marzowm*], FEM (Field ethnographic materials), 2021. 25 p. (in Armenian)
5. A. Boyajyan, Public educational institutions of Shirak, [*Shiraki hanraktakan owsowmnakan hastatowtyowwnnery*], FEM (Field ethnographic materials),. 2021. 25 p. (in Armenian)
6. RA AMC, RA Shirak Marz by numbers, [*Shiraki marzy tverov*], Yerevan. 2022. <https://armstat.am/file/doc/99533623.pdf>, (viewed on 15.12.2022). (in Armenian)
7. Management of housing economy and land resources of the Republic of Armenia, [*HH bnakaranayin intesowtyan ev hoghayin resowrsneri karavarowm*], State Committee for Urban Development under the Government of the Republic of Armenia, Yerevan. 2017. 180 p. (in Armenian)
8. RA Statistical Yearbook, [*HH vitwakagrakan taregirq*], RA AMC. Yerevan. 2018. 607 pages. <https://armstat.am/am/?nid=586&year=2017.>, (viewed on 07.01.2023). (in Armenian)
9. The national economy of the Armenian SSR in 1989, statistical yearbook, [*Haykakan XSH jhoghovrdakan intesowtyowny' 1989t., vitwakagrakan taregirq*], , SCof the RA. Yerevan 1991. 260 p. (in Armenian)
10. The number of students of higher education institutions of Shirak region in free and paid education systems, [*Shiraki marzi bardragowyn owsowmnakan hastatowtyowwnneri owsanoghneri tvaqanakn anytwar ev vtwarovi owsowcman hamakargerowm*], [Armstat.am/file/doc/99533623.pdf](https://armstat.am/file/doc/99533623.pdf), (viewed on 18.03. 2023). (in Armenian)
11. RA AMC. Cultural institutions of Shirak region [*Shiraki marzi mshakowtayin hastatowtyowwnnery*]. armstat.am/file/doc/99533623.pdf, (viewed on February 18, 2023). (in Armenian)
12. Manasyan M., Grigoryan A., Potosyan A., Shirak region (nature, population, economy) [*Shiraki marz(bnowtyowny, bnakchowtyowny, intesowtyowny)*]. Yerevan. 2002. 132 p. (in Armenian)
13. Martirosyan L. M., Abrahamyan V. M., Sargsyan R. S., Sargsyan H.M., Hotel service in Shirak region and its development prospects, [*Hyowranocayin servisy shiraki marzowm ev nra zargacman her'ankarnery*],//ShSU Scientific Bulletin, Gyumri 2020, N 1. 38-48 pp. (in Armenian)
14. The Social Sphere of Shirak Marz, [*Shiraki marzi socialakan olorty*]', HH AVK, RA AMC. <https://armstat.am/file/doc/99527583.pdf>, (viewed on 10.02.2023). (In Armenian)

15. Shirak marz 2017-2025. development strategy [*Shiraki marzi 2017-2025tt. zargacman razmavarowtyowny*]. Gyumri. 2017. 23 p, <http://shirak.mtad.am/files/docs/37621.pdf> (viewed on 10.01.2023) (in Armenian)
16. Innovative development of the service sector in the national economy, [*Innovacionnoe razvitie sfery uslug v nacional'noj jekonomike*], Under the scientific editorship of Doctor of Economics Ya. P. Silin, Yekaterinburg Publ. house of the USU of Ec., Yekaterinburg. 2016, 340 p. (in Russian)

Շնորհակալ է / Принята / Received on: 18.03.2023

Գրախոսակ է / Рецензирована / Reviewed on: 02.04.2023

Հանձնակ է սույ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.06.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Արտաշես Գևորգի ԲՈՅԱՋՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
ավագ գիտաշխատող, Գյումրի, ՀՀ
Էլ. հասցե՝ a.boyajyan@mail.ru, <https://orcid.org/0009-0002-8424-4522>

Artashes Georg BOYAJYAN: PhD in History, associate professor,
Senior researcher at Shirak Center for Armenological Studies NAS, Gyumri, RA,
e-mail: a.boyajyan@mail.ru, <https://orcid.org/0009-0002-8424-4522>

Арташес Геворгович БОЯДЖЯН, кандидат ист. наук, доцент,
старший научный сотрудник Ширакского центра арменоведческих
исследований НАН РА, Гюмри, РА,
эл. адрес: a.boyajyan@mail.ru, <https://orcid.org/0009-0002-8424-4522>,

ՀՏԴ՝ 801.8

DOI: 10.52971/18294316-2023.26.1-64

ԵՌՅԱԿ ԴԻՑԱՆՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ
ԳՈՒՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՐԳԻ ԲԱՆԱԶԵՎԵՐՈՒՄ

Սարգիս Գ. Պետրոսյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հայաստանի նախնադարյան հասարակության եռադասյա կառուցվածքով պայմանավորված դիցարանի գլխավոր աստվածությունների եռյակ կազմելու հնդեվրոպական սկզբունքը իր արտացոլումն է գտել նաև հայոց մանկական խաղերի խաղամուտը նշող գուշակման և հաշվերգի բանաձևերում: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել է հետազոտման պատմահամեմատական մեթոդը, օգտագործվել են հայոց հին պատմիչների երկերում առկա նյութերը, «Մասնա ծոեր» էպոսի առաջին և երկրորդ ճյուղերի պատումները, ազգագրագետների գրառած նյութեր և այլն: Վերլուծություն. Նախնադարյան մոգական ծիսակարգի յուրահատկություններից մեկն եղել է որևէ գործողության հաջողությունը երաշխավորելուն կոչված աստվածությունների եռյակի հիշատակումը բուն գործողությունը սկսելուց առաջ: Այդ ավանդական հիշատակումները ամբողջովին չեն մոռացվել, որովհետև նրանց ինչ-ինչ հատվածներ սերնդեսերունդ շարունակել են հնչել մեր մանուկների շուրթերին: Հողվածում վերլուծվել են «Ալնիս, Բալնիս, հավատամ Սուրբ Սարգիս» գուշակման բանաձևը և «Ալա, Բալա, Նիցա» խաղամուտի հաշվերգի՝ դրա զուգահեռը: Արդյունքներ. Խաղամուտերի գուշակային բանաձևում և զուգահեռ տեքստի առաջին տողում հիշատակված են երեք աստվածություններ, որոնք իրենց գործառույթներով նույնն են եղել, ինչ հայոց հին տոմարի յուրաքանչյուր ամսի երեք տասնօրյակները գլխավորած օրերին իրենց անունները տված Արեգ, Երեզկան, Գրգուռ աստվածությունները:

Բանալի բառեր՝ եռադասություն, Արնի, Բերքուրարիքի, Հողմ-Ամպրոպի աստվածություններ, Ալնիս, Բալնիս, Ս. Սարգիս, Ալա, Բալա, Նիցա:

Ինչպես հղել՝ Պետրոսյան Ս. Եռյակ դիցանուններ հայկական մանկական խաղերի գուշակման և հաշվերգի բանաձևերում // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Ն. 1(26): 64-74 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.1-64

TRIAD OF THEONYMS IN FORMULA OF DIVINATION AND COUNT-OUT RHYMES IN ARMENIAN CHILDREN'S GAMES

Sargis G. Petrosyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

Introduction: In connection with the three-estate structure of the primitive society of Armenia, the Indo-European principle of creating triads of the main deities of the pantheon (deities of the Sun, Thunder and Productive forces of nature) was reflected in the formulas of divination and count-out rhymes in Armenian children's games. **Methods and materials:** We have used the historical-comparative method of research, materials, that found in the works of ancient Armenian historiographers, narrations of the first and second branches of the "Sasna Tsrer", materials from the records of ethnographers, etc. **Analysis:** One of the features of the primitive magical ritual was the evidence of the triad of deities, designed to guarantee the success of any action before the action itself began. These traditional evidences have not been completely forgotten, because some parts of them continue to sound from generation to generation in the mouths of our children. The article considers the opening formulas of divination "Alnis, Balnis, I believe in Saint Sargis" and its parallel count-out rhyme: "Ala, Bala, Nica". **Results:** In the formulas of divination of the games and in the first line of the parallel text of count-out rhyme three deities are mentioned, whose functions were the same as the deities Areg, Erezkan, Grgur, who gave names to the days leading three decades of each month of the Armenian old calendar.

Key words: *three estates, deities of the Sun, Thunder and Productive forces of nature, Alnis, Balnis, St. Sargis, Ala, Bala, Nica.*

Citation. Petrosyan S. *Triad of Theonyms in Formula of Divination and Counting-out Rhymes in Armenian Children's Games.* // "Scientific Works" of SCAS NAS of Armenia. Gyumri. 2023. V. 1(26). 64-74 pp. DOI: 10.52971/18294316-2023.26.1-64

ТРИАДА ТЕОНИМОВ В ФОРМУЛАХ ГАДАНИЯ И СЧИТАЛКИ В АРМЯНСКИХ ДЕТСКИХ ИГРАХ

Саргис Г. Петросян

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

Аннотация

Введение: В связи с трехсловной структурой первобытного общества Армении индоевропейский принцип создания триад главных божеств пантеона, т.е. божеств Солнца, Грома и Производительных сил природы, нашел свое отражение и в формулах гадания и считалки в армянских детских играх. **Методы и материалы:** В работе использован историко-сравнительный метод исследования, использованы материалы, находящиеся в трудах древнеар-

мянских историографов, сказы первой и второй ветвей эпоса "Сасна Црер", материалы из записей этнографов и др. *Анализ:* Одной из особенностей первобытного магического ритуала было упоминание о триаде божеств, призванных гарантировать успех любого действия до начала самого действия. Эти традиционные упоминания не были полностью забыты, потому что некоторые их части продолжают из поколения в поколение звучать в устах наших детей. В статье анализируются поступления в игру гадальная формула "Алнис, Балнис, верю в святого Саргиса" и ее параллель: считалка "Ала, Бала, Ница". *Результаты:* В гадальной формуле игр и в первой строке параллельного текста считалки упоминаются три божества, функции которых были такими же, как у божеств Арег, Ерезкан, Гргур, давших имена дням, ведущим три декады каждого месяца армянского старого календаря.

Ключевые слова: *трехсловие, божества Солнца, Грома и Производительных сил природы, Алнис, Балнис, Св. Саргис, Ала, Бала, Ница.*

Как цитировать: Петросян С. Триада теонимов в формулах гадания и считания в армянских детских играх. // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри. 2023. Т. 1(26). 64-74сс.

DOI: 10.52971/18294316-2023.26.1-64

ՆԱԽԱԲԱՆ. Նախնադարյան մոզական ծիսակարգի յուրահատկություններից մեկն էլ եղել է որևէ գործողության հաջողությունը երաշխավորելուն կոչված աստվածությունների եռյակի հիշատակումը բուն գործողությունը սկսելուց առաջ: Այդ ավանդական հիշատակումները ամբողջովին չեն մոռացվել, որովհետև նրանց ինչ-ինչ հատվածներ սերնդեսերունդ շարունակել են հնչել մեր մանուկների շուրթերին: Այդպիսի մեկին՝ խաղամուտի սկիզբն ազդարարող «Ալնիս, Բալնիս, հավատամ Սուրբ Սարգիս» գուշակման բանաձևին մենք անդրադարձել էինք մոտ երկու տասնամյակ առաջ [16, էջ 12]: Դրանում Ս. Սարգսի հիշատակումն արդեն խոսում է դրա երբեմնի մոզական բանաձև լինելու մասին, որովհետև հայտնի է ժողովրդական քրիստոնեության մեջ Ս. Սարգսի հեթանոսական Հողմ-Ամպրոպի աստվածների գործառույթներով օժտված լինելու հանգամանքը: Դա միաժամանակ հիմք է տալիս բանաձևում նրանից առաջ հիշատակված Ալնիսին և Բալնիսին ենթադրաբար համարելու Ս. Սարգսի հեթանոսական նախորդի հետ միասին եռյակ կազմած աստվածություններ:

Վերևում նշված բուն աղբյուրներից բացի, օգտագործվել են հայ և օտար բանագետների, լեզվաբանների և պատմաբանների ընդհանուր բովանդակությամբ աշխատություններ: Դրանցից արժեքավոր են եղել Մ. Աբեղյանի, Ա. Ղանալանյանի, Ե. Մելետինսկու, Վ. Աֆանասևայի գրականագիտական, Հ. Աճառյանի, Գ. Ջահուկյանի, Ստ. Մալխասյանցի լեզվաբանական, Ի. Մեշյանիովի, Գ.Մելիքիշվիլու ուրարտագիտական աշխատությունները և «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» ժողովածուի I հատորի նյութերը:

Աշխատանքը նպատակ ունի ապացուցելու, որ նախնադարյան մոզական ծիսակարգի արտասանվող առանձին հատվածներ ընդօրինակվել են իր ժամանակի մանուկների կողմից, իսկ այնուհետև, սերնդեսերունդ փոխանցվելով, հասել մեր ժամանակներ: Արդիական է այնքանով, որ հաճախ անտեսվել են մանուկների միջոցով մեզ հասած և նախնադարից եկած հնագույն պաշտամունքի մնացուկներ: Դրանք կարևորվում են նախնադարյան մարդու մասին ավելի ամբողջական պատկերացում կազմելու տեսանկյունից:

Աստվածությունների մի հին եռյակի մասին

Միասնության դարաշրջանի հնդեվրոպական հասարակությանը բնորոշ էր երեքդասյա հասարակական կարգը՝ եռադասությունը: Դասերին համապատասխան՝ հնդեվրոպական ցեղերն ունենում էին երեք գլխավոր աստվածություններ՝ քրմական դասի երկնային դասապետը համարվում էր Արևի աստվածը, զինվորական դասինը՝ Հողմ-Ամպրոպի աստվածը, բարիքիներ արտադրողների (հողագործներ, անասնապահներ) դասինը՝ Բերքուբարիքի անձնավորում աստվածությունը: Քանի որ նախնադարյան մեր նախնիների տարին բաղկացած էր համարվում 12 ամիսներից՝ յուրաքանչյուրը բաղկացած 30 օրից, որոնք միավորվում էին 3 տասնօրյակների մեջ, ուստի յուրաքանչյուրը տասնօրյակ սկսվում էր այդ աստվածություններին ձուլված և նրա անունը (մականունը, մակդիրը) կրող օրով: Առաջին տասնօրյակի առաջին օրը հայոց հին տոմարում կոչվում էր *Արեգ*, երկրորդ տասնօրյակի առաջին օրը (ամսի 11-րդ օրը) կոչվում էր *Երեզկան*, իսկ երրորդ տասնօրյակի առաջին օրը (ամսի 21-րդ օրը) կոչվում էր *Գրգուռ*: Դրանցից առաջինը Արևի աստծու, երկրորդը՝ Բերքուբարիքի, երրորդը՝ Հողմ-Ամպրոպի աստվածության անունը կամ դիցանվան մակդիրն (աստծու մականունն) էր [18, էջեր 420-439]: Այս աստվածությունների գուգահեռ կերպարների՝ նույնիսկ նույն հերթականությամբ հանդիպում ենք հետևյալ հնագույն առասպելում:

Քնից սարսափահար արթնացած Մարաստանի Աժդահակ թագավորը կանչում է իր խորհրդականներին և նրանց պատմում իր երազը. «Էր ինձ ասէ, ով սիրելիք, լինել այսօր յերկրի անձանօթում, մերձ ի լեառն մի երկար յերկրէ բարձրութեամբ, որոյ գագաթն սաստկութեամբ սառնամանեաց թուէր պատեալ, եւ ասէին գոգցես յերկրին Հայկազանց գայս լինել: Եւ ի նայել իմ յերկարագոյնս ի լեառնն կին ոմն...աչեղ, բարձրահասակ եւ կարմրայտ, երկանց ընթոնեալ ցաւովք: Եւ ի յերկարագոյն նայել իմ յայնպիսի երեւումն եւ հիացման լինել՝ ծնաւ յանկարծ կինն երիս կատարեալս ի դիւցազանց հասակաւ եւ բնութեամբ: Առաջինն գերանսն ածեալ ի վերայ առիծու՝ սլանայր յարեւմուտս, եւ երկրորդն ի վերայ ընծու՝ ի հիւսիսի հայելով, իսկ երրորդն զվիշապ անարի սանձեալ՝ ի մերոյս վերայ շահատակեալ յարձակէր տերութեանս...» [13, գիրք Ա, գլուխ իզ]:

Ապացուցված է, որ որպէս Տիգրան Երվանդյանի մասին վիպերգի մաս բերված այս դրվագը մի հին առասպել է [1, էջ 97-115]: Ինչպէս տեսանք, նորածին դիւցազուններից մեկը՝ առյուծ սանձածը, սլանում էր արևմուտք, իսկ արևելք-արևմուտք շարժման ուղղությունը արևի օրական շարժման ուղղությունն է՝ արևելքում ծագող արևը մայր է մտնում արևմուտքում: Անկասկած, արևի անձնավորում այս դիւցազնը լինելու է հնդեվրոպական «Պարզ երկնքի և արևի աստվածության» ժառանգորդը, որի հասարակական գործառույթները գուգադիպում էին քրմական դասի գործառույթներին [24, էջ 793-794]: Մայր դիցուհու ծնած երկրորդ դիւցազնը՝ ընձառյուծ սանձածը և հյուսիս արշավողը, անձնավորումն է գարնան և բնության զարթոնքի, որովհետև նրա շարժման ուղղությունը (հարավից հյուսիս) հենց գարնան շարժման ուղղությունն է հասարակածից հյուսիս ընկած բոլոր երկրներում: Նույն այդ ուղղությամբ են հետ չվում գարնան ավետաբեր թռչունները՝ արագիլը և ծիծեռնակը: Մեր այս դիւցազնը ժառանգորդն էր

լինելու հնդեվրոպական «տնտեսական գործունեությունը հովանավորող և բերրիությունն անձնավորող աստվածության», որի հասարակական գործառույթները համընկնում էին բարիքների արտադրողների դասի գործառույթների հետ [20, էջեր 58-59: 17, էջեր 324-325: 24, էջ 794]: Մայր դիցուհու ծնած երրորդ դուստրը՝ վիշապ սանձածը, արծվաթռիչը և Աժդահակի մահաբերը, որը վիպերգում նույնացված է եղել Տիգրան Երվանդյանի հետ, լինելու էր ժառանգորդը հնդեվրոպական «Ամպրոպի և կայծակի, երկնամերձ լեռան աստվածության», որի հասարակական գործառույթները համընկնում էին զինվորական դասի գործառույթների հետ [17, էջեր 325-326: 24, էջեր 793-794]:

Այս առասպելը բաղկացուցիչ մասն էր լինելու տարեմուտի թատերականացված արարողակազմի: Հետևենք դուստրուհու ծննդի հերթականությանը: Նախ ծնվում է առյուծ սանձած՝ արևն անձնավորողը: Սա տարեմուտն էր խորհրդանշում գարնանային գիշերահավասարը (մարտ 21-22): Ապա ծնվում է ընձառյուծ հեծած գարնան անձնավորում դուստրը: Նա խորհրդանշում է ձմեռային ծանր նիբից արթնացող բնությունը: Վերջապես ծնվում է օձավիշապ Աժդահակի մահաբերը՝ վիշապ սանձած արծվաթռիչ դուստրը, հողմի և ամպրոպի անձնավորումը: Նրա ծնունդը խորհրդանշում է գարնանային օդերևույթների բուռն գործընթացը, երբ երկնքում, բարձր լեռների կատարներին քամու կուտակած ամպրոպալից ամպերն սկսում են որոտալ և կայծակել, տեղում են առաջին անձրևները: Առասպելաբանական մտածողությամբ այս ամենն ընկալվելու էր նաև որպես տիեզերքի լուսավոր-կենսաբեր կողմերի (արևելք, հարավ, երկինք) անձնավորումները համարված գերբնական էակների հաղթանակը նրա խավարմահաշունչ կողմերի (արևմուտք, հյուսիս, ընդերք) անձնավորումների դեմ, կյանքի հաղթանակը մահվան դեմ, նոր տարվա հաղթանակը հին տարվա դեմ [17, էջեր 326-327], ազատասեր-հայրենասեր դուստրի (այս դեպքում Տիգրան Երվանդյանի) հաղթանակը օտարերկրյա բռնակալի դեմ:

Տիգրան անունը ծագումով իրանական է, բայց իրանցիների մեջ հազվադեպ կիրառություն գտած [2, էջեր 335-336]: Ըստ Հ. Աճառյանի, այս անվան իրանական նախաձևը ունեցել է *tigrarāna* տեսքը՝ կազմված *tigra* «նետ» և *rāna* «մարտնչող» բառերից, ապա արագաբանության օրենքով վերածվել է *tigrāna*-ի, որից էլ մեր *Տիգրան*-ը [6, էջեր 400, 638]: Մեր կարծիքով, անվան առաջին մասը ներկայացնում է ոչ թե իրան, *tigra* «նետ», այլ **tig-//tég-* (որից՝ հայ. տէգ) բառը [19, էջեր 427-430]: Այսպիսի ստուգաբանության հավաստիությունը հաստատվում է Տիգրան Երվանդյանի վերաբերյալ Մովսես Խորենացու հաղորդած տեղեկություններով: Դրանց համաձայն, հայ դուստրը Աժդահակի դեմ մարտնչել է ոչ թե նետով, այլ նիզակով [13, Ա, իզ] և նրան սպանել է նիզակով [13, Ա, իթ], ուստի կոչվել է *նիզակաւոր* [13, Ա, իթ]:

Ամպրոպի և հողմի աստվածությունների կերպարները շատ ժողովուրդների առասպելաբանություններում երբեմն այնքան սերտաճած են լինում, որ դրանք միևնույն անվան տակ են հանդես գալիս: Օրինակ, իրանական ամպրոպային Վերթրազանան պատկերացվում է նաև իբրև «պինդ քամի» [1, էջ 90], իսկ հին գերմանների Թոր/Ռոնարը ոչ միայն շանթառաք ամպրոպային աստված էր, այլև հողմի անձնավորում [27, էջ 545]: Այսպիսի դեպքերի միջոցով հասկանալի է դառնում, թե ինչու ուրար-

տական Ամպրոպի աստված Թեյշեբան հանդես է գալիս նաև ⁴IM գաղափարագրի տակ [9, էջ 41], իսկ նրա պատվին Թեյշեբաինի կոչված քաղաքի անունը գրվում է նաև ⁴IM-ու URU ձևով [22, էջ 182], երբ այս ⁴IM// ⁴Iškur-ը ուղղակի «հողմ, քամի» է նշանակում [23, էջ 651]: Հայկական ժողովրդական հավատալիքներում ևս «որոտացող էակը պատկերա- նում է իբրև քամի», «որոտացողը մտածվում է նաև որպես հողմ» [1, 66, 91]: Ժողովրդա- կան քրիստոնեության մեջ Սուրբ Սարգսի կերպարը, ինչպես հայտնի է, հետևորդն է ոչ միայն IV դ. քրիստոնյա գորավարի կերպարի, այլև հեթանոսական հողմի աստվածու- թյան: Բայց ավանդություններում նա հանդես է գալիս նաև Ամպրոպի շանթառաք աստծու դերում: Դրանցից մեկում՝ Ղզըլբաշի Ուշաբ թագավորի (հմմտ. Տիգրան Եր- վանդյանի հակառակորդ մար Աժդահակը) դեմ կոիվ տալիս, նա «ամբի պես կեռորմ, կեծակի նման տրաքտրաքրմ, քանդուքար ու անըմ թաքավերի բերդերն ու էստեղ կա- պած, կշկոած հայերին ազատրմ» [10, էջ 366]:

Մանուկների գործածած դիցանունների շուրջ

Խաղն առաջինն սկսելու հարցը մանուկների մրցակից երկու կողմերը որոշում էին խաղամուտի գուշակման բանաձևի օգնությամբ: Խմբերից մեկի ավագը իր փակ ափերից մեկի մեջ պահած էր լինում որևէ մանր իր: Այն գտնելու համար մրցակից կող- մի ավագը նրա առաջ պարզած բռնուցքներին հերթականությամբ մատը դնելով արտա- սանում էր. «Ալնիս, Բալնիս, հավատամ Սուրբ Սարգիս, զիմ ծիլ հա՛ն, տո՛ւր հիս» [11, էջ 18]: Բերված *Ալնիս* և *Բալնիս* դիցանունների վերջնաձայն *u* հնչյունը, հավանաբար, ա- ռաջին դեմքի դիմորոշ հոդն է: *Ալնիս*-ի մեջ նրա առանձնացումից հետո մնում են դի- ցանվան *ալ-* հիմքն ու *-նի* վերջածանցը: Այս վերջածանցը ծագում է հ.-ե. *-eni-io-/-ā բա- դադրյալ վերջածանցից. Հմմտ. *գաղտնի, յայտնի, նախնի* [21, էջ 809], իսկ *al- հիմքային արմատն առկա է նաև *աղթաման* «ձեռքի կամ ոտքի ապարանջան» և *ալի* «առանցք, եր- կանաքար, ճախարակ» բառերում [15, էջ 39: 7, էջ 12, 13: 4, էջ 126]: Հմմտ. Հուն. ἄλωσ «շրջանակ, սկավառակ», «լուսապսակ. բակ՝ արևի և լուսնի շուրջ» և ἀλακάτα//ήλακάτα «առանցք, առնի, իլ, իլիկ, ճախարակ» բառերը [25, էջ 74], որոնց հիմքում ևս «շրջանակ» և «պտտվող ինչ» գաղափարներն են [11, էջ 15]:

Ուրարտուի Սարդուրի I (մ.թ.ա. մոտ 840-825 թթ.) արքայի արձանագրություն- ները հայտնում են, որ Tušpa (Տոսպ, Վան) քաղաքի միջնաբերդը կառուցվել է Աlniսու քաղաքից բերված քարերով [8, էջ 39-40: 28, N 1]: Այս տեղանվան մեջ ևս առկա է *Ալնի* դիցանունը. Աlniսու//Ալնի-ուն-ոյ: Ամենայն հավանականությամբ, *Ալնի*-ն արմատա- կիցն է Aldi դիցանվան, որը «Մհերի դոան» ուրարտական արձանագրության մեջ բեր- ված է որպես Haldi դիցանվան տարբերակ [29, էջեր 347-348] (Aldi<Al-di, որտեղ di//հայ. դի-ք): Մուծածիրյան Խալդի աստծու պաշտամունքի Ուրարտու ներմուծումից հետո Haldi և Aldi դիցանունները բաղարկվել էին և Խալդին սկսել էր պատկերվել որպես ա- րևային աղեղնավոր աստված [9, էջ 35], իսկ Արև աստծուն ձևված «Մհերի դուո» պաշ- տամունքային կառույցը վերանվանվել էր «Խալդիի դարպասներ» [26, էջ 191-192]: Աս- վածների հիման վրա կարելի է մանկական խաղամուտի գուշակման բանաձևի առա- ջին անունը՝ *Ալնի*-ն (դիմորոշ հոդով՝ *Ալնիս*), համարել սեպագրային Աlniսու քաղաքին իր անունը տված արևային աստծու *Alni անունը:

Ալնիս-ից հետո խաղամուտի գուշակման բանաձևում հիշատակված *Բալնիս* (<*Բալնի-ս <*Բալ-նի) դիցանունը, լինելով եռյակի անդամի անուն և գտնվելով Արևի աստծու և հողմ-ամպրոպային բնույթի Ս. Մարգիս անվան միջև, լինելու էր բերքուբարիքի անձնավորում աստվածության անուն: Կազմության տեսանկյունից *Բալ-նի-ս* հմմտ. *Ալ-նի-ս*, իսկ *բալ//բաղ* արմատի համար հմմտ. միջնադարյան «Բառգիրք հայոց»-ի «*Բաղկանալ* – աճել, կամ գոյանալ, կամ բազմանալ, կամ կենդանանալ, կամ զարգանալ» [7, էջ 48] բառի արմատը: Կարծում ենք, որ այս դեպքում ևս գործ ունենք *բալ//բաղ* արմատի հետ՝ ծագած հ.-ե. *bhl- արմատից: Հ.-ե. այս արմատի *bhel-/*bhol-/*bhl- ձայնադարձերից ունենք բուսաշխարհի մի շարք ներկայացուցիչների անուններ՝ սկսած *բեղուն*-ից ու *բողբոջ*-ից մինչև *բողկ* ու *բալ/բալենի*:

Բերված խաղամուտի գուշակման բանաձևի դիցանուններից *Ալնի*-ին և *Բալնի*-ին արմատակից անունների հանդիպում ենք մանկական խաղամուտի հաշվերգի տեքստերից մեկում: Ահա՛ այսօր էլ մանուկների շուրթերին հնչող տեքստի 1-ին տողը. «Ալա, Բալա, Նիցա» («Ալա, բալա, նի-ցա/Ռուս կաբա նի-ցա/ հեյ գիտի փան-չո/Ռուս կապի-տանչո/փալանչո». հիշողությամբ գրի է առել 1931թ. ծնված քույրս՝ Լենա Հովհաննիսյանը): *Ալ-ա* և *Բալ-ա* անունները *Ալ-նի-ս* և *Բալ-նի-ս* դիցանունների փաղաքշական ձևերն են մանկական լեզվում: Դրանց վերջնաձայն *-ա*-երը հաջորդ *նից-ա* բառի հետ միասին գալիս են *-այ* վերջածանցից. Հմմտ. *արք-այ*, *բոր-այ* «բորենի», *կր-այ* «կրիա», *հորայ* «խորթ հայր», *ւոր-այ* «խորթ մայր» [14, էջ 88], *Արայ*, *Շար-այ* դիցանունները: Ուրեմն *Ալա-ն Ալնի*-ի նման, իսկ *Բալա-ն Բալնի*-ի նման լինելու էին Արևի և Բերքուբարիքի անձնավորում աստվածների անունները: Բնականաբար, Ալայից և Բալայից հետո հիշված Նիցան լինելու էր Հողմ-Ապրոպի մի աստվածություն, ինչպիսին եղել է Ալնիսից և Բալնիսից հետո հիշատակված Ս. Մարգիս հեթանոսական նախորդը:

Գր. Մագիստրոսին հայտնի էր *Նիցա*-ի *նից* արմատն հիշեցնող *նիս* «փյուն, քամի» բառը, որ հոլովված [5, էջ 453] (ի նսէ) լինելով, համարվել է անստույգ բառ (ուղղականը կարող էր լինել նաև *նուս պատճառաբանությամբ) [5, էջ 453: 21, էջ 568]: Բարեբախտաբար, այս արմատը *նես տեսքով գտնում ենք նաև *նեսիս* (*նես-ափայ) «անորոշ տեսակի քամի» բառի մեջ, որը, ուրիշ երեք քամիների հետ, ըստ Ղ. Ալիշանի, գործում է «ընդ մեջ *ջուրց* և երկնի» և դրանք «բազում անգամ յոգուտ *յաղբերաց* և *յերակս ջրոց* յաճախեն» [3, էջ 40: 5, էջ 385: 12, 451]: Մեր կարծիքով, *նեսիս* <*նես-ափայ՝ շեշտակիր վերջնավանկին նախորդած միջնավանկի *ա*-ի օրինաչափ հնչյունափոխությամբ և սղումով: Այստեղ բարբառային ազդեցությունը նկատվում է նաև *ափն* > *ափ* անցման մեջ: Իսկ գրաբարում *ափն* նշանակում էր «ծայր, եզր, ափ, ջրափ» [4, էջ 365] և հնդեվրոպական ծագումով բառ է [21, էջ 105]:

Քամու և ջրի փոխադարձ կապի առնչությամբ *ափն* բառը գրաբարյան ձևով է բերված Ղ. Ալիշանի հիշատակած հետևյալ վկայության մեջ. «Շտեմարան իմն է *ի ջուրս, յորմէ օղբ էլանէն* ի դուրս, *Հրասափն, Քառափն, Մարսափն, Մագատն* կամ *Նագատն. էլք սոցա ի ծովէ* են գնացք սոցա յերկինս» [3, էջ 40]: Հ. Ալիյանի բանավոր հաղորդման հիման վրա Հ. Աճառյանը գրում է. «Սույն գրվածքն է Ջենոն Իմաստ[ասերի] հավելվածը, ուր ունինք սակայն *Քարսափն* (և ո՛չ *Քառսափն? Նագատն*, չկա Մագատն)» [4, էջ 127]:

Ինչպես տեսնում ենք, Հ. Աճառյանի դիտողությունները այս քամիներից երեքի անունների *ափն* բաղադրիչին չի վերաբերում, որով *նեսփա* բառի *-փա* բաղադրիչի *ափն*-ից ծագելը մնում է հավանականության սահմաններում: Ի տարբերություն *նեսփա* < **նես-ափայ* բառի *նես* բաղադրիչի՝ **նիսա*-ի *նիս-* արմատը կարող էր ծագել նախնական **նես*-ից և հաջորդ տողի վերջին բառի հնչյունական ազդեցությամբ, նրա հետ հանգավորվելով, վերածվել *նիցա*-ի:

Խաղամուտի հաշվերգի տեքստի առաջին՝ բանաձևային տողին հաջորդող տողերը, մեր կարծիքով, ուղղակի կապ չունեն նրա հետ: Խաղամուտի հաշվերգի բուն տեքստից առանձնացած լինելով, նրա բանաձևային բառերը հարում են ամբողջությամբ վերևում բերված գուշակային բանաձևի բառերին: Ընդ որում, այդ եռյակների անդամների անուններն իրենց բնույթով նույնական են հայոց հին տոմարի յուրաքանչյուր ամսի տասնօրյակները գլխավորած օրերին իրենց անունները տված *Արեգ*, *Երեզկան*, *Գրգուռ* դիցանունների հետ: Հատկանշական է, որ քննարկված բոլոր դիցական եռյակների անդամները բերված են նույնպիսի հերթականությամբ՝ Արևի, Բերքուբարիքի, Հողմ-Ամպրոպի աստվածներ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Խաղամուտի գուշակային բանաձևում և հաշվերգի տեքստի առաջին տողում հիշատակված երեք աստվածությունները գործառնություններով նույնն են, ինչ հայոց հին տոմարի յուրաքանչյուր ամսի երեք տասնօրյակները գլխավորած օրերին իրենց անունը տված այն աստվածությունները, որոնք հայտնի են Աժդահակի երագի առասպելից: Ընդ որում, քննարկված բոլոր դեպքերում նրանք հանդես են գալիս նույն՝ Արևի, Բերքուբարիքի, Հողմ-Ամպրոպի աստվածություններ հերթականությամբ:

Հագարամյակների ճանապարհ անցած մանկական խաղերի քննության առարկա խաղամուտի գուշակման բանաձևը և հաշվերգի տեքստի բանաձևային գլխամասը բացահայտելով հայոց առասպելաբանության և ազգագրության բնագավառներում իրենց ունեցած սերտ կապերը, դրանով իսկ հաստատում են դրանք կապակցված դիտելու մեր որդեգրած մոտեցման իրավացիությունը:

Գրականություն

1. Արեղյան Մ. *Երկեր*: Երևան: ԳԱ հրատ.: Հ. I: 1966: 571 էջ:
2. Ադոնց Ն. *Հայաստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. Մ.թ.ա.*: Երևան: «Հայաստան» հրատ.: 1972: 430 էջ:
3. Ալիշան Ղ. *Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը*: Երևան: «Հրագրան»: 2002: 295 էջ:
4. Աճառյան Հ. *Հայերեն արմատական բառարան*: Երևան: ԵՀ հրատ.: Հ. I: 1971: 699 էջ:
5. Աճառյան Հ. *Հայերեն արմատական բառարան*: Երևան: ԵՀ հրատ.: Հ. III: 1977: 635 էջ:
6. Աճառյան Հ. *Հայերեն արմատական բառարան*: Երևան: ԵՀ հրատ.: Հ. IV: 1979: 674 էջ:
7. «*Բառգիրք հայոց*»: Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամպրոպի: Երևան: Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարան» հրատ.: 1975: 445 էջ:
8. «*Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա*»: Հ. I: *Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը*: Երևան: ԵՀ հրատ.: 1981: 943 էջ:

9. Հմայակյան Ա. *Վանի թագավորության պետական կրոնը*: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1990: 158 էջ:
10. Ղանալանյան Ա. *Ավանդապատում*: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1969: 530 էջ:
11. Մալխասյանց Ստ. *Հայերեն բացատրական բառարան*: Հ. I: Երևան: «Պետհրատ»: 1944: 608 էջ:
12. Մալխասյանց Ստ. *Հայերեն բացատրական բառարան*, Հ. III: Երևան: «Պետհրատ»: 1944: 614 էջ:
13. Մովսիսի Խորենացու պատմություն հայոց: Քննական բնագիրը Ս. Արեղյանի և Ս. Հարությունյանի: Երևան: ԵՀ հրատ.: 1981: 587 էջ:
14. Մուրադյան Մ. *Բառագիտություն*: «Հայոց լեզվի պատմական քերականություն»: Հ. II: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1975: 383 էջ:
15. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»: Երկրորդ հրատ.: Հ. I, Երևան: ԵՀ հրատ.: 1979: 1140 էջ:
16. Պետրոսյան Ս. *Այնիմու քաղաքի և Արևաստծու դերը վաղ Ուրարտուի կրոնական քաղաքականության մեջ* // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Հ. VII: Գյումրի: 2004: 11-18 էջեր:
17. Պետրոսյան Ս. *Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում*: ՀՀ ԳԱԱ ՊԻ «Մերոպ Աշնեան մատենաշար»: Թիվ 21: Երևան: ՀՀ ԳԱԱ հրատ.: 2006: 473 էջ:
18. Պետրոսյան Ս. *Հին հայոց եռամասն ամսուայ Խորհուրդը* // «Հանդես ամսօրեայ»: Թիվ 1-12: Վիեննա: 1996: 420-453 էջեր:
19. Պետրոսյան Ս. «Մասնա ծեօրի» և «Վիպասանքի» գուգահեռ եռյակների շուրջ // «Հայկական «Մասնա ծեօրի» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը»: ՀՀ ԳԱԱ ԳԻ, ՀԱԻ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողով: Երևան: 2004: 68-75 էջեր:
20. Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ. *Հայոց երեք արքայագույնների հասարակական ֆունկցիաների մասին* // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Հ. III: Գյումրի: 2000: 57-72 էջեր:
21. Ջահուկյան Գ. *Հայերեն ստուգաբանական բառարան*: Երևան: «Ասողիկ» հրատ.: 2010: 819 էջ:
22. Арутюнян Н.В. *Топонимика Урарту*. Ереван. Изд-во АН Арм. ССР. 1985. 307с.
23. Афанасьева В.К. *Шумеро-аккадская мифология* // “Мифы народов мира”. Т. II. Москва. Изд-во Советская энциклопедия. 1988. 647-653 сс..
24. Гамкрелидзе Т.В., Иванов В.В. *Индоевропейский язык и индоевропейцы*. Т. II. Тбилиси. Изд-во Тбилисского университета. 1984. 1328 с.
25. “Древнегреческо-русский словарь”. Составл И. Х. Дворецкий. Т. I. Москва. Гос. изд. иностранных и национальных словарей. 1958. 1043 с.
26. Дьяконов И.М. *К вопросу о символе Халди*. // «Древний Восток». 4. АН. Армянской ССР. Институт Востоковедения. Ереван. Изд-во АН Арм. ССР. 1983. 190-194 сс..
27. Мелетинский Е.М. *Тор* // Мифология. Золотой фонд. Энциклопедия. Москва. Науч. изд. “Большая российская энциклопедия”. 2003. 545-546 сс..
28. Меликишвили Г.А. *Урартские клинообразные надписи*. №1. М.. Изд-во АН СССР. 1960. 502 с.
29. Мещанинов И.И. *Аннотированный словарь урартского (биайнского) языка*. Ленинград. Изд-во “Наука”. 1978. 387 с.

References

1. Abeghyan M. Works. [*Yerker*]. Yerevan. Academy of Sciences publication. H. I. 1966. 571 p. (in Armenian)
2. Adonts N. History of Armenia. The sources. X-VI centuries BC [*Hayastani patmut'yun. Akunk'nery. X-VI dd. M.t. a.*]. Yerevan. "Hayastan" pub. 1972. 430 p. (in Armenian)
3. Alishan Gh. The ancient Armenian faith or heathen religion [*Hayots' hin havatk'y kam het'anosakan krony*]. Yerevan. "Hrazdan" pub. 2002. 295 p. (in Armenian)
4. Acharyan H. Root dictionary of Armenian language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YSU pub. H. I. 1971. 699 p. (in Armenian)
5. Acharyan H. Root dictionary of Armenian language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YSU pub. H. III. 1977. 635 p. (in Armenian)
6. Acharyan H. Root dictionary of Armenian language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YSU pub. H. IV. 1979. 674 p. (in Armenian)
7. "Vocabulary of Armenian language" [*Barrgirk' hayots'»*]. Yerevan. "Matenadaran" pub. 1975. 445 p. (in Armenian)
8. "A Reading book of History of the Armenian People" [*Hay zhoghovrdi patmut'yan k'restomatia*]. H. I. Yerevan. YU pub. 1981. 943 p. (in Armenian)
9. Hmayakyan S. The state religion of the Kingdom of Van [*Vani t'agavorut'yan petakan krony*]. Yerevan. AS pub. 1990. 158 p. (in Armenian)
10. Ghanalanyan A. Popular tales [*Avandapatum*]. Yerevan. AS pub. 1969. 530 p. (in Armenian)
11. Malkhasyants St. Armenian defining dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. H. I. Yerevan. State pub. 1944. 608 p. (in Armenian)
12. Malkhasyants St., Armenian defining dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. H. III. Yerevan. State pub. 1944. 614 p. (in Armenian)
13. History of Armenia of Movses Khorenatsi [*Movsisi Khorenats'woy patmut'iwn hayots'*]. Yerevan. YSU pub. 1981. 587 p. (in Armenian)
14. Muradyan M. Lexicology. "Historical Grammar of the Armenian Language" [*Barragitut'yun. «Hayots' lezvi patmakan k'erakanut'yun»*]. H. II. Yerevan. AS pub. 1975. 383 p. (in Armenian)
15. "A new vocabulary of the Armenian language" [*Nor barrgirk' haykazean lezui*]. H. I. Yerevan. YSU pub. 1979. 1140 p. (in Armenian)
16. Petrosyan S. The role of the city of Alniunu and the Sun God in the political religious of early Urartu [*Alniunu k'aghak'i yev Arevasttsu dery vagh Urartui kronakan k'aghak'akanut'yan mej*]. // "Scientific works" of the Shirak center for armenological studies of the AS. H. VII. Gyumri. 2004. 11-18 pp.. (in Armenian)
17. Petrosyan S. The social estates and the manifestation of principle of three-estate society in ancient Armenia [*Dasery yev yerradasut'yan drsevorunnery hin Hayastanum*]. Yerevan. AS pub. 2006. 473 p. (in Armenian)
18. Petrosyan S. The significance of old Armenian three part Month [*Hin hayots' yerramasn amsuay Khorhurdy*]. // "Handes Amsorya". N 1-12. Vienna. 1996. 420-453 pp.. (in Armenian)
19. Petrosyan S. About the parallel triads in the "Sasna tsrer" and "Vipasank" [*«Sasna tsreri» yev «Vipasank'i» zugaherr yerryakneri shurj*]. // AS pub. Yerevan. 2004. 68-75 pp. (in Armenian).
20. Petrosyan S., Petrosyan L. About the social functions of the Armenian triple princes [*Hayots' yerek' ark'ayazunneri hasarakan funkt's'ianeri masin*]. // "Scientific works" of the Shirak center for armenological studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia. H. III. Gyumri. 2000. 57-72 pp.. (in Armenian)

21. Jahukyan G. Armenian etymological dictionary [*Hayeren stugabanakan barraran*]. Yerevan. "Asoghik" pub. 2010. 819 p. (in Armenian)
22. Arutyunyan N.V. Toponyms of Urartu [*Toponimika Urartu*]. Yerevan. AS pub. 1985. 307p. (in Russian)
23. Afanas'eva V. K. Sumer-Akkadian mythology [*Shumero-akkadskaya mifologiya*] // "Myths of the peoples of the world"// T. II. Moscow. "Soviet Encyclopedia" pub. 1988. 647-653 pp.. (in Russian)
24. Gamkrelidze T.V., Ivanov V.V. Indo-European and the Indo-Europeans [*Indoyevro-peyskiy yazyk i indoyevropeytsy*]. T. II. Tbilisi. Tbilisi University pub. 1984. 1328 p. (in Russian)
25. "Ancient Greek-Russian Dictionary" [*"Drevnegrechesko-russkiy slovar"*]. T. I. Moscow. State. ed. foreign and national dictionaries pub. 1958. 1043 p. (in Russian)
26. Dyakonov I.M. To the problem of the symbol of Khaldi [*K voprosu o simvole Khaldi*]. // "Ancient East". 4. Yerevan. AS pub. 1983. pp. 190-194. (in Russian)
27. Meletinsky E.M. Thor [*Tor*].//Mythology. Golden fund. Encyclopedia. Moscow. "Great Russian encyclopedia" pub. 2003. 545-546 pp.. (in Russian)
28. Melikishvili G.A. Urartian cuneiform inscriptions [*Urartskiye klinobraznyye nadpisi*]. N 1. Moscow. AS pub. 1960. 502 p. (in Russian)
29. Meshchaninov I.I. Annotated dictionary of the Urartian (Biaynian) language [*Annotirovannyi slovar' urartskogo (biaynskogo) yazyka*]. Leningrad. "Nauka" pub. 1978. 387 p. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: 10.04.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 02.05.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.06.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Սարգիս Գարեգինի ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, դոցենտ,
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
ստաջատար գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,
Էլ. հասցե՝ Vahe1996@mail.ru <https://orcid.org/0009-0008-8880-6936>

Sargis Garegin PETROSYAN: Doctor of Historical sciences, associate professor,
Lead Researcher of Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA,
e-mail: Vahe1996@mail.ru <https://orcid.org/0009-0008-8880-6936>

Саргис Гарегинович ПЕТРОСЯН: доктор исторических наук,
доцент, ведущий научный сотрудник Ширакского центра
арменоведческих исследований НАН, Гюмри, РА,
эл. адрес: Vahe1996@mail.ru <https://orcid.org/0009-0008-8880-6936>

Բ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
FOLKLORE STUDIES
Ф О Л Ь К Л О Р И С Т И К А

ՀՏԴ՝ 81՝ 1

DOI: 10.52971/18294316-2023.26.1-75

«ՏՂԱ ԴԱՎԹԻ ԵՎ ԱՂՋԻԿ ԽԱՆԴՈՒԹԻ ՀԵՔԻԱԹԻ»
ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ռոզա Պ. Հովհաննիսյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հոդվածում անդրադարձել ենք էպոսի միապատում ճյուղերից մեկի՝ «Տղա Դավիթի և աղջիկ Խանդութի հեքիաթի» լեզվի և ոճի քննությանը, ժողովրդական աշխարհընկալման ու լեզվամտածողության, խոսքային ասույթի (դարձվածային միավորներ, մաղթանքներ, օրհնանքներ ու անեծքներ, երդումներ) ձևավորմանը, պատկերավորման համակարգի մի քանի առանձնահատկությունների: Պատումի բնօրինակը[4], որը պատմել է Թադևոս առաքյալի վանքի գյուղացի Դավիթը, և գրի է առել Խաչիկ վրդ. Դադյանը, լույս է տեսել ակադեմիական հրատարակությամբ: Քննվող պատումն առաջին անգամ տպվել է 1895 թ. «Արարատ» ամսագրի նոյեմբերի և դեկտեմբերի համարներում [3]: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել են պատմահամեմատական, ինչպես նաև մասնագիտական գրականության ու աղբյուրների համադրության ու վերլուծության մեթոդները: Վերլուծություն. Էպոսի միապատում ճյուղի լեզվաոճական քննությունը վկայում է մեր ժողովրդի բանավոր լեզվամտածողության ու երևակայության, ազգային հոգեկերտվածքի ու բնավորության միասնականությունը: Արդյունքները. Մերօրյա մարտահրավերների համապատկերում էպիկական պատումների լեզվաոճական քննությունը, մասնավորապես՝ առանցքային բանաձևերի մեկնաբանությունը, անշուշտ, ունի արդիական նշանակություն, քանի որ թույլ է տալիս հասկանալ հայի ինքնության ծածկագիրը, ճանաչելի դարձնել ազգային էպոսի ուղերձներն ու արժեհամակարգը: 2012 թ. լույս տեսավ էպոսի միաճյուղ պատումներից մեկը՝ բարբառային նոր տարբերակով[6], որի փոխադրումը Վանա բարբառից Կարնո բարբառի Գյումրու ենթախոսվածքի և գրչագրումը մենք ենք կատարել /-Ռ.Հ./, իսկ այս հոդվածում անդրադարձել ենք լեզվի և ոճի քննությանն ու բանարվեստի առանձնահատկություններին:

Բանալի բառեր՝ *պատում, էպոս, հեքիաթ, լեզվաոճական քննություն, Գարնա բարբառ, բանաձևային ասույթ, օրհնանք, բարենաղթանք, երդում:*

Ինչպես հղել՝ Հովհաննիսյան Ռ., «Տղա Դավիթի և Խանդութ խանումի հեքիաթի» լեզվաոճական քննություն // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2023: Ն. 1(26): 75-85 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.1-75

LINGUO-STYLISTIC ANALYSIS OF "THE TALE OF DAVIT THE LAD AND KHANDOOT THE LASS"

Roza P. Hovhannisyana

The Shirak Centre for Armenological Studies of NAS, Gyumri, RA

Abstract

Introduction: The article considers the analysis of the language and style of one of the branches of the epic "The Tale of Davit the Lad and Khandoot the Lass", the formation of popular worldview and way of thinking, verbal utterance (phraseological units, wishes, blessings, curses, oaths), as well as several features of the imagery system. The original of the story, told by Davit, a peasant from the Apostle Thadeus Monastery and recorded by Khachik vardapet Dadyan, was printed as an academic publication in 1895 in the November and December issues of the "Ararat" magazine[3]. **Methods and Materials:** Historical-comparative, as well as methods of combination and analysis of expert literature and sources were used in this work. **Analysis:** The linguistic and stylistic analysis of this single branch of the epic testifies to the unity of our people's oral language thinking and imagination, national psyche/mentality/ and character. **Results:** In the context of today's challenges, the linguistic and stylistic analysis of the epic narratives, in particular, the interpretation of key formulas, certainly has a modern significance, because it enables to understand the code of the Armenian identity and make the messages and value system of the national epic recognizable. In 2012, one of the narratives of the epic was published in a new dialectal version, whose arrangement from the Vana dialect to the Gyumri accent of the Karno dialect has been penned by us /-R.H./.

Key words: *narrative, epic, tale, linguo-stylistic analysis, Karno dialect, saying, blessing, wish, oath.*

Citation: Hovhannisyana R. Linguo-Stylistic Analysis of "The Tale of Davit the Lad and Khandoot the Lass" // "Scientific Works" of SCAS NAS RA, Gyumri, 2023. V. 1(26). 75-85 pp.

DOI: 10.52971/18294316-2023.26.1-75

ЛИНГВО-СТИЛИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ "СКАЗАНИЯ О ДАВИДЕ МОЛОДЦЕ И ХАНДУТ ХАНУМ"

Роза П. Оганнисян

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

Аннотация

Предисловие: В статье рассмотрены язык и стиль одной из ветвей эпоса «Сказание о Давиде молодце и Хандут ханум», формирование народного мироощущения и языкового мышле-

ния, словесного высказывания (вербологических единиц, пожеланий, благословений, проклятий, клятв), некоторые особенности системы визуализации. Оригинал сказания, пересказанного Давидом, жителем монастыря Апостола Фадея, и записанного Хачиком вардапет Дадяном, был опубликован в академическом издании. Рассматриваемый рассказ был впервые опубликован в 1895 году, в ноябрьском и декабрьском номерах журнала "Арагат"[3]. Методы и материалы: В работе использовались историко-сравнительный метод, а также методы сочетания и анализа специальной научной литературы и источников. Анализ: Лингво-стилистический анализ одной единой ветви эпоса свидетельствует о единстве устно-языкового мышления и воображения нашего народа, национальной психики /менталитета/ и характера. Результаты: В контексте вызовов сегодняшнего дня лингво-стилистическое изучение эпических сюжетов, в частности, интерпретация ключевых формул, безусловно, имеет современное значение, поскольку позволяет понять код армянской идентичности, делает узнаваемыми послы и систему ценностей народного эпоса. В 2012 году был опубликован один из пересказов эпоса, с новой диалектной версией, [6] перевод которой с ванского диалекта на гюмрийский говор каринского диалекта и запись были выполнены нами /-Р.О./ . В настоящей статье мы обратились к рассмотрению языка и стиля, особенностей устного творчества.

Ключевые слова: сказание, эпос, пересказ, стилистический анализ, диалект, формульное изречение, благословение, пожелание, проклятие, клятва.

Как цитировать: Оганнисян Р. Лингво-стилистический анализ «Сказания о Давиде молодце и Хандут Ханум». // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 1(26). 75-85 сс. DOI: 10.52971/18294316-2023.26.1-75

ՆՆՆՆՆՆՆ. Ուսումնասիրության առարկա պատումն աչքի է ընկնում ժողովրդական լեզվամտածողության տարերքով, գործողությունների դինամիզմով, կերպարների հյութեղ լեզվամտածողությամբ, Կարնո բարբառի Գյումրու ենթախոսվածքի արագ տեմպով [2], նրան բնորոշ դարձվածային միավորներով ու ասույթաբանությամբ:

Մեր նպատակամիտումն է՝

ա) Արդի ժամանակների մարտահրավերների համատեքստում անդրադառնալ հայ արարչագիր էպոսի՝ բանավոր ավանդված վիպական մի տարբերակի՝ քննելով ու վերարժևորելով հայ լեզվի ու ոգու միասնականությունը:

բ/ Ըստ էության, հնամենի խոսքային ասույթը միտված է սահմանային ճգնաժամերի պահին հզորացնելու էթնոսի պաշտպանական մեխանիզմները՝ լուծելով գոյաբանական խնդիրներ ու դառնալով ազգի ինքնագիտակցության ու արժանապատվության ապացույց, ազգային բնավորության հասունության չափանիշ:

Հայ մտքի ստեղծաբանական ակունքներում, անշուշտ, մեծ դեր ունի հայոց դյուցազնավեպը, որն իր պատումներով մեր ուղն ու ծունձն է դարձել, մեր նշանագիտական տիրույթը և վկայում է հայ մտածողության նախեղակ ձևերն ու մտքի տարածությունը պատմական ժամանակներից ի վեր:

Պատումի լեզուն ու ոճը Կարնո բարբառի համապատկերում

Ընդգծենք, որ մեր կողմից քննվող բանահյուսական պատումի շրջանակում շատ բառեր բարբառային երանգ են ձեռք բերել Կարնո բարբառի համապատասխան քերականական փոփոխությունների (հոլովում, խոնարհում)՝ *խանումէն, ընձէն, յախէն,*

*օսկօն, լուս, մեկէն, քեզի, ընձի, կայնի, կերտանք, դրգէն, ինչպէս նաև հնչյունական-բարբառային ձևերի՝ գրլօխ, լուս, գօվագան, վարբէղ, ախպեր, մէր, արդյունքում: Հիշյալ բարբառում բաղաձայնական համակարգը քառաշարք է՝ ձ՝-ձ-ծ-ց, բ՛-բ-պ-փ, բառակըգբում՝ հ ձայնեղի առկայությամբ: Անորոշ հոդը հետադաս է՝ Մէ մենձ **աստղըմ Մըսրէն յէլավ**...Օր զարգէց, մէ **գագըմ** բ՛ էրնէն կըդոսով /6, էջ 83/: **Կագայիմ ծառըն ի նձ է, չէս կըդոէ**...*

Բացարձակորեն իշխում են բայի ներկա ժամանակի՝ Կարնո բարբառին (և առհասարակ արևմտյան բարբառներին) ներհատուկ համադրական ձևերը՝ **կըսէմ, կէղնի, գ՛ ուքա, գ՛ ընգնի և այլն**: Ստացականության կրկնակի արտահայտությունը նս հատուկ է պատումի տեքստին, օրինակ՝ **Դու էղնիս քու աստվաձդ, քու կամկըդ է** և այլն:

Անտարակույս, ազգային լեզվամտածողության վրա ազդեցություն են թողնում նաև այլալեզու մշակութային միջավայրերը, քանի որ մշակույթները ձևավորվում ու զարգանում են փոխադարձ շփումներով ու ներթափանցումներով, երկխոսությամբ միմյանց փոխանուցելով: Վկայաբերենք մի քանի օրինակ՝

ա) **Յէս ի նձ էնէմ, օր ընօր պատկերը տէսնիմ, // ընօր բ՛օյ-բ՛ ուսատը թամաշա էնէմ**: Պարսկերեն «թամաշա» նշանակում է «գրոսանք, տեսարան»: [1, էջ 148]

բ) **Մաղի քիտ-հ՛ անգաջը կըդոէց, // Նիզազի ձերը զարգէց:// Մնացաձ ղօշունը էս օր տէսավ, ցըրվավ: գ) Հըմը կը վախէնամ մուխաննաթություն էնէս** /6, էջ 83/: դ/ Ժամանագըն օր **թըմնավ**, էդ պըզդի կընիզը պառգավ, էրէխա բերավ: [6, էջ 21] է/ Հ՛իրան **բայլու** էր, օր Շուն Մէլիկը կէղնի թակավօր, Դավիտին կըզրգէ:

Ակներն է, որ քննվող պատումի լեզվական իրացումներում բավականին առատ է փոխառյալ բառերի գործածությունը, հատկապես արևելյան լեզուների՝ պարսկերենի, արաբերենի ու թուրքերենի ազդեցությամբ:

Բանավոր ավանդված պատումում հաճախ ածանցող հիմքը փոխառյալ բառ է /վախէնամ **մուխաննաթություն** էնէս/, իսկ բառաքերականական ձևը՝ հայերեն, ինչպէս՝ Ըմբէս յէլավ, օր քըրդիկը էս ու էն **թարաֆէն** կըչոռար, **կամ՝ ուլիծով** անցան, ինչ **ռաստ էգավ**:// Դավիտը հարցրավ // Ըսիզ ի նձ է, ընիզ ինձ է: Պատահում է նաև, որ թէ՛ հայերեն, թէ՛ փոխառյալ արմատին ավելանում է փոխառյալ բառակազմական մասնիկ՝ նախածանց (օր.՝ Հ՛իրարէն **բ՛ էխարար** գ՛ էլնին լեռնանցկ /6, էջ 101/ **և այլն**):

Ուշագրավ է, որ Կարնո բարբառակիրների լեզվամտածողության դրսևորումներում, ժողովրդաբարբառային հարադրություններում ու դարձվածային միավորներում առկա են օտար բառանվանումներ ու արտահայտություններ, որոնք հաճախ դառնում են բարբառային բառերին համաձույլ՝ **Ղալաթ** էս էրէ: Էդ վօ՞ր **դուշմանըս** էր:

Բանարվեստի առանձնահատկությունները

Ըստ էության, խոսքային նմուշը հաճախ պատկերավոր է գործողությունների թվարկմամբ, որ հատուկ է բանավոր պատումների (նարատիվ) տեքստերի լեզվին: Ամեն դեպքում պատումի տեքստը յուրատիպ մտածողության համակարգ է, որտեղ **պոէտիկայի տարրերը** (պատկեր, մետաֆոր, առոգանություն և այլն) աձում են լեզվից: Կարող ենք ասել, որ բանարվեստի բոլոր տարրերը լեզվի արտաբխումներ են:

Լեզուն իր կիրարկողի ճակատագիրն է. պատմական բախտի մեծ վավերացումներն արտահայտվում են լեզվական իրողություններով կամ բանավոր (վերբայ) պատումներով: Կյանքի գեղարվեստականացումը՝ Կարնո բարբառի ուշագրավ դրսևորումներով, ըստ էության, մտքի ու զգայականի կենսուժի հաստատում է դառնում, իսկ տեղանունների հիշատակմամբ ուրվագծվում է պատմական կոլորիտային միջավայրը: Օրինակ՝ Կոէսաձոր՝ Կոէս գյուղ. գտնվում է Խոյ ավանում, Փեռա գյուղ. գտնվում է Հեր-Խոյ գավառում, Մարութա Բանձր Աստվածածին (այսպես է կոչվում Մասնա լեռների ամենաբարձր գագաթի՝ Մարաթուկի վրա շինված վանքը, որ Մասնա ժողովրդի ամենամեծ ուխտատեղին է) և այլն:

Պատումում բառը խիստ խաղացկուն է. ընդհանրապես ոճական բանադարձումներն այնքան համ ու հոտով են միահյուսվում, որ դառնում են բանաստեղծական ապրում-պատկեր: Ասույթային բանաձևերում բացահայտվող հարաբերությունների համակարգից բացի՝ կարևոր է տեքստն ըմբռնել որպես հատկանիշների ամբողջություն, այսինքն՝ լեզվական նշանների կապակցվածություն:

Հայոց դյուցազնավեպի առանցքային բանաձևերի մեկնաբանությունը, անշուշտ, ունի արդիական նշանակություն, քանի որ այն թույլ է տալիս հասկանալ մեր էության ծածկագիրը: Տարբեր պատումների և մեր կողմից քննվող պատումի մեջ ևս առանցքային ավանդական բանաձև է «Հացն ու գինի, Տեր կենտանի» արտահայտությունը. *Յա՛ հաց ու գինի, Տեր կենտանի. // Յա Մարութա բ՛արցըր Աստվածածին, Խաչ պատերազմին // Օր բ՛ազմավ մեր թևին* /6, էջ 83/: Երդման, առհասարակ աղոթքի մի բանաձև, որ կրկնվում է գլխավորապես Էպոսի Մշո տիպի պատումներում: «Հաց ու գինին» քրիստոնեական պատարագի հաղորդությունն է, իսկ «Տեր կենտանին» նույնն է, ինչ Աստված կենդանի՝ ի հակադրություն կուռքերի, որոնք անկենդան են:

Կարնո բարբառով խոսողների լեզվամտածողության ու բառակերտման առանձնահատկությունները, իրենց խոսքը գունազարդելու ու ճոխացնելու միջոցները առավելապես դրսևորվում են բանաձևային ասույթներում, որոնցից են՝ *Մէրը մանուզը ուրացել է: Կռիվներս կրողիվ է: Հող էիր, հող դառցընէմ* /6, էջ 44/, *Բւ գ՛ըլօխս տանօղը հըլը մօր փօրէն չի յէլէ:*

Բանաձևային ասույթները ձևավորված են ժողովրդական դարձվածաբանության յուրահատկություններով. դրանք մեծավ մասամբ համեմատության, փոխաբերության, մակդիրի պատկերավորման հնարներով ավանդական ասույթներ են՝ կարճ բանաձևումով ու ներփակ կաղապարով:

Ասույթային բանաձևերը՝ *օրհնանքներ ու բարեմաղթանքներ, երդումներ ու անեծքներ*, Էպոսում առավել հաճախադեպ կիրարկվող ժանրեր են, որոնք առօրյա-խոսակցական ոճում խոսքին հաղորդում են առանձնակի իմաստ ու գրավչություն, քանի որ հիշյալ ժանրերի հիմքում խոսքի հմայական գործության նկատմամբ ունեցած հավատն է: Խոսողը համոզված է, որ իր սրտի ցանկություն-փափազը խոսքի միջոցով հաղորդում է դիմացինին: Ցանկության այս բանաձևերն ի հայտ են բերում անեծքի ու օրհնանքի ժանրերի հնագույն արմատներն ու հայ ժողովրդի կենսամտածողությունը:

Ուշագրավ է, որ *կշտամբանքի խոսքերը* հաճախ արտահայտված են մեղմասու-

թյամբ, հատկապես եթե տարիքային բարձր խմբի ներկայացուցիչն է կշտամբում-հանդիմանում ջահելին. «Քու տունըդ չավիրվի, քու տունըդ չքանդվի. . . տունըդ շինվի» և այլն: Բհարկե, տեքստում հանդիպում են նաև անեծքի ժանրին մոտ պատկերավոր արտահայտություններ, որոնք իրադրական ծագում ունեն և այս ժանրի ավանդական կառույցից դուրս են, գործիչնակ՝ արտատեր պառավի հանդիմանություն-կշտամբանքը, երբ Դավիթը հողին հավասար է անում նրա արտը. -*Լանդբադ թակավորի նեղն ու աղեղը քու սիրողդ էղնի, //Օր էս օյինը խաղցել էս մեր գրլխին, //Օխտը ախճգա հ'աշկ ու ումուղ // Էս փշուր կորեզն էր /6, էջ 61/:* «Էս փշուր կորեզն էր» պատկերավոր արտահայտությունը նվազաբերության հնարով է:

Ընդգծենք, որ քննվող պատումի մեջ ջահելի շուրթերից կշտամբանքը հնչում է առանց մեղմասության, անխնա գույներով /6, էջ 61/- Դավիտն ըսավ.- *Պառա՛վ, քու բ'երանըդ ծըռվի, // Ընձի հ'ընձի՞ անիձիր:* Ասվածի հաստատումն է նաև Դավիթի և հալիվորի հարց ու պատասխանի զուգադրումը: Ի պատասխան Դավթի այն հարցին՝ Թե կըռնա՞մ՝ էս գորկը ցըրեմ, // չալիվորը թե՛ Քու տունըդ չավիրվի, // Յերգընկեն կըրագ թափի, չի կըռնա էդ գորկը ցըրե (առկա է նաև չափազանցություն) // Դու ի՞նձըդ բըղի ցըրես: // Դավիտը ըսավ.- *Չիերի բ'երնի կրագը քեզի վառե, բ'իձա՛:* /6, էջ 79/

Դրվագային որևէ հատվածի տեքստային քննությամբ անգամ ակներև է, որ լայն գործածություն ունեն համագործածական կամ միջոճական բառերը [էրագ, խօրուրտ, գորկ, վարած հող, արդատեր պառավ, վօրսատեղ, փայլեվան և այլն], որոնք, հանդես գալով ուղղակի կամ փոխաբերական իմաստներով, երբեմն ուշագրավ նրբերանգներ են հաղորդում խոսքին՝ ստանալով ռճական յուրահատուկ կիրառություն:

Պատումը գլխավորապես հյուսված է բարբառային և ժողովրդախոսակցական բառապաշարի հիմքի վրա: Ընդունելով բարբառային բառերի գործածության բաժանումն ըստ գավառաբանությունների ու հասարակաբանությունների՝ նշենք, որ վերջիններս գերակշռում են վիպական հյուսվածքում: Թերևս դրա շնորհիվ է, որ լեզուն հասկանալի է տարբեր բարբառներով խոսող մարդկանց:

Ընդգծենք, որ հայ գրական լեզվի և Կարնո բարբառի տարբերություններ կարելի է նկատել նաև բառերում, որոնք ընդհանրական չեն և սահմանափակվում են տարածքային գործածությամբ: Ուստի այդ կարգի բառերն առանձնացրել ենք իբրև գավառաբանություններ: Դրանցից են՝ *գօմփուլ* զարգեց /6, էջ 44 /, հըլը լեզուն էլ վառեց, դառցավ թըլիզ /6, էջ 39/, *բօխճա* /շորի կապոց/, *ալան-թալան* /ավարառություն/, *հավէս* /1. Փափագ, 2. լավ տրամադրություն, 3. եռանդ, *ուզընգան* /1. աղջիկ ուզող տղան, 2. Խնամախոս/, *հախե գալ* /1. պատժել, 2. գսպել, 3. խեղճացնել, *խօսկ-խօրատա* /խոսք ու զրույց/, *յախեն* /օձիքը/ ազատեց և այլն:

Մեր կողմից ուսումնասիրվող պատումում նկատելի են գռեհկաբանությունների որոշ տարրեր, թեև դրանք քիչ տոկոս են կազմում և նշված չեն ամբողջական բառերով: Խանդուտը թե. -Օխտը փայլեվան ընձի հըմար // Նստել են Նալբայժանի լեռնանցկի վըրեն, // Օր էգան, քեզի հախտեցին, ընձի առան, // Չէ՞ն ըսե՞ *դուս ընգաձ անառակ, // Մըսըրեն մե գլաղեմ էգավ, // Դուն քեզի ընօր գիրգը քըցիր:* /6, էջ 87/

Ծիսական մրցության մշակույթը, որ բնորոշ է հայկական հրաշապատում հեքիաթներին, առկա է նաև էպոսի՝ որպես հեքիաթ պատմված այս նմուշում, որտեղ ավանդական կենցաղն ու հարաբերությունները պատկերված են գրական կերպարների լեզվամտածողության ձևերով՝ ազատ ու շղթայապարծ խոհականությամբ: Ու երբ աղջիկ Խանդութը որոշում է փորձել Դավիթի ուժն ու գորությունը, «Կանճեց ըսավ. - Հէ՛յ-հէ՛յ տըղա Դավիտ, // Սօվօր էս գլաղա-գլուղի. // Պաղրաստվի, օր կըռիվնէրս կռիվ է»: Դավիտը կը մտածէ. «Տէսնի՛ս էս անառագին, ըսքան մարտ ջարտի, հերիկ չէղավ, // Հըմի էլ ըսօր է դէմըս դրգէ. ընձի է՛լ պէտկ չէ էղ դանջըղը»: /6, էջ 101/

Հեքիաթային, գերբնական կերպարների ու տարրերի դրսևորումը վիպական պատումը դարձնում է իրականի ու երևակայականի միահյուսում, որն արտահայտվում է պատկերավորման ուշագրավ միջոցներով. Մելիքը, երբ Դավիթին փորձում է չամիչով ու կրակով՝ «Աստու հըրամանօվ հըրէշտագը ձեռը վերցըրավ, դըրավ կրագին»: Վերերկրային ուժի վկայաբերում կա նաև հետևյալ օրինակում՝ Աստու հրամանով քամին կայնավ, կագալի ծառը շըռճավ: Կամ՝ Գիշերը Մհերը վեր թռավ ըսավ՝ դուք վօ՞վ էք: // Ըսավ՝ մէնկ Գապրիէլ հըրէշտագն ենք, // Պաղրաստվի, օր հօկիդ բըդի առնինք: // Յ՛էլավ ըսավ՝ ամա՛ն, Գ՛ապրիէլ հըրէշտագ: /6, էջ 23/

Այս դրվագը լիովին շնչում է ժողովրդական մտածողության բաբախով: Ուշագրավ է, որ հուզական դրամատիզմն արտահայտված է հոգնակիաթիվ հարց ու պատասխանով, որը վկայում է հոգիների հավատքի մասին:

Հաճախ գաղտնագրված է այս կամ այն միտքը կամ բառը, որը բացահայտվում է հետագա շարադրանքում. «Արի՛ քու ամանատդ տար»: Այս խոսքով Մհերը Գաբրիէլ հրէշտակին է դիմում և «ամանատ» ասելով՝ նկատի ունի նրա հոգին: Խոսքաշղթայի մեջ ակնբերն է այս իմաստը. «Մհերը հիվընդցավ, Գապրիէլ հըրէշտագը էգավ, հօկին տըվավ»:

Հեքիաթի լեզվին ու ոճական հնարանքներին բնորոշ արտահայտություններն առատ են, որոնք վկայում են, որ պատումը հյուսված է գեղարվեստական հնարանքի յուրատեսակ միջոցներով:

Հ. Օրբելին նշում է՝ էպոսի պատումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ասացողներն իրենք ժանրային սահմաններ չեն դրել հեքիաթի և էպոսի միջև: Դրա պատճառն այն է, որ ժանրային մի շարք հատկանիշներ ընդհանուր են թե՛ էպոսի, թե՛ հեքիաթի համար, և շատ ասացողների կողմից էլ ասվել են որպես հեքիաթ: /8, էջ 100/

Հեքիաթին բնորոշ դարձվածքների կամ լեզվական կայուն արտահայտությունների կիրառումը ևս հատուկ է ուսումնասիրվող պատումին /գօռբա թակավօր, նագիր-վեզիրն ընգան վօղկէրը, օխտը փայլէվան ունիր, օխտն էլ էկան, Դավիտը գարտնավ, տեսավ՝ հ իրա ձին էլ է տրաքելու պէս: Մէ փայլէվանըմ դըրգէց, // Էս փայլէվանը օխտը գագ յերգար էր /6, 53 էջ/ /չափազանցություն/:

Դավիտ քաշէց թուրը, ըսավ. Յա՛ Տէր Աստված. // գարգէց կագալի ծառին // Պանրի պէս կիսէց, անցավ: Կամ՝ Չիուն ըմբէս գարգէց, // Կրագի պէս գօրկն ու վրանը վօղի տագ տըվավ /6, էջ 97/ /համեմատություն/:

Փաղաքշանքի խոսքերը և օրհնանք-բանաձևերը միտված են հերոսների գործնդեղ ուժի պահպանմանը. *Դավի՛տ, վերնիմ քեզի: Հ՛արեվիդ մաղաղ. /6, էջ 48 /, Քեռին ըսավ՝ մաղաղորդ էղնիմ, ընիգ ուլ չէ: // Դուն էղնիս քու աստվածդ, // Ընձի 40 օր ժամանա՛ց տուր և այլն:*

Կրկնաբերությունը, որի տարատեսակներն են նույնասկիզբը, նույնավերջը, հանգույցը և կցուրդը, առավել հաստու է դարձնում ասելիքն ու արտահայտչականությունը՝ գործիմակ՝

Մէլիկը ճվաց, ըսավ՝ Արբ՛, արբ՛, հօղ էիր, հօղ դառցրնէմ /6, էջ 83/

Օխտը օր՝ գիշեր ու ցերեզ երկեց Խանդուտ խանումին, գօվաց ու գօվաց. /6, էջ 87/

Նույնասկիզբ /հարակրկնություն/-

Էդ արդատէր պառավը օխտը ախճըգա տէր էր,

Օխտին էլ մարտու էր տրվել,

Օխտըն էլ օրփեվերի էին:/6, էջ 61/

Կամ՝ *Մէլիկն ըսավ՝ զրնա՛, ըդոնց քեռանցն ըսա՛*

Կա՛ւ Դավիտի գրլօխը,

Կա՛ւ քառուն կուս ախճիգ դրրգէն Մըսըր /6, էջ 69/ /Նույնասկիզբ պայման/:

Ինձ ռաստ էգավ՝ տավար, գօւէջ, ձի,

Դավիտը հարցրավ՝ ըսիգ ի՛նձ է: ընիգ ի՛նձ է:/6, էջ 33/

Կցուրդ. չափածո խոսքում բանաստեղծական տողի վերջին բառը /հնչյունախումբը, բառակապակցությունը/ կրկնվում է հաջորդ տողի սկզբում, իսկ արձակ խոսքում նախադասության վերջին բառը կրկնվում է հաջորդ նախադասության սկզբում. [4, էջ 40]

Օր ձեռը մրդցրրավ կրագի մէճը, վառավ,

Օր վառավ՝ մրդցրրավ բ՛երանը, լաց էղավ.

Օր լաց էղավ. նագիր-վեզիրը կայնան

Թէ՛ թագավօրն աքրաձ կէնա,

Տեսար, օր ըսիգ էրէխա է, խէկը չի կըդռէ:/6, էջ 39/

Կցուրդի ուշագրավ օրինակ է հետևյալը.

- *Փախավ ախճիգ Խանդուտը,*

Տղա Դավիտը հէդէվէն հ՛ընգավ.

Հ՛ընգավ հէդէվէն.

Դավիտի ձիու պօճէն կաքաձ գուրգը

Տէլ յէսօր գէդինը պաղռէլօվ կէրտա /6, էջ 103/:

Տեքստում բազմաթիվ են նաև շրջադասության և աստիճանավորման պատկերավորման հնարները:

Բարձրացող աստիճանավորման հնարով մոտիմաստ բառերը հաճախ գուգադրվում են՝ խոսքի բովանդակությունն ուժեղացնելու կամ թուլացնելու համար: Վկայաբերենք բարձրացող աստիճանավորման օրինակ, երբ յուրաքանչյուր հաջորդ բառը /բառակապակցությունը ավելի հազեցած է իմաստով, ավելի ուժգին ու արտահայտիչ է, քան նախորդը [4, էջեր 26-27]: *Քառուն կուս ախճիգ են հավակէլ, // Իմ մինուճար ախ-*

ճիգն էլ հեղը // Էնդի գու լամ, կը մըղգըտամ /6, էջ 54/: Փայլեվաններն օր լըսին, թէ Խանդուրտ խանումին ըսիզ բրդի առնէ // Հէրսողան, դիվողան, ըսին՝ Մըսրրէն մէ գյաղա տղէմ գա, // Խանդուրտ խանումին առնէ. // Վայել չէ մէզի /6, էջ 93/:

Պատումի լեզվին բնորոշ են հայկական ժողովրդական հեքիաթներում առավելապես կիրառվող այն դարձվածքներն ու չափազանցությունները, որոնք ունեն թվային խորհրդանշական իմաստ, օր.՝ Օխոր օր, օխոր գիշեր էդ քաղքի մէճը քէֆ-ուրախություն էղավ: Կամ՝ Թէ օր հըմի քացիմ զարգեմ, էրգուսն էլ քառսուն գազ կէրտան գէղնի տագը: 40 օանդակ բէ՛ղի վըրես /6, էջ 83/

Ուշագրավ է բառերի ձևաիմաստային խմբերի կիրառությունը՝ հատկապես հականիշների ու հոմանիշների համատեղ գործածությունը: Օրինակ՝ Մէլիկի վէզիրներն ըսին՝ Դավի՛տ, վէր՝ աստված, ցածը՝ դուն, // Մէզի չը ջարտէս: Մէ մէնձ աստղըմ Մըսրէն յէլավ, / Մէ պըզդի աստղըմ էլ՝ Սասունէն, / Էգան, զարգին յիրար: // Տէսավ, օր էս պըզդի աստղը մէնձ աստղդին հախտէց: /6, էջ 83/

Մի այլ նախադասության մեջ պըզդիզ բառի հականիշային իմաստն արտահայտվում է շատ բառով՝ «Սասունը յինքը պըզդիզ է, բայց ուժը շաղ է»: Դավիտը աշեց, տէսավ՝ հերը Մէլիկի թևին գիր է գրէ. «Ըսիզ՝ Դավիտի մէնձ ախպեր, Դավիտ ընօր՝ փօրքը ախպեր» /6, էջ 83/: (Այս դրվագը գրի մի առանձին գաղտնակարգ է՝ մսե հմայիլի մոտիվին զուգահեռ):

Լեզվաոճական առումով նրբագեղ պատկեր է, երբ Դավիթը «Թաշգինագըմ գորձէլ տըվավ, սըրդի մէճը ինձ կար-չկար, վըրէն գըրէց, // Թաշգինագն էլ նըվէրներով ծաղ-գըցըրավ, // Մշուդի հէղ ճամպիէց Քիլիսէ՛ Խանդուրտ խանումի քով» /6, էջ 87/: Գիր-նշաններով թաշկինակագրույցը հեքիաթի մոտիվներից է ու սրտի պատգամ՝ ուղղված ցանկալի կամ որոնելի կնոջը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. «Տղա Դավիթ» միաձյուղ պատումի վիպական առաջընթացի ստեղծագործական հիմքը լեզվական տարերքն է: Տեքստային իրացումներում բարբառային բառերի գերակայությամբ հեքիաթին կամ էպոսին հատուկ երանգ է հաղորդվում: Համագործածական, ժողովրդախոսակցական, բարբառային ու օտար բառերը պատումի խոսքարվեստում հոգեվիճակի, տրամադրության, հույզի ու ապրումի արտացոլման, նաև իրադրական միջավայրի ստեղծման լեզվաոճական հնարներ են:

Արարչագիր էպոսում գաղտնագրված են արքետիպային մտածողության դրսևորումները, էպոսը մարդկության փորձն է կամ նախեղակ փորձի մասին ինչ-որ պատկերացում, այն մտքի տարածություն է տիեզերական հարցադրումների համապատկերում: Անտարակույս, դյուցազնավեպի նախնական ուժականության փորձընկալումը մեզ վերստին մոտեցնում է մեր ակունքներին:

Մրանով հանդերձ՝ էպիկական պատումների լեզվաոճական քննությունը, մասնավորապես՝ առանցքային բանաձևերի մեկնաբանությունը, անշուշտ, ունի արդիական նշանակություն, քանի որ այն թույլ է տալիս հասկանալ հայի էության ծածկագիրը: Ազգային վեպն այսօր էլ մնում է համազգային մտածողության և բնավորության վերածնության գործություն:

Բացահայտել ենք Կարնո բարբառի՝ որպես լեզվի տարածքային տարբերակի դրսևորման որոշ առանձնահատկություններ ու բնորոշ գծեր վիպական բանահյուսության տեքստում, վեր ենք հանել այն դարձվածային արտահայտություններն ու ավանդական խոսքային բանաձևերը, որոնք առկա են էպոսի՝ մեր կողմից քննվող տարբերակում՝ ցույց տալով Կարնո բարբառը կրողների աշխարհընկալման առանձնահատկությունները, մտքի կենսունակությունը, բանավոր մշակույթի արքետիպային բնույթը ժամանակի ծիրում:

Գրականություն

1. Անառյան Հր. Հայերեն արմատական բառարան /ՀԱԲ/, հ. 2, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1926 թ.: 149 էջ :
2. Գրիգորյան Գ. Բերդի և Գյումրու ենթախոսվածքների տեմպի ուսումնասիրություն // Գիտական հոդվածների ժողովածու: Երևան: 2017: 203 էջ :
3. Դատեան Խաչիկ վարդապետ, Տղայ Դավթի եւ Աղջիկ Խանդույթի հեքիաթ / Արարատ, ԻԸ տարի (1895), թիւ ԺԱ, Էջմիածին, էջ 423-430, ինչպես նաև՝ Դատեան Խաչիկ վարդապետ, Տղայ Դավթի եւ Աղջիկ Խանդույթի հեքիաթ (շարունակություն) / Արարատ, ԻԸ տարի (1895), թիւ ԺԲ, Էջմիածին, էջ 476-479):
4. Չաքարյան Հ., Ավետիսյան Յու.Ոճագիտություն, տեքստագիտություն, հայոց լեզվի պատմություն: Երևան: «Չանգակ» հրատ.: 2018: 292 էջ :
5. «Սասնա ծռերը»՝ հայ գոյի բանաձև, Աշակերտական հանրապետական գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2022, 124 էջ:
6. Սարգսյան Ա, Պատում «Տղա Դավթի և աղջիկ Խանդույթի հեքիաթը» (Կարնո բարբառի Գյումրու խոսվածք փոխադրումը և գրչագրումը՝ Ռ. Հովհաննիսյանի): Երևան: Փրինթինֆո: 2012: 112 էջ:
7. Տղա Դավիթ, ԺԴ պատում / Սասնա ծռեր, Բ հատոր, մաս 2-րդ, Ընդհանուր խմբագրությամբ ակադեմիկոս Մ. Աբեղյանի, Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 318-350:
8. Օրբելի Հ. Հայկական հերոսական էպոսը: Երևան: 1959թ.:

References

1. Acharian Hr. Armenian root dictionary [Hayeren armatakan barraran] /HAB/, no. 2, Yerevan University Press, Yerevan, 1926, 149 p., (in Armenian)
2. Grigoryan G. Study of the tempo of sub-discourses of Berdi and Gyumri [Berdi yev Gyumru yent'akhosvatsk'neri tempi usumnasirut'yun] / A collection of scientific articles. Yerevan. 2017, 203 p. (in Armenian)
3. Reverend Datean Khachik, The Tale of Davit the Lad and Khandoot the Lass [Datean Khach'ik vardapet, Tghay Dawt'i yev Aghjik Khandut'i hek'iat']/ Ararat, 1895, No. ZA, Etchmiadzin, pp. 423-430, as well as: Reverend Datean Khachik, The Tale of Davit the Lad and Khandoot the Lass (continuation) / Ararat, Year 1895. No. ZB, Etchmiadzin, pp. 476-479). (in Armenian)
4. Zakaryan H., Avetisyan Yu. Stylistics, textual studies, history of the Armenian language [Vochagitut'yun, ek'stagitut'yun, hayots' lezvi patmut'yun]. Yerevan. "Zangak" publ. 2018. 292 p. (in Armenian)
5. "Sasna Tsrerer": formula of Armenian existence[«Sasna tsrery» hay goyi banadzev], Proceedings of the Student Republican Conference, Gyumri, 2022, 124 p., (in Armenian)

6. Sargsyan A. The Tale of Davit the Lad and Khandoth the Lass [*Patum «Tgha Davt'i yev aghjik Khandut'i hek'iat'y*]. Yerevan, Printinfo. 2012. 112 p. (in Armenian)
7. Tgha Davit, ZD patum / Sasna tsrer, [Tgha Davit', ZD patum / Sasna tsrer,]volume B, part 2, edited by Academician M. Abeghyan, Yerevan, Haypethrat, 1951, 318-350pp. (in Armenian)
8. Orbeli H. The Armenian heroic epic [*Haykakan herosakan eposy*]. Yerevan. 1959. (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: 29.03.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 26.04.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.06.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Ռոզա Պողոսի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,
էլ. հասցե՝ vard-rosa@mail.ru , <https://orcid.org/0009-0009-7553-7797>

Roza Pogos HOVHANNISYAN: Researcher at Shirak
Center for Armenological Studies NAS RA., Gyumri, RA,
e-mail: vard-rosa@mail.ru, <https://orcid.org/0009-0009-7553-7797>

Роза Погосовна ОГАННИСЯН: научный сотрудник Ширакского
центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА,
эл.адрес: vard-rosa@mail.ru <https://orcid.org/0009-0009-7553-7797>

ՇԻՐԱԿԻ ԱՍՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ¹

Լուսինե Խ. Ղուեջան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ
Գավառի պետական համալսարան

Ամփոփում

Նախաբան. Շիրակի տարածաշրջանի ժողովրդական բանահյուսության ամենատարածված ու կենսունակ ժանրերից են ասույթաբանական-բանաձևային կառույցները, որոնց մեջ ընդգրկված են խոսքային բանաձևերի տարբեր տեսակներ՝ առած-ասացվածքները, անեծք-օրհնանք-բարեմաղթանքները, երդումները, դարձվածքները, հմայական աղոթքները, ինչպես նաև ժողովրդական ավանդական հավատալիքները: Մեթոդներ և նյութեր. Հոդվածում պատմահամեմատական և տիպաբանական մեթոդների միջոցով, առկա տպագիր, արխիվային և մեր կողմից գրառված մեծաքանակ բանահյուսական նյութերի հիման վրա վերլուծվում և ներկայացվում են Շիրակի ասույթային բանահյուսությանն առնչվող տարբեր ու բազմազան խնդիրներ: Վերլուծություն. Ազգագրական յուրաքանչյուր տարածքի բանահյուսական նյութերի գրառումը, համակարգումն ու հատկապես ուսումնասիրումը համարվում է հայ բանագիտության կարևորագույն խնդիրներից մեկը: Հոդվածում, համակողմանի գիտական վերլուծության են ենթարկվել Շիրակի տարածաշրջանում մինչ օրս ակտիվ կենցաղավարող ասույթաբանական այն ժանրերը, որոնք իրենց մեջ ամփոփում են տարածաշրջանի ժողովրդի վարքուբարքի, կենցաղի, մտածելակերպի, բնավորության, ինչպես նաև բարոյահոգեբանական նկարագիրը: Արդյունքներ. Տարածաշրջանի կարճատև քառասունամյա կառույցներում զգալի տեղ են գրավում առած-ասացվածքները, դարձվածքները, խոսքի հմայական ներգործության հավատալիքից սերող անեծք-օրհնանք-երդումներն ու հմայական աղոթքները, որոնք աչքի են ընկնում իրենց պատկերավորու-

¹ Հետազոտությունը իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T 6B027 ծածկագրով:

թյամբ, իմաստային խորությամբ և լայնորեն օգտագործվում են անորյա ժողովրդախոսակցական լեզվում:

Բանալի բառեր՝ Շիրակ, տարածաշրջան, ասոյթաբանություն, կենցաղավարում, հմայական-կիրառական բանահյուսություն, ասոյթաբանական-բանաձևային կառույցներ:

Ինչպես հղել՝ Ղռեջյան Լ. Շիրակի ասոյթաբանական բանահյուսությունը, // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 1(26): 86-99 էջեր:

DOI: 10.52971/18294316-2023.26.1-86

PAREMIOLOGICAL FOLKLORE OF SHIRAK

Lusine Kh. Ghrejian

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: One of the most popular and stable genres of folklore in Shirak region is paremiological formulaic structures, which include various types of verbal formulas: proverbs, sayings, curses, blessings, wishes, oaths, phraseological units, words of threat and caress, as well as traditional folk beliefs. **Methods and materials:** On the basis of existing printed, archival and large amount of folklore materials recorded by us, different and various issues related to oral folklore of Shirak are analyzed and presented with historical, comparative and typological methods. **Analysis:** Recording, coordinating and especially studying the folklore materials of each ethnographic area is considered one of the most important problems of Armenian folklore studies. Paremiological genres are active in Shirak region until today, which summarize the behaviour, lifestyle, way of thinking, character, as well as the moral and psychological profile of the people of the region. The article comprehensively analyzes them. **Results:** Proverbs, sayings, curse-blessing-oaths and spells originating from the belief in the magical influence of word, standing out for their imagery, semantic depth and being widely used in everyday folk speech, occupy a significant place in the short-paremic formulaic structures of the region.

Key words: Shirak, region, paremiology, livelihood, magic-applied folklore, paremiological formulaic structures.

Citation: Ghrejian L. *Paremiological Folklore of Shirak*, // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. 1(26). 86-99 pp. DOI: 10.52971/18294316-2023.26.1-86

ПАРЕМИЧЕСКИЙ ФОЛЬКЛОР ШИРАКА

Лусине Х. Креджян

Институт археологии и этнографии НАН, Ереван, РА,

Аннотация

Введение: Одним из самых популярных и устойчивых жанров фольклора Ширакского региона являются паремические структуры формульного типа, в которые включены различные виды словесных формул - пословицы, поговорки, проклятия, благословения, благопожела-

ния, клятвы, фразеологизмы, заклинательные молитвы, а также традиционные народные верования. *Методы и материалы:* В статье, посредством историко-сопоставительного и типологического методов, на основе имеющегося печатного, архивного и записанного нами богатого фактического материала, анализируются и представляются разнообразные и многочисленные проблемы паремиологического фольклора Ширака. *Анализ:* Собираение, систематизация и в особенности изучение фольклорного материала отдельной этнографической области является одной из важнейших задач армянской фольклористики. В статье всестороннему научному анализу подвергнуты до сих пор активно бытующие в Ширакской области паремиологические те жанры, которые обобщают поведение, быт, мышление, нравы, а также морально-психологический облик жителей региона. *Результаты:* Пословицы, поговорки, фразеологизмы, а также, исходящие из веры в магическое воздействие слова проклятия-благословения-клятвы и заклинательные молитвы, выделяющиеся своей образностью, смысловой глубиной, занимают значительное место в кратких формульных изречениях региона и широко используются в бытовом разговорном языке.

Ключевые слова: Ширак, регион, паремия, существование, заговорно-заклинательный, прикладной фольклор, паремические высказывания формульного типа.

Как цитировать: Креджян Л. *Паремический фольклор Ширака*, // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри. 2023. Т. 1(26). 86-99 сс. DOI: 10.52971/18294316-2023.26.1-86

ՆԱԽԱԲԱՆ. 19-րդ դարի պատմական հանգամանքների բերումով Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից Արևելյան Հայաստան գաղթած բազմաթիվ հայ ընտանիքներ բնակություն են հաստատում երկրի հյուսիսարևմտյան շրջանում: Վերաբնակված հայերը՝ իբրև նախնիների ավանդույթների և սովորույթների պահպանողներ ու կրողներ, իրենց հետ բերում են ինչպես տվյալ գավառին բնորոշ կենցաղային սովորույթներ, այնպես էլ հոգևոր, մշակութային բազում այլ արժեքներ (հեքիաթներ, ավանդազրույցներ, զվարճախոսություններ, քնարական բանահյուսության տարաբնույթ ժանրեր, ժողովրդական ինքնատիպ պար ու երաժշտություն):

Շիրակի բանահյուսական ակունքները վաղնջական են, կապվում են հայ ժողովրդի պատմական ընթացքին և համարժեք են համազգայինին, ուստի և տարածաշրջանն աչքի է ընկնում հարուստ բանահյուսական մշակույթով:

Այս առումով նշված տարածաշրջանի ազգագրության և բանահյուսության հանդեպ հետաքրքրությունը առաջ է եկել 19-րդ դարի կեսերին: Բանահյուսական և ազգագրական նյութերի գրառման ասպարեզում բացառիկ դեր ունի բանահավաք, բանասեր Ադեքսանդր Մխիթարյանը, որ շուրջ կես դար հավաքել ու գրի է առել Շիրակի ժողովրդագիտական բազմաթիվ նմուշներ (հեքիաթներ, առածներ, ավանդություններ, անեծք-օրհնանքներ, երգեր ու պարերգեր և այլն), որոնք հետագայում հրատարակվել են «Փշրանքներ Շիրակի ամբարներից» [15] և «Տաղեր ու խաղեր» [16] ժողովածուներում:

Անուրանալի է ականավոր բանահավաք, գավառական բժիշկ Քաջբերունու դերը (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան), որի հավաքած բանահյուսական և ազգագրական նյութերը (մանկական խաղերգեր, շուտասելուկներ, աղոթքներ) հետագայում տպագրվել են «Ազգագրական հանդեսի» տարբեր հատորներում [19: 20]: Շիրակի բանահյուսության նմուշներ են առկա նաև Յովհաննես Նազարեանցի «Նախապաշարմունք»[18] ժողովածուում:

Շիրակի հոգևոր և նյութական կյանքի մասին արժեքավոր տեղեկություններ են պարունակում գրողներ Աղավնու և Մկրտիչ Արմենի կողմից հրատարակված պատմագեղարվեստական երկերում [1: 2], ինչպես նաև «Ալեքսանդրապոլ Ազգագրական էսքիզներ (պատմագագրական ուսումնասիրություն)» աշխատությունում [3]:

Այսօր տեղացիների, համայնքապետարանների աջակցությամբ հրատարակվում են Շիրակի մարզի տեղավայրերի մասին առանձին գրքեր («Փանիկ գյուղի պատմություն», «Մուսայելյան գյուղը և նրա բնակիչները», «Գյումրի. Քաղաքը և մարդիկ», «Մեր գյուղը. Մեծ Մանթաշ», «Ախուրյան համայնքի պատմամշակութային հուշարձանները» և այլն), որոնցում բնակավայրերի հիմնադրման, ժողովրդագրական տեղաշարժերի, պատմական հուշարձանների մասին տեղեկություններից բացի, առավել կամ պակաս չափով ներկայացված են տվյալ բնակավայրերի բանահյուսական և ազգագրական նյութերը:

Շիրակի առած-ասացվածքները

Ինչպես հայոց ազգագրական մյուս շրջանների, այնպես էլ Շիրակի տարածաշրջանի ասույթաբանական բանահյուսության մեջ առաջնային տեղ են գրավում առած-ասացվածքները:

Իբրև ակտիվ կենցաղավարող կառույցներ, առած-ասացվածքները գործածվում են բանավոր խոսքում՝ առօրյա-խոսակցական ռճով հաղորդակցվելիս, կամ էլ գրավոր խոսքում՝ ասելիքը դիպուկ ու պատկերավոր դարձնելու նպատակով: Մեղմ ու կուռ կառուցվածքի մեջ առածներն իրենց առարկայական իրականության, մարդկային մըտքերի ու գաղափարական այլաբանական, իսկ ասացվածքներն իրենց ուղղակի իմաստներով ընդգրկում են սոցիալական կյանքի, մարդկային բարքերի ու կենցաղի բազմապիսի հարցեր ու երևույթներ, անդրադառնում են մարդկային փոխհարաբերություններին, տնտեսական-հասարակական նշանակություն ունեցող շատ հարցերի, ներկայացնում են շրջապատող աշխարհագրական միջավայրը, բուսական ու կենդանական աշխարհը և ընդհանրացնելով՝ հանգում ճիշտ եզրակացության: Այսպես, «*Իրա կապերտին բնադուն (պաշարացու հացահատիկ) չի փրովի*» [13, էջ 314] առածով բնութագրում են վստահություն չներշնչող մարդուն, «*Հացը հետաւորել է, մենք փետաւորել, էլի ետնիցը չենք հասնում*» [15, էջ112] առածում շոշափվում են սոցիալական խնդիրներ կամ՝ «*Ռայաթի (ժողովուրդ) ձենը զարբագանի (թնդանոթ) ձենից բարձր է*» [7, էջ 0919] առածում արտահայտված է ժողովրդի հավաքական ուժի գաղափարը: Ժողովրդի միասնական ուժն անկասելի է, ինչը կարող է վտանգ առաջացնել, ուստի առաջ է գալիս վարչաքաղաքական նրբերանգ ունեցող «*Ժողովրդին օսկոռ քրցելով չես պայե*» [7, էջ1201] առածը, և առաջարկվում է որոշակի լուծում. «*Թե որ գուզեն ժողովրդի ձենը դու չըկա, ոռերին թող միշտ կարագ քրսեն*» [7, էջ 1202]:

Ժողովրդական իմաստությունից ծնված առած-ասացվածքների օրինակներ են նաև «*Բոշից ծընված փաշեն բիտուկին կրգրկե ճաշեն*» [7, էջ1301] այսինքն՝ կարիքի, գրկանքների մեջ ապրած անձը, իշխանություն ձեռք բերելով հպատակներին ենթարկում է գրկանքների, որը միանգամայն համախոս է «*Բոշեն փաշա չի դառնա*» հայտնի առածին: Մարդկանց բնութագրելու նպատակով ժողովուրդը ստեղծել է բազմաթիվ ա-

առած-ասացվածքներ, ինչպես օրինակ՝ «Օր ըսիս տանձ է, կըստ՝ չէ, գանձ է» (կամակոր, ինքնասածի մարդու մասին է, [17, էջ 87], կամ՝ «Ինասու ինաս է, անունս՝ քոռ Մուրաստ» [15, էջ 105], «Օխտը գումէշ կուտամ, մեղայ Աստծու չեմ ասի» [15, էջ 126]: Աշխատավոր ժողովրդի առօրյա կենցաղից է ծագում՝ «Հարի խաչին էրան, էնորից հետն էրթան» առածը, որտեղ զգուշացվում է, որ մինչև Մուրբ խաչն արևելյան քամին է փչում, և անհրաժեշտ է հացահատիկը դարմանից հանել, իսկ Մուրբ խաչից հետո քամին ուղղությունը փոխում է, ուստի հնարավոր չէ երան անել [17, էջ 83]:

Յուրաքանչյուր տարածաշրջան ունի իրեն բնորոշ նկարագիրը, և մարդիկ բնութագրվում են տվյալ միջավայրին բնորոշ յուրահատկություններով, ազգային, հոգեբանական, կենցաղային ու մշակութային առանձնահատկություններով: Այսպես՝ «Գյուլ-բեգիկ լավ լողջի չեն, որովհետև ձուկ ուտելու սովոր չեն» [7, էջ 0919], փոխարենը «Լենինականցիք ամեն ձևի ու ֆորմի մուգիկա սիրող մարդիկ են, ըսկըսած Բախից, վերջացրած բարի-բախով» [7, էջ 1112]:

Տարածաշրջանին բնորոշ առած-ասացվածքների օրինակներից են՝ «Փըրթած ապուրը բիդունքն էլ կուտեն» [7, էջ 0919], «Խորոզի խորոզլամիշ էղնելը հավերի շատ էղնելուց ա» [7, էջ 0919], «Մարդիկ կան կաթով կըլողնան, մարդիկ էլ կան պարտքերի մեջ կըլողնան» [7, էջ 1301], «Մարդիկ կան սաղ օրը թան կըխանեն, հըմը քաքելու ֆայտոնով կերթան» [7, էջ 1203], «Բիդուքիս չարչըրանքը չորս տախըտկի համար է, էն էլ մեզի չի մընա» [7, էջ 0919], «Մեծ սարերն ինքն է ստեղծե, պգտիկները վախից են էղե» (ամբարտավանի մասին), [13, էջ 321] և այլն:

Շիրակի առած-ասացվածքները կազմությամբ հիմնականում կա՛մ միանդամ են՝ կազմված մեկ պարզ նախադասությունից՝ «Մուկն էլ օրոճ կենե» [17, էջ 83], «Իշու խտոնուկն ձիուց գնցնա» [17, էջ 83], «Փարա ունենալուց բանձրը ֆայմն ա» [7, էջ 1301], «Գալած մալի (ունեցվածք) գլխին քար չեն քցե» [13, էջ 310], «Լուկեն ու կուբին իրարից հեռու չեն» [7, էջ 1211] և այլն, կա՛մ կազմված երկու, հազվադեպ՝ նաև ավելի անդամներից, որոնք միմյանց լրացնում են և՛ իմաստով, և՛ հանգակցությամբ: Օրինակ՝ «Էնպես ժուռ գու գա (ման գալ, պտտվել), կըսես թե մանդը սարերը ինքն է ըստեղծե» [13, էջ 312], Արտն խախուտ, մահանեն կարկուտ» [17, էջ 83], «Ինչքան հագնիս դումաշ ու խաս, էլի կըսեն՝ ծըռտոտի հարս» [4, էջ 0918], «Վարը վարել եմ, վարոցն էլ՝ թաղել եմ» (այսինքն՝ ամեն բան վերջացել է), [7, էջ 1211], «Անբախտ մարդկանց դարդ ու ցավը երալմասի պես մի անգամ ցանած է հողի մեջ, անընդհատ կըծլի ու կըծլի» [7, էջ 1211], «Անբախտ մարդն որ դավին հեծնի, էլի շունը ոտը կը խածե» [13, էջ 308], «Զին նստալ՝ աստված մոռցալ, ձիուց իջալ՝ ձին մոռցալ» [15, էջ 113], «Որք գառը թե մենծցնես բերանդ կը եղոտի, որք տղին թե պահպանես՝ բերանդ կվառի» [15, էջ 120], «Պարտքը որ կայ դավի ձագ է, քանի պահես կմենծանայ էլ դոնից չի հալքի» [15, էջ 121] և այլն: Ի դեպ ամենապարզ երկանդամը կազմված է սոսկ երկու բառից՝ «Կիսափոր-կիսամահ» [15, էջ 317], Անթություն՝ անամոթություն» [7, էջ 1208], «Մաղություն՝ սուլթանություն» [15, էջ 122], «Բարեկամացանք՝ բարեբարացանք» [15, էջ 96] և այլն:

Խոսքի առավել կենդանի, պատկերավոր ու անմիջական դրսևորում ենք տեսնում երկխոսական առած-ասացվածքներում, որը տեղի է ունենում երկու անձանց,

առարկաների, մարդու և կենդանու կամ երկու կենդանու միջև կատարվող խոսակցության, հարց ու պատասխանի ձևով: «Երկխոսությունն առհասարակ առավել բնորոշ է ժողովրդական առակներին: Երկխոսական առածները մեծ մասամբ ծագում են առակներից և այդ առումով շարունակում են պահպանել դրանց երկխոսական հատկանիշը»,- նշում է բանագետ Ս. Հարությունյանը [12, էջ 8]:

Բերենք առակներից ծագած երկխոսական առածների օրինակներ:

Քամին մարագին ասաց՝ «Դուդդ բաց դարման բերեմ»: Մարագն ասաց՝ «Իմ դարմանը չտանես, քո բերածը քեզի էղնի» [21, էջ 1312]:

«Իշուն ըսին,-«Աչքդ լուս, քեզի քուռակ էղավ,-ըսավ՝ «Ի՞նչ էնեմ, գարին պրդի առաջիցս առնի, խո բեռը շալկիս չի առնի» [21, էջ 1318] և այլն:

Այսպիսով, առածները, անջատվելով առակներից, ձեռք են բերում ինքնուրույն կիրառություն: Ներկայացնենք տարածաշրջանում առկա երկխոսական առածների քանի մի օրինակ ևս: *«Մղնին հարցուցին,- ուրդից գիկաս,- ըսեց,- անվառել թնդրեն, կոված տնեն»* [17, էջ 85], *«Կատվին ասին հերդ է լաւ, թե մերդ, ասաց. նաս՝, նաս՝»* [15, էջ 109] և այլն:

Հանդիպում են նաև միախոսական բնույթի առած-ասացվածքներ, ինչպես օրինակ՝ *«Խոզն ասաց, ճուտերս որ շատացան, պարզ ջուրը գլխիցս կտրուեց»* [15, էջ 108], *«Էշն ընկավ գարու հորը, ասավ՝ էաւ լավ է, քան մեր ախոռը»* [15, էջ 103], *«Ծառը կացնին ասաց. ընդուր ես կարենում ինձ կտրել, որ կոթդ ինձանից է»* [15, էջ 108] և այլն:

Բացի վերը նշվածները, զգալի քանակ են կազմում խրատական դաստիարակչական բանաձևային կառույցները, որոնք սերում են մարդկային դարավոր կենսափորձից: Օրինակ՝ *«Աջով տուր, որ ձախով առնես»* [15, էջ 94], *«Մի՛ ըսեր, որ չի լսես»* [15, էջ 117], *«Գիլի աղբրություն մի՛ անի»* [15, էջ 98], *«Կրունկ կոխողի գոխն կոխէ»* [17, էջ 86], *«Դրկցի աշխատանքին, ոչ թե ունեցածին թամահի»* [15, էջ 100], *«Կտոր կառնիս քանթին իշէ, աղջիկ կառնիս մորն իշէ»* [17, էջ 83], *«Ծառը տես, պտուղը քաղէ»* [4, էջ 2927], *«Բախտը մի՛ տա նամարդի ձեռը»* [4, էջ 2927], *«Չը փորձած ձիու ետնից մի՛ անցնիլ»* [15, էջ 121], *«Առաջ ասեղը քեզ խրէ, յետոյ մախարթն ընկերիդ»* [15, էջ 121], *«Կարգվածի աչքով աղջիկ առ, ազապի աչքով՝ ձի»* [15, էջ 108] և այլն: Կատակասեր շիրակցուն բնորոշ է ինքնատիպ հումորը. *«Ախպոր պահած քիրը մեռնի, տեքոր պահած հարսը, փեսի պահած գոնքաչը* [13, էջ 268], *«Քառտուն գող մե չպլաղի չեն կարացել թալանել»* [13, էջ 241], *«Խելք բաժնելու վախտը յուրտե՞ղ էիր, պատասխան- Յիրար հետ չէի՞նք»* [4, էջ 2629] և այլն:

Դարձվածքներ

Տարածաշրջանի ասույթաբանական բանահյուսության մեջ զգալի տեղ են գրավում դարձվածքները, որոնք կայուն, վերաիմաստավորված նշանակությամբ բառակապակցություններ են՝ [5, էջ 5] բաղկացած երկու և ավելի ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից, որոնց մեջ կարող են առկա լինել ոչ միայն փոխաբերական, այլև ուղիղ իմաստներ: Ինչպես առած-ասացվածքները, այնպես էլ բանաձևային այս տեսակները ակտիվ կենցաղավարում են և իբրև խոսքի կարճասույթ բանաձևեր, առատորեն գոր-

ծածվում են Շիրակի խոսակցական լեզվում՝ այն դարձնելով պատկերավոր ու արտահայտիչ:

Պատմաաշխարհագրական տարածքի բուսական ու կենդանական աշխարհը, սովորույթները, միջավայրը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները ներկայացնելուց բացի, բանաձևային այս տեսակն անդրադառնում է և՛ իրական, կոնկրետ անձանց, ովքեր իրենց սրամիտ, զավեշտական և արտասովոր արարքներով դարձել են այս կամ այն ասույթի կերպար-խորհրդանիշ, և՛ տեղի ունեցած կենցաղային դեպքերին ու իրադարձություններին: Բանաձևային այս տեսակները ընդհանուր ազգային-ասույթային բանահյուսությունը հարստացրել են նաև տարածքային ծագում ունեցող ստեղծագործություններով:

Ներկայացնենք Շիրակի տարածաշրջանում գործածվող դարձվածքների օրինակներ:

Այսպես՝ Արթիկի շրջանի գյուղերում տարածված *«Հոռումի թիթեն»* դարձվածքը խորհրդանշում է առատություն, բերրիություն: Ըստ հիշյալ ասույթի ծագման պատճառական գրույցի՝ Հոռոմ գյուղի արոտավայրերում եղած թիթենի (ժղ. ցան) առատությունը տեղացիները լայն իմաստով կապել են հաջողության հետ՝ ասելով. *«Հոռումի թիթենը վրես էղնի նոր մեռնիմ»* [14]: Տարածաշրջանում լայն տարածում ունի *«Ձոնքչի ձվածեղ»* արտահայտությունը, որը հումորային երանգով է արտաբերվում, հանդիպում է ազգագրական այլ տարածաշրջաններում: Ընդ որում յուրաքանչյուր տարածաշրջան յուրովի է մեկնաբանում ասույթի ծագումը: Օրինակ, Նոր Բայազետում հարսի մայրը՝ զոքանչը, հարսնատես եկած փեսային հյուրասիրել է ձվածեղով, որի վրա մի քանի կաթիլ իր մեզից է սրսկել, որպեսզի փեսայի սերը հարսնացուի հանդեպ սաստկանա: Այս նախապաշարման իմաստն ակնարկված է հետևյալ ժողովրդական երգում. *«Փեսեն էկաւ տեղ արեք, // Շոով ձուածեղ արեք»* [8, էջ 9-65]:

Շիրակի տարածաշրջանում վերոնշյալ ասույթի՝ բարբառային, խոսվածքային առանձնահատկություններով և արագախոսությամբ արտաբերելը հանգեցրել է զավեշտի: Ձոքանչը, ցանկանալով փեսային հյուրասիրել տաք ձվածեղով ասում է՝ *«Քակեցի (քա՛՛ կոչական, կեցի՛ մնա), տաք-տաք կեր, նոր կերթաս»* [14]: Շիրակցին հումորով է արտաբերում *«Ձոնքչի էփած ձվածեղը համով կըլնի»* ասացվածքը:

Կոնկրետ իրական անձնավորությունների հետ են առնչվում *«Ձնգոյի վարտիկը»*, *«Մաթոսի առևտուրը»* [6] դարձվածքները:

Առաջինի հիմքում ընկած է ամենուրեք իբրև շտապ օգնություն հայտնվող կնոջ՝ Ձնգոյի մասին պատմությունը, ըստ որի՝ Ձնգոն բուժքույր է եղել և օգնելու նպատակով այցելության է գնացել բոլոր հիվանդներին: Չկար մի տուն, որ Ձնգոն մտած չլիներ, ուստի շատ ման եկողին, ամեն տեղ երևացողին համեմատել են Ձնգոյի, ավելի կոնկրետ Ձնգոյի վարտիքի հետ: Երկրորդ դարձվածքը խորհրդանշում է մարդու միամտությունը և խեղճությունը: Մաթոսը խեղճ ու այն աստիճանի միամիտ է եղել, որ հինգ կոպեկով ձու է գնել, նավթավառով եփել ու խաշած ձուն երեք կոպեկով վաճառել է: Ասում են՝ *«Մաթոսի քյարն էղել է հավգթի խաշած ջուրը»*:

Վահրամաբերդում լայն տարածում գտած *«Մահանա էրա ու տուր»* դարձվածքի ստեղծման համար հիմք է ծառայել Ժոժիկի՝ կնոջն անտեղի ծեծելու պատմությունը

և, Ժոժիկի կնոջ համար, ինչպես ասում է ժողովրդական առածը, «Օրը մեզ է, ծեծը՝ հագար»: Հարևանին զարմացնում է այն, թե ինչ պատրվակով է Ժոժիկը ամեն օր ծեծում կնոջը, քանի որ ինքը ոչ մի պատրվակ չի գտնում իր կնոջը ծեծելու: Ժոժիկը խորհուրդ է տալիս՝ ասելով. «...Մի օր բոստանը ջրելուց օր տուն գաս, ոտդ տնգե, թող Լիզան սապոգո հանե: Դու ոտիդ բույթը մեջը ձրգե, որ սապոգո դուրս չգա: Դու էլ մահանա էրա ու տուր»: Եվ համանման իրավիճակում, երբ դիմացինին պատժելու պատճառ չկա, ժողովուրդը կատակով ասում է. «*Չի ըստե՛ Ատեի Ժոժիկը՝ մահանա էրա ու տուր*» [6]:

Տարածված է «*Տեփոյենց քյամարը*» դարձվածքը, որի համար հիմք է ծառայել մեծ գերդաստանում մեկ քյամար ունենալու պատմությունը, և ով քնից շուտ է արթնացել, նա էլ կապել է այն: Մինչ օրս որևէ իր կամ առարկա անընդհատ շահագործելիս ասում են՝ «*Տեփոյենց քյամարն է*»:

«*Տեփոյենց հորթի օրն ընկնելը*» դարձվածքը արտահայտում է չափից շատ ուտելու իմաստը:

Այսպես՝ նմանատիպ ասույթների, դարձվածքների հորինման հիմնական աղբյուրը իրական կյանքում կատարված դեպքերն են: Յուրաքանչյուր ասույթ արդյունք է տվյալ վայրում տեղի ունեցած կենցաղային դեպքերի ու իրադարձությունների և, անշատվելով բուն կենցաղային գրույցներից, վերածվում է դարձվածքային ընդհանրացման:

Ուսումնասիրվող միջավայրում ստեղծված և տարածված դարձվածքներից է «*Ձիթած գոմեշ*» (սև և փայլուն երես ունեցող), «*Դարմընի տրկի ջուր*» (ծածուկ, թաքուն գործող), «*Մալադոնդի*» (կամագուրկ), «*Քաքի մեջ հլուն գտնել*» (մեծամտանալ)[6] «*Բմբլե բերդ*» (անկայուն), «*Անձեն թվանք*» (երեսանց փափուկ, բայց դաժան մարդ), «*Բանդ էղնել*» (կաշկանդված լինել), «*Արփաչայր պաժար է յնկե*» (հետաքրքիր, անսովոր երևույթ) [4, էջ 2627-2629] և այլն:

Այսպիսով, Շիրակի տարածաշրջանը հարուստ է նման բանաձևերով, որոնց հիմքում ընկած են ժողովրդական ճշգրիտ մտածողությունը, իրերն ու երևույթները գնահատելու օբյեկտիվ ընկալումը: Վերոհիշյալ տեսակների մեծաքանակ դրսևորումներն ապացույց են այն բանի, որ այս ժանրերը ամենակենսունակն են ու մեծ մասսայականություն են վայելում նաև ազգագրական այս տարածաշրջանում:

Անեծք, օրհնանք

Խոսքի գործության, հմայական ներգործության հավատալիքից են սերում անեծքները, օրհնանքները, բարեմաղթանքները, երդումները, որոնք ինչպես ազգագրական մյուս շրջաններում, այնպես էլ Շիրակի տարածաշրջանի բնակիչների մեջ մինչ օրս պահպանվել ու կենցաղավարում են:

Անեծքը և օրհնանքը, իբրև մարդու վատ և լավ արարքների հոգեբանական արձագանքներ, բանավոր դրսևորվում են ցանկությանը համապատասխանող չար կամ բարի խոսքերով:

Անեծքների իմաստային հիմնական խմբերում երևան են գալիս պատժի տարբեր տեսակներ՝ սկսած ամենադաժան եղանակներով մեռնելուց, մարմնական ու հոգեկան ամենատարբեր հիվանդություններով տառապելուց մինչև սոցիալական ու կրո-

նաբարոյական բնույթի պատիժներ, ինչպես, օրինակ՝ «Հողն ու մոխիրը գլխիդ տամ, բաթմիշ ըլնիս» [15, էջ136], «Ձուխտերիդ խերը չտեսնես, մի օր մեռնեն» [15, էջ138], «Օխտը տարի մեկ կողքի տքաս իլլաճ չգտնես» [15, էջ137], «Աստված դավուլ, գուռնով տունդ քանդե» [4, էջ 2631] և այլն:

Անեծքի ամենատարածված տիպը պարզ ու հակիրճ բանաձևերն են: Օրինակ՝ «Անունդ աշխարհքից վերանայ» [15, էջ 134], «Դուռդ սև քարով շարուի» [15, էջ 135] և այլն: Շատ են հանդիպում են նաև բաղադրյալ ու ծավալուն տիպեր, օրինակ՝ «Չայդանը եռա, թափի քու հոր տանուտեղի վրա» [4, էջ2627], «Քոքդ աղանձուի, չորնայ, անորդի մնաս» [15, էջ 139], «Օր ու մեջ ապրես, էն էլ սև օրով ու դարտով» [15, էջ 139] և այլն, ինչպես նաև չափածո անեծքներ.

*Օագրոտիս, ծակ-ծակ շաքիկ հակնիս,
Վրրիդ ջրերն ելնին, էրտան,
Նըստիս՝ միսըդ թափի,
Կայնիս՝ օսկոռըդ: [6]*

Ինչպես ազգագրական մյուս շրջաններում, այնպես էլ Շիրակում նկատվում է որոշ անեծքների տեղայնացում: Այսպես, ավանդական «Տերտերը դաքիտ քյնա», «Տերտերը առաջիցդ գնա», «Տերտերը քե տանի» անեծքները, որ կապվում են թաղման ծիսակարգի հետ, օրինակ, Տավուշի Դիտավան գյուղում վերածվել է «Նիկուլը դաքիտ քյնա» [9, էջ 187], Գեղարքունիքի Գավառ քաղաքում՝ «Կթունի Մնացը քե տանա», «Գառնիկը հառչիցըդ էթա» [14] ձևերին, որովհետև վերոհիշյալ անձնավորությունները միշտ թաղման թափորի առջևից տարել են դագաղի կափարիչը կամ՝ ճանապարհ բացել: Այս նույն ծիսակարգի հիման վրա է Շիրակի Հոռոմ գյուղում ստեղծվել «Դարենը վրեդ կարդա» անեծքը: Դարենը Հոռոմում վաստակաշատ ուսուցիչ է եղել և որպես գրագետ մարդ դամբանական է կարդացել: Եվ մեկը մյուսին վատը կամենալիս, անիծելիս կամ ուղղակի՝ հումորով ասել է վերոնշյալ անեծքը [14]:

«Մահվան անձնավորումներից ամենահաճախադեպն ու բազմապիսին Գրողն է» [10, էջ 391], որն իր անվամբ կապվում է գրի ու գրչության հետ, սակայն ոչ թե հասարակական մշակութաբանական առումով է ըմբռնվում, այլ աստվածային, անդրաշխարհային ընկալումով՝ կապված մարդու կյանքի երկու գլխավոր փուլերի՝ ծննդյան և մահվան հետ [10, էջ 393]: Ոչ վաղ անցյալում տարածաշրջանում, ըստ մեր բանասացի (Սևակ Մարգարյան, ծնվ. 1978), նույն գործառույթը կատարել է նաև քահանան, ուստի գրողին նույնացրել են քահանայի հետ, որը գրառում և իր ծոցագրպանում էր պահում ծնվածների ու մահացածների անունները: «Այստեղից է ծագել է «Գրողի ծոցն էրթաս» անեծքը», - կատակով բացատրում էր բանասացը:

Անեծքին, հատկապես անիրավ ու անարդարացի, հակազդելու համար ընդունված է հանդես գալ պատասխան բանաձևով, որը թուլացնում կամ չեզոքացնում է անեծքի ուժը և, ինչու չէ, մեղմում մարդու հոգու զայրույթը: Օրինակ՝ պատասխան բանաձևերից տարածված են «Անեծքդ բերնիցդ դուրս գա՝ ծոցդ թափի, գոտիդ էլ դայիմ կապած էղնի, օր ծոցեդ չը թափի» [4, էջ 2631], «Բերանեդ յելածը գիրկդ թափի» [4, էջ 2632], այսինքն՝ բերանից անիրավացիորեն դուրս եկած չար խոսքը հակադարձվում և հետ է

դառնում անհիծողին, որի գաղափարը թերևս լավագույնս դրսևորվել է «Անիրավ անեծք իր տիրուն է» և «Անեծքն անհիծողին կդառնա» ասացվածքներում [13, էջ 2-302]:

Ուշագրավ են օրհնանքներն ու բարեմաղթանքները: Դրանք խորհմաստ են, համակված են մարդասիրությամբ և լայնորեն կիրառվում են ժողովրդական կյանքի տարբեր բնագավառներում՝ սկսած առօրյա-կենցաղային-խոսակցական «Արևդ ապրի», «Ջիվան ումբր ու արևդ երկարի» [15, էջ 132] և այլն, մինչև ծիսակենցաղային որոշակի միջավայր (ծննդյան, հարսանեկան, թաղման ծես և այլն): Հնայական այս բանաձևերում շեշտվում են նյութական, մարմնական, հոգեկան կամ բարոյական վիճակի ապահովությունը և օրհնվող անձին ամեն տեսակ չարից, փորձանքից ազատելու, պահպանելու ցանկությունները: Օրինակ՝ «Ավուր շնորհքը տանհիցդ անպակաս ըլնի» [15, էջ 128], «Աստված հացդ տանհիցդ անպակաս անե» [15, էջ 127], «Աստված փորձանքից հեռու պահե» [15, էջ 127], «Բախտավոր մանուկ ըլնի նորածինդ» [15, էջ 128], «Կանանչ մեռոնի շնորհքը տան ու տեղիդ վրա ըլնի» [15, էջ 128], «Մի բարձի ծերանաք, միասին ապրեք» [15, էջ 131] և այլն:

Երդում և աղոթք

Հնայական-կիրառական բանահյուսության նախնական կարևոր տեսակներից են երդումներն ու աղոթքները:

Բոլոր ժամանակներում էլ երդվողը սովորություն է ունեցել վկայակոչելու ինչպես Աստծուն, սրբերին, հոգեհարազատ ու նվիրական անձանց (հայր, մայր, եղբայր, որդի), այնպես էլ սուրբ համարվող և իբրև այդպիսին ընկալվող նվիրական սրբություններն ու առարկաները (ճրագ, լույս, օջախ, արև, Ավետարան, խաչ, հաց և այլն)՝ ապացուցելու իր ճշմարտացիությունը, հավատարմությունն ու նվիրվածությունը:

Գոյություն ունի երդումների երկու հիմնախումբ՝ երդում-վկայակոչումով՝ «Ամենափրկիչը վկայ, որ դու գրպարտում ես» [15, էջ 140], «Էս հացը վկայ, որ...» [15, էջ 140], «Էս ճրագի լուսը վկայ, որ...» [15, էջ 140] և այլն, և երդում-անեծքով՝ «Բարեչական կրակի գամ, թե...» [15, էջ 140], «Գետինն անցնեմ, թե...» [15, էջ 140] և այլն: Տարածաշրջանում հանդիպում են նաև երդման այնպիսի օրինակներ, երբ երդման պայմանը, բացի սովորական անեծքից, նաև անպատվաբեր խոսք է: Օրինակ՝ «Շան կաթ կերած ըլնեմ, թե ուղիդը չասես» [15, էջ 142], «Շանից ծնուած ըլնեմ, թե սուտ է ասածները» [15, էջ 140] և այլն:

Երդման առարկաները մեծ մասամբ պաշտամունքային, այսինքն՝ քրիստոնեական, կրոնական և ժողովրդական հավատալիքների ոլորտներից են վերցված (եկեղեցի, Ավետարան, խաչ, մեռոն): Կրոնածիսական պաշտամունքի սրբազան առարկաներից բացի, տարածաշրջանից գրառված երդումներում կարևոր տեղ են գրավում նաև բնական (երկինք, գետին, ծով, արև և այլն), տնային-կենցաղային ու տնտեսական օգտագործման իրերն ու առարկաները (ճրագ, կրակ, լույս, օջախ, հաց և այլն):

Տարածված են հիմնականում երդումների պարզ տիպերը՝ կառուցված մեկ բայի վրա՝ «Աստված վկա» [4, էջ 2629], «Առեք-կերեքը վկա» [4, էջ 2629] և այլն: Զգալի թիվ են կազմում նաև բաղադրյալ տիպերը՝ կառուցված մեկից ավելի բայերի վրա կամ բաղադրված մեկից ավելի պարզ տիպերի հարակցումից: Ընդ որում, Շիրակի բաղադրյալ

տիպերը ըստ բայերի քանակի լինում են երկանդամ, եռանդամ, հնգանդամ: Օրինակ՝ «Երկինք, գետին վկա, որ...» [15, էջ 40], «Իմ արև, քու արև» (գեղջված ստորոգյալով, [4, էջ 2629], «Աստուած, երկինք, գետինք, ծով, ցամաք, որ չը գիտեմ» [15, 140] և այլն:

Հմայական բանահյուսության բարդ բանաձևերի խմբին պատկանող մյուս տեսակներից են աղոթքները, որոնք խոսքի գործությամբ, մարդու և նրա շրջապատող աշխարհի վրա ներգործելու միջոցներից բացի, նպատակ ունեն պահպանելու մարդուն, նրա ունեցվածքը, աշխարհը ամեն տեսակ չարիքներից ու չար ոգիներից:

Տարածաշրջանի հմայական աղոթքների կրողները հիմնականում այն անհատներն են, որոնց այդ շնորհքը «տուածուրիկ» է, և նրանց բոլոր ասածները իրականություն են դառնում [15, էջ 189,], կամ էլ սրբի տվածներ են, որոնց աղոթքը «մեկէն ի մեկ ցաւը դանակի պէս կը կտրէ» [15, էջ 190], իսկ աղոթելն ու վախ բռնելը ընդունված են եղել իբրև «բժշկական միջոցներ» [15, էջ 190]: Տարածաշրջանի աղոթքներն ըստ գործառույթի կարելի է բաժանել հետևյալ խմբերի. ա) չար աչքի, բ) զանազան հիվանդությունների (ականջացավի, փորացավի, կոկորդում պատառ մնալու, նորենցքի, ճուճի կամ մսահանգուստի), գ) ծննդկանի, նորածնի դ) վախի, դ) չար ուժերի կանխարգելման (ալի ու թպղայի), ե) հմայական կապքի և պահպանության (գելկապի, գողկապի):

Չար աչքից, ուժերից, տարբեր հիվանդություններից, պատահարներից պաշտպանվելու նպատակով կիրառվել են նախապես աղոթքով և դրան ուղեկցող հատուկ ծիսական գործողությամբ պատրաստված, գերբնական գործությամբ օժտված պահպանակներ՝ ինչպես, օրինակ, կապույտ ուլունքներ (աչքաուլունքներ), փայտյա և մետաղական առարկաներ, փուշ և այլն: Չար աչքից, վախից և այլ հիվանդություններից պաշտպանող աղոթքներին ուղեկցող ծիսաարարողություններում մեծապես կարևորվում են աղոթողի թուքն ու մետաղական առարկաները՝ դանակ, ասեղ և այլն, քանի որ ըստ ժողովրդական հավատալիքի՝ թուքն ու մետաղը ոչնչացնում են չար ուժերի, ոգիների, չար աչքի ազդեցությունը: Աղոթողը վերցնում էր դանակ կամ ասեղ, որով «ստեպ-ստեպ» խաչակնքելով և «թո՛ւ, թո՛ւ» ասելով աղոթում էր [15, էջ 188-198]: Օրինակ՝

Հայր մէր, որ յէրկինս էս

Չար աչկը՝ չար փշին,

Չար փուշը՝ չար կրակին.

Չար աչքը շիտկուել է ձեր դուռը.

Աչքը՝ քօռ, ձեռը՝ չօլախ, լեզուն՝ բիբառ,

Էլ չգայ ձեր դուռը [15, էջ 190]:

Աղոթքն ավարտվում է բանադրական հմայական բանաձևով՝ անեծքով, որը ժողովրդական հմայական աղոթքներում լայն դրսևորում ունի: Փուշն իր ծակող, խոցող հատկությամբ, իբրև չարահալած, ժողովրդական հավատալիքներում և հմայական աղոթքներում հանդես է գալիս որպես չարից, չար աչքից պաշտպանվելու հմայական միջոց, ինչը երևում է նմանատիպ մյուս աղոթքներում:

Ընդհանրապես աղոթողն իր աղոթքներում որպես բարի ոգիներ հանդես եկող սուրբ անձանց օգնությամբ ու վկայակոչմամբ (Քրիստոս, Օխտն անուն, Կօչայ զինատր սուրբ Գեորգ և այլն), սուրբ առարկաների միջոցով (Փատիշահ Աւետարան, Հալիւոր

Աւետրան, Մարգարեաց գավազան, Լուսավորչա հողաթափ և այլն), ինչպես նաև հմա-
յագործությամբ բուժում է տարբեր հիվանդություններ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ուսումնասիրելով Շիրակի տարածաշրջանի ասույթաբանա-
կան բանահյուսության վերոնշյալ ժանրերը՝ նկատելի է դառնում, որ վերջիններս իրենց
ինքնատիպությամբ, խոսքի պատկերավորությամբ և դիպուկ ակնարկներով արտա-
հայտում են պատմաազգագրական նշված տարածաշրջանի ժողովրդի աշխարհայաց-
քը, հոգեբանությունը, մտածողությունը, պատմությունն ու իրականությունը գնահատե-
լու ունակությունը:

Տարածաշրջանի կարճատյոժ բանաձևային կառույցներում իրենց պատկերա-
վորությամբ ու իմաստային խորությամբ առաջնային տեղ են գրավում առած-ասաց-
վածքները և դարձվածքները, որոնք ընդհանուր ազգային ասույթային բանահյուսու-
թյունը հարստացրել են նաև տարածքային ծագում ունեցող ստեղծագործություններով:

Հմայական բանահյուսության հիմնատեսակները՝ անեծքները, օրհնանքները,
երդումներն ու աղոթքները, մինչ օրս պահպանել են իրենց կիրառական գործառույթը և
այսօր էլ շարունակում են ակտիվ կենցաղավարել տարածաշրջանի ժողովրդի կյանքի
տարբեր բնագավառներում:

Գ ր ա կ ա ն ու թ յ ո ն

1. Աղավնի «Շիրակ»: Երևան: Հայպետհրատ: Գիրք 1-2, 1963, 520 էջ, 1964, 538 էջ:
2. Արմեն Մկ. «Հեղինար աղբյուր»: Յերեվան: Պետ. հրատ.: 1936: 206 էջ:
3. Բազեյան Կ., Աղանյան Գ. «Ալեքսանդրապոլ. Ազգագրական էսքիզներ (պատմազգագրա-
կան ուսումնասիրություն)»: Գյումրի: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2014: 117 էջ:
4. Բարսեղյան Պ. Շիրակի ժողովրդական բանահյուսությունից: Հնագիտության և ազգա-
գրության ինստիտուտի բանահյուսության արխիվ FF IV: 2627-2955 : 1966:
5. Բեդիրյան Պ. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն: Երևան: «Լույս» հրատ:
1973: 231 էջ:
6. Գալստյան Հ. Դաշտային բանահյուսական նյութերի անձնական հավաքածու:
7. Գևորգյան Ա. Շիրակի ասույթներ, սրամտություններ: Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի բանահյուսության արխիվ FFXII: 0917-1304: 1973:
8. Լալայան Ե. Նոր Բայազետ: Ազգագրական հանդես, գ. XVI, Թիֆլիս: Տպարան Կ. Մար-
տիրոսեանցի: 1907: էջ 268 էջ:
9. Խեմչյան Է. Տալուշի բանահյուսական ժառանգությունը: Երևան: ՀԱԻ հրատ., 2020: 23 էջ:
10. Հարությունյան Ս. Հայ առասպելաբանություն: Բեյրութ: «Համազգային» տպ.: 2000: 528
էջ:
11. Հարությունյան Ս. Հայ հնայական և ժողովրդական աղոթքներ: Երևան: ԵՀ հրատ.: 2006:
504 էջ:
12. Հարությունյան Ս. Ատողին լսող է պետք: Երևան: «Արևիկ» հրատ.: 2004: 144 էջ:
13. Ղանալանյան Ա. Առածանի: Երևան: Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ.: 1960: 398 էջ:
14. Ղոնջյան Լ. Դաշտային բանահյուսական նյութերի անձնական հավաքածու:
15. Մխիթարեանց Աղ. Փշրանքներ Շիրակի ամբարներից: Էմինեան ազգագրական ժողո-
վածու, Ա: Մոսկուա-Ալեքսանդրապոլ: 1901: 388 էջ:
16. Մխիթարեանց Աղ. Տաղեր ու խաղեր, Ալեքսանդրապոլ: Գևորգ Սանոյանի տպարան:
1900: 260 էջ:

17. Նահապետյան Պ. *Փանիկ գյուղի պատմություն*: Երևան: Հեղ. հրատ.: 2021: 156 էջ:
18. *Նախապաշարմունք* Աշխատասիրեց Յովհաննես Նազարեանց, հատ.1, Տփղիս: Յովհաննես Մարտիրոսեանցի տպարան: 1878: 99 էջ:
19. Քաջբերունի Հայկական սովորություններ: Ազգագրական հանդես: VII-VIII գիրք: Թիֆլիս: Տպ. Մարտիրոսեանցի: 1901: 528 էջ:
20. Քաջբերունի Հայկական սովորություններ: Ազգագրական հանդես: IX գիրք Թիֆլիս: Տպ. Կ. Մարտիրոսեանցի: 1902: 284 էջ:
21. Օհանյան Հր. *Հայ ժողովրդական ասածներ*: Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ: FF IV: 1211-1488: 1960:

References

1. Aghavni "Shirak"[*Shirak*], Yerevan, "Haypet" publ., b. 1-2. 1963. 520 p., 1964, 538 p. (in Armenian)
2. Armen Mk. "Heghnar Spring" [*Heghnar aghbyowr*]. Yerevan. "Haypet" publ., 1936. 206 p (in Armenian)
3. Bazeyan K., Aghanyan G. Aleksandrapol: Ethnographic AI Sketches (historio-ethnographic study)[*Aleqsandrapol.Azgagrakan e'sqizner (patmazgagrakan usumnasirut'yun)*], Yerevan-Gyumri, "Gitutyun" publ.. 2014. 117 p. (in Armenian)
4. Barseghyan P. From the folklore of Shirak [*Shiraki jhoghovrdakan banahyusut'yunic*] Archive of the Institute of Folklore Archaeology and Ethnography FF IV: 2627-2955: (in Armenian)
5. Bediryan P. Modern Armenian Phraseology [*Jhamanakacic hayereni dard'vac'abanut'yun*]. Yerevan. "Luys" publ., 1973. 231 p. (in Armenian)
6. Galstyan H. Personal Collection of Field Folklore Materials. (in Armenian)
7. Gevorgyan A. Shiraki Sayings, Jokes[*Shiraki asuyt'ner, sramtut'yunner*]. Archive of the Institute of Folklore Archaeology and Ethnography FFXII: 0917-1304. 1973. (in Armenian)
8. Lalayan E. New Bayazet, [*Nor Bayazet*], Ethnographic journal, Tiflis, Printing House of Martyrosiants, 1907, 268 p. (in Armenian)
9. Khemchyan E. The folklore heritage of Tavush [*Tavushi banahyusakan jhar'angut'yuny*], Yerevan "House of the institute of archaeology and ethnography" publ., 2020, 232 p. (in Armenian)
10. Harutyunyan S. Armenian mythology, [*Hay ar'aspelabanut'yun*], Beirut, National printing house, 2000, 528p. (in Armenian)
11. Harutyunyan S. Armenian incantations and folk Prayers, [*Hay hmayakan & jhoghovrdakan aghot'qner*], Yerevan, "House of the Yerevan university" publ., 2006, 504p. (in Armenian)
12. Harutyunyan S. A Teller Needs a Listener, [*Asoghin lsogh e' petq*], Yerevan, "Arevik" publ., 2004, 144 p. (in Armenian)
13. Ghanalanyan A. Proverb [Ar'ac'ani], Yerevan, "Armenian USSR Academy of Sciences" publ., 1960, 398 p. (in Armenian)
14. Ghrejyan L. Personal Collection of Field Folklore Materials. (in Armenian)
15. Mkhitarants Agh. Debris from the Shirak Ambars,[*P'shranqner Shiraki ambarneric*] Eminian ethnographic collection, vol. A, Moskov-Alexandrapol, 1901, 388p.(in Armenian)
16. Mkhitarants Agh. Songs and Games [*Tagher u xagher*], Alexandrapol, Gevorg Sanoyans printing house, 1900, 260 p. (in Armenian)
17. Nahapetyan P. The History of Panik Village, [*P'anik gyughi patmut'yun*], Yerevan, "Hexinakayin" publ., 2021. 156p. (in Armenian)

18. Prejudice [Naxapasharmunq], Worked by Yovhannes Nazareants, Tiflis, Printing House of Martyrosiants, 1878, p. 99 p. (in Armenian)
19. Kajberuni Armenian Customs [Haykakan sovorut'yunner], Ethnographic journal, b. VII-VIII, Printing House K. Martiroseants, Tiflis, 1901, 528p. (in Armenian)
20. Kajberuni Armenian Customs [Haykakan sovorut'yunner], Ethnographic journal, b. IX, printing house K. Martiroseants, Tiflis, 1902, 284p. (in Armenian)
21. Ohanyan Hr. Armenian folk proverbs, Archive of the Institute of Folklore Archaeology and Ethnography FF IV: 1211-1488, 1960. (in Armenian)

Հնդունվել է / Принята / Received on: 19.03.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 20.04.202

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.06.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Լուսինե Խաչատուրի ԳՈՒՇՋՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, Երևան, ՀՀ
Էլ. հասցե ghrejyan 76@mail.ru, <https://orcid.org/0000-0001-8755-3967>:

Lusine Khachatur GHREJYAN: PhD in Philology, Docent, Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA,
e-mail: ghrejyan 76@mail.ru, <https://orcid.org/0000-0001-8755-3967>:

Лусине Хачатуровна КРЕДЖЯН: кандидат филолог. наук, доцент, научный сотрудник Института археологии и этнографии НАН РА, Ереван, РА
эл. адрес: ghrejyan 76@mail.ru, <https://orcid.org/0000-0001-8755-3967>:

«ԿՈՒՄԱՅՐԻ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-
ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ԳԱՆՁԻ ՇՈՒՐՁ¹

Ինգա Էդ. Ավագյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հոդվածում ներկայացում ենք 1987թ. շինարարական աշխատանքների ժամանակ Կարմրաքար գյուղից պատահականորեն հայտնաբերված ուշ անտիկ դամբարանադաշտի գանձը: Այս թանկարժեք մետաղներից պատրաստված զարդերի հավաքածուն կարելի է համարել ՀՀ անկրկնելի ազգային արժեքներից մեկը, որը մի քանի տասնամյակ ուշացումով դրվում է գիտական շրջանառության մեջ: Պատճառը Սպիտակի 1988թ. աղետալի երկրաշարժն էր, որից հետո հավաքածուն ի պահ էր հանձնվել Հայաստանի պատմության թանգարան և միայն 2020 թ. ամռանն է վերադարձվել Գյումրի և դարձել «Կումայրի» արգելոց-թանգարանի կարևորագույն ցուցանմուշներից մեկը: *Մեթոդներ և նյութեր.* Հոդվածը գրելիս օգտագործել ենք պատմահամեմատական, պատմահետազոտական, պատմաքննական, զուգորդման, վերլուծության, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդներ: Հոդվածը խարսխված է Կարմրաքարի դամբարանադաշտից պատահականորեն հայտնաբերված հավաքածուի նյութերի և գրականության մեջ առկա նմանօրինակ նյութերի վերլուծության վրա: *Վերլուծություն.* Գիտականորեն ներկայացվել և նշված մեթոդներով վերլուծվել են հավաքածուի՝ թանկարժեք մետաղներից պատրաստված զարդերը, կիսաթանկարժեք քարերից, ոսկուց և ապակուց պատրաստ-

Սույն զեկուցումը ներկայացվել է 2022 թ. հունիսի 3-ին կայացած «Եզանյանական ընթերցումներ» հնագիտական երկրորդ հանրապետական գիտաժողովում: Շնորհակալություն ենք հայտնում ՇԵԹ-ի աշխատակից Հ.Աղեկյանին դամբարանի պեղումների ընթացքի մասին տեղեկություններ տրամադրելու համար:

ված ուլունքները, ապակե սրվակը, բրոնզե թասը, ինչպես նաև դրանց պատրաստման տեխնիկան, որոնք, համեմատվելով գրականության մեջ հայտնի նմանօրինակների հետ, թվագրվել են: *Արդյունքներ*. Գտածոները ունեն պատմամշակութային և գիտական բացառիկ արժեք, թվագրվել են առանձին-առանձին, իսկ վերջնարդյունքում Կարմրաքարի դամբարանադաշտից գտնված ազգային արժեք ներկայացնող գանձը թվագրվել է Ք.հ. III-IV դդ.: Ապացուցվել են ոսկե իրերի եզակիությունը և արժեքը: Ուսումնասիրությունը կարելի է օգտագործել գիտական աշխատություններում, նաև տուրիստական փաթեթներ կազմելիս՝ «Կումայրի» արգելոց-թանգարանի ցուցադրությունը Գյումրի այցելող զբոսաշրջիկներին պատշաճ ներկայացնելու նպատակով:

Բանալի բառեր՝ *Կարմրաքար, մանյակ, ապարանջան, մատանի, կնիք, սկանջողեք, ուշ անտիկ դամբարանադաշտ:*

Ինչպես հղել՝ Ավագյան Ի., «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանում պահպանվող Կարմրաքարի գանձի շուրջ // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 1(26): 100-114 էջեր: DOI:10.52971/18294316-2023.26.1-100

ABOUT THE TREASURE OF KARMRAQAR STORED IN THE HISTORICAL AND CULTURAL MUSEUM-PRESERVE «KUMAYRI»

Inga E. Avagyan

Shirak Center for Armenological Studis NAS,
Historical and Cultural Museum-Preserve «Kumayri», Gyumri, RA

Abstract

Introduction: The article presents the treasure of the late antique tomb settlement of village found during 1987 construction works. The collection made of precious metals is considered to be one of the unique national values of the Republic of Armenia, which is put into scientific circulation several decades late. The reason of it was the 1988 catastrophic earthquake of Spitak, after which the collection was deposited in the History Museum of Armenia and was returned to Gyumri in 2020 summer, and became one of the most vital exhibits in the exhibition of the "Kumayri" preserve-museum. **Methods and materials:** We have used comparative-historical research, survey, combination, inductive and deductive methods. The article is based on randomly found collection from the tomb settlement of Karmraqar and analysis of materials available in the literature. **Analysis:** The collection's jewellery made of precious metals, beads made of semiprecious stones, gold and glass, a glass bottle, a bronze bowl, as well as the technique of their manufacture were scientifically presented and analyzed using the specified methods which were dated by comparison with similar examples known in the literature. **Results:** The findings have exceptional historical-cultural and scientific value, also were dated separately, and as a result, the treasure of national value found in the Karmraqar tomb settlement was dated to the III-IV centuries AC. The uniqueness and value of gold items have been stated. The study can have contribution in the frame of scientific environment: articles, dissertations, master's and graduation thesis, as well as in the tourist packages in order to properly present the exhibition of the "Kumayri" Preserve-Museum.

Key words: *Karmraqar, necklace, bracelet, ring, seal, earrings, late antique necropolis.*

Citation. Avagyan I., About the Treasure of Karmraqar Stored in the Historical and Cultural

О КЛАДЕ ИЗ КАРМРАКАРА ХРАНИВШЕМСЯ В ФОНДАХ ИСТОРИКО-КУЛЬТУРНОГО МУЗЕЯ-ЗАПОВЕДНИКА «КУМАЙРИ»

Инга Э. Авагян

Ширакский центр арменоведческих исследований НАН,
Историко-культурный музей-заповедник «Кумайри», Гюмри, РА

Аннотация

Введение: В статье представлен клад случайно обнаруженный в 1987 г. во время строительных работ на территории позднеантичного некрополя Кармракар. Эту, изготовленную из драгоценных металлов коллекцию можно считать неповторимой национальной ценностью Республики Армения, которая с опозданием в несколько десятилетий вводится в научный оборот. Причиной тому является Спитакское землетрясение 1988 г., после которого коллекция была отдана на хранение в Музей истории Армении и только летом 2020 г. была возвращена в Гюмри и заняла важное место в экспозиции Историко-культурного музея-заповедника Кумайри. **Методы и материалы:** Статья написана на методах историко-сравнительного, исторического-исследовательского, историко-аналитического, исторического сопоставления и анализа и методах индукции и дедукции. Статья основана на анализе случайно выявленных материалов из некрополя Кармракар и на анализе аналогов, которые встречаются в научной литературе. **Анализ:** При помощи вышеназванных методов произведен научный анализ и представлены украшения из драгоценных металлов и бусы из полудрагоценных камней, стекла и золота, стеклянный сосудик, бронзовая чаша, а также техника приготовления данных материалов, которые после сравнения с известными аналогами были датированы. **Результаты:** Материалы клада имеют исключительную научную и историческую ценность. Каждый материал датирован в отдельности, но конечная датировка ценностей национального клада- III-IV вв. п.Р.Х. Доказана единичность и ценность золотых украшений. Данное исследование можно использовать в научных целях - в статьях, диссертациях, в исследовательских работах магистров и бакалавров, а также во время составления туристических маршрутов в целях представления экспозиции Историко-культурного музея-заповедника «Кумайри» туристам посещающим Гюмри.

Ключевые слова: *Кармракар, ожерелье, браслет, кольцо, печать, серьги, поздне-античный некрополь.*

Как цитировать: Авагян И. О кладе из Кармракара хранившемся в фондах Историко-культурного музея-заповедника «Кумайри» // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 1 (26). 100-114 сс. DOI: 10.52971/18294316-2023.26.1-100

ՆԱԽԱԲԱՆ. 1987թ. հուլիսի 23-ին «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի հնագիտական արշավախումբը պեղումներ կատարեց Շիրակի մարզի Կարմրաքար գյուղում: Կարմրաքարը՝ Դարբանդը, փոքրիկ գյուղ է, որը գտնվում է Գյումրուց 10 կմ հեռավորության վրա: Պեղումները կատարվել են գյուղի հարավային մասում՝ եռանկյունաձև հրվանդանի եզրին, շինարարական աշխատանքների ժամա-

նակ դիպվածաբար բացված թաղումից գտնվել են ոսկյա զարդեր [2, էջ 10]: Պեղումները իրականացվել են ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Լենինականի «Շիրակի պատմության», այժմ՝ Շիրակի երկրագիտական թանգարան և «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի, այժմ՝ «Կումայրի» պատմաճակութային արգելոց-թանգարան, միացյալ արշավախմբերի կողմից (ղեկավար՝ Ս. Հարությունյան): Այստեղ պեղվել է թաղման նույն եղանակով և ծեսով ուղեկցվող 30 թաղում [2, էջ 9]: Թաղման ձևի մասին պահպանված միակ գրավոր տեղեկությունը հաղորդում է Լ. Եզանյանը՝ հղում կատարելով «Կումայրի» արգելոց-թանգարանի ֆոնդապահ և առաջին դամբարանի պեղող հնագետ Ս. Տեր-Մարգարյանի բանավոր հաղորդմանը, որից իմանում ենք, որ նշված դամբարանը եղել է սալարկղի մեջ դրած փայտյա դագաղով թաղում՝ ուղեկցող հարուստ նյութով [2, էջ 9]: Փայտից դագաղը եղել է խիստ քայքայված: Հողվածի նորույթն այն է, որ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում մի քանի տասնամյակ ստվերում հայտնված և կարևոր ազգային արժեք ներկայացնող Կարմրաքարի հավաքածուն: Այսօր մասնագետների համար արդիական է Հին Հայաստանի ոսկին ևս մեկ շքեղ հավաքածուով համալրելը (գույքահամար՝ 449):

Պեղումները

Պեղումների մանրամասն ընթացքի մասին տեղեկություններ է հայտնել արշավախմբի անդամներից մեկը՝ Հ. Աղեկյանը: Ըստ նրա՝ առաջինը Կարմրաքար՝ ստեղծված իրավիճակին տեղում ծանոթանալու համար՝ մեկնել են «Կումայրի» պետական պատմա-ճարտարապետական արգելոցի մի խումբ գիտաշխատողներ, այդ թվում՝ հնագետներ, ճարտարապետ, հուշարձանների պահպանման և օգտագործման բաժնի ավագ ինժեներ և թանգարանի գլխավոր ֆոնդապահ: Տեղագնությունից պարզվել էր, որ շինարարների և գյուղացիների անպատասխանատու գործողությունների հետևանքով դամբարանադաշտը վնասվել էր: Շինարարները փորել էին մի հսկայական փոս՝ կտրվածքում թողնելով չորս կիսավերված դամբարանների բեկորներ: Եվս 15 տուֆե սարկոֆագներ քանդել էին գյուղացիները: Այդ ժամանակ դամբարանների նյութի որակը և կարգը պարզել չէր հաջողվել: Սակայն դամբարանադաշտի գննության արդյունքում հայտնաբերվել էր մեկ կիսաքանդ դամբարան՝ ծածկի սալը ամբողջությամբ մաքրված: Գանձագողերից դամբարանը փրկելու համար կատարվել էին արտակարգ պեղումներ: Պեղումների արդյունքում պարզվում է, որ դամբարանը ոչ թե սարկոֆագ է, այլ կանոնավոր սալարկղ: Պեղումների ծայրահեղ անհարմար պայմանների և թանձրացող մթի պատճառով լուսանկարել և չափագրել դամբարանը չի հաջողվում: 20-30 սմ խորանալով՝ բացվում է հարթ կափարիչով փայտե դագաղը, որը, կողային պատերի մոտ թեթևակի թեքվելով, հասնում էր մինչև քարե սալերը, հաստությունը՝ 7-10 սմ: Կափարիչի տակ՝ 40-50 սմ խորությունից դուրս են գալիս հանգուցյալի, որն ամենայն հավանականությամբ բարձրաշխարհիկ կին է եղել, ոսկրային մնացորդները և իրերը: Հայաստանի անտիկ և վաղմիջնադարյան դամբարանադաշտերում հաճախ են հանդիպում սալարկղային թաղումներ [3, էջ 220], դրանք բնորոշ են Օշականի [13, էջ 58], Արտաշատի, Բենիամինի [2, էջ 152], Ջրվեժի, Գառնիի [15, էջ 21], Կարմրաքարի դամբարանադաշտերին: Սալարկղային թաղումներ հանդիպում են Վրաստանի տարածքում՝

Իրերիայում, Կոլխիդայում, Աղվանքում [12, էջեր 59, 89, 101] և այլն: Փայտե դագաղներում թաղումները առաջին անգամ պեղվել են Արտաշատում, սակայն փայտը քայքայված է եղել, և դագաղի ամբողջական ձևի մասին պատկերացում չունենք: Արտաշատում փայտե դագաղի մեջ կատարված թաղումների մասին պատկերացում են տալիս մեծաքանակ երկաթյա գամերը և ժապավենաձև թիթեղներն ու դագաղների փայտի քայքայված բեկորները [4, էջեր 37-38]: Մեր կողմից ուսումնասիրվող թաղման պարագայում սալարկղային թաղումը մեկտեղվել է փայտե դագաղով թաղման հետ, սակայն պեղումներից գամեր և թիթեղներ չեն պահպանվել: Հելլենիստական դարաշրջանով թվագրվող փայտե սարկոֆագներում կատարված թաղումներ հանդիպում են Իրերիայում, Մամադո, ուշ անտիկ շրջանով թվագրվող թաղումներ փայտե դագաղների մեջ հանդիպում են Կոլխիդայում, դիադորումը կծկված [12, c. 89, 58]:

Հավաքածուի տեղափոխումը Հայաստանի պատմության թանգարան

1988թ. Սպիտակի երկրաշարժից հետո հավաքածուն այլ թանկարժեք իրերի հետ տեղափոխվում է Հայաստանի պատմության թանգարան: Սույն հավաքածուն 2020թ. ամռանը կրկին տեղափոխվում է Գյումրի և մինչ օրս ցուցադրվում թանգարանի ցուցադրությունում: Կարմրաքարի դամբարանադաշտում պեղված հավաքածուն «Կու-մայրի» արգելոցի յուրօրինակ շքեղ հավաքածուներից մեկն է, ֆոնդային համար՝ 449/1-9, այն համալրում է թանգարանի թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի ֆոնդը և այդպիսի իրերի ցուցադրության առանցքն է կազմում (նկ. 1): Ցավոք, իրերը չվնասելու նպատակով փորձագիտական անալիզ չի կատարվել, և ոսկու ու արծաթի ճշգրիտ տոկոսային հարաբերությունը այս պահին ճշտված չէ, ինչպես նաև անհնար է պարզել, թե որ հանքերից են վերցվել թանկարժեք մետաղները: Ակնհայտ է, որ զարդերը Հայաստան են ներկրվել այլ շրջաններից և տեղական արտադրության արգասիքներ չեն, բացառությամբ սարդիոնե ուլունքահատիկներից:

Հավաքածուն բաղկացած է բարձրորակ ոսկե մանյակից, ապարանջանից, ականջօղերից, մատանուց, ուլունքներից, սարդիոնե երկու մատանիներից, որից մեկը կնիք է և ապակե սրվակից ու բրոնզե թասից, որը խիստ վնասված է և բաղկացած է 84 մանր փշուրներից:

Ապակե սրվակ

Ապակե սրվակը (449/7) պատրաստված է կաղապարի մեջ փչման եղանակով, սրվակի բարձրությունը 4,5սմ է, շուրթի և նստուկի տրամագծերը՝ 2-ական սմ, իրանի տրամագիծը 5սմ (նկ. 2,4): Սրվակի շուրթը և նստուկը ամրացված են իրանին, և այդ մասին է վկայում ամրացման շրջանագիծը: Սրվակի պատերը և շուրթը բավականին հաստ են, շուրթը կտրուկ հորիզոնական դիրք ունի սրվակի վզիկի համեմատ: Վզիկից ներքև իջնում են թեք կանեյրուներ: Ըստ մասնագետների՝ սրվակի նմանօրինակները Հայաստան ներկրվել են Սիրիայից: Ապակու գույնը բաց կանաչավունից կապտագույնի միջև է, ապակու վրա գունափոխման (իրիզացիա) արդյունքում դեղնասպիտակավուն նստվածք կա, ինչը դժվարացնում է ապակու իրական գույնի որակումը: Ենթադրվում է, որ թաղման ծեսում այսօրինակ անոթների մեջ հավաքել են արցունքներ և որպես հանգուցյալին ուղեկցող նյութ՝ դրել դամբարանում: Սակայն անոթի անցքը 3-4 մմ է,

ինչը ենթադրել է տալիս, որ նրա մեջ լցվել են օձանեղիք, մածուկ, եթերայուղ կամ ոգեթուրմ: Ուշ անտիկ շրջանում այսօրինակ անոթների առկայությունը թաղման ծեսում լայն տարածում ունի Հայկական լեռնաշխարհում, նմանօրինակները հայտնի են Գառնիի անտիկ դամբարանադաշտից [15, աղ. XIX-5] (նկ.2, 3), Վաղարշապատից: Քանի որ այս անոթները, որ ներկրված են Սիրիայից, նաև օգտագործվել են օձանեղիք պահելու նպատակով, և բացառված չէ, որ հանգուցյալը, որ ամենայն հավանականությամբ ազնվագարմ կին է եղել, իր հետ որպես ուղեկցող նյութ ունենար նաև օձանեղիքով սրվակ: Ապակյա սրվակների որոշ նմանօրինակներ նույնպես ներմուծված են Սիրիայից, մասնագետների կարծիքով, բավականին բարդ է որոշել, թե դրանցից որոնք են ներմուծված, որոնք՝ տեղում պատրաստված [10, էջեր 76-77]:

Բրոնզե անոթ

Անոթը խիստ վնասված է և բաղկացած է 84 բեկորներից (449/9) (նկ.25): Այն պատրաստված է բրոնզե ամբողջական բարակ թիթեղից և ծառայել է հավանաբար որպես թաս կամ ափսե: Թասի կիսագնդաձև մակերևույթը կանաչավուն է, շուրթը՝ ուղիղ, շուրթից 1 սմ ներքև զարդարված է երկու շարք ուղղագիծ և այլքավոր ակոսագարդերով, որոնց միջև եղած տարածությունը նույնպես 1 սմ է: Այս ժապավենը լցված է 3 մմ տրամագծով փոսիկների շարքով, որոնք արվել են դաջման եղանակով: Թասը նույնպես եզակի է ուշ անտիկ շրջանի մետաղյա իրերի մեջ: Հայաստանի անտիկ և վաղմիջնադարյան դամբարանադաշտերում պեղված նյութերի մեջ հանդիպում են մետաղե թասեր, որոնք պատրաստված են պղնձից, բրոնզից: Նմանօրինակներից է Սիսիանի գանձի նմուշներից մեկը [5, էջ 61]:

Ոսկե զարդեր

Ոսկե մանյակը (449/1) և ապարանջանը (449/2) բաղկացած են միօրինակ հավասարասրուն սեղան հիշեցնող մասերից, որոնք թելերով իրար ամրանալու հնարավորություն ունեն աջ և ձախ կողմերից ամրացված երեքական փոքրիկ ելուստներով: Ըստ մայր մատյանի գրանցման՝ մանյակը կազմող սեղանաձև մանրամասները տասն են, իսկ ապարանջանը բաղկացած է եղել վեց նմանօրինակ մանրամասներից: Սեղանը սնամեջ է և ունի երեքական անցք սրունքներից յուրաքանչյուրի վրա: Ոսկյա սեղանի սրունքների և սեղանի հիմքի երկարությունը իրար հավասար են (2 սմ), սեղանի փոքր սրունքի երկարությունը 1,3 սմ է: Այս շքեղ մանյակը և ապարանջանը ազուցված են շագանակագույն ուռուցիկ, էլիպսաձև ապակե մանրամասներով (1,7սմ X 1,3սմ), որոնց վրա հավանաբար ինչ-որ բան է պատկերված եղել, սակայն ապակու գունափոխման պատճառով ի հայտ են եկել մեծաքանակ ճեղքեր, խունացել և փոխվել են ընդելուզված ապակե մանրամասների գույները: Մանյակի մանրամասներից միայն մեկը վերնամասում կախելու շրջանակ ունի: Այս հավասարասրուն սեղան հիշեցնող զարդը մյուսներից միայն կախիկով է տարբերվում և հավանաբար կախված է եղել մանյակի կենտրոնական մի մանրամասից, չնայած թելերով ամրանալու անցքերը նույնպես առկա են: Մանյակի մանրամասներից հաջորդի վրա առկա է փականի մի հատվածը, որը իրենից 4 մմ ոսկե շրջանակ է ներկայացնում: Ցավոք ո՛չ մանյակը, ո՛չ էլ ապարանջանը ավար-

տուն տեսք չունեն, այդ իսկ պատճառով ցուցադրությունը կազմելիս ապարանջանի վեց մանրամասներով համալրել, ամբողջացրել ենք մանյակը (նկ.9):

Ոսկե մատանին (449-4) (նկ.5, 29) պատրաստված է հատկանախշի, լարահյուսի և ընդելուզման եղանակով: Յուրիսակ լարահյուսը՝ ֆիլիգրանը, կազմված է երկու շարք ութաձև ոլորված չորսական և հինգական ոսկե մետաղալարերից, որոնց եզրային հատվածում ամրացված են կիպ գնդիկներից կազմված ոսկե մետաղալարերը, շրջանակին է ամրացված մատանու բնիկը, որը նույնպես եզրագծված է ավելի մեծ հատկանախշով: Մատանու լարահյուսի նմանօրինակ է Մարշալի համահավաքի ոսկե մատանին, որ ութաձև հյուսված է երեքական ոսկե լարերից, ի տարբերություն մեր մատանու, լարահյուսի եզրային հատվածներին ամրացված են հարթ մետաղալարեր [16, p. 38]: Նմանօրինակ է նաև Մարշալի համահավաքի թիվ 515 մատանու լարահյուսը (նկ. 26, 30): Հատկանախշով եզրագծված շրջանակին կիպ ամրացված են չորս գնդիկներ, որոնցից մեկը այս պահին բացակայում է: Մատանին ընդելուզված է շատ վատ պահպանված բաց երկնագույն ապակու մածուկից կամ սմալտայից գեմմայով՝ տրամագիծը 1 սմ, այս գեմմայի վրա թույլ ուրվագծվում է հավանաբար արքայական ծագում ունեցող էակի՝ ըստ Ս. Տեր-Մարգարյանի՝ հավանական է, կնոջ դիմապատկեր, որը, սակայն, դժվար է նկարագրել: Հստակ եզրագծվում է պատկերի կիսադեմքը, սանրվածքը, որը ճակատային հատվածում ունի անտիկ սանրվածքներին բնորոշ հարդարում՝ հյուս կամ դիադեմ (?) և հագուստի՝ տունիկայի հարդարանքը՝ պարանոցի հատվածում զոլավոր գծերով: Անտիկ դարաշրջանով թվագրվող նման օրինակները գետեղված են Մարշալի համահավաքում՝ թիվ 869 ոսկյա մատանու գեմման մոտավոր հիշեցնում է մեր օրինակը (նկ. 27), պատկերային նմանօրինակներ են թիվ 1266, 1267 բրոնզե մատանիների պատկերները [15, pl. XXII, XXXI]: Հաշվի առնելով, որ Մարշալի համահավաքի թիվ 1266 բրոնզե մատանու վրա պատկերված է Ալ. Մակեդոնացին, որի գլխին նշմարվում է դիադեմը (նկ. 28-1), և այս պատկերի դեկորատիվ հարդարանքը բավականին մոտ է մեր գեմմայի պատկերին, հնարավոր է, որ պատկերված է Մակեդոնացին կամ արքայական ընտանիքի մեկ այլ ներկայացուցիչ (?) [16]: Թիվ 1267 մատանու պատկերում կնոջ կիսանդրի է կիսադեմով, որը նույնպես մոտ է մեր գեմմայի պատկերին (նկ. 28-2) [16]: Գեմման, որով ընդելուզված է բնիկը, զարդարված է մեկ շարք ոսկե գնդիկներից կազմված հատկանախշով ոսկե լարով, հատկանախշի այսպիսի նմանօրինակում առկա է մասնավոր հավաքածուում պահպանվող Հյուսիսային մերձսևծովյան շրջաններից հայտնի, II դ. թվագրվող թիվ 129 մատանու վրա [11, c. 122]: Մեր մատանու չափը բավականին փոքր է, այն հնարավոր է կրել միայն ճկույթին: Կիսաթանկարժեք քարով ընդելուզման և բնիկի հատկանախշով զարդարման տեխնիկան Հայաստանում հանդիպում է շատ վաղուց՝ II հազարամյակի I քառորդում. դրանք Լոռի բերդի ոսկուց և արծաթից շքասեղների գլխիկներն են: Անտիկ շրջանում նման զարդեր պեղվել են Սիսիանի դամբարանում՝ ապարանջան (նկ. 23) [5, աղ. XV նկ. 3], Սոնասարում [6, աղ. VI, VII], Աշնակում՝ ականջօղ (նկ. 24) [7, աղ. XVIII-XX, CV-1, CXXII-1,2,3,4]: Սիսիանի ապարանջանը թվագրվում է Ք.հ. I դարի կեսով, իսկ Աշնակի ականջօղերը թվագրվում են Ք.հ. I-II դդ.: Աշնակի օղերը ընդելուզված են ավանդիկով, որը շրջանակված է նուրբ

կեղծ հատիկավոր զարդով: Մատանու բնիկի ոճավորմանը համեմատաբար ավելի նման է Խերսոնեսից հայտնի ականջողը, որը թվագրվում է Ք.հ. III-IV դդ. [9, տաճ. CLXII-32] (նկ. 6), հատկանախշով զարդարված կոյաբզեզ - մատանիների ավելի վաղ թվագրությամբ օրինակներ հայտնի են Արևելյան մերձսևծովյան հուշարձաններից և թվագրվում են Ք.ա. III դ. [9, տաճ. CLIX-14], (նկ. 7):

Յուրօրինակ շքեղություն ունեն ականջողերը (449/5,6) (նկ.10), երկարությունը՝ 4,7 սմ, որոնք ագուցված են տարբեր տրամաչափերի և տարբեր գույների երեք թանկարժեք մետաղներից պատրաստված և մեկ սարդիոնե գնդիկներով: Ոսկու և սարդիոնի համատեղումը հին Հայաստանի ոսկեղենի մեջ հաճախ է հանդիպում, սակայն այդ մեկտեղումը հիմնականում վզնոցների տեսքով է, օրինակ ամենավաղ նմուշները Մեծամորի դամբարանադաշտի գտածոներն են [7, աղ. LXVII, LXVIII, LXXIX], ապա՝ Լոռի բերդի: Ականջողերի պարագայում մեր նմուշները առայժմ եզակի են [2, նկ. 58]: Ականջողի սարդիոնե գնդիկը տեղադրված է չափերով նման երկու ոսկե գնդիկների միջև, այս գնդիկների տրամագիծը մոտ երեք մմ է: Ականջողերի ականջին ամրացող շրջանակի տրամագիծը մոտ 1 սմ է, և պատրաստած է ոսկուց: Մասնագիտական գրականության մեջ հաճախ կոչվում են հարցական նշան հիշեցնող օղեր, մեր օրինակի հարցականի նշան հիշեցնող հատվածի երկարությունը 2 սմ է: Հարցական նշան հիշեցնող հատվածի ստորին մասը ավարտվում է փոքր կլոր կեռիկով, որին ամրացված է ականջողի կախիկի ոսկե կեռիկը: Կեռիկները հիմնային մասում գոդված են: Ականջողի կախիկի վերին հատվածի կեռիկից սկսվում է ոսկե մետաղալարը, որի վրա հավաքված են գնդիկները: Գնդիկներից երկուսը ոսկի են, եզրայինը՝ արծաթ, մեկը՝ սարդիոնից, այն տեղադրած է երկու ոսկե գնդիկների միջև: Կախիկի երկարությունը 2,7 սմ է: Արծաթե գնդիկը, որը կախիկի վերջին համեմատաբար մեծ գնդիկն է, տրամագիծը՝ մոտ 5 մմ, ունի անցք, որի ներքևի մասում երևում է ոսկե մետաղալարի վերջնամասը, որն ավարտվում գնդասեղի փոքր վերջնամաս հիշեցնող գնդիկով, և որով վերջանում է ականջողը: Այս փոքր գնդիկը թույլ է տալիս կռահել մետաղալարի ոսկուց լինելը: Ականջողերի նմանօրինակները Կարմրաքարի, Վարդգաղի, Առափիի և Բենիամինի դամբարաններից են (նկ.21, 22), նաև Էլառից: Սակայն նմանօրինակները պատրաստված են ոչ թանկարժեք մետաղներից, այլ բրոնզից և մեկը նմուշ ագուցված են տարբեր չափերի ապակե և բրոնզե գնդիկներով: Այս նմանօրինակները թվագրվում են Ք.ա. II- I դդ. [2, էջ 196, նկ. 19, 20, 21]:

Սարդիոնից իրեր և ուլունքներ

Առանձնակի կարևորություն են ներկայացնում սարդիոնից մատանիները (449/3-1, 2), որոնց՝ մատի վրա գտնվող հատվածը հարթեցված է: Այս մատանիներից երկրորդը հարթեցված մասում ունի փորագրություն և օգտագործվել է որպես կնիք (449/3-1) (նկ.11, 12): Սարդիոնե նման մատանիների նմանօրինակները Կարմրաքարի թիվ 5 դամբարանից են, Գառնիի անտիկ դամբարանադաշտից [2, աղ. XV-6, 7, 8, 9, 12: 14, рис. 53-54], Վաղարշապատից, Սևանի ավազանի Լանջաղբյուր գյուղից (Կամոյի շրջան), Վարդգաղի, Բենիամինի, Առափիի, Մցխետի, Ղրիմի հնագիտական հուշարձաններից, Գառնիից [15, с. 123] և թվագրվում են Ք.հ. III-V դդ.: Նման օրինակների վրա եր-

բեմն սուր գործիքով ակոսներ են արված: Սարդիոնե մատանիների նմանությամբ պատրաստվել են նրանց ապակե կրկնօրինակները, նմուշը Վարդբաղի թիվ 3 դամբարանից: Սարդիոնե մատանիների մանրագին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք պատրաստվել են Հայաստանում (նկ.15, 16, 18): Մեր սարդիոնե կնիք-մատանու վրա փորագրված է երկփող սրինգ կամ ֆլեյտա նվագող տղամարդու ֆիգուր, որի հագին հունական տունիկ է: Այս գործիքը հնում կոչվել է ավլոս, տղամարդու ֆիգուրը Ավլոս աստվածությանն է: Ուշագրավ են հարդարված, երկփող սրինգ նվագող անձնավորության հագուստը, սանրվածքը, դեմքը սափրված է, փորագրությունը խիստ ոճավորված է: Հավանաբար փորագրված էակը հունական Ավլոս աստվածությանն է: Մատանու կնիքի էլիպսաձև հարթեցված հատվածի լայնքը 5 մմ է, երկարությունը՝ 1,3 սմ: Երկփող սրինգի կամ ֆլեյտայի մոտիվը հանդիպում է դեռ վաղ անտիկ շրջանում՝ Էրեբունիից պեղված պոյակի՝ ռիտոնի վրա, որը թվագրվում է Ք.ա. IV դ. [10, c. 44-45, տաճ. LIX: 2, рис. 58] (նկ.14): Բ. Առաքելյանը երաժշտական այս գործիքը անվանում է երկփող սրինգ [10, c. 44], Գ. Տիրացյանը՝ երկփող ավլոս [14, c. 54]: Ուշ անտիկ շրջանում այս մոտիվը հանդիպում է նաև որմնանկարչության մեջ: Նմանօրինակ երկու պատկերներ հանդիպում են Մերձսևծովյան Պանտիկասպեյի սարկոֆագի որմնանկարում, որը թվագրվում է Ք.հ. II դ. [9, c. 309, տաճ. CXIX-9] (նկ.13): Վերը նշված պոյակի վրա կա նաև քնար նվագող կնոջ պատկեր: Ավելի ուշ շրջանում մատանիների վրա նույնպես հանդիպում է քնարով երաժիշտի փորագրության մոտիվը: Նմանօրինակը անտիկ շրջանում Արևելյան Միջերկրականի ավագանից հայտնի ոսկե զարդերի մեջ է, ոսկե մատանին թվագրվում է Ք.ա. IV-III դդ. [9, c. 351, рис. 18] (նկ.8): Այս մոտիվը շարունակում է կրկնվել նաև զարգացած միջնադարում, Կիլիկիայում դեկորատիվ կիրառական արվեստում արծաթե ոսկեզոծ թասի վրա պատկերված է թագակիր տղամարդ, որի նվագած քնարի երաժշտությունը գերում է ոչ միայն նրա կողքին նստած կնոջը, այլև կենդանիներին և թռչուններին, որոնք շրջապատել են զույգին: Իրը թվագրվում է XII-XIII դդ. [7, աղ. XXIX] (նկ.17): Սարդիոնե կնիք-մատանու նմանօրինակները բազմաքանակ են, սակայն անհրաժեշտ է առանձնացնել Էրմիտաժի հրատարակած մասնավոր հավաքածուի թիվ 185 մատանին, որը թվագրվում է IV դարով, սակայն կատարման տեխնիկայով բավականին մոտ է մեր օրինակին: Մատանու պատկերի ոճավորված մոտիվը խաչը ձեռքին հրեշտակը կամ հռոմեական դիցաբանության բարության աստվածություն Էվենտուսն է [11, c. 162]:

Այսպիսով, Կարմրաքարի սարդիոնե կնիք-մատանիները թվագրվում են Ք.հ. III-V դդ., ինչը նաև հիմնական թվագրող նյութն է մեր հավաքածուի համար:

Ինչ վերաբերում է «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի՝ 1999թ. Վարդբաղում պեղած (Ս. Տեր-Մարգարյան, Ի. Ավագյան) 12 դամբարաններին, ապա սարդիոնե երկու նմանօրինակ մատանիներ պեղվել են թիվ 9 դամբարանից, հավելենք նաև, որ դեռևս 1976թ. Ս. Տեր-Մարգարյանի՝ Վարդբաղում կատարած պեղումներից հայտնի է ևս մեկ, բաց դեղնավուն սարդիոնից պատրաստված նմանօրինակ մատանի:

Այս երեք և Կարմրաքարից հայտնի երկրորդ սարդիոնից մատանու հարթ հըղկված մակերեսներին ոչինչ փորագրված չէ:

Կարմրաքարի ուլունքների առաջին խումբը կիսաթանկարժեք գիշերից է (նկ. 20), դրանք գլանաձև են: Ուլունքները նույնպես բազմաքանակ են և հանդիպում են Շիրակի մի շարք հուշարձաններում՝ Սև ամրոց, Վարդբաղ, Կարմրաքար և Տիրաշեն հուշարձանների ու անտիկ շերտերում, Հյուսիսային մերձսևծովյան հուշարձաններում [8, տաճ. 20, րիս. 43]: Գառնիի ու անտիկ դամբարանադաշտում մեծաքանակ են գտնված նյութերից պատրաստված գլանաձև ուլունքները [14, c. 188]: Քանակը՝ 25: Ուլունքների երկրորդ խումբը ապակուց է (նկ.19). գլանաձև երկշերտ թափանցիկ ապակու մեջ գտնվում է ոսկու բարակ և նուրբ թիթեղը, ինչը ուլունքին յուրահատուկ նրբագեղություն է հաղորդում: Այս տիպին պատկանող ուլունքները 6-ն են. երկարությունը՝ 1 սմ, տրամագիծը՝ 3 մմ: Ոսկեջրված ուլունքները հիմնականում ներկրվել են Արևելյան Միջերկրականի ավազանից [15, c. 125]: Ըստ Ալեքսեյայի՝ նման ուլունքները պատրաստվել են երկու եղանակով: Առաջին դեպքում ապակյա խողովակին քսել են ոսկե թիթեղը, որը ամրացվել է բուսական հեղուկով և տաքացվել է 600-800 աստիճան, ապա ուլունքը ծածկվել է տաքացված ապակու երկրորդ շերտով: Պատրաստման երկրորդ տարբերակում ապակյա ուլունքի սնամեջ խողովակը ծածկվել է ոսկու կամ արծաթի թիթեղով և իջեցվել ավելի մեծ տրամագծով թափանցիկ դեղնավուն ապակե ուլունքահատիկի մեջ [8, c. 27] Ուլունքների երրորդ խումբը սարդիոնից է (նկ.11): Այս ուլունքները երեքն են. երկուսը՝ կլորավուն, մեկը՝ էլիպսաձև, նմանօրինակներ կան Հայաստանի բազմաթիվ տարժամանակյա հուշարձաններից՝ Արթիկ, Սիսիանի դամբարան [5, էջ 76], Բենիամին [2, էջ 156], Շիրակավան, Սև ամրոց [1, էջ 133], Գառնի [14, c. 188], Վրաստանի՝ Կոլխիդա և Աղվանքի հնագիտական հուշարձաններից [12, c. 21]:

ԵԶՐԱՆԱԿՈՒՄ.


1. Կարմրաքարի զարդեղենի հավաքածուն ունի բացառիկ գիտական նշանակություն ոչ միայն Հայաստանի հնագիտության համար:
2. Կարմրաքարի գանձը բաժանվում է երեք խմբերի՝ ապակյա, մետաղյա և սարդիոնից իրեր: Եվս երկու խմբեր՝ փայտ և ոսկրաբանական նյութեր չեն պահպանվել:
3. Կարմրաքարի սարդիոնե կնիք-մատանիները թվագրվում են Ք.հ. III-V դդ.:
4. Զարդերը Հայաստան ներկրվել են այլ շրջաններից և տեղական արտադրության արգասիքներ չեն, բացառությամբ սարդիոնե իրերից:
5. Թանկարժեք իրերի զարդաձևերի լուծումները համապատասխանում են բարձր կատարողական արվեստի օրինաչափություններին և աչքի են ընկնում նրբագեղությամբ:
6. Կարմրաքարի անտիկ դամբարանները ըստ թվագրման պատկանում են ուշ անտիկ շրջանին, հետևաբար հիմք ընդունելով Լ.Եգանյանի թվագրումը՝ «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանում պահպանվող և ցուցադրվող Կարմրաքարի հավաքածուն նույնպես թվագրվում է Ք.հ. III-IV դդ.:
7. Կարմրաքարի հավաքածուն Շիրակի անտիկ ժամանակաշրջանի հուշարձանների հայտնի գտածոներից ամենահարուստն է և իր նշանակությամբ դուրս է գալիս Հայաստանի հնագիտության շրջանակներից:



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8



Նկ. 10



Նկ. 9



Նկ. 11




Նկ. 12




Նկ. 13



Նկ. 14




Նկ. 15



Նկ. 16



Նկ. 17




Նկ. 18



Նկ. 19



Նկ. 20



Նկ. 21



Նկ. 22



Նկ. 23



Նկ. 24



Նկ. 25



Նկ. 26



Նկ. 27



Նկ. 28



Նկ. 29



Նկ. 30

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո Ւ Ն

1. Ավագյան Ի. «Մե անրոց» հուշարձանի դամբարանադաշտը // Հայաստանի հնագիտական մշակույթը-3: Տելեմակ Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր: Երևան: Մուղնի: 2003: 128-134 էջեր:
2. Եգանյան Լ. Շիրակի անտիկ դամբարանադաշտերը: Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ 1: Երևան-Գյումրի: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2010: 224 էջ:
3. Ժամկոչյան Ա. Ջրվեժի վաղմիջնադարյան դամբարանադաշտի պեղումները // Պատմաբանասիրական հանդես: Հ.1: Երևան: 1986: 220-225 էջեր:
4. Խաչատրյան Ժ. Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր (1971-1977թթ. պեղումները), Հնա գիտական պեղումները Հայաստանում: Հ. 17: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 1981: 204 էջ:
5. Խաչատրյան Ժ. Միսիանի դամբարանը, (Մ.թ.ա. I դարի երկրորդ կես), Հայաստանի հնագիտական հուշարձանները: Հ. 21: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2009: 124 էջ:
6. Խաչատրյան Ժ. Հայաստանի Սոդից գավառի անտիկ դամբարանը // Բանբեր հայագիտության: Երևան: Հ. 1 (1): 2013: 61-77 էջեր:
7. Հին Հայաստանի ոսկին, (մ.թ.ա. III հազ.-մ.թ. XIV դ.): Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2007: 418 էջ:
8. Алексеева Е. Античные бусы Северного Причерноморья, Археология СССР. Свод археологических источников, под редакцией. Б.А. Рыбакова. Москва: Изд-во “Наука”.1978. 105 с..
9. Алексеева Е., Амброз А., Арсеньева Т., Беляев С., Блаватский В., Бондарь Р. и др. Античные государства Северного Причерноморья, Археология СССР с древнейших времен до средневековья в 20 томах, под редакцией. Б.А. Рыбакова. Москва: Изд-во. “Наука”.1984. 391 с..
10. Аракелян Б. Очерки по истории искусства древней Армении (VI в. до н.э.-III в. н.э.). Ереван: Изд-во АН Арм. ССР. 1976. 111 с..
11. Арсентьева Е., Горская О., Античные ювелирные изделия из частных собраний. Кольца и перстни, Каталог коллекции. Санкт-Петербург: Изд-во. Государственного Эрмитажа. 2009. 99 с..
12. Буряков Ю., Заднепровский Ю., Кошеленко Г., Лордкипанидзе О., Массон В., Никитин А. и др. Древнейшие государства Кавказа и Средней Азии, Археология СССР с древнейших времен до средневековья в 20 томах, под редакцией. Б.А. Рыбакова. Москва: Изд-во. “Наука”.1985. 495 с..
13. Есаян С., Калантарян А. Ошакан I, Основные результаты раскопок 1971-1983гг. Археологические раскопки в Армении 18. Ереван: Изд-во АН Арм. ССР. 1988г. 131 с.
14. Тирацян Г. Культура Древней Армении VI в. до н. э.-III в. н. э. (по археологическим данным). Ереван: Изд-во АН Арм. ССР. 1988. 206 с..

15. Хачатрян Ж. Гарни V. *Античный некрополь (результаты раскопок 1956-1972гг.)*. Ереван: Изд-во АН Арм. ССР. 1976.134 с..
16. Marshall F. *Catalogue of the finger rings, Greek, Etruscan, and Roman: in the Departments of Antiquities. British Museum*. London. Printed by order of the Trustees. 1907. 461 p..
<https://iiif.wellcomecollection.org/pdf/b2487615x> (ըխմվել է 29.03.2023)

References

1. Avagyan I. The burial ground of the "Black Castle" monument. Archaeological culture of Armenia 3. Proceedings of the conference dedicated to the 70th anniversary of Telemek Khachatryan [«Sev amrots'» hushardzani dambaranadashty. Yerevan: "Mughni" publ., 2003: 128-134 pp.. (in Armenian)
2. Yeganyan L. The ancient tombs of Shirak. Archaeological and ethnographic studies of Shirak 1 [Shiraki antik dambaranadashtery: Shiraki hnagitakan yev patmazgagrakan usumnasirut'yunner1]. Yerevan-Gyumri: "Science" of NAS RA, publ. 2010. 224 p. (in Armenian)
3. Zhamkochian A. Excavations of the early medieval burial ground of the waterfall [Jrvezhi vaghmijnadaryan dambaranadashti pегhumnery]//Journal of Historical Studies. v.1. Yerevan: 1986 220-225 pp.. (in Armenian)
4. Khachatryan Zh. Artashat II. Ancient burial grounds (1971-1977 excavations) Archaeological excavations in Armenia v. 17 [Artashat II, Antik dambaranadashter (1971-1977t't'. pегhumnery), Hnagitakan pегhumnery Hayastanum: H. 17]. Yerevan: "Science" of NAS RA publ., 1981. 204 p. (in Armenian)
5. Khachatryan Zh. Tomb of Sisian, (second half of the 1st century BC), archaeological monuments of Armenia. v. 21 [Sisiani dambarany, (M.t'.a. I dari yerkrord kes), Hayastani hnagitakan hushardzannery: H. 21]. Yerevan: "Science" of NAS RA publ., 2009 124 p. (in Armenian)
6. Khachatryan Zh. The ancient tomb of the Sodits province of Armenia [Hayastani Sodits' gavarri antik dambarany] // Review of Armenian studies. Yerevan: v. 1 (1). 2013 61-77 pp.. (in Armenian)
7. The gold of ancient Armenia (III millennium BC-XIV century AD) [Hin Hayastani voskin, (m.t'.a. III haz.-m.t'. XIV d.)]. Yerevan: "Gitutyun" publ., 2007. 418 p. (in Armenian)
8. Alekseeva E. Antique beads of the Northern Black Sea region, Archeology of the USSR. [Antichnyye busy Severnogo Prichernomor'ya. Arkheologiya SSSR. Svod arkheologicheskikh istochnikov, pod redaktsiyey. B.A. Rybakova]. Moscow: "Science" publ., 1978. 105 p. (in Russian)
9. Alekseeva E., Ambroz A., Arsenyeva T., Belyaev S., Blavatsky V., Bondar R. And others. Ancient States of the Northern Black Sea Region, Archeology of the USSR from Ancient Times to the Middle Ages in 20 volumes, edited. B. Rybakov [Antichnyye gosudarstva Severnogo Prichernomor'ya, Arkheologiya SSSR s drevneyshikh vremen do srednevekov'ya v 20 tomakh]. Moscow: "Nauka" publ.1984. 391 p. (in Russian)
10. Arakelyan B. Essays on the history of art of ancient Armenia (VI century BC-III century AD) [Ocherki po istorii iskusstva drevney Armenii (VI v. Do n.e.-III v. N.e.)]. Yerevan: "Gitutyun" publ. 1976. 111 p. (in Russian)
11. Arsent'eva E., Gorskaya O. Antique jewelry from private collections. Rings. Collection catalogue [Antichnyye yuvelimnyye izdeliya iz chastnykh sobraniy. Kol'tsa i perstni, Katalog kollektsii.]. St. Petersburg: State Hermitage publ. 2009. 99p, (in Russian)

12. Buryakov Yu., Zadneprovsky Yu., Koshelenko G., Lordkipanidze O., Masson V., Nikitin A. et al. The most ancient states of the Caucasus and Central Asia. Archeology of the USSR from ancient times to the Middle Ages in 20 volumes [*Drevneyshiye gosudarstva Kavkaza i Sredney Azii, Arkheologiya SSSR s drevneyshikh vremen do srednevekov'ya v 20 tomakh*]. Moscow: "Nauka" publ.1985. 495 p. (in Russian)
13. Yesayan S., Kalantaryan A. Oshakan I, The main results of the excavations in 1971-1983. Archaeological excavations in Armenia 18 [*Oshakan I, Osnovnyye rezul'taty raskopok 1971-1983gg. Arkheologicheskiye raskopki v Armenii 18.*]. Yerevan: "Science" of NAS RA publ. 1988. 131 p. (in Russian)
14. Tiratsyan G. Culture of Ancient Armenia VI c. BC e.-III c. n. e. (according to archaeological data) [*Kul'tura Drevney Armenii VI v. do n. e.-III v. n. e. (po arkheologicheskim dannym)*]. Yerevan: "Gitutyun" publ., 1988. 206 p. (in Russian)
15. Khachatryan J. Garni V. Antique necropolis (results of excavations in 1956-1972) [*Garni V. Antichnyy nekropol' (rezul'taty raskopok 1956-1972gg.)*]. Yerevan: "Gitutyun" publ., 1976. 134 p. (in Russian)
16. Marshall F. *Catalogue of the finger rings, Greek, Etruscan, and Roman: in the Departments of Antiquities. British Museum.* London. Printed by order of the Trustees. 1907. 461 p.. <https://iif.wellcomecollection.org/pdf/b2487615x>

Ընդունվել է / Принята / Received on: 07.03.2023

Գրախոսվել է / Рецензирована / Accepted on: 20.03.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.06.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Ինգա Էդուարդի ԱՎԱԳՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկն., դոցենտ,
«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տնօրեն,
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,
Էլ. հասցե՝ inga.avagyan.76@mail.ru <https://orcid.org/0000-0001-6260-1467>

Inga Eduard AVAGYAN: PhD in History, Associate Professor,
Director of the "Kumayri" Historical and Cultural Preserve-Museum,
researcher at Shirak Center for Armenological Studies NAS, Gyumri, RA,
e-mail: inga.avagyan.76@mail.ru <https://orcid.org/0000-0001-6260-1467>

Инга Эдуардовна АВАГЯН: канд. ист. наук, доцент,
директор Историко-культурного музея - заповедника «Кумайри»,
научный сотрудник Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА,
эл.адрес: inga.avagyan.76@mail.ru <https://orcid.org/0000-0001-6260-1467>

ՀՏԴ՝ 93.94

DOI: 10.52971/18294316-2023.26.1-115

ԲԱՆՎՈՐ ԴԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX դ. ՎԵՐՁԻՆ
ՔԱՌՈՐԴԻՆ ԵՎ XX դ. ՄԿՁԲԻՆ
(Ալեքսանդրապոլի գավառի օրինակով)

Արմեն Ս. Հայրապետյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ
Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ամփոփում

Նախաբան. Անդրկովկասի միացումը Ռուսական կայսրությանն արևելահայության համար ունեցավ առաջադիմական նշանակություն: Շինականն ու արհեստավորը ստացան անձի և գույքի ապահովություն, առևտրականն ու արդյունաբերողը՝ գործունեության ծավալման լայն հնարավորություններ: XIXդ. երկրորդ կեսից երկրամասը ներքաշվեց համառուսական կապիտալիզմի հորձանուտ՝ հիմնվեցին գործարաններ ու ֆաբրիկաներ, մեծ մասշտաբներ ընդունեց լեռնահանքային արդյունաբերությունը, ձևավորվեց արևելահայ բուրժուազիան: Զուգահեռ՝ պատմության թատերաբեմ իջավ նաև բանվոր դասակարգը: *Մեթոդներ և նյութեր.* Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը արխիվային նյութի անաչառ օգտագործումն է, հիմնահարցերի աղբյուրագիտական վերլուծությունը՝ իրադարձությունների անկողմնակալ լուսաբանման պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ: *Վերլուծություն.* Հոդվածում վեր են հանվել այն պատճառները (իրավագուրկ վիճակ, ցածր վարձատրություն, արտադրական տրավմատիզմ, սոցիալական երաշխիքների և անվտանգ պայմանների բացակայություն և այլն), որոնք արդեն XIX դ. վերջից նպաստավոր պայմաններ ստեղծեցին Ալեքսանդրապոլի գավառում սոցիալական շարժումների ծավալման համար: *Արդյունքներ.* Հոդվածի շրջանակներում հստակեցվել են Ալեքսանդրապոլի գավառում բանվոր դասակարգի ձևավորման հիմնական նախապայմանները, բանվորների սեռատարիքային և ազգային կազմը, քննարկվել է տարբեր ոլորտներում բանվորների աշխատաժամա-

նակի տնտեսության ու աշխատավարձի հարցը, լուսաբանվել են բանվորների աշխատանքային և կենցաղային պայմանները:

Բանալի բառեր՝ *Ալեքսանդրապոլ, Միսիմադան, երկաթուղի, բանվոր, աշխատաժամանակ, արդյունաբերություն, առևտուր, շինարարություն:*

Ինչպես հղել՝ Հայրապետյան Ա. *Բանվոր դասակարգի ձևավորման սոցիալ-տնտեսական պայմանները Արևելյան Հայաստանում XIX դ. վերջին քառորդին և XX դ. սկզբին (Ալեքսանդրապոլի գավառի օրինակով)* // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Ն. 1(26): 115-129 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.1-115

**THE SOCIAL-ECONOMIC CONDITIONS OF THE FORMATION
OF THE WORKING CLASS IN EASTERN ARMENIA IN THE LATE
XIX th CENTURY – EARLY XX th CENTURY
(on the example of Alexandropol uezd)**

Armen S. Hayrapetyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA
Shirak State University after M.Nalbandyan

Abstract

Introduction: The accession of Transcaucasia to the Russian Empire had progressive significance for Eastern Armenians. The builders and craftsmen received security of person and property, the merchants and industrialists received wide opportunities for activity. In the mid-19th century, the region was drawn into “the whirlpool” of all-Russian capitalism: factories were established, the mining industry took on a large scale, and the Eastern Armenian bourgeoisie was formed. At the same time working class was formed. **Methods and materials:** The methodological basis of the study is the archival material and the source-oriented analysis of the issues. We have used the historical-comparative method of unbiased coverage of events. **Analysis:** The article highlighted the reasons (disenfranchised state, low pay, industrial traumatism, lack of social guarantees and safety rules, etc.) that created favorable conditions for the development of social movements in Alexandropol province from the end of the 19th century. **Results:** Within the framework of the article, the main prerequisites for the formation of the working class in Alexandropol province, the gender-age and national composition of the workers, the issue of the duration of working hours and wages of workers in various fields were discussed, and the working and living conditions of the workers were covered.

Key words: *Alexandropol, Sisimada, railway, worker, working hours, industry, trade, construction.*

References: Hayrapetyan A. Socio-Economic Conditions of the Formation of the Working Class in Eastern Armenia in the Last Quarter of 19th Century and Early XX century. (on the Example of the Province of Alexandropol) // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 1(26). 115-129 pp.. DOI: 10.52971/18294316-2023.26.1-115

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ УСЛОВИЯ ФОРМИРОВАНИЯ РАБОЧЕГО КЛАССА В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В ПОСЛЕДНЕЙ ЧЕТВЕРТИ XIX в. И НАЧАЛЕ XX в.

(на примере Александропольского уезда)

Армен С. Айрапетян

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

Ширакский государственный университет им. М.Налбандяна

Аннотация

Введение. Присоединение Закавказья к Российской империи имело прогрессивное значение для восточных армян. Строитель и ремесленник получили гарантию безопасности личности и имущества, купец и промышленник - широкие возможности для деятельности. Со второй половины XIX в. край вошел в водоворот общероссийского капитализма: были основаны заводы и фабрики, горнодобывающая промышленность приняла крупные размеры, сформировалась восточноармянская буржуазия. Параллельно на арену вышел также рабочий класс.

Օլթի և Թորթում գետերի միախառնման վայրի մոտ էր գտնվում հանրահայտ Իշխան գյուղը: Այն երեք կողմից շրջապատված էր լեռներով: Իշխանը, որը համապատասխանում է միջնադարյան աղբյուրներում հիշատակվող Իշխանաց գյուղին, եղել է Մամիկոնյանների նստավայրը: Իշխանը նաև Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի ծննդավայրն էր: Իշխանի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 630-ական թթ. Ներսես Տայեցու կողմից, երբ նա դեռ Տայքի եպիսկոպոսն էր: Արաբական Գրիգոր Խանձթեցու աշակերտ Սաբա (Սաբան) Իշխանցու կողմից. «Աստծո կամոք Սաբանը եպիսկոպոս դարձավ Իշխանում, որը կառուցել էր երանելի կաթողիկոս Ներսեսը և որը երկար տարիներ այրի էր: Երկրորդ անգամ կառուցվեց եկեղեցին մեր երանելի Սաբայի կողմից, աստվածապաշտ թագավորների նյութական աջակցությամբ» [10, էջ 107]: Տ. Մարությանի կարծիքով՝ Սաբանի շինարարական գործունեությունն Իշխանում սահմանափակվում է վերանորոգումներով, որից հետևում է, որ տաճարի տեսքի արմատական վերափոխում չի եղել [5, էջեր 268-275]: Ժամանակին մեր կողմից իրականացրած շերտագրական ուսումնասիրությունները (իրականացրել ենք 2016 թ., երբ նորոգման աշխատանքների համար պարագծով բացվել էին տաճարի հիմքերը) հաստատում են Տ. Մարությանի այն վարկածը, որ Իշխանի տաճարը ի սկզբանե, այսինքն՝ VII դարից սկսած, եղել է խաչաձև կենտրոնագմբեթ տիպի, այլ ոչ թե շրջանց սրահով, ինչպես Չվարթնոցի և Բանակի տաճարներն են [9, էջեր 239-240]:

Իշխանի վանքում պահպանված գրեթե բոլոր արձանագրությունները վրացերեն են, բացի մի քանի հայկական տարբերակներից [6, էջ 100]: Այդ արձանագրությունները կատարվել են վերոհիշյալ վերանորոգումներից հետո՝ Տայքի քաղկեդոնականացման ժամանակաշրջանում: Ամենահայտնի հայերեն արձանագրությունը կատարված է 1006 թ. Գուրգեն Մագիստրոսի կառուցած միանավ բազիլիկ եկեղեցու բարավորի վրա: Այնտեղ ամբողջովին վրացերեն արձանագրության աջ ներքևի հատվածում առկա է հայատառ թվագրում՝ «ՀԱ ԹՈՒԻԱԿԱՆ...»: Արձանագրության վրացերեն հատվածից հայտնի է, որ եկեղեցին կառուցվել է 1006 թ., ուստի տրամաբանական է, որ հայերեն արձանագրության մեջ վնասված հատվածում եղել են «ՕԵ» տառերը:

Իշխանի եկեղեցու մեկ այլ հայկական մոտիվ է Տրդատ III Մեծի տիկնոջ՝ Աշխեն թագուհու պատկերը վրաց առաջին քրիստոնյա թագուհի Նանայի պատկերի կողքին, ինչի մասին վկայում է Է. Թաղախչվիլին [11, էջ 43]:

Որպես եկեղեցի՝ Իշխանը դադարել է գործել XVII դ. երկրորդ կեսից, Տայքի բռն մահմեդականացման գործընթացի և էթնոժողովրդագրական տեղաշարժերի արդյունքում: Թուրքերը, չկարողանալով բարձրանալ տաճարի գմբեթի վրա, «...ոմբաձգութեամբ կուրացուցին զխաչն» [3, էջ 30], որով և շինությունը ենթարկեցին նոր ավերածությունների: Իշխանի Ս. Աստվածածին եկեղեցու հարևանությամբ վերջին տարիներին իրականացված պեղումների արդյունքում հայտնաբերվել են ևս երկու եկեղեցիների հիմքեր: Ամենայն հավանականությամբ, նորահայտ եկեղեցիներից մեկը եղել է եռանավ բազիլիկ:

Այլ հուշարձաններ

Պատմական Տայքի ճակք գավառի **Արքունիս** (Արքունից) (այժմ՝ Ilıkaynak) գյուղից 1,8 կմ հարավ-արևմուտք, դժվարամատչելի ժայռի վրա գտնվող ամրոցից պահպանվում են աշտարակի բեկորներ: Աշտարակի մի կողմն ուղղանկյուն է, մյուսը՝ կոր: Պահպանվել է նաև ժայռի եզրը շրջապատող պարսպի 5 մետր բարձրությամբ հատվածը: Ամրոցի տարածքում կան նաև եկեղեցու մնացորդներ:

Պատմական Տայքի ճակք գավառի **Գեամալ** գյուղում (այժմ՝ Taşgeçit)՝ մզկիթից մոտ 100 մետր հարավ, տեղացիներից մեկի տան պատերի մեջ պահպանված են երկու խոյաձև կոթողներ, որոնք, ամենայն հավանականությամբ, եղել են միջնադարյան տապանաքարեր:

Փոքրիկ ամրոցի մնացորդներ պահպանվել են պատմական Տայքի **Քարնավազ** գյուղի (այժմ՝ Ormanağzi) մոտ գտնվող ժայռի վրա: Պարսպի պահպանված հատվածը թվում է, թե շրջապատել է ժայռի եզրը: Կենտրոնական մասում կա ջրի մեծ ամբար:

Պատմական Տայքի ճակք գավառի **Քիվ** (այժմ՝ Yıldızkaya) գյուղից 2 կիլոմետր հյուսիս-արևմուտք պահպանվում են սրահավոր եկեղեցու մնացորդներ: Եկեղեցին մեծապես վնասված է, համեմատաբար ավելի լավ է պահպանվել խորանի հատվածը: Եկեղեցու մուտքը հարավից էր: Պատերը կառուցված են անտաշ, մեծ չափերի քարերով և կրաշաղախով:

Պատմական Տայքի ճակք գավառի **Նիսագոմ** գյուղի (այժմ՝ Keçili) եկեղեցու տեղում այսօր մզկիթ է կառուցված: Եկեղեցու հյուսիսային պատն այժմ ներառված է մզկիթի մեջ: Նկատվում է սրահավոր եկեղեցու հատակագիծը, որը լուսամուտ ուներ արևմուտքում: Եկեղեցին կառուցված է եղել անմշակ և մաքրատաշ քարերի հավասար շարքերով: Պահպանված պատի բարձրությունը 4 մետր է:

Պատմական Տայքի ճակք գավառի **Նորբերդ** (այժմ՝ Köprübaşı) գյուղից 1 կմ դեպի հյուսիս-արևելք, ժամանակակից Քյոփրյուբաշը գյուղում՝ ճանապարհից ոչ հեռու՝ Օլուր գետակի ձախ ափին՝ Օլթի գետի հետ միախառնվելու վայրից մոտ 600 մետր հյուսիս, ժայռի վրա պահպանվում է գրավոր աղբյուրներից հայտնի ամրոցը: Այն գտնվում է ծովի մակարդակից 1050 մետր բարձրության վրա: Ամրոցի պարիսպները բավականին լավ են պահպանված: Մեզ են հասել պարիսպը, դարպասը, իսկ արևելյան մասում՝ օվալաձև մեծ աշտարակը: Ամրոցի կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ: Ամրոցում կիրառված ճարտարապետական լուծումները թույլ են տալիս ենթադրել, որ այն կառուցվել է միջնադարում: Նորբերդ բնակավայրը ուշ միջնադարում եղել է հայաբնակ, ինչի մասին վկայում են նաև օսմանյան սկզբնաղբյուրները [13, էջեր 386-387]:

Պատմական Տայքի ճակք գավառի հայաշատ բնակավայրերից էր **Օլորը**, որը մինչև XX դարակիզը եղել է հայաբնակ: Դրա մասին են վկայում ինչպես օսմանյան սկզբնաղբյուրները [13, էջեր 383-384], այնպես էլ արխիվային փաստաթղթերը [12, էջեր 21-25]: Օլորն այսօր Էրզրումի նահանգի Օլուրի գավառակի վարչական կենտրոնն է: Քաղաքի վարչական շենքի բակում պահպանվել է անչափ հետաքրքիր խորհրդաբանական մեծ արժեքներով փորագրված հուշակոթողը: Ըստ տեղի բնակիչների՝ քարը բերվել

է Քարաշուտ գյուղից: Ցավոք, քաղաքի երբեմնի հայկական ներկայության վերաբերյալ, բացի տեղաբնիկների վկայություններից, այսօր մնացորդներ չկան:

Պատմական Տայքի ճակք գավառի կենտրոնում էր գտնվում **Որդից** գյուղը (այժմ՝ Eǰlek): Ըստ Ատրպետի՝ Որդիցը եղել է տոնախմբության վայր, ուր գործել է նաև տոնավաճառ [1, էջ 191]: Բնակավայրից մոտ 500 մետր դեպի արևմուտք, բարձր ժայռի վրա պահպանվել են ամրոցի մնացորդներ: Այն գտնվում է ծովի մակարդակից 1440 մետր բարձրության վրա: Ամրոցը ուղղանկյուն է, ցավոք՝ բավականին վնասված: Պահպանվել են ժայռի եզրերը շրջապատող պարսպի բեկորներ: Ամրոցի տարածքում՝ ժայռի վրա, առկա է ջրի մեծ ամբար: Ամրոցը, ամենայն հավանականությամբ, կառուցվել է վաղ միջնադարում և պատկանել է Մամիկոնյան նախարարական տան սեպուհներին: Ամրոցի տեղադիրքը չափազանց կարևոր է մարտավարական տեսանկյունից և նկատվում է բավականին հեռվից: Այդպիսի անմատչելի վայրում նմանատիպ ամրոց կառուցելը ինքնին շինարարական սխրանք է, որը պետք է որ ահ ու սարսափ տարածեր թշնամիների վրա և հիացմունք՝ տեղաբնիկների մոտ: Շինայնությունը հնարավոր էր բարձրացնել միմիայն պարանների միջոցով և տիտանական աշխատանք էր հարկավոր թեպետ փոքր, բայց տպավորիչ այսպիսի ամրոց կառուցելու համար: Հավանական ենք համարում, որ ժայռը հնում պաշտամունքի վայր եղած լինի:

Պատմական Տայքի ճակք գավառի **Օղթադար** (այժմ՝ Ekinlik) գյուղից 700 մետր հարավ-արևմուտք, խոտածածկ տարածքներում պահպանվել են եկեղեցու մնացորդներ: Տեսանելի է սրահավոր եկեղեցու հատակագիծը, տանիքը փլված է, պատերը կառուցված են անմշակ քարերով և կրաշաղախով, պահպանված պատերի բարձրությունը միջինը 1 մետր է: Պահպանվել են սալաքարերի բեկորները: Մուտք հարավից էր: Եկեղեցու որմերի քարերը պոկված հանված են, և կանգուն է մնացել հիմնականում կրաբետոնե միջուկը: Տեղի բնակչությունն այս վայրը անվանում է «Չիֆթլիկ» («ագարակ»): Մեզ հայտնի գրավոր աղբյուրներում եկեղեցին չի հիշատակվում:

Օղթադար բնակավայրից շուրջ 2 կմ հյուսիս գտնվում են նաև բերդի ավերակներ: Բերդը տեղակայված է եղել ամբողջ հովտի վրա իշխող դիրք ունեցող 2256 մետր բարձրություն ունեցող բլրի վրա: Բացառությամբ ամրոցի արևելյան հատվածի, մյուս կողմերից այն շրջապատված է ժայռերով: Պարիսպները, որոնց միայն մի մասն է կանգուն, կառուցված են խոշոր սրբատաշ քարերով, թեև տեսանելի է նաև ամրոցի կիկլոպյան շարվածքի շերտը: Ամրոցի ընդհանուր երկարությունը հասնում է 22, իսկ լայնությունը՝ 12 մետրի: Պարիսպների լայնությունը 1,2 մետր է: Ներսից նկատելի են օվալաձև և ուղղանկյունաձև ճարտարապետական կիսավեր կառույցներ: Այստեղ հայտնաբերված կերամիկական տարբեր գտածոները խոսում են ամրոցի տարածքում վաղ բրոնզի և վաղ երկաթի դարերին, ինչպես նաև միջնադարին պատկանող մշակութային շերտերի առկայության մասին:

Պատմական Տայքի ճակք գավառի **Սալաջուր** գյուղում (այժմ՝ Kekikli)՝ Նիկոլայի թաղամասում, պահպանվել են եկեղեցու մնացորդներ: Տեղի բնակչությունը հաստատում է այս վայրում եկեղեցու գոյությունը: Ըստ նրանց՝ եկեղեցու քարերը օգտագործված են գյուղի կենտրոնական թաղամասում գտնվող տների պատերի մեջ: Մեզ հայտնի

գրավոր աղբյուրներում եկեղեցին չի հիշատակվում: «Նիկոլայ» անվանումը կապված է ռուս զինվորականի հետ: Այստեղ՝ եկեղեցու մոտ, կա հին ռուսական դպրոցի շենք: Կենտրոնական թաղամասում՝ Սզկիթի վերևում, կա մեկ այլ շինություն, որը որոշ տեղաբնիկների կողմից անվանում է եկեղեցի: Պահպանված կառույցի՝ հավանաբար եկեղեցու որմերը իրականացված են բավականին մաքուր տաշված և կանոնիկ քարերից, վերին հատվածը վերակառուցված է ամբողջությամբ:

Պատմական Տայքի Ճակք գավառի **Տայոցքար** բնակավայրը (այժմ՝ Çataksu) գտնվում է Օլթի գետի և նրա վտակ Տայոցքարի միախառնման վայրից 5 կմ հեռավորության վրա, Տայոցքար վտակի ափին: Գյուղի այգիներում պահպանվել են գրավոր աղբյուրներից հայտնի երկու եկեղեցիներ: Դրանցից մեկը կենտրոնագմբեթ բազմանկյուն տիպի ութանկյուն եկեղեցի է, որը բավականին վնասված է հասել մեր օրերը, գմբեթը՝ փլված: Պահպանված պատերի բարձրությունը հասնում է 3 մետրի: Եկեղեցին կառուցված է մաքրատաշ, սակայն փոքր և միջին քարերից, որը բնորոշ է տվյալ գավառին: Տայոցքարի այս բազմախորան եկեղեցին գավառի առանցքային կառույցներից մեկն է եղել, ցավալի է, որ բավականաչափ լավ չի պահպանվել ամբողջական կերպարային հետազոտություն անելու համար: Այս կառույցին դեռևս 1906 թ. Թ. Թորամանյանը ուշադրություն է դարձրել՝ նշելով «Թավուզյարի» եկեղեցու մասին, որը, ըստ իրեն հասած տեղեկությունների, Զվարթնոցի նման է և, հավանաբար, Ներսես Գ-ի 7-րդ դարի շինություն է [2, էջ 25]: Վերակազմության տարբերակներ են առաջարկում Ա. Կալգինը, Ս. Մարությանը [4, էջեր 151-152], սակայն ուղղահայաց կերպարային, ինչպես նաև եկեղեցու թվագրության հարցերը առ այսօր մնում են բաց:

Երկրորդ եկեղեցին գտնվում է նրանից 20 մետր հարավ: Եկեղեցու արևմտյան խաչքերը խիստ ձգված է: Խաչաձև հատակագիծը նաև շեշտում են հյուսիսային և հարավային կարճ խաչքները: Ամենայն հավանականությամբ՝ եկեղեցին գմբեթավոր է եղել, կառուցված է կիսամշակ քարերով և կրաշաղախով:

Պատմական Տայքի Ճակք գավառի երբեմնի հայաբնակ [13, էջ 375] **Բրտանոց** (այժմ՝ Beğendik) գյուղից 1,5 կիլոմետր հյուսիս-արևմուտք, գրավոր աղբյուրներից հայտնի աշտարակաձև ամրոց է պահպանվել ժայռի վրա: Կառույցի պատերը կառուցված են անմշակ քարով և կրաշաղախով: Այն երեք կողմից ուղղանկյուն է, մի կողմը՝ կլորացված: Աշտարակի պատերին կան ճեղքեր: Ենթադրվում է, որ աշտարակի մուտքը հարավ-արևմուտքից էր: Աշտարակավոր ամրոցի տեղադիրքը, քարքարուտ զագաթը և կառույցի ստորին շարքերի՝ խոշոր անմշակ քարերից իրականացված լինելը մեզ հուշում է վաղ միջնադարյան շրջանի մասին:

Պատմական Տայքի Ճակք գավառի **Խոշվանք** (այժմ՝ Yeşilbağlar) գյուղից 1,5 կիլոմետր դեպի հյուսիս կա մի սրահավոր եկեղեցի: Եկեղեցու տանիքը փլված է, պահպանվել են խորանը՝ իր գմբեթարդային ծածկով, հյուսիսային պատը և մասամբ՝ հարավային պատի բեկորները: Պահպանված պատերի առավելագույն բարձրությունը հասնում է 5 մետրի: Եկեղեցին կառուցված է կիսամշակ և մաքրատաշ փոքր ու միջին չափերի քարերով: Տեղի բնակչությունն այս վայրն անվանում է «Խոշնավազ»: Տեղաբնիկների պնդմամբ եկեղեցին պատկանել է հայերին: Գյուղում հայկական բնակչության առկա-

յության մասին են վկայում XVI դարավերջի օսմանյան հարկացուցակները [13, էջեր 391-392]: Գյուղի տարեցները ևս վկայում են, որ եկեղեցին պատկանել է գյուղում բնակված հայերին: Գյուղի հովիվ Ջենգիզ Յըլդըրընը վկայում է, որ հիշում է եկեղեցու գմբեթը (հավանաբար նկատի ունի թաղակապ ծածկը), որը, ցավոք, այսօր փլվել է գերազանցապես գանձագողերի բարբարոսական գործունեության հետևանքով [8]:

Պատմական Տայքի Ճակք գավառի Իշխան գյուղից 4 կմ հյուսիս պահպանվում է ավերակ եկեղեցի: Եկեղեցին, որը հայտնի է **Սուրբխաչ** (Մբխեչ) անունով, ամենայն հավանականությամբ, կառուցվել է VI դարում: Գտնվում է ծովի մակարդակից մոտ 1700 մետր բարության վրա: Եկեղեցին կենտրոնագմբեթ քառախորան տիպի է, որտեղ բոլոր չորս խորաններն էլ նույնիսկ արտաքինից կիսաշրջան ելուստով են իրականացված: Կառույցին հավանաբար հետագայում կցվել է գավիթանման ուղղանկյուն սրահը: Ըստ Տ. Մարությանի՝ Սուրբխաչ եկեղեցին իր հորինվածքով գրեթե ամբողջությամբ կրկնում է Ծովիզի եկեղեցու հորինվածքը [4, էջ 126]:

Պատմական Տայքի Ճակք գավառի **Էրքինիս** (այժմ՝ Demirkent) գյուղից 6 կիլոմետր դեպի արևելք պահպանվել է գրավոր աղբյուրներից հայտնի ամրոց՝ 150x70 մետր չափերով: Ամրոցը կառուցված է մի փոքրիկ ժայռի լանջին: Պահպանվել են պատերի և դարպասների բեկորներ: Կա կարծիք, որ ամրոցը համապատասխանում է դեռևս VIII դարից հայտնի Թուխարք ամրոցին: Ավելի հավանական է, որ ամրոցը դեռևս IV դարից հիշատակվող Էրախանին է [7, էջեր 198-199]: Այս վարկածի օգտին է խոսում նաև ամրոցին մոտ գտնվող բնակավայրի Էրքինիս անվանումը, որը Էրախանի անվան ձևախեղված տարբերակն է: Ամրոցը տպավորիչ տեղադրիք ունի, հեռվից ընկալվում է անբաժան ժայռից: Կառուցված է բավականաչափ անմատչելի տեղում, Տայքին բնորոշ ոճով:

ԵՋՐԱՀԱՆԳՈՒՄ. Պատմական Տայքը, լինելով հայոց պետականության կարևորագույն գոյատևածքներից մեկը, առանձնանում է նրանով, որ այստեղ միջնադարում լայն տարածում ստացավ քաղկեդոնականությունը, ինչն իր կնիքը թողեց երկրամասի էթնոդավանական ու ժողովրդագրական գործընթացների վրա: IX-XI դարերում հայ առաքելական վանական համալիրների մեծ մասը վերածվեց վրացական ծեսով ուղղափառությունը որդեգրած մենաստանների, որոնց կողքին ի հայտ եկան նաև նորակառույց հայ քաղկեդոնական համալիրներ: Այս գործընթացը դրսևորվեց նաև Տայքի Ճակք գավառում: Այստեղ ցայսօր պահպանվում են ինչպես հայ քաղկեդոնական, այնպես էլ հայ առաքելական բազմաթիվ հուշարձաններ, որոնց մեծ մասը, ցավոք, գտնվում է անմխիթար վիճակում: Այդ հուշարձանների մի զգալի մասը հայագիտության մեջ ոչ միայն չի ուսումնասիրվել, այլև առհասարակ հայտնի չէ: Գավառի տարածքում բազմաթիվ միջնադարյան բերդերի և ամրոցների առկայությունն էլ իր հերթին վկայում է Հյուսիսային Հայաստանի պաշտպանական համակարգում Ճակքի կարևորագույն դերի մասին:

Գրականություն

1. Ատրպետ: *Ճորոխի ավազանը*: Վիեննա. Մխիթարյանների տպարան: 1929: 238 էջ:
2. Թորամանյան Թ. *Նյուօթեր հայկական նարտարապետության*: Երևան: Արմֆան: 1942: 404 էջ:

3. Ինճինեան Ղ., *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի: Մաս Ա, հ. Ա:* Վենետիկ: Սուրբ Ղազար: 1806: 38+424 էջ:
4. Սարուբյան Տ. *Խորագոյն Հայք:* Երևան: Սովետական գրող: 1978: 183 էջ:
5. Սարուբյան Տ. *Հայ դասական նարտարապետության ակունքներում:* Երևան: «Մուղնի» հրատ.: 2003:
6. Սարգիսեան Ն. *Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս:* Վենետիկ: Սուրբ Ղազար: 1864: 289 էջ:
7. Փավստոս Բուզանդ: *Պատմութիւն Հայոց:* Թիֆլիս: Գալստեանի տպարան: 1912: 407 էջ:
8. Ermeni Kilisesinin İki Duvarı Kaldı// <https://www.haber3.com/guncel/ermeni-kilisesinin-iki-duvari-kaldi-haberi-2640844> (viewed 25.03.2023).
9. Nahatkyan D. *New Researches about Stratigraphic Issues of the Temple Ishkhan* // <<Պառ-Կարյետի>> 4th International conference. Abstracts of papers. Tbilisi. 2016, 239-240 pp..
10. Георгий Мерчуле. *Житие Григория Хандзтийского.* Перевод Н. Я. Марра, с дневником поездки в Шавшию и Кларджию. Санкт-Петербург. 1911.- LXX+151+216 с.
11. Такайшвили Э. *Археологическая экспедиция 1917г. В Южные провинции Грузии.* Тбилиси: издательство АН ГССР. 1952. 289 с.
12. Центральный Государственный Исторический Архив Грузии, фонд 12, опись 7, дело 3950.
13. *Գուրգիսեանի շրջանի մասին ծանուցումներ և քննադատություններ*. Գ. 2. Թուրքული լեզվի գրքեր, տարգմանի, ամբողջական և կոմենտարիներ և քննադատություններ Սերգի Ջուլիանի. Թբիլիսի: Տառար-Վեբ, 2017. 200 էջ.
14. თაყაიშვილი ე. *არქეოლოგიური ექსპედიცია კოლა-ოლთისში და ჩანგლში 1907 წელს.* პარიზი: 1938. 87 გვ.
15. *Պառ-Կարյետի: Ինքնակենսագրություն և քաղաքի մշակութային ժառանգության քաղաքագրություն*, Երևան: Գեո-Պրո, 2017. 600 էջ.

References

1. Atrpet. Chorrokhpp. basin [*Tworoxi avazany*]. Vienna: Mkhitaryans printing house. 1929. 238 p. (in Armenian)
2. Toramanian T. Materials of the History of Armenian Architecture [*Nyut'er haykakan chartarapetut'yan*]. Yerevan: Armfan, 1942. 404 p. (in Armenian)
3. Inchijian G., Geography of the Forth Part of the World [*Ashxarhagrowth'yun choric masanc ashxarhi*]. Part 1, vol. A, Asia. Venice: Saint Lazarus. 1806. 38+424 p. (in Armenian)
4. Marutyan T. Deeper Armenia [*Xoraguyun Hayq*]. Yerevan: «Sovetakan grogh.» publ. 1978. 183 p. (in Armenian)
5. Marutyan T. In the origins of Armenian classical architecture [*Hay dasakan twartarapetut'yan akunqnerum*]. Yerevan: "Mughni" publishing house. 2003. (in Armenian)
6. Sargisian N. Topographies of the Minor and Mayor Armenia [*Teghagrut'yunq i P'oqr ev i Mec' Hays*]. Venice: Saint Lazarus. 1864. 289 p. (in Armenian)
7. Pavstos Buzand. History of Armenia [*Patmut'yun Hayoc*]. Tiflis. Galstyan printing house. 1912. 407 p.(in Armenian)
8. Ermeni Kilisesinin İki Duvarı Kaldı// <https://www.haber3.com/guncel/ermeni-kilisesinin-iki-duvari-kaldi-haberi-2640844> (viewed 25.03.2023).
9. Nahatkyan D. New Researches about Stratigraphic Issues of the Temple Ishkhan // «Պառ-Կարյետի» 4th International conference. Abstracts of papers. Tbilisi. 2016, 239-240 pp..

10. Georgi Merchule. Life of Gregory of Khandzta [Zhitie Grigorija Handztijskogo]. Translated by N. Marr. With a diary of a trip to Shavshia and Klardzhia. St. Petersburg. 1911.-LXX+151+216 p. (in Russian)
11. Takayshvili E. Archeological Expedition of 1917 In the Southern Provinces of Georgia [Arheologicheskaja jekspedicija 1917 g. v Juzhnye provincii Gruzii]. Tbilisi: publication of Academy of Sciences of Georgian SSR. 1952. 289 p. (in Russian)
12. Central State Historical Archive of Georgia, fund 12, description 7, case 3950.
13. Grand Register of the Province of Gurjistan [Gurjist'anis vilaietis didi davtari]. Book 2. Turkish text publication, translation, addition and comments were added by Sergi Jikia. Tbilisi: publication of Academy of Sciences of Georgian SSR. 1947. 503 p. (in Georgian)
14. Takaishvili E. Archaeological expedition to Kola-Oltisi and Changli in 1907 [Arkeologiuri eksp'editisia Kola-Oltisshi da Changlshi 1907 ts'els]. Paris: 1938. 87 p. (in Georgian)
15. Tao-Klarjeti: Catalog of Historical and Cultural Monuments [T'ao-K'larjeti: ist'oriisa da k'ult'uris dzelebis k'at'alogi]. Ed. by B. Kudava. Tbilisi: Artanuji publishing house. 2017. 600 p. (in Georgian)

Ընդունվել է / Принята / Received on: 27.03.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 24.04.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. Accepted for Pub: 10. 06.2023

Տեղեկություններ հեղինակների մասին

Արկադի Ա. ԱԿՈՊՈՎ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտքարտուղար, Գյումրի, ՀՀ,
էլ. huugit`arkadone1@gmail.com, <https://orcid.org/0000-0001-6771-9747>

Դավիթ Ս. ՆԱՀԱՏԱԿՅԱՆ՝ նարտ. թեկնածու, ՃԾՀԱՀ-ի նարտարապետության տնտեսության և պատմամանրապատկերական ժառանգության վերականգնման ամբիոնի ասիստենտ, ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ
էլ. huugit`davit.nahatakan@gmail.com, <https://orcid.org/0000-0003-1149-7262>

Սոֆյա Պ. ՀԱԿՈԲՅԱՆ՝ արևելագետ, թուրքագետ, Երևան, ՀՀ,
էլ. huugit`agopyan.sofia@gmail.com, <https://orcid.org/0009-0008-5138-619X>

Arkadi A. АКОПОВ: PhD in History, scientific secretary of the SCAS NAS RA,
e-mail: arkadone1@gmail.com, <https://orcid.org/0000-0001-6771-9747>

Davit S. НАНАТАКЯН: PhD in architecture, assistant professor in NUACA,
Researcher of Shrak Center for Armenological Studies NAS, Gyumri, RA,
e-mail: davit.nahatakan@gmail.com, <https://orcid.org/0000-0003-1149-7262>

Sofya P. НАКОВЯН: orientalist, Turkologist, Yerevan, RA,
e-mail: agopyan.sofia@gmail.com, <https://orcid.org/0009-0008-5138-619X>

Аркадий А. АКОПОВ: кандидат истор. наук, ученый секретарь
Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА,
эл. адрес: arkadone1@gmail.com, <https://orcid.org/0000-0001-6771-9747>

Давид S. НААТАКЯН: кандидат архитектуры, доцент НУАСА,
научный сотрудник Ширакского центра АИ НАН, Гюмри, РА,
эл.адрес: davit.nahatakan@gmail.com, <https://orcid.org/0000-0003-1149-7262>

Софья П. АКОПЯН: востоковед, тюрколог, Ереван, РА
эл. адрес: agopyan.sofia@gmail.com, <https://orcid.org/0009-0008-5138-619X>

ՀՏԴ՝ 324

DOI:10.52971/18294316-2023.26.1-143

ԱՄՆ-Ի ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1990-ԱՎԱՆ ԹԹ.

Արտակ Հ. Հովհաննիսյան

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

Անվտիմում

Նախաբան. Հոդվածում ուսումնասիրվում են Պաղեստինյան Ինքնավարության (այսուհետև՝ ՊԻ) ձևավորման և վերջինիս հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականության հիմնական միտումները, հարաբերությունների բազմազանությունը և հակասականությունը: ԱՄՆ-ը, լինելով Իսրայելի դաշնակիցը, ներկայացուցչությունների մակարդակով հարաբերություններ է պահպանում նաև Պաղեստինի Ինքնավարության հետ: Ֆինանսական օգնություն ցուցաբերելով, ունենալով պաղեստինյան ներգաղթյալների մեծ թիվ և մտնելով մերձավորարևելյան կարգավորման գծով ներկայացուցիչների քառյակի մեջ՝ ԱՄՆ-ը ակտիվորեն ազդում էր պաղեստինաիսրայելական հարաբերությունների վրա: *Մեթոդները և նյութը.* Հոդվածում փաստերը հետազոտված ու մեկնաբանված են պատմական անաչառության, համեմատական վերլուծության ու համադրման, պատմահամեմատական, պատմահետազոտական, պատմաքննական, իրադարձությունների պատճառահետևանքային կապերի վերլուծության մեթոդների հիման վրա: Դեպքերն ու իրադարձությունները ներկայացված են տարալեզու և տարաբնույթ գրականության ուսումնասիրման և վերլուծման արդյունքում, ինչն ապահովում է աշխատանքի պատմականության և գիտական անկողմնակալության սկզբունքները: *Վերլուծություն.* Քննարկվող ժամանակահատվածն ընդգրկում է 1993 թ. Օսլոյի համաձայնագրի կնքումից հետո ընկած հատվածը՝ Պաղեստինյան Ինքնավարության կայացման ժամանակահատվածը, որին ուղղակիորեն մեծ մասնակցություն է ունեցել ԱՄՆ-ը: *Արդյունքներ.* Առաջ է քաջվում այն թեզը, որ ՊԻ-ի հետ ԱՄՆ-ի բազմակողմանի հարաբերությունների կարևորությամբ հանդերձ՝ ՊԻ արտաքին քաղաքականության գերակա ուղղությունն արաբական երկրներն են: Վիճահարույց է համարվում ՊԻ-ի՝

որպես Իսրայելի տարածքի մաս դիտարկելը, իսկ ԱՄՆ-ՊԻ հարաբերությունների բնույթը գնահատվում է ավելի շատ հակասական:

Բանալի բառեր՝ ԱՄՆ, Պաղեստինյան Ինքնավարություն, Օսլոյի համաձայնագիր, ՊԱԿ, Արաբական պետությունների լիգա, Իսրայել, ՀԱՄԱՄ:

Ինչպես հղել՝ Հովհաննիսյան Ա. ԱՄՆ-ի և Պաղեստինյան Ինքնավարության հարաբերությունները 1990-ական թթ. // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 1(26): 143-152 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.1-143

THE RELATIONS BETWEEN USA AND PALESTINIAN AUTHORITY IN THE 1990s.

Artak H. Hovhannisyán

State University of Shirak after M. Nalbandyan, Gyumri, RA

Abstract

Introduction. The article examines the main trends in the formation of the Palestinian Authority (PA), the diversity and contradictions of US policy towards it. The purpose of the article is to present the relationship between the US and the PA. The objectives are to describe the international status of the PA, to understand the role and place of the US in the system of international relations of the PA. **Methods and materials.** The facts are studied and interpreted on the basis of historical impartiality, historical-comparative analysis, historiographical methods. Cases and events are presented as a result of the study and analysis of multilingual and diverse literature. **Analysis.** The period under review includes the creation of the PA in 1993, after the conclusion of the Oslo agreement, in which the US was directly involved. **Results.** The thesis is put forward that, along with the importance of multilateral relations between the US and the PA, the priority direction of the PA foreign policy is the Arab countries. Considering the PA as part of Israeli territory is viewed controversial, and the nature of the relationship between the US and the PA is regarded more controversial.

Key words: USA, Palestinian Authority, Oslo Accords, PLO, Arab League, Israel, HAMAS.

Citation: Hovhannisyán A. The Relations Between USA and Palestinian Authority in 1990s // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 1(26). 143-152 pp..

DOI:10.52971/18294316-2023.26.1-143

ОТНОШЕНИЯ США И ПАЛЕСТИНСКОЙ АВТОНОМИИ В 1990-гг.

Артак Г. Оганнисян

Ширакский государственный университет им. М. Налбандяна, Гюмри, РА

Аннотация

Введение: В статье рассматриваются основные тенденции формирования Палестинской автономии (ПА), разнообразие и противоречия политики США в отношении нее. Считая США союзником Израиля, она также поддерживает отношения с ПА на уровне представительств. Оказывая финансовую помощь, имея большое количество палестинских иммигрантов и входя в квартет представителей по ближневосточному урегулированию, США актив-

но влияют на отношения между Палестиной и Израилем. Цель статьи - представить отношения между США и ПА, а задачи - описать международный статус ПА, понять роль и место США в системе международных отношений ПА, основные направления этих отношений. *Методы и материалы:* В статье факты исследуются и интерпретируются на основе исторической беспристрастности, сравнительного анализа и сопоставления, историко-сопоставительного, исторического, историографических методов. *Анализ:* Кейсы и события представлены в результате изучения и анализа разноязычной и разнообразной литературы, что обеспечивает соблюдение принципов историчности и научной беспристрастности работы. Рассматриваемый период включает период создания ПА в 1993 году после заключения соглашения в Осло, в котором США принимали непосредственное участие. *Результаты:* Выдвигается тезис о том, что наряду с важностью многосторонних отношений США с ПА приоритетным направлением внешней политики ПА являются арабские страны. Рассмотрение Палестинской автономии как части территории Израиля считается спорным, а характер отношений между США и ПА считается более спорным.

Ключевые слова: США, Палестинская Автономия, Соглашения Осло, ООП, Лига арабских государств, Израиль, ХАМАС

Как цитировать: Оганнисян А. Отношения США и Палестинской Автономии в 1990-гг.// “Научные труды” ИЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 1(26). 143-152 сс.

DOI:10.52971/18294316-2023.26.1-143

ՆԱԽԱԲԱՆ. Ուսումնասիրվող ժամանակաշրջանը բնութագրվում է ԱՄՆ-ի և Պաղեստինյան Ինքնավարության (այսուհետև՝ ՊԻ) հարաբերությունների բազմակողմ ուղղություններով: ԱՄՆ-ը, լինելով Բարայելի դաշնակիցը, ԽՍՀՄ փլուզումից հետո սկսեց հարաբերություններ պահպանել նաև ՊԻ-ի հետ ներկայացուցչությունների մակարդակով: Ֆինանսական օգնություն ցուցաբերելով Պաղեստինի Ինքնավարությանը և Ռուսաստանի, ԵՄ-ի և ՄՄԿ-ի հետ միասին մտնելով մերձավորարևելյան կարգավորման գծով ներկայացուցիչների քառյակի մեջ՝ ԱՄՆ-ը մեծացրեց իր ազդեցությունը Պաղեստինի և Բարայելի հարաբերությունների կարգավորման գործընթացի վրա: Որոշակի դեր էր խաղում նաև այն հանգամանքը, որ Պաղեստինից զգալի թվով ներգաղթյալներ էին ապրում ԱՄՆ-ում, ինչը նույնպես ուղղակիորեն ազդում էր նրանց հարաբերությունների ձևավորման վրա: Գնալով աճում էր ԱՄՆ-ի՝ Ինքնավարության արտաքին հարաբերություններում կարևորագույն գործոն լինելու հանգամանքը: Քննարկվող ժամանակահատվածն ընդգրկում է 1993 թ. Օսլոյի համաձայնագրի կնքումից հետո ընկած շրջանը՝ ՊԻ-ի կայացման ժամանակահատվածը, որին ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեծ մասնակցություն է ունեցել ԱՄՆ-ը: Հողվածի նպատակն է ուսումնասիրել ԱՄՆ-ի և ՊԻ-ի հարաբերությունները XX դարի 90-ականների սկզբից մինչև մեր օրերը: Այս նպատակից բխող խնդիրները հետևյալն են.

- ՊԻ-ի միջազգային կարգավիճակը, բացահայտել հիմնական միտումները և ներկայացնել Պաղեստինի միջազգային հարաբերությունների ներկա վիճակը.

- հասկանալ ԱՄՆ-ի դերն ու տեղը ՊԻ-ի միջազգային հարաբերությունների համակարգում, ուսումնասիրել այդ հարաբերությունների վերջին երկու տասնամյակների հիմնական միտումները:

Խնդրո առարկա հարցին անդրադարձել են Ե. Պրիմակովը, Գ. Նիկիտինան, Ս.Կ. Բրավինը, Գ.Վինոգրադովը, Գ.Վոլֆինը, Վ.Գալպերինը, Դ.Ջեֆրին և ուրիշներ:

ՎԵՐԱՆՈՒԾՈՒԹՅՈՒՆ. Պաղեստինյան Ինքնավարության հիմքը դրվեց 1993 թ. Օսլոյի համաձայնագրով [1, էջ 261], որի նախապատրաստման և կնքմանն աջակցելու հարցում խիստ մեծ էր ԱՄՆ-ի դերը: Սակայն հետագայում՝ 2005 թ. Պաղեստինյան Ինքնավարության տարածքի փաստացի բաժանումը «ՖԱԹՀ» [13, էջ 114] և «ՀԱՄԱՍ» կազմակերպությունների ադդեցության ոլորտի, ՊԻ-ի հետ հարաբերությունները դարձրին բավական բարդ և տարաբնույթ, իսկ անկախ պետության ստեղծման հարցը ավելի ձգձգվեց: 2009 թ. ՄԱԿ-ի ԱԽ-ը ընդունեց բանաձև, «որով ճանաչվում էր Պաղեստինի արաբ ժողովրդի սուվերեն իրավունքը ինքնավար տարածքների վրա»:

ԱՄՆ-ի և ՊԻ-ի միջև առկա հարաբերությունները քննարկելու համար անհրաժեշտ է նախ ներկայացնել ՊԻ-ի միջազգային կարգավիճակը և զարգացման հեռանկարները 90-ական թվականներին [12, էջ 78-79]: Միջազգային իրավունքի տեսանկյունից ՊԻ-ն ունի որոշակի ինքնավարություն, վարչական միավոր է, որը ներառում է Պաղեստին աշխարհագրական տարածքի երկու մասեր՝ Ղազայի հատվածը և Հորդանան գետի արևմտյան ափը, այսինքն՝ այն տարածքների մեծ մասը, որոնց վրա, ըստ 1947 թ. ՄԱԿ-ի որոշման, պետք է ստեղծվեր Պաղեստին արաբական պետությունը [7, էջ 12]:

1947 թ.-ից մինչև 1990-ականների սկիզբն Իսրայելը 6 անգամ պատերազմեց հարևան արաբական երկրների հետ, որի արդյունքում բռնագրավեց ոչ միայն պաղեստինցի արաբների հատկացված տարածքները [8, էջ 180], այլև հարևան արաբական երկրներից որոշակի հատվածներ՝ տարածաշրջանում առաջացնելով մշտական լարվածության վտանգավոր օջախ:

Իրավիճակը փոխվեց 1990-ականների սկզբներին, երբ ԱՄՆ-ի ակտիվ մասնակցությամբ սկսվեց երկխոսություն Իսրայելի և Պաղեստինի ազատագրության կազմակերպության՝ ՊԱԿ-ի միջև, որի արդյունքում կնքվեց 1993 թ. Օսլոյի համաձայնագիրը, և հիմք դրվեց Պաղեստինյան ազգային ինքնավարությանը [4]: Այն պետք է լիներ անցումային փուլ անկախ արաբական պետության ստեղծման ճանապարհին [11, էջ 46]: Նախապես ասենք, որ այդ պետությունը պետք է հռչակվեր 1999 թ., բայց ցայսօր չի հռչակվել [4, էջ 96]:

Չնայած դեռևս 1988 թ. Ալժիրում Պաղեստինյան ազգային խորհուրդը հռչակել էր Պաղեստինյան պետության ստեղծման մասին, բայց այդ ինքնահռչակ պետությունը չունեի սուվերենության ոչ մի նշույլ [3, էջ 29]:

ՊԻ-ը ՄԱԿ-ի լիիրավ անդամ չէ, բայց ՊԱԿ-ը ունի դիտորդի կարգավիճակ ՄԱԿ-ում: Բացի այդ, ՊԻ-ն Արաբական պետությունների լիգայի, Իսլամական համագործակցության կազմակերպության, Զարգացման իսլամական բանկի, Միջազգային օլիմպիական կոմիտեի անդամ է [11, էջ 85]:

2002 թ. ՄԱԿ-ի ԱԽ-ը հայտարարեց, որ ՄԱԿ-ը չի մոռացել և ձգտում է Պաղեստինում ստեղծել նաև արաբական պետություն: Ընդունված 1397-րդ բանաձևի համաձայն, որին աջակցեց հատկապես նաև ԱՄՆ-ը, վերահաստատվեցին 1967 և 1973 թթ. 242-րդ և 338-րդ բանաձևերը [2, էջ 17-19]:

Միջազգային իրավասուբյեկտության հաստատմանն ուղղված առաջին քայլերն իրականացվեցին 1970-ական թթ., երբ ՊԱԿ-ը դարձավ ԱՊԼ լիիրավ անդամ: ՄԱԿ-ի անդամ ավելի քան 100 երկրներ ճանաչել են Պաղեստինը որպես անկախ պետություն [14, էջ 87]: Շատ երկրներ, այդ թվում՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան չեն ճանաչում Պաղեստինյան պետությունը, քանի որ վերջինս իր մայրաքաղաք է հռչակել Երուսաղեմը, որը Իսրայելի անբաժանելի մասն է համարվում հրեաների համար: ՊԻ-ի արտաքին քաղաքական գերակայությունները հետևյալներն են՝

1. ՊԻ-ի համար արտաքին քաղաքականության գերակայություն էղել և մնում են արաբական երկրների հետ հարաբերությունների կառուցումը և սերտացումը,
2. ՊԻ-ի արտաքին քաղաքականության մեջ կարևոր դեր են զբաղեցնում հարաբերությունները Ռուսաստանի և Չինաստանի հետ, որոնք գրեթե միշտ աջակցել են ՊԱԿ-ին տարբեր միջազգային հարթակներում [9, էջ 276]:
3. Արտաքին քաղաքականության ռազմավարական նշանակության խնդիրներից է հարաբերությունների օպտիմալացումը ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հետ [11, c. 103],
4. Իսրայելի հետ բարդ հարաբերությունների պարզեցում,
5. Լատինամերիկյան երկրների հետ դիվանագիտական կապերի հաստատում,
6. Հարավային Օսեթիայի և Աբխազիայի հետ դիվանագիտական հարաբերությունների սերտացում:

Այս ամենով հանդերձ՝ յուրահատուկ բնույթ ունեն պաղեստինա-ամերիկյան հարաբերությունները: Անդրադառնալով ԱՄՆ-ի և ՊԻ-ի հարաբերություններին՝ պետք է փաստել, որ դրանք ավելի շատ կարևորվում են ՊԻ-ի համար, քանի որ ԱՄՆ-ի՝ որպես գերտերության համար կարևոր է ցանկացած տարածաշրջանում սեփական շահերի պաշտպանությունը [6, էջ 20-21]: Բացի այդ, ԱՄՆ-ի քաղաքականությունը ՊԻ-ի հանդեպ իրականացվում է հաշվի առնելով տարածաշրջանում նրա թիվ մեկ դաշնակցի՝ Իսրայելի շահերը, որը ամենակայուն և հետևողական դաշնակիցն է (երբեմն անվանում են նաև ԱՄՆ-ի 51-րդ նահանգ) [6, էջ 14], և բնականաբար, այստեղ ՊԻ-ի շահերը ստորադասված են: Դա նշանակում է, որ ԱՄՆ-ի և ՊԻ-ի հարաբերություններն այնքան էլ պարզ չեն և բխում են ամերիկաիսրայելական հարաբերություններից:

Վերոհիշյալով հանդերձ՝ ԱՄՆ-ը՝ որպես գերտերություն և, ամենակարևորը, որպես միջնորդ Իսրայելի և ՊԻ-ի միջև, պահպանում է արտաքին այն նուրբ հավասարակշռությունը կողմերի հետ հարաբերություններում, որ չվտանգի խաղաղության գործընթացը: Դա կարևոր է նաև խնդրով շահագրգիռ մյուս արաբական պետությունների հետ լավ հարաբերությունների պահպանման համատեքստում:

Երկար ժամանակ, ընդհուպ մինչև 1988 թ., ԱՄՆ-ը նույնիսկ չէր ճանաչում ՊԱԿ-ը՝ համարելով այն ահաբեկչական կառույց, և այդ հանգամանքն անվստահություն էր առաջացնում պաղեստինցի արաբների մոտ՝ ԱՄՆ-ի համար ձևավորելով անվստահելի գործընկերոջ իմիջ: 1990-ականների սկզբներին ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ Իսրայելի վերաբերմունքը պաղեստինցիների հանդեպ փոխվում է, ինչը պայմանավորված էր «Մառը պատերազմի» ավարտով, և արաբ-իսրայելական հակամարտությունն այլևս գերտերությունների բախման թատերաբեմ չէր [6, էջ 20]:

1991թ. սկզբներին «Փոթորիկ անապատում» գործողությունից հետո, ԱՄՆ-ին ավելի շատ հետաքրքրում էր տարածաշրջանում իր ռազմատնտեսական ու քաղաքական ազդեցության հաստատման հարցը [9, էջ 302]: Միաժամանակ ԱՄՆ-ը իսրայելապաղեստինյան բանակցությունների Մադրիդյան ձևաչափի հովանավորներից մեկն էր: 2000-ականների սկզբին ԱՄՆ-ի նախագահ Բիլ Կլինթոնը փորձեց հասնել հարցի վերջնական լուծմանը, բայց Երուսաղեմի կարգավիճակի շուրջ անհամաձայնությունները հարցը մտցրին փակուղի: 2002 թ. դարձյալ ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ՄԱԿ-ի ԱԽ-ը փորձեց քննարկել Պաղեստինում երկու պետությունների ստեղծման հարցը: Հաջողության չհասնելով՝ ԱՄՆ-ը փորձեց կողմերի հետ խորացնել ֆինանսատնտեսական համագործակցությունը:

Այստեղ քիչ դեր չի խաղում նաև այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը ամենամյա ֆինանսական օգնություն սկսեց հատկացնել Պաղեստինյան կառավարությունը՝ հատկապես ՖԱԹՀ-ին, չնայած որ ավելի մեծ օգնություն արդեն իսկ հատկացվում էր Արաբական Լիգայի կողմից: Կարևոր գործոն է նաև այն հանգամանքը, որ ԱՄՆ-ի դիրքորոշումից էր կախված նաև Պաղեստինյան պետության հետագա կարգավիճակի՝ միջազգային ճանաչման հարցը, և այս խնդրում ԱՄՆ-ի հետ համակարծիք են Ռուսաստանը, Չինաստանը, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան: Սակայն ԱՄՆ-ը, ունենալով որոշակի դիվանագիտական հարաբերությունների մակարդակ ՊԻ հետ, չի ճանաչում Պաղեստինյան պետությունը, քանի որ լուծված չեն արաբա-իսրայելական հակամարտության բոլոր խնդիրները:

Իրավիճակը մի փոքր այլ է Ղազախի հատվածում, որտեղ ՀԱՄԱՍ-ը ԱՄՆ-ին դիտարկում է հիմնականում իր գլխավոր հակառակորդի՝ Իսրայելի դաշնակից, որի հետ բանակցությունները առավելապես անարդյունավետ են: Ղազախի հատվածի պարբերաբար շրջափակումները Իսրայելի կողմից, որոնք իրականացվում են ԱՄՆ-ի լուր համաձայնությամբ, ամրապնդում են այս կարծիքը:

Տարածաշրջանում տեղի ունեցած բոլոր ռազմական բախումների ժամանակ, բացի 1956թ. եռակի ազրեսիայից Եգիպտոսի դեմ, ԱՄՆ-ը միանշանակ պաշտպանել է Իսրայելին և՛ դիվանագիտական, և՛ ռազմական ոլորտում [6, էջ 26]:

Այս հանգամանքը գիտակցվում է պաղեստինցիների կողմից, և այդ իսկ պատճառով ՊԻ-ի արտաքին հարաբերությունների գերակայության մեջ ԱՄՆ-ը չի զբաղեցնում գլխավոր տեղը՝ չնայած իր ռազմական, ֆինանսատնտեսական և դիվանագիտական հսկա ներուժի առկայությանը:

ԱՄՆ-ի քաղաքականությունը վերոգրյալ հարցերի վերաբերյալ նոր դրսևորումներ ստացավ նախագահ Դ. Թրամփի նախագահության տարիներին, երբ առաջ քաշվեց, այսպես կոչված, «դարի գործարքը կամ համաձայնագիրը»՝ բաղկացած երկու մասից և 23 բաժիններից: Նախատեսվում էր իսրայելա-պաղեստինյան խաղաղ կարգավորման ծրագիր՝ հիմնված 2 պետությունների փոխադարձ ճանաչման վրա՝ Երուսաղեմը ճանաչելով Իսրայելի, իսկ նրա անմիջական հարևանությամբ գտնվող Աբու Դեսսի բնակավայրը՝ Պաղեստինյան պետության մայրաքաղաք: Այս ծրագիրն իրականում հակասում էր «երկու պետությունների» հայեցակարգին: 2017 թ. դեկտեմբերին

Թրամփը ճանաչեց Երուսաղեմը որպես Իսրայելի մայրաքաղաք, 2018 թ. մայիսին այնտեղ բացեց դեսպանություն, իսկ Վաշինգտոնում փակեց ՊԱԿ-ի գրասենյակը[15]: ՊԻ-ի վարչակարգը որոշեց խզել դիվանագիտական հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, իսկ 2020 թ. փետրվարի 11-ին ՄԱԿ-ի ԱԽ-ում ՊԻ-ի ղեկավար Աբբասը պաշտոնապես հայտարարեց ծրագրի մերժման մասին, որին հետևեց ԱՊԼ-ի ղեկավար Ահմեդ Աբուլ-Գեյթի հայտարարությունը, որ ծրագրի քաղաքական շրջանակի նախնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն «անտեսում է պաղեստինցիների օրինական իրավունքները»: Թրամփին հաջորդած Ջ. Բայդենի նախագահության տարիներին վերանայվեցին որոշ հարցեր, մասնավորապես՝ վերադարձ կատարվեց նախկին հավասարակշռված քաղաքականությանը[16]: 2021թ. հունվարին ՄԱԿ-ում ԱՄՆ-ի դեսպան Ռիչարդ Միլսը հայտարարեց ՊԻ-ի ղեկավարության և պաղեստինցի ժողովրդի հետ հարաբերությունների բարենորոգման, տնտեսական օգնության վերականգնման և «երկու պետությունների» ստեղծման սկզբունքով հակամարտության լուծմանը վերադառնալու մասին[17]: Բայդենի վարչակազմը չհրաժարվեց Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու փաստից, բայց հայտարարեց, որ Երուսաղեմի կարգավիճակի հարցը լուծվելու է վերջնական բանակցությունների արդյունքում: ՊԻ-ը ցանկություն ուներ վավերացնել Միջազգային քրեական դատարանի ստատուտը, սակայն այս հարցում 2021թ. մարտի 3-ին ԱՄՆ-ի պետքարտուղար Բլինքենը հայտարարեց, որ պաշտպանում է Իսրայելի դիրքորոշումը, այն է՝ դատարանի իրավասությունը չի կարող տարածվել պետություն չհանդիսացող ինքնավարության տարածքի վրա [18]: Կարծում ենք՝ նման մոտեցումը պայմանավորված է տարածաշրջանում ԱՄՆ-ի ավանդական քաղաքականությամբ՝ հսկողության տակ պահել արաբական երկրները՝ չվնասելով Իսրայելի շահերը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Սահմանված նպատակի և խնդիրների համաձայն՝ ամփոփելով աշխատանքը, կարծում ենք՝ Պաղեստինյան Ինքնավարության արտաքին քաղաքականության գերակա ուղղությունը արաբական երկրներն են, որոնց հետ վստահելի համագործակցությունը երկար ժամանակաշրջանի փորձություն է հաղթահարել: Այս հանգամանքը բնավ չի նվազեցնում այն դերը, որ խաղում է ԱՄՆ-ը Պաղեստինյան Ինքնավարության արտաքին քաղաքականության մեջ: Այն կարելի է բնութագրել հետևյալ կերպ.

Միջազգային իրավունքի տեսանկյունից վիճահարույց է Պաղեստինյան Ինքնավարության՝ Իսրայելի տարածքի մաս լինելը, քանի որ այդպես ընդունելու պարագայում կարծես թե արդարացվում է Իսրայելի կողմից 1947 թ., 1967 թ. և 1973 թ. ՄԱԿ-ի բանաձևերի անտեսումը, և Ինքնավարությունը դիտարկվում է որպես ինքնորոշման գործընթաց: Մինչդեռ Պաղեստինում արաբական պետության ստեղծումը հավասար իրավական հիմքեր ունի Իսրայել պետության ստեղծման հետ համեմատած:

ԱՄՆ-Պաղեստինյան Ինքնավարություն հարաբերությունների բնույթը հակասական է, որի պատճառը ամերիկա-իսրայելական հարաբերությունների բնույթն է. Իսրայելը համարվում է ԱՄՆ-ի գլխավոր դաշնակիցը Մերձավոր Արևելքում, հաճախ առաջինի գործողությունները համաձայնեցվում են երկրորդի կառավարության հետ:

Ամերիկա-պաղեստինյան հարաբերությունները (ավելի ճիշտ՝ դրանց բացակայությունը) մինչև 1990-ականների սկիզբը բացասական հետք են թողել վստահության ամրապնդման համար: Հարկ ենք համարում ևս մեկ անգամ շեշտել, որ ԱՄՆ-ը մինչև 1988 թ. չէր ճանաչում Պաղեստինի ազատագրման կազմակերպությունը՝ այն համարելով ահաբեկչական կազմակերպություն:

Իսրայելի նկատմամբ ԱՄՆ-ի նման քաղաքականությունը, նրանց «վստահելի» հարաբերությունները բոլորովին չնպաստեցին ինչպես պաղեստինյան արաբների շրջանում Միացյալ Նահանգների դրական իմիջի ձևավորմանը, այնպես էլ ավելի պաշտոնական մակարդակներում ցանկացած շփումների զարգացմանը, ինչը կանխորոշեց պաղեստինյան դիրքորոշման միտումները:

Թրամփի նախագահության տարիներին ԱՄՆ-ՊԻ հարաբերությունները ավելի վատթարացան: Կարծում ենք պատճառը արաբական աշխարհը պաղեստինյան հակամարտության հարցում պատակտելու Թրամփի միտումն էր:

Բայդենի նախագահության տարիներին ԱՄՆ փորձերը՝ վերականգնելու «հավասարակշռությունը» կողմերի միջև ավելի շուտ միտված է արաբական աշխարհը դաշնակցային պարտավորությունների ծիրում պահելուն, չվնասելով Իսրայելի շահերը:

Գ ր ա կ ա ն ու թ յ ո ն

1. Կարապետյան Ռ., *Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն*: Երևան: 2003: 261 էջ:
2. Հովհաննիսյան Ա., *Պաղեստինյան հակամարտությունը և ԱՄՆ-ը*: Գյումրի: 2005: 120 էջ:
3. Հովհաննիսյան Ա., *ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ*: ՀՀ ԳԱԱ հրատ.: Երևան: 2001: 115 էջ:
4. Հովհաննիսյան Ա., *Օպր 2 համաձայնագիրը որպես Պաղեստինյան հակամարտության կարգավորման հերթական քայլ* // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ: Հ. XIX: Երևան: ՀՀ ԳԱԱ հրատ.: 2000: 96-101 էջեր:
5. Declaration of Principles on Interim Self-Government Arrangements, September 13, 1993, available at <http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Peace/dop.html>; Israeli-Palestinian Interim Agreement on the West Bank and the Gaza Strip, September 28, 1995, available at www.Jewishvirtuallibrary.org/jsource/Peace/interim.html (դիտվել է 31.01.2023):
6. Бравин С. *США и Израиль. К вопросу о ближневосточном урегулировании*// Вопросы истории. – 1997. - № 2.- сс. 13- 27.
7. Виноградов Г. Мишарин А.В. *Арабо-израильский конфликт*. Москва: Спутник +, 2004: 149 с.
8. Вольфин Г. *Израиль: история войн*. Москва: Росспен. 2005. 380 с.
9. Израиль и Палестинские территории. СПб.: "Планета", 2004. 346 с.
10. Лемин И.М. *Доктрина Эйзенхауэра - программа колониального закабаления Ближнего Востока* // Советское востоковедение, №1. М. 1957. сс. 20-21.
11. Мордвинов В. *Некоторые факты из истории Палестинской автономии*. Москва. Юнион-групп. 2005. сс. 85-114.
12. Никитина Г.С. *Израиль и американский империализм*// Советское востоковедение. 1958. № 5. сс. 71–79.

13. Татуров И. *Роль США в урегулировании арабо-израильского конфликта* // Вестник Всеобщей истории. Тюмень: ТГУ: 2006. № 1. сс. 45-56.
14. Торик И. *Энциклопедический путеводитель по Израилю*. Москва. Медиа. 2007. 280 с.
15. Golan Heights decision may come as forerunner of US ‘deal of the century’ <https://tass.com/world/1050653> (դիտվել է 27.03.2019.)
16. Barbara P. Ush. *Israeli-Palestinian conflict gives Biden foreign policy headache* <https://www.bbc.com/news/world-us-canada-57119881> (դիտվել է 15.05.2021)
17. Ross D., Makovsky D. *Regional governments are going to reach out to Israel anyway, so why not take advantage of this activity to help the Palestinians and encourage Jerusalem toward constructive moves?* <https://www.washingtoninstitute.org/policy-analysis/path-peace-bidens-trip-how-arab-states-can-hel> (դիտվել է 01.08.2022)
18. Semi J. *Palestinians felt that Biden’s visit did little to aid the Palestinian cause, despite attempts by the Palestinian Authority to portray the trip as a success.* <https://www.washingtoninstitute.org/policy-analysis/reactions-palestinian-media-and-political-leaders-bidens-visit> (դիտվել է 26.09. 2022)

References

1. Karapetyan R. New and modern history of Arab countries [*Arabakan erkrneri nor ev noraguyn patmutyun*]. Yerevan, 2003. 261 p. (in Armenian)
2. Hovhannisyan A. The Palestinian conflict and the USA [*Paxestinyan hakamartutyuny ev AMN-y*]. Gyumri, 2005, 120 p. (in Armenian)
3. Hovhannisyan A. S policy towards the Israeli-Palestinian conflict [*AMN-i qaxaqakanutyuny israyela-paxestinyan hakamartutyun handep*]. National Academy of Sciences of the Republic of Armenia, Yerevan, 2001, 115 p.(in Armenian)
4. Hovhannisyan A. The Oslo 2 Agreement as another step in the settlement of the Palestinian conflict [*Oslo 2-rd hamadzaynagiry vorpes paxestinyan hakamartutyun kargavorman hertakan qayl*]. Near and Middle East countries and peoples. H. XIX Yerevan: National Academy of Sciences of the Republic of Armenia. 2000. Pages 96-101(in Armenian)
5. Declaration of Principles on Interim Self-Government Arrangements, September 13, 1993, available at <http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Peace/dop.html>; Israeli-Palestinian Interim Agreement on the West Bank and the Gaza Strip, September 28, 1995, available at www.Jewishvirtuallibrary.org/jsource/Peace/interim.html
6. Bravin S. USA and Israel. To the question of the Middle East settlement [*SSHA i Izrail. K voprosy o blijnevostochnom uregulirovanii*] // Questions of history. 1997. - No. 2. - pp. 13-27. (in Russian)
7. Vinogradov G., Misharin A. Arab-Israeli conflict [*Arabo-Izrailskij konflikt*]. Moscow: "Sputnik", 2004, 149 p. (in Russian)
8. Volf G.S., Israel: history of wars [*Izrael-istoriya voyn*]. Moscow: Rosspen 2005, 380 p. (in Russian)
9. Israel and the Palestinian territories [*Izrail i palestinskie teritorii*]. SPB: Planet, 2004. 346 p. (in Russian)
10. Lemin I. The Eisenhower Doctrine is a program of colonial enslavement of the Middle East. [*Doktrina Eyzexauera. Programma kolonialnogo zakabaleniya Blijnego Vostoka*] //Soviet Oriental Studies №1. Moscow: 1957. pp. 20-2 1. (in Russian)
11. Mordvinov V. Some facts from the history of the Palestinian autonomy [*Nekotorie fakti iz istorii Palestinskoj avtonomii*]. Moscow: Yunion grup, 2005. pp. 85-114. (in Russian)

12. Nikitina G. Israel and American imperialism [*Izrael i amerikanskij imperIALIZM*]. Soviet Oriental Studies 1958. No. 5. pp. 71–79. (in Russian)
13. Turov I. The role of the United States in the settlement of the Arab-Israeli conflict [*Rol SSHA v uregulirovanii arabo-izraelskogo konflikta*]. Bulletin of General History. Tyumen: TGU. 2006. No. 1. pp. 45-56. (in Russian)
14. Torik I. Encyclopedic guide to Israel [*Entsiklopedicheskiy putevoditel po Izrailyu*]. Moscow: Mediya 2007. 280 p. (in Russian)
15. Golan Heights decision may come as forerunner of US ‘deal of the century’ <https://tass.com/world/1050653>, (viewed 27.03.2019.)
16. Barbara P. Ush. Israeli-Palestinian conflict gives Biden foreign policy headache <https://www.bbc.com/news/world-us-canada-57119881> (viewed 15.05.2021.)
17. Ross D., Makovsky D. Regional governments are going to reach out to Israel anyway, so why not take advantage of this activity to help the Palestinians and encourage Jerusalem toward constructive moves? <https://www.washingtoninstitute.org/policy-analysis/path-peace-bidens-trip-how-arab-states-can-help> (viewed 01.08.2022)
18. Semi J. Palestinians felt that Biden’s visit did little to aid the Palestinian cause, despite attempts by the Palestinian Authority to portray the trip as a success. <https://www.washingtoninstitute.org/policy-analysis/reactionpalestinian-media-and-political-leaders-bidens-visit> (դիտվել է 26.09. 2022)

Հնդրւնվել է / Принята / Received on: 20.02.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 19.03.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10. 06.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Արտակ Հենրիկի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի պատմության և իրավագիտության ամբիոնի դոցենտ, Գյումրի, ՀՀ, էլ. հասցե: artakh76@mail.ru <https://orcid.org/0000-0002-5078-3862>

Artak Henrik HOVHANNISYAN: PhD in History, Associate professor at the Chair of History and Laws, State University of Shirak, Gyumri, RA e-mail: artakh76@mail.ru <https://orcid.org/0000-0002-5078-3862>

Артак Генрикович ОГАННИСЯН: канд. исторических наук, доцент кафедры истории и права ШГУ им. М.Налбандяна, Гюмри, РА эл. адрес: artakh76@mail.ru <https://orcid.org/0000-0002-5078-3862>

UDC: 93.94

DOI:10.52971/18294316-2023.26.1-153

PECULIARITIES OF THE US POLICY OF “DEMOCRACY PROMOTION” UNDER GEORGE W. BUSH

Astghik S. Hayrapetyan

Deputy Prime Minister's Office, Prime Minister's Staff, Yerevan, RA

Abstract

Introduction: After the terrorist attacks of September 11, 2001, the United States launched a global campaign against terrorism characterized by nation-building beyond its borders through "hard power" and an attempt was taken to reshape the regional order through democracy promotion. **Methods and materials:** To present the prerequisites and implementation features of democracy promotion as a pillar of the US regional policy under George W. Bush, comparisons are made between the Middle East policies conducted by the US presidential administrations during and after the Cold War. **Analysis:** As a result of the comparative analysis, the attention was particularly focused on the proportion of the component "democracy implementation or promotion". **Results:** The analysis of the latter, as well as the study of the "democracy promotion" policy, carried out by the administration of George W. Bush and the transformational diplomacy in its context, allows us to reveal the attempt to re-explain and reinterpret the domino theory, put forward during the Cold War, that became the conceptual basis of this foreign policy direction in the unipolar world order and proved to be a failure in the aftermath.

Key words: USA, George W. Bush, war on terror, democracy, nation building, Iraq, al-Qaeda, Middle East, domino theory, transformational diplomacy.

Citation: Hayrapetyan A. Peculiarities of the US Policy of “Democracy Promotion” under George W. Bush, // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 1(26). 153-164 pp..

DOI:10.52971/18294316-2023.26.1-153

«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ» ԱՄՆ-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՈՐՋ ԲՈՒՇ ԿՐՏՍԵՐԻ ՕՐՈՔ

Աստղիկ Ս. Հայրապետյան

ՀՀ վարչապետի աշխատակազմ, փոխվարչապետի գրասենյակ, Երևան

Անփոփում

Նախաբան. 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո ԱՄՆ-ը նախաձեռնեց ահաբեկչության դեմ համաշխարհային արշավ, որին բնորոշ էր «կոշտ ուժի» կիրառմամբ սեփական սահմաններից դուրս ազգաշինությունը, ինչպես նաև տարածաշրջանային կարգի վերաձևակերպման փորձը՝ ժողովրդավարության ներդրմամբ և խթանմամբ: *Մեթոդներ և նյութեր.* Ներկայացնելու համար Ջորջ Բուշ կրտսերի օրոք ժողովրդավարության խթանման՝ որպես ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության հիմնասյունի ձևավորման նախադրյալները և իրականացման առանձնահատկությունները, համեմատականներ են տարվել սառըպատերազմյան և հետսառըպատերազմյան շրջանի ԱՄՆ նախագահական վարչակազմերի կողմից վարվող մերձավորարևելյան քաղաքականությունների միջև: *Վերլուծություն.* Համեմատական վերլուծության արդյունքում ուշադրությունը մասնավորապես կենտրոնացվել է «ժողովրդավարության ներդրման կամ խթանման» բաղադրիչի համամասնության վրա: *Արդյունքներ.* Վերջինիս վերլուծությունը, ինչպես նաև Ջ. Բուշ կրտսերի վարչակազմի կողմից իրականացվող «ժողովրդավարության խթանման» քաղաքականության և դրա համատեքստում փոխակերպական դիվանագիտության ուսումնասիրումը թույլ է տալիս բացահայտել արտաքին քաղաքականության այս ուղղության հիմքում ընկած և դեռևս Սառը պատերազմի ժամանակաշրջանում առաջ քաշված «դոմինոյի տեսությանը» նորովի դրսևորման ու վերափմաստավորման փորձը միաբերեռ աշխարհակարգում և դրա ձախողումը:

Բանալի բառեր՝ ԱՄՆ, Ջորջ Բուշ, ահաբեկչության դեմ պատերազմ, ժողովրդավարություն, ազգաշինություն, Իրաք, ալ-Քաիդա, Մերձավոր Արևելք, դոմինոյի տեսություն, փոխակերպական դիվանագիտություն:

Ինչպես հղել՝ Հայրապետյան Ա., «ժողովրդավարության ներդրման և խթանման» ԱՄՆ-ի քաղաքականության առանձնահատկությունները Ջորջ Բուշ կրտսերի օրոք // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: 2023: Հ.1(26): 153-164 էջեր:

DOI: 10.52971/18294316-2023.26.1-153

**ОСОБЕННОСТИ АМЕРИКАНСКОЙ ПОЛИТИКИ «ПРОДВИЖЕНИЯ
ДЕМОКРАТИИ» ПРИ ДЖОРДЖЕ БУШЕ-МЛАДШЕМ**

Астхик С. Айрапетян

Офис вице-премьер-министра, Аппарат Премьер-министра, Ереван, РА

Аннотация

Введение: После терактов 11 сентября 2001 г. Соединенные Штаты начали глобальную кампанию против терроризма, характеризующуюся формированием нации за пределами своих границ

Գառուցված է խոշոր և ավելի փոքր կիսականոնավոր մաքրատաշ քարերից: Հյուսիսային ճակատի ստորին հատվածի մի քանի շարք շարված է հաջորդական սկզբունքով՝ խոշոր և մանր քարերի գոտիներով: Մուտքերը երկուսն են՝ արևմուտքից և հարավից: Հարավային կողային նավի տանիքին պահպանվել են կավե հավաքովի կղմինդրե ծածկասալեր, այսինքն՝ եկեղեցին ինչ-որ ժամանակ եղել է կղմինդրածածկ:

Գլխավոր եկեղեցու պահպանված ծավալային հորինվածքից հասկանալի է դառնում, որ կառույցը բավականին վերասլաց է եղել: Ներքին շարվածքը՝ կրկին կիսամշակ մաքրատաշ, բայց ավելի փոքր քարերից է շարված, իսկ գլխավոր խորանի գմբեթադրը և թաղերը կառուցված են ավելի փոքրաչափ, բայց խորը տեղադրված քարերից: Կենտրոնական նավի կողային պահպանված որմի վրա նկատվում է բացված, թեև հետագայում փակված պատուհանի եզրագիծը: Եկեղեցու ներքին որմերին պահպանվել են ծեփի և որմնանկարների մնացորդներ: Հարդարանքի առումով գլխավոր եկեղեցին զուսպ է: Մուտքի բացվածքների և պատուհանների բարավորները իրականացված են առանց հարդարանքի, իսկ տեղում պահպանված քիվեր չկան (նկ. 2):

Գլխավոր եկեղեցու հատակագծային վերլուծությունները ցույց են տալիս կողային նավերի չափազանց նեղ լինելը: Կենտրոնական նավի հետ, ըստ մեզ, անտրամաբանական կապերը հուշում են, որ, ամենայն հավանականությամբ, եկեղեցու կենտրոնական հատվածն ի սկզբանե միանավ սրահավոր է եղել՝ հավանաբար կառուցված Թ դարում, և Ժ դարում նրան հավելվել են կողային նավերը, իսկ կենտրոնական նավը բարձրացվել է: Այսպիսով, միանավ սրահավորը վերածվել է եռանավի: Կարծում ենք՝ միայն այդպես կարելի է բացատրել կողային նավերի անկանոն բացվածքները, քանի որ անտրամաբանական է կառուցել եռանավ սրահավոր եկեղեցի և հնարավորություն չտալ կողի նավերից դիտելու բեմի վրա անցկացվող կրոնական միջոցառումները: Այս վերակառուցումը հավանաբար տեղի է ունեցել Ժ դարում, այնպես, ինչպես Տայքի հանրահայտ Չորդվանքի գլխավոր եկեղեցին: Այս տարբերակը ամբողջությամբ հաստատելու կամ հերքելու համար անհրաժեշտ կլինեն հնագիտական պեղումներ և գործիքային հետազոտություններ: Հատակագծային համաչափությունով այն համընկնում է ոչ միայն Տայք-Գուգարքի, այլ նաև Հայկական լեռնաշխարհի մի շարք եկեղեցիներին: Եկեղեցու հարաբերությունը (երկարություն-լայնություն) գրեթե 1:2 է, ինչպես Տայքի Թ-Ժ դդ. թվագրվող մյուս եռանավ սրահավորները՝ Չորդվանքն ու Պարխարը: Ընդհանուր առմամբ Ասփակի գլխավոր եկեղեցին գրեթե կրկնակի փոքր է Չորդվանքից ու Պարխարից, սակայն արտաքին հատակագծային համաչափությունը պահպանված է: Այդքանով նրանց հատակագծային ընդհանրություններն ավարտվում են:

Ծավալատարածական լուծումների վերլուծություն կատարելու համար իրականացրել ենք եկեղեցու արևելյան ճակատի սխեմատիկ վերակազմություն, որն էլ հա-

մեմատել ենք Տայք-Գուգարքի հայկական ճարտարապետական դպրոցի Թ-Ժ դդ. կառուցված Չորդվանքի և Պարխարի եռանավ սրահավոր կառույցների հետ, ինչպես նաև Սյունիքի ճարտարապետական դպրոցի ԺԳ դարում կառուցված Եղեգիսի Չորաց եկեղեցու հետ [4, էջ 67-71] (Սխեմա 1): Ճակատների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Ասփակի գլխավոր եկեղեցին նման է Ժ դարում վերակառուցման ենթարկված Չորդվանքի գլխավոր եկեղեցու համաչափություններին, չնայած որ կրկնակի փոքր է կառուցված: Ասփակի եկեղեցու կենտրոնական նավի վերակազմված երկթեք տանիքի թեքությունը՝ 40° , իսկ կողայինը՝ մոտ 28° գրեթե այնքան է, որքան Չորդվանքինը: Պարխարինը՝ համապատասխանաբար 44° և 40° է, իսկ Եղեգիսի Չորացինը՝ 46° և 45° : Ասփակի եկեղեցու ներքին ոչ հարթ իրականացված ծեփը, որմնանկարներն ու որմնաշարի տարբերությունները շեշտում են ԺԲ-ԺԳ դդ. կատարված նորոգությունների մասին, իսկ որոշ կամարների անկանոն շարերը, բացակա որմերի լրացումները, ինչպես նաև պահպանված անկանոն և սխալ շինարարական միջոցներով իրականացված կղմինդրածածկը վկայում են ուշ միջնադարյան միջամտությունների մասին՝ ԺԷ-ԺԸ դդ., քանի որ զարգացած միջնադարում Տայքում և Գուգարքում չի հանդիպում այդպիսի «շեղումներով» իրականացված կղմինդրածածկ: Այսպիսով, ըստ ճարտարապետական դիտարկումների, վանական համալիրը գործել է մինչև ուշ միջնադար, հավանաբար մինչև հայ ազգաբնակչության իսլամացում-թուրքացումը:

Գլխավոր եկեղեցուց դեպի հարավ-արևմուտք գտնվում է չափերով ավելի փոքր աղյուսաշեն եկեղեցին: Կառույցը ներկայացնում է միանավ սրահավոր եկեղեցի, որն արևելքից ունի կիսաշրջանաձև խորան:

Ծավալատարածական լուծումներում կառույցն ունի հետաքրքիր դրսևորումներ: Եկեղեցին կառուցված է հետաքրքիր շինարվեստով: Նախ գետնախարհիսյր 3-4 շարք իրականացված է միջին և փոքր չափերի կիսականոնավոր ճեղքված քարի շարվածքով, որից վերև՝ մինչև վերին քիվի մակարդակը, արտաքինից շարունակվում են դասական աղյուսի շարվածքով որմերը: Քիվերն իրականացված են եղել քարի և աղյուսի համակցված շարով, որի լուծումները երևում են արևելյան ճակատի վրա: Հարավային պատից երևում է, որ քիվի համար իրականացված է եղել քարե խոր տեղադրված սալերով գոտի: Հատկանշական է, որ եկեղեցու ներքին հատվածը շարված է չմշակված մանր քարերով: Ստացվում է, որ արտաքինից որմերը աղյուսից են, բայց քիվերում կիրառված է քար-աղյուս շարվածք, իսկ ներքուստ ամբողջությամբ քարակերտ է: Դեկորատիվ հարդարանքային առումով աղյուսաշեն եկեղեցին ոչ մի բանով աչքի չի ընկնում (նկ. 3):

Հատակագծային լուծումներով և տիպաբանությամբ հավանաբար ԺԱ-ԺԴ դդ. կառույց է՝ բնորոշ Տայք-Գուգարքի ճարտարապետական դպրոցի լուծումներին:

Կառուցվածքային դիտարկումները ցույց են տալիս, որ աղյուսաշեն եկեղեցում կիրառվել է ավանդական «միդիս» շարվածքի մի տարատեսակ, որտեղ այն կառուցող վարպետները կատարելապես տիրապետել են ինչպես հայկական ավանդական «միդիս» քարե շարվածքին, այնպես էլ աղյուսե շարվածքին: Հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ, հատկապես Տայք-Գուգարքի ճարտարապետական դպրո-

ցում, հանդիպում են քարադուռը համակցված որմնաշարով օրինակներ, ինչպես՝ Չորդվանքի վանական համալիրի գլխավոր եկեղեցու Ժ դարում վերակառուցման ժամանակ կիրառված որմնաշարը, նույն համալիրի հարավարևելյան հատվածում կառուցված կրկնահարկ մատուռ-դամբարանի որմնաշարը, Սրվելի և Կիրանց վանական համալիրների գլխավոր եկեղեցիները և այլն [4, էջ 127-138]:

Ծավալատարածական լուծումներով այս կառույցը բավականին վերասլաց է, իսկ երկթեք տանիքը՝ սուր այնպես, ինչպես իր հարագատ ճարտարապետական դպրոցում է ընդունված: Տանիքի վրա նկատվում են երկու շերտեր: Հավանաբար վերին կրաբետոնե-քարային շերտը արվել է ուշ միջնադարում՝ տանիքի ջրամեկուսացումը ապահովելու համար, այլապես անհիմաստ կլինեք ծանրաբեռնել տանիքը և թաղը: Ներքին որմնաշարը կոպտորեն է իրականացված, գրեթե արդի կամարը փոխված է և փոքր-ինչ անկանոն, այնպես որ համեմատական դիտարկումներ անելով Ժ դարում վերակառուցած Չորդվանքի տաճարի հետ՝ գրեթե բացառում ենք այս կառույցի Ժ դարում կառուցված լինելը: Ծավալատարածական հիմնական լուծումներով նման է հատկապես Գուգարքի ԺԲ-ԺԴ դդ. թվագրվող Սրվել և Կիրանց վանական համալիրների գլխավոր եկեղեցիներին: Այսպիսով՝ աղյուսաշեն եկեղեցին իր կառուցման ոճով և ճարտարապետական կերպարով ավելի շատ հարիր է ԺԲ-ԺԴ դդ.:

Աղյուսե եկեղեցին շրջապատված է պարսպապատով և աշտարակավոր դարպաս-մուտքով: Պարսպապատերը մոտ 4 մ բարձրությամբ են պահպանվել և կառուցված են կիսամշակ և կիսահարթեցված միջին ու մանր տեղական քարերից: Դարպաս-մուտքը մի թաղակապ կառույց է, որի մուտքը շարված է կիսաշրջանաձև քարե շարով, իսկ բարավորը (հավանաբար փայտից է եղել) բացակայում է: Դարպաս-մուտքի արևելյան անկյունում՝ պատին կից մոտ 0.4 մ լայնությամբ կառուցված է քարե աստիճանավանդակ, որով բարձրացել են աշտարակի վերին մասը: Աշտարակի վերին հատվածը այժմ քանդված է (նկ. 3):

Սսփհակի վանքի գլխավոր եկեղեցուց դեպի հարավ-արևմուտք տեղադրված է կրկնահարկ դամբարան-մատուռը: Արևմուտքից, ամենայն հավանականությամբ, գանձագողերի կողմից բացված է մի անցք, որից հնարավոր է ներս մտնել: Կառույցի ստորին հարկն ուղղանկյուն սենյակ է, որը կիսով չափ լցված է հողով: Ծածկը թաղակապ է, և թաղի մոտավորապես կենտրոնում մի փոքր անցք է արված. հնարավոր է, այսպիսով հաղորդակցման փոքր անցք է թողնվել վերին հարկի հետ: Ստորին հարկի հյուսիսային պատին առկա են հետագայում փակված կամարաձև բացվածքներ: Դամբարան-մատուռի վերին հարկը գրեթե ամբողջությամբ քանդված է, թեև նշարվում են արևելյան հատվածում կիսակլոր խորանի մնացորդներ: Կառույցի հատակագիծն ամբողջությամբ պատկերացնելու համար հարկավոր է այն մաքրել ու պեղել:

Ստորին հարկի պահպանված ներքին որմնաշարը՝ համեմատած աղյուսաշեն եկեղեցու հետ, բավականին լավ է իրականացված: Օգտագործված են տարբեր չափի կիսականոնիկ քարեր, իսկ թաղն իրականացված է խոր տեղադրված քարերի օգնությամբ:

Ցավոք, կրկնահարկ մատուռ-դամբարանի պահպանվածության և հողով ծածկված լինելու հանգամանքը թույլ չի տալիս ավելի մանրամասն վերլուծություններ կատարել: Կարելի է փաստել, որ Տայք-Գուգարքի հայկական միջնադարյան ճարտարապետական դպրոցում բավականին տարածված է եղել այս տիպի կառույցների կիրառությունը: Այն հանդիպում ենք Վաչեձորում, Չորդվանքում, Օշկում, Խախում, Խանձթավանքում և այլուր՝ արդեն իսկ Ժ դարում: Կարելի է նշել նաև, որ կրկնահարկ մատուռ-դամբարանները տարածված են եղել նաև հայկական ճարտարապետական այլ դպրոցներում, ինչպես, օրինակ՝ Սյունիքի ճարտարապետական դպրոցում (Տաթև, Վահանավանք, Ցաղաց Քար, Նորավանք և այլն): Իսկ ակունքները գալիս են դեռ վաղ քրիստոնեության շրջանից (Ամարաս, Տիգրանակերտ, Հռիփսիմե և այլն) և նույնիսկ դրանից էլ ավելի վաղ: Վերոնշյալը հաշվի առնելով, կրկնահարկ մատուռ-դամբարանի հավանական կառուցումը, կարծում ենք, տեղի է ունեցել Ժ -ԺԴ դարերում:

Համալիրից հարավ-արևմուտք ընկած տարածքում գտնվում է գողտրիկ միասրահ եկեղեցին, որն իր հատակագծային և ծավալատարածական հորինվածքով հավանաբար կառուցվել է Թ-ԺԱ դարերում (այժմ վերածված է հարդանոցի): Հարավային եկեղեցին ներկայացնում է միանավ սրահավոր եկեղեցի՝ արտաքինից ուղղանկյուն, որի արևելյան կողմը ներքուստ ավարտվում է կիսաշրջան խորանով: Միակ մուտքը հյուսիսից է եղել, այժմ բացված է նաև երկրորդը: Ներքուստ և արտաքուստ կառուցված է քարով և իրականացված ավանդական «միդիս» շարվածքով: Ցավոք, այցելության ժամանակ հնարավորություն չէրավ դիտարկելու խորանը և կառույցի ներքին հատվածները, քանի որ այն լցված էր հարդով: Կառույցի վրա չեն պահպանվել հարդարանքի նմուշներ: Սրահավոր եկեղեցու վերին շարերը նույնպես չեն պահպանվել ամբողջական ծավալը պատկերացնելու համար (նկ. 4):

Համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ եթե համեմատենք հարավային եկեղեցու շարվածքը համալիրի մյուս կառույցների որմնաշարի հետ, ապա կտեսնենք, որ որմերի հորիզոնական շարքերն ավելի լավ են պահպանված, իսկ քարերն ավելի կանոնավոր և մաքուր են տաշված ու շարված: Այսպիսով՝ հավանական է, որ հարավային եկեղեցին Ասփակի վանական համալիրի առաջին կառույցներից է:

Վանական համալիրում պահպանվել են նաև ուշ միջնադարի օժանդակ կառույցներ, որոնք իրենց քարի ու փայտի ճարտարապետությամբ բավական հետաքրքիր են: Պահպանվել են կիսագետնավոր կամ ամբողջությամբ բնահողի մակերևույթին կառուցված բազմաթիվ օժանդակ կառույցներ, պահեստային սրահներ, հարդանոցներ և այլն, որոնք մինչ օրս օգտագործվում են: Հնարամտորեն օգտագործելով դեպի կիրճը տանող թեքությունները՝ երկու կողմից քարե պատեր են կառուցվել, որոնց վրա որպես ծածկ տեղադրվել են հաստ գերանները, և վրան ծածկ է արվել ավելի բարակ գերաններով և տափանած կավահողով: Դիմացի մասից կառույցները փակվում են մեծ փայտե դարպասներով կամ դռներով: Բավական հետաքրքիր երույթ է, երբ վանական համալիրով քայլում ես ու առանց կռահելու հայտնվում ես այս կառույցների տանիքի վրա: Այսպիսի աշխարհիկ օժանդակ կառույցները հնուց ի վեր հայտնի են հայկական ճարտարապետությանը, և ըստ նրանց աշխարհագրական դիրքի ու տեղաբնիկների սովորույթ-

ների՝ բաժանվում են տարբեր տիպերի: Այսպիսի կառուցապատումը լայնորեն տարածված է ոչ միայն Տայքում և Գուգարքում (Օշկիձոր, Ծիսիկ, Խախ, Նիագոմ, Ագորդ, Ապրնես, Հարս, Օշկիձոր և այլն), այլ նաև ողջ Հայկական լեռնաշխարհում և նրա ազդեցության գոտիներում հնուց ի վեր:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Պատմական Տայք նահանգը, լինելով քիչ ուսումնասիրված, մշտապես զարմացնում է իր գողտրիկ անկյուններում պահպանված հայոց քաղաքակրթության կերտած զարմանահրաշ ժառանգությամբ, որոնց բացահայտումները դեռ առջևում են: Վանական համալիրի վերաբերյալ պատմամատենագրական սուղ տվյալները փորձել ենք լրացնել ճարտարապետական և արվեստաբանական վերլուծություններով և պատճառահետևանքային կապերի ստեղծմամբ:

Սսփհակի վանական համալիրն իր տեղադիրքով, կառույցների տիպաբանությամբ և ճարտարապետական լուծումներով արժեքավոր է և ուշադրության արժանի, իսկ ընդհանուր լուծումներով կարևոր տեղ է զբաղեցնում ոչ միայն պատմական Տայք աշխարհի Բողխա գավառի, այլ նաև ընդհանուր միջնադարյան հայկական ճարտարապետության ուսումնասիրության մեջ:


Հավելված 1



Նկ. 1, 2: Սմրոցը՝ վերևում, բնակավայրը և վանական համալիրի օժանդակ կառույցները: Գլխավոր եկեղեցու ավերակները:



Նկ. 3, 4: Աշտարակ մուտքը, պարսպապատը և աղյուսաշեն եկեղեցին,
Հարավային եկեղեցին:



Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո Ւ Ն

1. Ակոպով Ա. Տայք. Վարչաժողովրդավարական պատկերը XVI-XIX դարի I երեսնամյակը: Երևան: ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ.: 2013: 213 էջ:
2. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: Հատոր 1: Երևան: ԵՊՀ հրատ.: 1988:
3. Նահատակյան Դ. Եղեգիսի Զորաց եկեղեցի. Ճարտարապետական նոր հետազոտություններ//Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական իններորդ նստաշրջանի նյութեր: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2015: էջեր 64-71:
4. Նահատակյան Դ. Քար-աղյուս համադրությամբ որմնաշարը IX-XIII դդ. հայկական պաշտամունքային ճարտարապետության մեջ// Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանի նյութեր: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2016: էջեր 127-138:
5. Djobadze W. Early Medieval Georgian Churches and Monasteries in Historic Tao, Klardjeti and Shavsheti. Franz Steiner Verlag Stuttgart, 1992. 346 p.

R e f e r e n c e s

1. Akopov A. Tayk: Administrative and Demographic Picture from the XVI Century till the First Third of the XIX Century [*Tayq. varchajhoghovrdagrakan patkery' XVI daric XIX dari I eresnamyaky'*]. Yerevan: Publ. of Institute of History NAS RA, 2013. 213 p. (in Armenian).
2. Hakobyan T., Melik-Bakhshyan S., Barseghyan H. Dictionary of place names of Armenia and neighboring regions [*Hayastani ev harakic shrjanneri teghanunneri bar'aran*]. Vol. 1. Yerevan: publ. of YSU, 1988. 992 p. (in Armenian).
3. Nahatkyan D. Eghegisi Zorac ekegheci. Twartarapetakan nor hetazotut'yunner [*Yeghegis Zorats Church. New architectural research*]. Proceedings of the 9th scientific session of young Armenian art critics. Yerevan: "Gitutyun" publ., 2015, pp. 64-71 (in Armenian).

- Nahatakyan D. Qar-aghyus hamadrut'yamb vormnashary' IX-XIII dd. haykakan pashtamunqayin twartarapetut'yan mej [*The stone-brick masonry of the IX-XIII centuries. in Armenian religious architecture*]. Proceedings of the 10th scientific session of young Armenian art critics. Yerevan: "Gitutyun" publ., 2016, pp. 127-138 (in Armenian).
- Djobadze W. Early Medieval Georgian Churches and Monasteries in Historic Tao, Klardjeti and Shavsheti. Franz Steiner Verlag Stuttgart, 1992. 346 p.

Ընդունվել է / Принята / Received on: 06.04.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 12.04.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.05.2023

Տեղեկություններ հեղինակների մասին

Դավիթ Սամվելի ՆԱՀԱՏԱԿՅԱՆ, ճարտարապետության թեկնածու, ՃՇՀԱՀ ճարտ. տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, գեղեցիկ արվեստի ամբիոնի ասիստենտ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ, էլ. հասցե՝ davit.nahatakan@gmail.com, <https://orcid.org/0000-0003-1149-7262>

Արկադի Արտյոմի ԱԿՈՊՈՎ, պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գիտական քարտուղար, Գյումրի, ՀՀ, էլ. հասցե՝ arkadone1@gmail.com, <https://orcid.org/0000-0001-6771-9747>

Անի Աշոտի ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ, էլ. հասցե՝ ahaykazun@gmail.com, <https://orcid.org/0009-0000-8515-687X>

Davit NAHATAKYAN, PhD in Architecture, assistant professor in NUACA, Researcher of SCAS NAS RA, e-mail: davit.nahatakan@gmail.com, <https://orcid.org/0000-0003-1149-7262>

Arkadi AKOPOV, PhD in History, scientific secretary of the SCAS NAS RA, e-mail: arkadone1@gmail.com, <https://orcid.org/0000-0001-6771-9747>

Ani GRIGORYAN, Researcher of SCAS NAS RA, e-mail: ahaykazun@gmail.com, <https://orcid.org/0009-0000-8515-687X>

Давид НААТАКЯН, кандидат архитектуры, доцент НУАСА, научный сотрудник ШЦАИ НАН РА, e-mail: davit.nahatakan@gmail.com, <https://orcid.org/0000-0003-1149-7262>

Аркадий АКОПОВ, кандидат исторических наук, ученый секретарь ШЦАИ НАН РА, e-mail: arkadone1@gmail.com, <https://orcid.org/0000-0001-6771-9747>

Ани ГРИГОРЯН, научный сотрудник ШЦАИ НАН РА, e-mail: ahaykazun@gmail.com, <https://orcid.org/0009-0000-8515-687X>

ՀՏԴ՝ 811.111

DOI:10.52971/18294316-2023.26.1-177

PECULIARITIES OF VERSE TRANSLATION
(with special reference to H. Toumanyan's Quatrains)

Hasmik H. Matikyan

Shirak Center for Armenological Studies NAS, Gyumri, RA
Shirak State University after M. Nalbandyan

Silva H. Sahakyan

Museum of National Architecture and Urban Life Gyumri, RA

Abstract

Introduction: Verse translation is the most controversial field in Translation Science. It is considered the hardest of all literary genres to translate because the features of sound, rhyme and rhythm are difficult to reproduce in the target language. **Methods and materials:** To present peculiarities of verse translation, lexical, phonetic, and syntactic patterns of original and translated quatrains are determined. Quatrains are also considered based on the verse translation strategies proposed by Holmes and Lefevere. The research was conducted via comparative method. **Analysis:** The attention was particularly focused on phonetic, lexical and syntactic stylistic devices as the aesthetic value of quatrains is mainly provided by stylistic devices. **Results:** As a result of analysis, it is concluded that phonetic stylistic devices mostly contribute to the aesthetic value of Toumanyan's quatrains, lexical and syntactic stylistic devices also hugely contribute to the comprehension of original and translated quatrains. **Authors' contribution.** The research was carried out with the direct participation of the two contributors. The first author's contribution is the formulation of the theoretical part and content composition, second author's contribution is the mapping and classification of the material.

Key words: *verse, quatrain, rhyme, rhythm, prosody, strategies for verse translation, stylistic device, repetition, metaphor, alliteration.*

Citation: Matikyan H., Sahakyan S. Peculiarities of Verse Translation (with Special Reference to H. Toumanyan's quatrains) // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. 177-191pp..

DOI: 10.52971/18294316-2023.26.1-177

**ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(Հ. Թումանյանի քառյակների օրինակով)**

Հասմիկ Հ. Մատիկյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ
Շիրակի պետական համալսարան

Միլվա Հ. Սահակյան

Շողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան, Գյումրի, ՀՀ

Անփոփում

Նախաբան. Բանաստեղծական տեքստերի թարգմանությունը մարտահրավեր է թարգմանական գիտության ոլորտում. չափածո տեքստի հնչյունային առանձնահատկությունները, հանգն ու ռիթմը դժվար է վերարտադրել թարգմանվող լեզվում: ***Մեթոդներ և նյութեր.*** Բանաստեղծական տեքստերի թարգմանության առանձնահատկությունները ներկայացնելու համար դիտարկվել են բնօրինակ և թարգմանված քառյակների բառագիտական, հնչյունային և շարահյուսական առանձնահատկությունները: Համեմատական մեթոդի միջոցով վերլուծվել են Հովնաթի և Լեֆների առաջադրած բանաստեղծական տեքստերի թարգմանության ռազմավարությունները քառյակների թարգմանության համատեքստում: ***Վերլուծություն.*** Ուշադրությունը մասնավորապես կենտրոնացվել է հնչյունային, բառային և շարահյուսական ոճական հնարների վրա, քանի որ քառյակների գեղագիտական արժեքը մեծապես ապահովում են նաև ոճական հնարները: ***Արդյունքները.*** Վերլուծության արդյունքում եզրահանգվել է, որ բնօրինակ և թարգմանված քառյակների գեղագիտական արժեքի ընկալմանը ավելի, քան բառային և շարահյուսական հնարները, նպաստում են հնչյունային ոճական միջոցները: ***Հեղինակների ներդրումը.*** Հետազոտությունն իրականացվել է երկու հեղինակների անմիջական մասնակցությամբ: Առաջին հեղինակի ներդրումը բովանդակային նյութի և տեսական մասի շարադրանքն է, իսկ երկրորդ հեղինակինը՝ հետազոտության տվյալների քարտազրումը և դասակարգումը:

Բանալի բառեր՝ չափածո, քառյակ, հանգ, ռիթմ, տաղաչափություն, չափածոյի թարգմանության ռազմավարությունները, ոճական հնար, կրկնություն, փոխաբերություն, բաղաձայնություն:

Ինչպես հղել՝ Մատիկյան Հ., Սահակյան Ս., Բանաստեղծական բնագրերի թարգմանության առանձնահատկությունները (Հ. Թումանյանի քառյակների օրինակով) // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Հ. 1 (26): Գյումրի: 2023: 177-191 էջեր:

DOI: 10.52971/18294316-2023.26.1-177

ОСОБЕННОСТИ СТИХОТВОРНОГО ПЕРЕВОДА (На материале четверостиший О. Туманяна)

Асмик Г. Матикян

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА
Ширакский государственный университет им. М. Налбандяна

Сильва А. Саакян

Музей народной архитектуры и городского быта, Гюмри, РА

Аннотация

Введение: Стихотворный перевод — самая противоречивая область переводоведения. Он считается самым трудным для перевода из всех литературных жанров, потому что особенности звука, рифмы и ритма трудно воспроизвести на языке перевода. **Методы и материал:** Для представления особенностей перевода стиха определяются лексические, фонетические и синтаксические модели исходных и переведенных четверостиший. Четверостишия также рассматриваются на основе стратегий перевода стихов, предложенных Холмсом и Лефевром. **Анализ:** Особое внимание было уделено фонетическим, лексическим и синтаксическим стилистическим приемам, так как эстетическая ценность четверостиший в основном обеспечивается стилистическими приемами. **Результаты:** В результате анализа сделан вывод о том, что фонетические стилистические приемы в большей степени способствуют эстетической ценности четверостиший Туманяна, лексические и синтаксические стилистические приемы также вносят огромный вклад в понимание оригинальных и переведенных четверостиший. **Вклад авторов:** Оба автора непосредственно участвовали в исследовании. Вклад первого автора - формирование содержательного материала и теоретических подходов, второго автора - в сборании и представлении данных.

Ключевые слова: стих, четверостишие, рифма, ритм, просодия, стратегии перевода стихов, стилистический прием, повторение, метафора, аллитерация.

Как цитировать: Матикян А., Саакян С., Особенности стихотворного перевода (на материале четверостиший О. Туманяна)// “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2023.177-191сс. DOI: 10.52971/18294316-2023.26.1-177

INTRODUCTION: Translation of verse is more difficult than the translation of other types of literary work because the reproduction of the style of the original work is a hard task to accomplish. Verse translation has to recreate the original artistic images in another language so that the reader of the translation may be inspired and entertained aesthetically in the same way the native reader is, and this makes poetic translation debatable matter. In verse translation there will always be aspects that will be missing, as languages do not have the same phonology, syntactic structures, vocabulary, literary history, prosody or poetics. The article presents quatrains characteristics, difficulties of translating verse and provides comparative analysis of original and translated quatrains on phonetic, lexical and syntactic levels.

Verse Characteristics (through the Prism of Quatrain)

Verse is a term that was originally used to refer to a single line of poetry. But, today it's used more broadly. It refers to a single line, a stanza, or the entire poem itself. In Collins English Dictionary [14] verse has the following definitions:

- a single metrical line in a poetic composition; one line of poetry
- metrical or rhymed composition as distinct from prose; poetry

- a stanza
- a particular type of metrical composition, such as blank verse or free verse
- a series of metrical feet forming a rhythmic unit of one line.

Clarence Andrews considers that if a piece of writing is in metre it can be described as “verse.” But, considering how much poetry is written in free verse today, it is now applied to mean anything that takes on other aspects of a poem. These include a rhyme scheme, the use of figurative language, stanzas, etc. Metric syllables and rhythm of sentences are taken into account to create verse, it has an ideal pattern, very largely subjective, of metre and rhythm, to which the poet must fit his thought. If the words fit into the pattern too perfectly, the verse is monotonous ; good verse has a constant struggle between the sense of the words and the ideal metrical and rhythmical pattern [1, p. 184-186].

Prosody is the main characteristic of verse, it means the analysis of metrical patterns of rhythm and intonation. Prosody makes use of scansion, which is the act of dividing lines of verse into metrical feet. These feet are discrete units categorized by the number and location of the accented and unaccented syllables. Scansion analyzes the verse’s metre based on the number of feet per line and the patterns the accented syllables take. Metre is one of the main characteristics of verse, metrical templates have generally dominated discussions of how poetic principles become bound up with language use in verbal art, but poetic principles can become no less entangled with the lexicon without a periodic metre [15].

In Cambridge Dictionary [16] quatrain is defined as a piece of verse complete in four rhymed lines. In the Dictionary of the Modern Armenian Language [17] it is explained as a four-line poem in which only the third line does not rhyme. The word is derived from the French *quatre*, meaning “four”. Quatrains are popular in poetry because they are compatible with different rhyme schemes and rhythmic patterns.

Although it consists of only four lines, it has a great semantic, philosophical, emotional concentration and powerful force to influence the reader quickly and sharply. Among quatrains, the AABA form of rhyming is mostly spread, when the 1st, 2nd and 4th lines are rhymed, and the third line remains unrhymed. There are also other types of rhyme: cross: ABAB, coupled: AABB, perfect: AAAA [12, p. 110].

In the quatrains written before 1918, the 7-syllable line metre with the 4+3 structure absolutely dominates. Since 1919, preference has clearly been given to the 15-syllable line metre. In the quatrains of 7-syllable, the motives of personal grief and longing dominate, which the author has brought to a high level of artistic generalization. The metre of 15 syllables is in harmony with the philosophical content of the quatrains, universal and cosmic thoughts:

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին,
Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին,
Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,
Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:

From the point of view of the formation of rhymes, Toumanyan adhered to the structure of the oriental-classical quatrain. There are two primary types of rhyme construction in the classical quatrain: a) when different words at the end of the line act as rhymers, which are either homonyms or have the correspondence of the last one or two syllables b) when the rhymes are formed by repetition of the same word or phrase. Toumanyan used both types of rhyme with considerable variation [ibid].

An example of AABA rhyming where different words act as rhymers:

Իմ սու՛ր, արթուն ախանջում
Մի խոր ձեն է միշտ հնչում,
Անհու՛ն, անքու՛ն կարոտով
Իրեն մոտ է ինձ կանչում:

Here is an example of quatrain with AABA rhyme formed by the repetition:

Առատ, անհատ՝ Աստծու նման՝ միշտ տեղալուց հոգնել եմ ես.
Հոգիս ծարավ՝ սրան-նրան մտիկ տալուց հոգնել եմ ես.
Մինը պիտի գար իմ դեմը՝ ճոխ ու շռայլ անհաշիվ,
Ամեն ճամփում սպասելուց ու փնտրելուց հոգնել եմ ես:

Difficulties of Translating Verse

The translation of poetry is the field where most emphasis is normally put on the creation of a new independent poem, and where literal translation is usually condemned. According to Newmark's viewpoint, poetry is the most personal and concentrated of the four forms, no redundancy, no phatic language, where, as a unit, the word has greater importance than in any other type of text. A word is a symbol which represents an area of experience or part of one's environment [8, p. 163]. The translator's task is to restore the communication between poet and reader that, due to changes in language, time, place and tradition, has been lost, to make the source text available as a literary work of art in the target language [6, p. 42].

Poetic text goes through some transformations in the process of translation into another language. The character of these transformations depends on specific implicit information expressed on different text levels: lexical-semantic level (regular repetitions of the same words in the borders of one stanza or stanzas; words of the same lexical-semantic groups or categories); phonetical level; rhythmic-syntactic and wider compositional level.

The main goal of translating poetry is to cause the same, or at least, a similar effect as the original. Every language is in itself a collective art of expression in which one can find a deeply hidden set of aesthetic factors—phonetic, rhythmic, symbolic and morphological—that it does not completely share with any other language [11, p. 285]. Thus, the difficulty of translating verse appears on many levels:

- **The Phonological Level**

No two languages share the same pattern of sounds. This means that there is no correspondence between the SL and the TL. This is represented in an important phonological feature, which is called rhyme. It is an indispensable element in most metric poetry for which it is very difficult to find an equivalent. Translators can rarely find terms in the SL and the TL having the same phonological values. So, the translator has no choice but to get alternatives with sounds different from those in the original [4, p. 39].

- **The Linguistic Level**

Linguistic level can be represented by two sublevels; the words and meaning which are shown through images, similes, metaphors that may lead to a very sensitive relationship among the words and the redistribution of their places in the poetic line. Poetry is made with words, so it is impossible to transfer the charge of words from one language into another since the words in any piece of poetry are unique [2, p. 77].

- **The Vocabulary Level**

No two languages share the same words. Any word can vary in meaning depending on context, its relation to other words, time, place, intention of its creator, topic, etc. these aspects demand different treatments depending on the TL translation. If the translator does not succeed in

recognizing the specific meaning of a particular context, he will certainly fail to translate the text correctly [11, p. 285].

- **The Literary or Aesthetic Level**

Aesthetic values, or poetic truth, in a poem are, according to Newmark, dependent on the structure (or poetic structure) and sound. These values have no independent meaning, but they are important in the text. If the translator destroys the word order, and the sounds, he distorts the beauty of the original poem. So, the problem in translating a verse is how to retain the aesthetic values in the TL text, which are dependent on the structure and sound [7, p. 65].

- **The Cultural Level**

According to Newmark culture is the way of life and its manifestation that is peculiar to a community that uses a particular language as it means of expression. So, a good and natural translation of the literary texts especially the poetries which are representations of our wealthy culture is very important and effective in protecting our culture and national identity. Accordingly, culture and language are basically interwoven and indivisible that meaning transference is impossible without transference of cultural concepts [8, p. 94].

- **The Syntactic Level**

Language syntax vary from one to another. word order variations between the SL and the TL are frequently considered to be essential components [10, p. 6]. When the order determines thematic meaning, a change in the order will result in the loss of the meaning. Thus, if the translator changes the sequence by replacing the initial position of a word in a line, the thematic significance may be distorted [9, p. 83].

Thus, in order to redraft the translated material, the translator must first comprehend the original version, which illustrates the challenges of translation. If the redrafting challenges are mostly rhetorical in nature, the understanding challenges cause shifting and displacement in the transferred expression, which may destroy the translated meaning. In addition, the consideration of levels mentioned above that influence translation show the complexity of a translation task. Each of these levels has the potential to significantly impair the translator's decision-making and judgement, which will ultimately manifest in some way in the final translation.

Strategies for Translating Verse

According to Holmes, there is an extremely close relationship between the kind of verse form a translator chooses and the kind of total effect his translation achieves. He classifies verse translation establishing four categories divisible into three main groups: the first derives from form (comprising mimetic and analogical forms); the second derives from content (organic form); and the third does not derive from either content or form (extraneous form):

- *Mimetic form* allows the translator to imitate the form of the original as best as he can. It imitates the form of the source poem with the highest level of similarity possible. The poem, then, is created within these formal constraints. To achieve this, the translator looks squarely at the original poem when making his choice of verse form, to the exclusion of all other considerations. Holmes prefers to avoid the term "identical form", as no verse form in any one language can be entirely identical with a verse form in any other.

- *Analogical form* is more typical of literatures with highly developed genre concepts for which the only acceptable alternative is using a form already established within its system. Translators taking this approach have traditionally looked beyond the original poem itself to the function of its form within its poetic tradition, then sought a form that filled a parallel function within the poetic tradition of the target language. Starting point is clear: the greatest formal similarity is

sought, either with the original poem or with its historical or functional “equivalent” in the target literature.

- *Organic form* begins with the content, meaning the translator builds a new shape as they manipulate the poem. For Holmes, the translator pursuing this approach does not take the form of the original as his starting point, but starts from the semantic material, allowing it to take on its own unique poetic shape as the translation develops. This is clearly the case with the translations in blank free verse, which would have been assembled while the poem is being created from the poem’s meaning.
- *Extraneous form* does not derive from either the content or form of the original poem, accordingly, the translator creates a work which is unrelated to the primary text. According to Holmes, this form does not derive from the original poem at all ; to produce it, the translator “casts the metapoem into a form that is in no way implicit in either the form or the content of the original” [5, p. 27].

However, the most notable classification of poetry forms is probably André Lefevere’s , his approach is more descriptive; in his *Translating Poetry: Seven Strategies and a Blueprint* (1975) he focuses on the translation process itself and the influence of context on the original and translation. Not only does he discuss linguistic techniques but he also adopts an early descriptive approach taking into account the external influences on translations of “Time, Place, Tradition”. He delineates seven strategies used by translators:

a) *Phonemic translation*, which attempts to reproduce the SL sound in the TL while at the same time producing an acceptable paraphrase of the sense and creating the poem’s phonetic image in the TL. Lefevere comes to the conclusion that although this works moderately well in the translation of onomatopoeia, the overall result is clumsy and often devoid of sense altogether.

b) *Literal translation*, where the emphasis on word-for-word translation distorts the sense and the syntax of the original. However, he concludes that “Literal translation is a myth”, as it pays an enormous price for its illusory pursuit of elusive accuracy.

c) *Metrical translation*, where the dominant criterion is the reproduction of the SL metre. Lefevere concludes that, like literal translation, this method concentrates on one aspect of the SL text at the expense of the text as a whole.

d) *Poetry into prose*. Here Lefevere concludes that distortion of the sense, communicative value and syntax of the SL text results from this method, although not to the same extent as with the literal or metrical types of translation.

e) *Rhymed translation*, where the translator “enters into a double bondage” of metre and rhyme.

f) *Blank verse translation*. Again the restrictions imposed on the translator by the choice of structure are emphasized, although the greater accuracy and higher degree of literalness obtained are also noted.

g) *Interpretation*. Under this heading, Lefevere discusses what he calls *versions* where the substance of the SL text is retained but the form is changed, and *imitations* where the translator produces a poem of his own which has “only title and point of departure, if those, in common with the source text” (Lefevere, 1975: 20).

Toumanyany’s Quatrains from the Perspective of English Translation

As a linguistic material we analyze Toumanyany’s quatrains, written in 1916-1922 and their English translations. H. Toumanyany wrote about 70 quatrains, which became a unique sum of the spiritual and poetic paths taken by the poet, condensing in a few lines the entire course of human life, which has no beginning and no end. Being the direct expressions of poet’s thoughts and emotions, quatrains have become the “*biography of the soul*” of a person. Quatrains are

individually complete and independent, but at the same time internally connected compositions [13, p. 316].

The method of analysis. The original and translated quatrains are analyzed in the following text levels:

- lexical-semantic level,
- phonetical level,
- syntactic level.

The main formal characteristic of classical quatrains is that they consist of four lines, mostly AABA sometimes with AABB rhyme. Quatrains with AAAA rhymes are rare. 55 of Toumanyan's quatrains rhyme with AABA, 7 quatrains rhyme with AAAA, 13 of them have AABB rhyming. An illustration of AABA rhyming:

Քանի՛ մահ կա իմ սրտում,	A
Թափուր գահ կա իմ սրտում.	A
Չէ՛, դու էլ ես մահացու.	B
Մահի սհ կա իմ սրտում:	A

As it is indicated, AABA rhyming scheme has been preserved in both translations:

So many deaths in my heart ,	A
Empty thrones in my heart .	A
Are you not mortal too?	B
A dread of death dwells in my heart .	A

(translated by Sh. Avagyan)

A thousand deaths dwell in my soul ;	A
Death sits enthroned in my spirit's hall .	A
My heart is filled with the fear of death	B
For I am mortal just like all .	A

(translated by Aksakova)

Both translations convey the thoughts and emotions of the poet in comprehensive way. They imitate the form of the source quatrain with the highest level of similarity possible without semantic and stylistic loss. In the English translations of this quatrain **mimetic form** has been employed, which has been suggested by Holmes. It allows the translator to reproduce the form of the original as best as he can. **Rhymed** and **phonetic** translations proposed by Lefevere have also been used due to which the rhyme and sound system of the original quatrain have been kept in both translations.

Phonetic, lexical and syntactic stylistic devices and expressive means applied in the original and translated quatrains have been analyzed.

• **Phonetic stylistic devices: rhyme, rhythm, alliteration**

From the point of view of the rhythmic pattern and the rhyme, the translators have achieved their purpose quite well. **Rhyme** created by the repetition of the word *սրտում* has been preserved in the first translation through the repetition of the word *heart*. In the second translation different words at the end of the line act as rhymers: *soul, hall, all*.

Rhythm is the main factor both in the original quatrain and in its translations. It is created by regular repetition of stressed and unstressed syllables. The rhythmical structure is the semantic representation of the quatrain and has considerable influence on the semantic aspect of the utterance. It also emphasizes the psychological verse content.

Toumanyán has applied alliteration with the repetition of the sound *h*. In both translations **alliteration** has been maintained which aims at imparting a melodic effect to the utterance. The repetition of the consonant *d* in translated quatrains prompts the feeling of death, fear, horror, anguish or all these feelings simultaneously.

- **Lexical stylistic devices: metaphor, epithet**

The conceptually important information in the quatrain has been expressed by **metaphor**: *Քանի՛ մահ կա իմ սրտում; Թափուր զահ կա իմ սրտում; Մահի ահ կա իմ սրտում*. Metaphorical meaning has been maintained in both translations conveying the primary concept of the source quatrain. The image of the quatrain created by metaphor has been manifested in the TL.

Toumanyán has made use of unassociated **epithet**: *թափուր զահ* which has been replaced by its equivalent existing in the TL: *empty thrones*. In the second translation epithet has not been preserved.

- **Syntactic stylistic devices: rhetorical question, repetition, ellipsis**

In order to convey the overall concept of the quatrain, Sh. Avagyan, the translator of the first form, has applied **rhetorical question** (*Are you not mortal too?*). It serves to express the emotions of the poet and to make a point more prominent. Toumanyán does not express any uncertainty as it does not require an answer and is posed to call the attention of the reader. The highlighted phrase in this quatrain is *իմ սրտում* at the end of the line in a strong poem position, in the first translation it has been preserved similarly. In the second translation it has not been kept. The significance of the phrase is emphasized by its **repetition** three times in the quatrain. This is semantically strong syntactic position which is based on the semantically important foregrounding of the words.

To produce more compact statement the translator of the first variant has employed **ellipsis**. She has omitted the word *կա* in first two lines of the quatrain. It aims at keeping line length of the original quatrain.

Another illustration of quatrain with AABA rhyme formed by the repetition:

Առատ, անհատ՝ Աստծու նման՝ միշտ տեղալուց	հոգնել եմ ես.	A
Հոգիս ծարավ՝ սրան-նրան մտիկ տալուց	հոգնել եմ ես.	A
Մինը պիտի գար իմ դեմը՝ ճոխ ու շռայլ անհաշիվ,		B
Սմեն ճամփում սպասելուց ու փնտրելուց	հոգնել եմ ես:	A

The repetition used by Toumanyán has been transferred into the English translations:

Like God, inexhaustible, **I've grown tired** of always giving,
 My soul thirsty, **I've grown tired** of lending an ear,
 When no one awaits me – generous and abounding,
I've grown tired of waiting and searching on every road.
 (translated by Sh. Avagyan)

Generous, inexhaustible, giving like God, I grew tired ;	A
Myself with a thirsting spirit caring for man, I grew tired ;	A
I long to meet someone to lavish love's riches on me;	B
Watching the way, awaiting, looking for me so tired .	A

(translated by Aksakova)

Both translations can be considered equivalent in sense and function. They manifest the depth of poet's sentiment remaining faithful to the expressive and aesthetic function of the source quatrain. In both translations **mimetic** form has been exerted. The translators have kept the form of

the source quatrain. In the second translation **mimetic** and **rhymed** translations have been applied concurrently.

- **Phonetic stylistic devices: rhyme, rhythm, alliteration, assonance**

Rhyme and **rhythm** are two important notions in quatrain, metric syllables and rhythm of sentences are taken into account to create it, it has an ideal pattern of metre and rhythm, to which Toumanyán fits his thoughts and feelings. Both translations maintain as closely as possible the rhythm and line length of the original work. The main formal characteristic of classical quatrains is that they have *AABA* rhyming. In the first translation this form of rhyming has not been preserved. The translator of the second form has remained faithful to the *AABA* form of rhyming through the use of repetition at the end of the lines.

Alliteration has been used in the second translation although in the source quatrain there is no obvious application of alliteration. The repetition of the sound *g* in the first lines of translated quatrains places stress on the words to focus the reader's attention toward the peak of poet's emotion.

Assonance expressed with the vowels *u, n* has been transferred into the English translations with the repetition of *e, i* vowels. The essence of this device lies in the repetition of similar vowels, usually in stressed syllables. It intends to give the utterance musical effect.

- **Lexical stylistic devices: metaphor, epithet, simile**

The aesthetic value and conceptually important information have been expressed by **metaphor**: Հոգիս ծարսով՝ սրան-նրան մտիկ տալուց հոգնել էմ ես, Ասեն ճասփռու սպասելուց ու փնտրելուց հոգնել էմ ես. Both literary translators have expressed Toumanyán's message with simple and fluent diction.

Toumanyán has used metaphorical **epithet**: ծարսով հոգի, which has been transferred into the English language as *soul thirsty, thirsting spirit*. It is based on the interplay of emotive and logical meaning in an attributive phrase and used to characterize an object pointing out to the reader, and frequently imposing on him, some of the properties or features of the object with the aim of giving an individual perception and evaluation of these features or properties. It makes a strong impact on the reader.

Through the use of **simile** (*Աստուծու նման*) Toumanyán compares himself to God. In both translations literal translation has been employed, it has been transferred into English as *Like God*.

- **Syntactic stylistic devices: inversion, repetition**

In the original quatrain Toumanyán has applied inversion (*հոգնել էմ ես*). Like all literary devices, the main function of **inversion** in poetry is to help writers achieve stylistic effect, like laying an emphasis on a particular point, or changing the focus of the readers from a particular point. In two variants of translation, the original form of inversion has not been preserved, and the translators have preserved English standard word order (SVO): *I've grown tired; I grew tired*, its aim is to create rhythmical pattern and rhyming scheme.

Repetition at the end of three lines emphasizes both the logical and the emotional meanings of the reiterated phrase. Repetition of the sentence *հոգնել էմ ես* is a powerful means of emphasis which has been preserved in both translations. Besides, repetition adds rhythm and balance to the utterance.

Penetrating the sphere of great cosmic mysteries, Toumanyán tries to find the highest meaning in human existence, to observe and understand it in the stream of great life, and he deifies nature, universe, according to his pantheistic comprehension. He seeks to guess its inner patterns, the high rational principle of its eternal existence. Here is one of those quatrains:

Ես շնչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր .	A
Ես լսում եմ Նրա անլուռ կանչն ու շունչը ամենուր .	A
Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին	B
Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունչը ամենուր :	A

As is shown, in the first variant of translation AABA rhyme has not been maintained:

I feel the breath of the living God all around me,
I hear his unsilent call and response –
The deep melody and murmur of the Universe
Exalt and dispel my omniscient soul.

(translated by Sh. Avagyan)

As one can see, initial form of AABA rhyming has been kept in the following translation:

All my life I breathe the live breath of the living God everywhere ,	A
Always I hear His voice, His incessant call everywhere .	A
My all-seeing, all-hearing soul is elevated and cleansed	B
By the melody and the murmur coming from everywhere .	A

(translated by Aksakova)

The first translation can be regarded as less emphatic from the point of view of the rhyme. The second translation is more admissible as it conveys the concept of the original quatrain in more comprehensive and detailed way. **Organic** and **phonemic** translations have been implemented in the first variant of translation. The translator has prioritized the semantic substance over the form of the original. **Phonemic** and **rhymed translations** have been applied together in the second translation to reproduce the SL sound and rhyming systems.

- **Phonetic stylistic devices: rhyme, rhythm, alliteration**

In the source quatrain repetition of the word *ամենուր* at the end of three lines compose perfect **rhyme** which has been conveyed into the second translation. As for the first translation, here only second and third lines are rhymed: *response*, *Universe*. Both the original and translated quatrains rely heavily on **rhythm** as a phonetic device, it contributes to the overall sense emphasizing and defining emotional aspect of the quatrain.

Alliteration in the last line of the original quatrain: *մեղեդին ու մըրմունչը ամենուր* has found its manifestation in both translations: *melody and murmur*. Alliteration formed by the repetition of the consonant *m* provides emphasis on the emotional aspect and draws reader's attention to it. Repetition of the sound *m* also produces melodic effect.

- **Lexical stylistic devices: metaphor, epithet**

The aesthetic value of the quatrain is dependent on metaphor. **Metaphor** reproduces the basic notion of the quatrain and each line conveys metaphorical meaning. The translator's most challenging task is to convey the message of metaphorical expressions from one language to another in purely linguistic terms. Both translators have presented the concept with highest level of proficiency.

Քերոլ Էդգարյանը միտումնավոր վեպի հերոսներ է դարձրել երեք սերնդի կանանց, որոնց շուրջն էլ ծավալվում է ողջ գործողությունը, և դա ունի իր պարզ բացատրությունը, ինչպես իրավացիորեն նշում է Ս. Դանիելյանը. «Կի՛նն է խորհրդանշում ժողովրդի յարատևությունը, կի՛նն է իր վրայ վերցնում ճանապարհի սկզբի եւ ընթացքի յորձանքը» [1, էջ 200]:

Վեպի հիմքում ընկած է Քազարդի փոթորկուն ներաշխարհը: Դժվար չէ նկատել՝ Քերոլ Էդգարյանը վեպում պարզորոշ դրսևորում է ներապրումի գրական-փիլիսոփայական հակվածություն: Գրողի համար անհատը (այստեղ՝ հերոսուհին) գեղարվեստական իրականության մեջ նվաճում է ներաշխարհի բացահատման իրավունք: Գրողը շեշտը դնում է մարդու ներաշխարհի վերհանման և բացահայտման վրա: Սխալ կլինի կարծել, թե գրողն անտեսում է արտաքին հանգամանքը: Նա այն ծառայեցնում է ներքինին: «Արտաքինի իջեցումը ներքին մակարդակ, - գրում է գրականագետ Հ. Էդոյանը, - XX դարի արվեստի գլխավոր գիծն է, նրա կառուցվածքային հիմքը: Ներքին մակարդակի բարձրացումը արտաքին պլան նշանակում է գեղարվեստական ինֆորմացիայի զարգացում իր ուղղահայաց կառուցվածքի մեջ (վերնից դեպի ներքև, մակերեսից դեպի խորքը), իմաստային կողմի մեծացում, բացահայտումն այնպիսի իրականության, որը մինչ այդ անձանոթ էր արվեստին» [2, էջ 6-7]:

Որպես ազատ ստեղծագործող՝ Քերոլ Էդգարյանը ելնում է մարդ-հասարակություն բարոյական ծալքերի զարգացման անհրաժեշտությունից: Այսպես. Սեդան կարողանում է անցյալի շղարշից վեր հանել տատի՝ ողբերգություններով լի կյանքը, անմարդկային սարսափների միջով անցած նրա ուղին: Եդեոնը վերապրած տասնամյա հերոսուհին հոգեկան ծանր ցնցումներից մոռանում է իր անունը և պարտադրված կրում նոր անուն. ֆրանսիական միանձնուհիները նրան անվանում են Կաֆարո, որը ֆրանսերեն նշանակում է «հոգու մելամաղձություն», սա դեռ ամենը չէ, Էլիս կղզում ներգաղթը կազմակերպող աշխատակիցները նրան կոչում են Քազարդ, յուրաքանչյուր

օտար անուն հոգեպես ճնշում է հերոսուհուն, ստիպում համակերպվել նոր իրավիճակներին, մոռանալ տալ անցյալը, ազգությունը: Հերոսուհին կոտորվողներից չէ: Նրա ուսերին է դրված հայ մնալու պատասխանատվությունը:

Թվում է՝ Ամերիկա գալով, ավանդապաշտ հայ ընտանիք ստեղծելով, հայոց լեզվի և Հայ առաքելական եկեղեցու միջոցով պահպանելով հայրենի երկրի ավանդույթները, ազգային ինքնության զգացումը, կիսադադլի փոթորկուն ներաշխարհը, սակայն անցյալը չար երազի պես անընդհատ հետապնդում է նրան, որից ինքը շարունակ փորձում է ձերբազատվել: Հարելով գոյափիլիսոփայական գրական ուղղությանը՝ Լ.-Ջ. Մյուրմելյանի, Փ. Սուրյանի, Վ. Սարոյանի նման Ք. Էդգարյանը ուշադրությունը սևեռում է բացարձակ ճշմարտության բացակայության պայմաններում ընտրություն կատարելու, որոշումներ և պարտավորություններ ընդունելու դժվարության վրա, մարդու գոյությունը տեսնում որպես կյանքի իմաստի որոնման և ինքնահաստատման ընթացք: Արձակագրուհու հերոսը, չնայած կյանքի անհեթեթությանը և անիմաստությանը, չի կորցնում մարդ լինելու իր կոչումը, դիմակայում է բոլոր դժվարություններին, տանում անարդար աշխարհի բարոյական ողջ ծանրությունը, իր ուսերին առնում աշխարհում եղած ներուժի պահպանումն ու շարունակությունը: Սարտրյան կեցություն-ոչնչություն-գիտակցություն առանցքը, տրոհվելով ու տարրալուծվելով ստեղծագործության ներքին շերտերում, մեկնական հետևողական հունով Ք. Էդգարյանին հանգեցնում է դեպի «գիտակցությունը՝ որպես բարոյական կեցություն», հայեցողությանը:

Ողջ կյանքում հերոսուհին փափագում է իր հայրենի երկիրը, որն այլևս գոյություն չունի, Սարոյանի հերոսների նման ստեղծում է հայկական ջերմ և տաքուկ բնօրրան՝ մի փոքրիկ Հայաստան: «Տատիկս սկսում և ավարտում էր իր օրերը խոհանոցում, - վկայում է թոռնուհի Սեդան, - իր սեփական տանը կամ եկեղեցում, սրանք այն վայրերն էին, որտեղ նա իրեն զգում էր իր հարազատ հողի վրա, նա ստեղծել էր իր հայկական անկյունը» [4, էջ 61]:

Ի տարբերություն Փ. Նաջարյանի «Հիշողության դուստրերը» վեպի տարեց հերոսուհիներից մեկի, որը հիվանդագին անտարբերություն է դրսևորում անցյալի նկատմամբ, պատրաստ է հանուն իր զավակի երջանկության և բարեկեցիկ կյանքի մոռացության տալ անցյալը, ազգային հիշողությունը, անգամ առանց վարանելու կարող է ձուլվել, Քազարդը չի ընդունում ամերիկյան բարքերը, սովորույթները, բարոյական ըմբռնումները, հաղթահարում է բոլոր դիմակայությունները, ջանում պահպանել իր ընտանիքի ազգային ինքնությունը, դստերը՝ Արաքսիին փորձում է ազգային ոգով մեծացնել՝ հեռու պահելով ամերիկացումից: Սակայն դա նրան չի հաջողվում. հոգս են ցնդում երագներն ու ցանկությունները: Դուստրը, որ ծնվել ու մեծացել է Ամերիկայում, ընդունում է ամերիկյան բարքերն ու սովորույթները, առաջնորդվում է տեղի բարոյական նորմերով և օտար արժեքներով: Նրա համար անհասկանալի է «ազգ» հասկացությունը, առաջնային են մարդկային արժեքները: «Ամերիկա ժամանելուց հետո յոթանասուն տարի անց, - վկայում է Սեդա Լուն, - Քազարդը վիճում էր գեղեցիկ, ըմբոստ Արաքսիի հետ, ով չէր ուզում անդրադառնալ իր սարսափելի անցյալին, ուզում էր ապրել դյուրիշ կյանքով և տեսնել աշխարհը» [4, տե՛ս ներածություն]:

Ք. Էդգարյանը, Մ. Ա. Կրտսերի, Փ. Բալաքյանի, Փ. Նաջարյանի, Փ. Սուրյանի հետևողականությամբ, ցույց է տալիս օտար միջավայրում հարազատ հողից կտրված հայ մարդու ազգային արմատներից օտարվելը: Արաքսին, հակադրվելով մորը, ամուսնանում է օտարազգի Ջորջ Լունի հետ: Ըմբոստացող հերոսուհին այս անգամ էլ չի կոտորվում, Ալբեր Բամյուի Միզիֆոսի («Միզիֆոսի առասպելը» «Le Mythe de Sisyphe» 1942) նման համառորեն ընդվզում է անհեթեթ և անիմաստ կյանքի դեմ: Ի տարբերություն ֆրանսիացի գրողի հերոսի, որը դատապարտված է նույն աշխատանքը շարունակ անիմաստ կատարելուն, Էդգարյանի հերոսուհին հասնում է իր նպատակակետին. թոռնուհի Սեդայի հետ կապելով իր հույսը, նրան համարելով իր ժառանգորդը, իր անցյալի պատմության կրողը, ազգը շարունակողը՝ հետևողականորեն նրան հասցնում է ազգային ինքնության պահպանման սահմանագծին:

Սեդան ստանձնում է տատիկի իսկական անունը գտնելու պարտավորությունը, որը նրան մղում է իր ազգային ինքնության բացահայտմանը: Դա առաքելություն էր՝ որոնելու հայկական արմատները: «Հայր, – ասում է Սեդան, – երկրի վրա առաջին քրիստոնյա ազգն է, մի ազգ, որի երկրում Աստված ինքն էր տեղավորել Նոյի տապանը: Իմ մեջ լեռն Արարատն է, պոետների երգերն են և յուրաքանչյուր սպանված հայի հոգին» [4, տե'ս ներածություն]:

Արարատ լեռը հերոսուհի Սեդայի համար ազգային ինքնությունը վերագտնելու, վերահաստատվելու խորհուրդն ունի: Քազարդից Սեդային է փոխանցվել լավատեսությունը, ապագայի նկատմամբ հավատը, որը նրան մղում է գտնելու և պահպանելու ազգային ինքնությունը: «Ես համակ ուշադրությամբ եմ լսում Քազարդին, ով ասում է՝ նոր կյանք ստեղծիր, դու պետք է ապագայի մասին հուսաս, դու պետք է հիշես՝ ինչ է եղել» [4, էջ 5]: Անցյալի դառը հիշողությունը հերոսուհին արյամբ փոխանցել է թոռնուհուն: Ինչպես իրավացիորեն նկատել է Տ. Մալումյանը. «Ցեղասպանության ականատեսների ժառանգները, որպես կանոն, չեն կարողանում սթափ գնահատել անցյալը, դասեր քաղել դրանից: Երրորդ սերունդը թեև զգում է 1915թ. իրադարձությունների առաջացած ցավը, սակայն ավելի սառնասրտորեն ու օբյեկտիվորեն է գնահատում և ճշմարիտ հետևություններ անում: Այդ է վկայում այն կազմակերպված պայքարը, որ երրորդ սերունդը մղում է իր ազգային խնդիրները լուծելու համար» [3, էջ 154]:

Շփվելով հայուհի Թերեզայի, տատի հասակակից կանանց և հայ համայնքի հետ, հաճախելով հայկական առաքելական եկեղեցի՝ Սեդան իր համար բացահայտում է իր ազգի պատմությունը, ցեղասպանությունը, որի ականատեսն էր տատը, և, իր հայկական ինքնությունը: «Ես այն ժամանակ և հիմա նրանց հայ աղջիկն եմ, – ասում է Սեդան, – տղամարդիկ ու կանայք, իրենց տխուր դժբախտությունների, ջարդերի ու ջրհեղեղների մասին երգերով, հացը հունցելով ու իրենց ոչխարներին հաշվելով, ինձ մարիոնետի նման թելերով հետ են քաշում: Գետը, այդ ավիամերձ ցավը, որ իմ մեջ է միշտ և ընդմիշտ, սկսում է բարձրանալ այնպես, ինչպես որ զգացել էր Սեդան, երբ զգեստը բարձրացել էր գլխավերևում և քարի պես ընկել պղտոր ջրի տակ...» [4, էջ 221]:

Խորհրդանշական է վեպի ավարտը՝ Սեդան և Թերեզան միասին դուրսով են նվագում, որը փաստում է նրանց դարձը ազգային արմատներ: Նրանք գտնում են իրենց

ինքնությունը: «Այդ գիշեր երագում, – ասում է Սեդան, – տեսա Եփրատ գետի մոտ տատիկիս հետ թուրքական վայրագություններին ակնատես կանանց, որոնք պատմեցին տատիս՝ Քազարդի հոգեկան ցնցումների, նրա հիշողության մթագնման մասին: Երբ արթնացա, վերագտա տատիս մոռացված անունը՝ Կարոտ, և փոխանցեցի մորս՝ Արաքսիին» [4, էջ 225]:

«Քերոլ Էդգարյանը գրել է մի պատմություն, – գրում է Դ. Լ. Փլուշարսը, – որը ուշագրավ է իր հոգեբանական խորաթափանցությամբ և քնարական արձակի եզակի կատարելությամբ: Սեդայի ուշագրավ երգը և նրա ձեռք բերած իմաստությունը հաջորդ սերնդին ազատում է օտարացումից և վերականգնում հայ ընտանիքի արժանապատվությունն ու իմաստը: «Եփրատի մակընթացությունը» Քերոլ Էդգարյանի ապշեցուցիչ յուրօրինակ և բեկումնային հաղթանակն է: Այն կարևոր, հզոր, հուզիչ վեպ է, ուր վիպասանուհին զարմանալի տաղանդով վեր է հանում ամերիկահայերի կյանքը» [4, էջ 360]:

Քերոլ Էդգարյանը սերնդակից գրողների նման ոչ միայն ընդունեց իր նախնիների անցյալը, այլև նրանց նման պահանջատերը դարձավ Հայոց ցեղասպանության ընդունման և դատապարտման:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ելնելով ժամանակի մարտահրավերներից, մարդու օտարման խնդրից՝ Քերոլ Էդգարյանը «Եփրատի մակընթացությունը» վեպով, որպես օտարների չճշտվելու կռվան, արժևորվել է ազգային ինքնության պահպանումը՝ շեշտադրելով էթնիկական հիշողությունը, հայ ավանդական ընտանիքի ստեղծումը: Գեղարվեստական մտածողության համաձիրում գրողը շոշափել է նախնյաց ազգային դիմորոշության հիմնարար ելագծեր, մարդկությանը ներկայացրել հայ ժողովրդի դարավոր պատմությունը, ցեղասպանությունը՝ տալով դրա պատմաքաղաքական, ազգային և բարոյա-հոգեբանական գնահատականը, դառնալով ցեղասպանության դատապարտման պահանջատերը:

Գրականություն

1. Դանիելեան Ս. *Միջուկի տրոհումը, Միջուկային գրականության պատմություն: Գիրք 1:* Երևան: «Չանգակ-97» հրատ.: 2011: 407 էջ:
2. Էդոյան Հ. «Մարդու «անհետացման» իմաստաբանական գիծը Վերածննդից մինչև XX դար» // «Համատեքստ -2002» հոդվածների ժողովածու: Երևան: 2002: 6-7 էջեր:
3. Մալումյան Տ. «Հայոց ցեղասպանության հետևանքների արտացոլումը ամերիկյան գրականության մեջ» // «Բանբեր Երևանի համալսարանի»: Հ.3 (102), Երևան: 2000: 149-154 էջեր:
4. Edgarian C. *Rise the Euphrates.* Hardcover: Random house Press. 1994. 370 p.
5. Park H. "Shared national memory as intangible heritage.", *Annals of Tourism Research*". Volume 38. Issue 2. April 2011. 520 p.

R e f e r e n c e s

1. Danielian S. The Splitting of the Core, History of Diaspora Armenian Literature.[*Mijuki trohume, Spurqahay grakanutyun patmutun*]. Book 1: Yerevan: "Zangak-97" magazine. 2011. 407 p. (In Armenian)
2. Edoyan H. "The semantic line of human "disappearance" from the Renaissance to the 20th century" [*"Mardu «anhetacman» imastabanakan gitse Veratsnndic minchev XX dar"*]. "Context-2002" collection of articles". Yerevan: 2002. 6-7 pp. (In Armenian)
3. Malumyan T. "Reflection of the consequences of the Armenian Genocide in American literature" [*"Hayoc cexaspanutyun hetevanqneri artacolumer amerikyan grakanutyun mej"*]. "*Banber Yerevan University*" jurnal. H.3 (102), Yerevan. 2000. 149-154 pp. (In Armenian)
4. Edgarian C. Rise the Euphrates. Hardcover: Random house Press. 1994. 370 p.
5. Park H. "Shared national memory as intangible heritage.,Annals of Tourism Research". Volume 38. Issue 2. April 2011. 520 p.

Շնորհակալ է / Принята /Received on: 19.04.2023

Գրախոսակ է / Рецензирована /Reviewed on: 02.05..2023

Հանձնակ է սույ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.06.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Նելլի Բակուրի ԳԱԼՍՏՅԱՆ՝ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան ԳԻ արտասահմանյան գրականության բաժնի հայցորդ, Երևան, ՀՀ,
էլ. հասցե՝ hasmikbakurgalstyan@mail.ru, <https://orcid.org/0009-0003-3973-4378>

Nelli Bakur GALSTYAN: applicant of the Department of Foreign Literature of Institute of Literature after M.Abeghyan of NAS, Yerevan, RA
e-mail:hasmikbakurgalstyan@mail.ru, <https://orcid.org/0009-0003-3973-4378>

Нелли Бакуровна ГАЛСТЯН: Соискатель отдела зарубежной литературы института имени М.Абегяна НАН. Ереван, РА
эл. адрес: hasmikbakurgalstyan@mail.ru, <https://orcid.org/0009-0003-3973-4378>

ՀՏՂ՝ 81՝38

DOI:10.52971/18294316-2023.26.1-212

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑՈՒ ԱՌԱԿՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Աստղիկ Հ. Հայրապետյան

Շիրակի Մ. Նալբանդյանի անվ. պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

*«Ընդ որս մեծ ռաբբին Վարդան կոչեալ...
Այն երջանիկն աստուածարեալ
Որ ի մարմին հրեշտակացեալ
Նա աշխարհի քարոզ եղեալ [7, էջ 286]»*

Ամփոփում

Նախաբան. Սույն հոդվածում քննարկվում են Վարդան Այգեկցու լեզվին պատկերավորություն հաղորդող միջոցների արտահայտությունը և դրանց գեղարվեստական առանձնահատկությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով հեղինակային լեզվամտածողությունն արտացոլող միավորներին: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքը կատարելիս հիմնականում առաջնորդվել ենք վերլուծական և համալիր քննության մեթոդներով: Վերլուծություն. Այգեկցին, լինելով իր ժամանակի նշանավոր հոգևորականներից և մեծ ներդրում ունենալով նաև աստվածաբանության մեջ, մեզանում առավելապես հայտնի է իբրև առակագիր և խրատաբան, որը նորովի շունչ է հաղորդել առակագրությանը: Այս առումով առավել հետաքրքրական ենք համարել նրա առակների՝ հեղինակային մտածողության յուրահատկություններն արտացոլող պատկերավորման միջոցների ուսումնասիրությունը: Նկատենք, որ Այգեկցու առակներում հանդիպում են անսովոր, երբեմն մոգական հատկանիշներով օժտված այլաբանական կերպարներ, մակդիրներ, փոխաբերություն, հեզնանք, որոնցով ավելի է ընդգծվում հեղինակի անհատականությունը: Արդյունքներ. Ուսումնասիրելով առակներում վկայված պատկերավորման միջոցները՝ կարող ենք ասել, որ դրանք արտահայտում են հեղինակի անհատական լեզվամտածողությունը, նուրբ հումորը, որոնք միտված են ընթերցողին և ունկնդրին գրավելուն, ուղղորդելուն և ասելիքը տպավորիչ դարձնելուն: Հատուկ ուշադրու-

թյան ենթ արժանացրել նաև առակներում վկայված դարձվածքներին ու հեղինակային նորաստեղծ բառերին, որոնք ևս նպաստել են խոսքն առավել տպավորիչ և պատկերավոր դարձնելուն:

Բանալի բառեր` Վարդան Այգեկցու լեզվին պատկերավորություն հաղորդող միջոցներ, արտահայտչականություն, գեղարվեստական առանձնահատկություններ, հայ միջնադարյան գրականություն, լեզվաոճական բազմազանություն, առակագիր, մակդիր, փոխաբերություն, հասկանալիություն:

Ինչպես հղել` Հայրապետյան Ա., Վարդան Այգեկցու առակների պատկերավորման միջոցների գեղարվեստական արժեքը // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 1 (26): 212-220 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.1-212

THE AESTHETIC VALUE OF THE EXPRESSIVE MEANS IN THE FABLES OF VARDAN AIGEKTSI

Astghik H. Hayrapetyan

Shirak State University after M. Nalbandyan, Gyumri, RA

Abstract

Introduction: The article touches upon the expressive means imparting imagery to the language of Vardan Aigektsi and its aesthetic peculiarities. **Methods and materials:** While conducting the research, we were mainly guided by analytical and complex examination methods. **Analysis:** Aigektsi, being one of the prominent clergymen of his time and also having a great contribution to theology, is popular with a parable writer and preacher who breathed new life into parable writing. In this regard, we considered the study of his fables, the means of visualization reflecting the peculiarities of the author's thinking, to be more interesting. Let's note that in Aigektsi's fables there are unusual, sometimes magical allegorical characters, adverbs, metaphor, irony, which further emphasize the personality of the author. **Results:** Sometimes, in order to make the speech more impressive and influential, he uses such words and phrases, the author of which we can consider V. Aygektsi, because they are not attested in the New Haikazian and Middle Armenian dictionaries. We also paid special attention to the phrases and newly created words in the fables, which also contributed to making the speech more impressive and illustrative.

Key words: *Means of conveying imagery to the language of Vardan Aygektsi's expressiveness, artistic features, linguistic diversity of medieval Armenian literature, fable, adverb, metaphor and comparison.*

Citation: Hayrapetyan A. The Aesthetic Value of the Expressive Means in the Fables of Vardan Aigektsi // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 1 (26). 212-220 pp, DOI: 10.52971/18294316-2023.26.1-212

ХУДОЖЕСТВЕННАЯ ЦЕННОСТЬ ОБРАЗНО-ВЫРАЗИТЕЛЬНЫХ ФИГУР ПРИТЧ ВАРДАНА АЙГЕКЦИ

Աստիկ Գ. Այրապետյան

Շիրակիի գосударственный университет им. М. Налбандяна, Гюмри, РА

Аннотация

Введение: В статье обсуждаются выражение средств, наделяющих язык Вардана Айгекци выразительностью и их художественные особенности. *Методы и материалы.* При выполнении работы мы в основном руководствовались аналитическими и комплексными методами исследования. *Анализ:* Вардан Айгекци, будучи одним из своеобразных и одаренных лиц армянской средневековой литературы, выделяется выбором художественных средств выразительности языка своих притч, его произведения выделяются многообразием и богатством языкового стиля и особенностями проявлений художественно-выразительной системы. В связи с этим нам показалось более интересным изучение его басен, средств наглядности, отражающих особенности мышления автора. Отметим, что в баснях Айгекци присутствуют необычные, иногда магические аллегорические персонажи, наречия, метафоры, ирония, которые еще больше подчеркивают личность автора. *Результаты:* Иногда, чтобы сделать речь более впечатляющей и влиятельной, он использует такие слова и словосочетания, автором которых можно считать Айгекци, поскольку они не засвидетельствованы в среднеармянских словарях. Мы также уделяли особое внимание словосочетаниям и новообразованным словам в баснях, что также способствовало тому, чтобы речь была более выразительной и образной.

Ключевые слова: *средства передачи образности басен Вардана Айгекци, выразительность, художественные особенности, языковое разнообразие средневековой армянской литературы, басня, эпитет, метафора, сравнение.*

Как цитировать: Айрапетян А. Художественная ценность образно-выразительных фигур притч Вардана Айгекци // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2023, Т. 1(26). 212-220 сс. DOI: 10.52971/18294316-2023.26.1-212

ՆԱԽԱԲԱՆ. Վարդան Այգեկցին, լինելով հայ միջնադարյան գրականության ինքնատիպ ու շնորհալի դեմքերից մեկը, առանձնանում է նաև իր առակների լեզվի պատկերավորման գեղարվեստական միջոցների ընտրությամբ, մանավանդ որ նրա ստեղծագործությունը հատկորոշվում է լեզվառճական բազմազանությամբ և գեղարվեստական պատկերավորման համակարգի դրսևորման առանձնահատկություններով:

Այս առումով հատկանշական ենք համարում Մ. Աբեղյանի կարծիքը Այգեկցու լեզվի և ոճի վերաբերյալ. «Վարդանը հորինում է կատարելապես պարզ ու հասարակ, մեկին ու թեթև, ախորժալուր: Նա ոչ թե ճառում է, այլ կենդանի լեզվով զրույց է անում, սիրով խոսակցում իր ունկնդիրների, ավելի ևս ընթերցողների հետ՝ հոգալով ոչ միայն ժամանակակիցների համար, այլև ապագա սերունդների: «Վա՛յ ինձ՝ մանկո՛ւնք Միոնի, որ գայք հետ մեր յաշխարհի, զի ցանգամ տեսանել զձեզ և ոչ կարեմ, զի հողացեա՛լ եմ ի գերեզմանի, ապա գրաւքս այս խաւսիմ ընդ ձեզ մինչև ի հինգ և եւթն ազգն և կա՛մ հոգովս ի միջի ձերում» [1, 195]:

Եվ պատահական չէ, որ Վարդան Այգեկցին՝ որպես առակագիր, մատենագիր և քարոզիչ, հայ գրականության ամենահետաքրքրական և սիրված դեմքերից է:

Նշենք, որ թեև Վարդան Այգեկցին, լինելով իր ժամանակի նշանավոր հոգևորականներից և մեծ ներդրում ունենալով նաև աստվածաբանության մեջ, մեզանում առավելապես հայտնի է իբրև առակագիր և խրատաբան: Նա, իր գրական գործունեությամբ շարունակելով Մխիթար Գոշի դրած ավանդույթները, նորովի շունչ է հաղորդել հայ առակագրությանը:

Ընդգծենք, որ Վ. Այգեկցու գրական ժառանգությունը միշտ էլ ուշադրության կենտրոնում է եղել: Մանուկ Աբեղյանը «Վարդանա առակներ» ժողովածուն համարում է մեր հին գրականության հարստություններից մեկը [1, էջ 189]: Նրա առակներն ու խրատները բանասիրական բազմակողմանի ուսումնասիրությամբ հրատարակել է անվանի հայագետ Ն. Մառը՝ եռահատոր աշխատությամբ [7], որի առաջին հատորում ներկայացրել է իր հետազոտությունները, երկրորդում՝ բնագրերը, իսկ երրորդ հատորը հավելվածի արժեք ունի:

Նկատենք, որ մեծ առակագրի վաստակը գնահատվել է ոչ միայն հայ իրականության մեջ: Այսպես, Սեն-Մարտենը Վ. Այգեկցու «Աղուեսագիրք»-ից ընտրեց 45 առակ, թարգմանեց և 1825-ին հրատարակեց Փարիզում:

Ի դեպ, Վ. Այգեկցու առակների ընտրությունը պատահական չէր. Սեն-Մարտենն առաջարկում էր դրանք, իբրև բնագրեր օգտագործելով, առավել դյուրին դարձնել ֆրանսախոսներին հայերեն սովորեցնելը: Քանի որ *Վարդան Այգեկցու առակների ոճը պարզ է, հստակ, հեշտ հասկացվող. այն չունի միջնադարի գրողների լեզվի վսեմությունն ու վերացականությունը: Առակների լեզուն երբեմն այնքան պարզ է, որ մոտենում է ժողովրդական – խոսակցական լեզվին, սակայն նրա շարահյուսությունը և քերականական ձևը մշտապես պահում են գրական լեզվի պահանջները* [9, էջ 78]:

Նշենք, որ հետաքրքրական մոտեցում է նկատվում. առակների այլաբանական մասը շարադրելիս առավել գերակշռում են միջինհայերենյան տարբերակները, իսկ խրատական հատվածում՝ կրոնակեղեցական ստեղծագործություններին բնորոշ միավորները: Եվ պատահական չէ, որ իմաստային երկու խմբերում ներառված բառերից շատերը գործածվել են կրոնակեղեցական գրականությանը բնորոշ պատկերավորման համակարգի միջոցներով, բերենք մեկ առակի օրինակ:

Ժիժիքն և մեղունք և մրջիմն

Ժիժիքն գան առ մեղունքն և առ մրջիմն ի ժամանակս ձմրան և ասեն. տուք մեզ կերակուր զի մեռանիմք ի սովոյ: Եւ նոքա ասեն. դուք ինչ գործէիք յամառն և նոքա ասեն ի վարսաւոր ծառս հանչքէաք և անուշ երգով զճանապարհորդս ուղարկէաք. և նոքա ասեն ապա յիրաւի սատակիք ի սովոյ և ոչ էր պարտ առնել ձեզ ողորմութիւն:

Տուցանէ առակս, թէ յիմար կուսանքն խնդրեն և իմաստունքն ոչ տան, զի ժամանակն ոչ է ողորմելոյ, այլ իրաւունք առնելոյ: Ապա պարտ է յայս կեանքն ժողովել, որ է ամառն իմաստութեամբ և աշխատութեամբ զհոգևոր կերակուր, զի դատաստանի արն սովամահ ի դժոխս ոչ առնեն [7, էջեր 19-20]:

Վարդան Այգեկցու լեզվի համար բնութագրական է կրոնակեղեցական երկերին և միջնադարյան տաղերգությանը բնորոշ արտահայտչամիջոցների համադրումը:

Միջին հայերենի լեզվական բազմազանությանը գումարվում է նաև առակագրի լեզվական «ազատությունը», որը ուսումնասիրվող նյութն ավելի ուշագրավ և բազմաբնույթ է դարձնում: Այս առումով ուշաբժան է, որ միևնույն բառարմատը և՛ գրաբարյան, և՛ միջինհայերենյան իմաստներով կարող ենք տեսնել միևնույն առակում, օրինակ՝ *քոյր*, ինչպես՝ վերնագրում տեսնում ենք՝ Մեծատուն և *քեռորդին*, ապա առաջին իսկ տողում կարդում ենք. «Էր մեծատուն մի, որ ուներ ժառանկ տան իւրոյ գորդիս *քուրոյ* իւր»: Ապա տեսնում ենք. «այ *քեռի*, ինչ հրամայեցեր...» [7, էջ 39]: Ակնհայտ է, որ գրաբարյան և միջինհայերենյան լեզվական իրողությունները միահյուսված են, քանի որ արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի աշխարհիկ խոսքի յուրահատկությունները:

Քննելով Վ. Այգեկցու առակների լեզուն՝ կարելի է այն համարել միջին հայերենով համեմված գրաբար, ուր գերիշխում է ժողովրդական լեզուն: Ընդհանրապես, միջին հայերենի ձևավորման մասնավորապես առաջին շրջանում հեղինակի՝ մաքուր կամ գրաբարախառն լեզվի նախընտրությունը պայմանավորված էր ստեղծագործության թեմայով և բնույթով, ինչպես՝ Ն. Շնորհալու երկերում: Նույն երևույթը, իհարկե, ոչ այնքան ակնառու դրսևորվում է առակներում. խրատներն առավել համոզիչ դարձնելու նպատակով Աստվածաշնչից կամ կրոնակեղեցական գրականությունից մեջբերումներ է անում գրաբարախառն լեզվով, իսկ մտերմիկ խրատների ժամանակ հակվում է դեպի լեզվի խոսակցական տարբերակը:

Համակարծիք լինելով վերոհիշյալ մտքին՝ կարող ենք ասել, որ Վ. Այգեկցու՝ երկերի լեզվական իրողությունների ընտրությունը թելադրված էր նաև դրանց թեմայով: Ընդ որում, սա կարող է ընդհանրացվել ու վերաբերել ժամանակի գրեթե բոլոր գրողների լեզվին:

Միջին հայերենը հասկորոշվում է լեզվական ուրույն դարձվածքներով և ոճերով՝ զուգահեռաբար պահելով գրաբարից ժառանգած դարձվածային միավորները:

Այգեկցու առակների լեզուն աչքի է ընկնում անմիջականությամբ և զգացմունքային խորությամբ, իսկ դարձվածքները, լինելով վերաիմաստավորված կայուն կապակցություններ, օժտված են հուզաարտահայտչական մեծ երանգավորմամբ, այդ իսկ պատճառով հարկ ենք համարել այստեղ անդրադառնալ վերջիններիս: Բերենք առակներից մեկը՝ ընդգծելով դարձվածքները:

Գառ մի ցանկայի կար ի փարախ մի և ահայ էմուտ գայլն առ զնայ, զի կերիցէ. և նայ անկաւ յոտս նորա և ասէ. աստուած ետ զիս ի հրամանս քո , ապայ ողորմեա ինձ և հար զփող քո և լսեմ, զի լցցի զցանկութիւնս իմ. քանզի լուայ ի հարց իմոց, թէ սաստիկ փողահարք են ազգն գայլոց: Եւ նա հաւատաց անդէպ բանին և կնկղեցաւ և մի բերան գոչեաց. և ահա զարթեալ շունքն խածատեցին և փախեալ և ելեալ նստաւ բլուր մի, լալով կոճէր զանձն իւր և ասէր, թէ արժան եմ ես այս վշտացս, և արդ ո՞յ արար զիս փողահար, զի ես հանապազ մսագործ էի:

Առակն ցուցանե, թէ շատ իմաստուն մարդիք խաբուին և լսեն անդէպ բանից և հետո ապաշուեն որպէս գայլն և շատ ձեռն արկեն ի գործ և ի բան որ չէ իւրեանց նման՝ պաշտաճ և անկանին ի նեղութիւն [7, էջեր 18-19]:

Նշենք, որ դարձվածքների գործածությունն այս առակում մեծապես օգնել է խոսքը պատկերավոր և տպավորիչ դարձնելուն, ինչպես՝ կոծէր գանձն, անկանին ի նեղութիւն, մի բերան գոչեաց և այլն:

Նկատենք, որ Այգեկցու առակներում հանդիպում են նաև միջնադարյան առակագրության համար անսովոր այլաբանական կերպարներ, ինչպես, օրինակ՝ վերը բերված առակում. գայլը փաստորեն խաբված իմաստուն մարդու կերպար է, իսկ գառը՝ խորամանկ:

Հանրահայտ է, որ առակներն առանց այլաբերության անհնարին է պատկերացնել: Այգեկցին գործածել է ինչպես առակների համար տիպական այլաբերական կերպարներ, այնպես էլ առանձին դեպքերում խոսքն առավել տպավորիչ դարձնելու նպատակով մոգական հատկանիշներով այլաբանական կերպարներ է հորինել, օրինակ, «Օովային գագան եւ անուշահոտ բերանն» առակում պատմվում է քաղցած ժամանակ անուշահոտությամբ դեպի իրեն գրավող ծովային կենդանու մասին, այսպես, *Գագան մի կայ ի ծովն, յորժամ քաղցենայ, բանա զբերան եւ հոտ անուշ գա ի բերանէն, եւ գան ձկունք եւ մտանեն ի բերան նորայ, եւ նայ փակէ զբերան իւր. եւ այն է կերակուր նորայ [7, էջ 8]:*

Հետաքրքրական ենք համարում նաև առակներում գործածված հեզանքը՝ որպես պատկերավորման միջոց, մանավանդ որ Այգեկցու առակներն ասքի են ընկնում նուրբ հումորով, առանձին դեպքերում ծաղրով, որով ևս գրավում է ունկնդրի համակրանքը, օրինակ, «Առիծ հիւանդացեալ և էշ առանց սրտից և ականջից» առակում նուրբ հումորով է ներկայացվում էշին համոզելու պահը. *հաւատաց էշն և եկ ի համբուրել զառիծն. և կամէր առիծն խեղդել զնա. և էշն փախաւ. և հասեալ նմայ աղուէսն և ասէ. ընդէ՞ր փաղչիս, և ասէ էշն. ցաւեցոյց ի համբուրելն զփողոցս իմ. և ասէ աղուէսն. այն ի սաստիկ սիրոյն է [7, էջեր 5-6]:* Մեկ այլ առակում մեջբերվում է գամփոփց հալածված մենակյացի զոջումը, որը գերանկեղծությամբ հանդերձ հարուցում է ընթերցողի ժպիտը: Օրինակ՝ *Տէր իմ եւ Աստուած իմ, բազում ժամանակ է, որ ոչ երկեայ եւ ոչ զարհուրեցայ ի քէն՝ ի սպառնալեաց եւ ի տանջանաց դժոխոց և այս ար ի գամբո շանէն վախեցայ եւ երկեայ և փախուցեալ ոչ կարացի շնալ [7, էջ 9]:* Անշուշտ, այս մոտեցումը միտված է անկաշկանդ և ուրախ տրամադրություն ստեղծելուն, որը նպաստելու է առակի դաստիարակչական իմաստն ավելի համոզիչ և դյուրընկալ դարձնելուն:

Հիրավի ողիսնայան հնարամտությամբ և մտքի ճարպկությամբ է հյուսված «Միմոս զմի և վաճառական» առակը, երբ գայթակղության ցանցն ընկած վաճառականին միմոսը ասում է իր անունը՝ Զիս, ապա որդու՝ Զերդքանզիս, և կնոջ՝ Այլառակքանզիս անունները: Ապա արդեն թալանված և խաբված վաճառականը, տալով միմոսի՝ իրեն ասված անունները, հայտնվում է ծիծաղելի վիճակում:

Առանձին դեպքերում հեղինակը ստեղծում է հայտնի առածի իր տարբերակը, ինչպես «Նետ և գերան» առակում գործածում է *արեղ եւ ձեռքովդ, քաշիր հոգովդ* առա-

ծին համարժեք բանաձևային արտահայտություն. *զարարեալ ձեռացս կերիցէ բերանս* [7, էջ 123]: Մեկ այլ՝ «Այր մի և լեզուանի կին» առակում ևս հանդիպում ենք առածի արժեք ունեցող բանաձևի. *լաւ է բնակել յանապատի, քան ընդ կնոջ անզգամի* [7, էջ 133]: Մեկ այլ դեպքում օգտվում է Աստվածաշունչ մատյանի իմաստնախոսություններից. «Որպէս ասէ Դաւիթ մարգարէն՝ թէ փորեցին առաջի իմ խորխորատ և անկան ինքեանք ի նոյն» [7, էջ 142]: Կամ՝ «Հրամայէ Աւետարանն, թէ մի՛ դատիք և ոչ դատիցիք և ոչ պատժիցիք» [7, էջ 142]: Փաստորեն, հեղինակը առաջնորդվել է կաղապարով և չի կաշկանդվել բովանդակային սահմանափակումով, ստեղծագործաբար է մոտեցել տարբեր աղբյուրներից արդեն հայտնի իմաստնախոսություններին, բանաձևային արժեք ունեցող արտահայտություններին, որն էլ նպաստել է խոսքի արտահայտչականությանը:

Գույների խտացում ենք տեսնում առակներում, երբ խոսքը վերաբերում է արդարությանը, օրինակ՝ «Աղքատ մսախորով եւ արծիւ» առակում տեսնում ենք, թե ինչպես աղքատին գրկողը կորցնում է ամեն ինչ. *Տարաւ արծիւն զմիսն եւ եղ ի բոյն իւր առաջի ձագուց իւրոց եւ ինքն զնաց: Եւ կած մի փակեալ էր ի միսն, այրեց զբունն եւ զձագս արծրւին* [7, էջ 13]:

Գեղարվեստական արժեքով և գրավչությամբ այքի են ընկնում նաև վերնագրերը, որոնք միանգամից գրավում են ընթերցողի կամ ունկնդրի ուշադրությունը: Դրանք դիպուկ են, հաճախ մակդիրներով զուգորդված, ինչպես, օրինակ՝ *Մսախորով աղքատ, Արջ ձմեռնանինջ, Իմաստուն աւագէշ, Փողահար գայլ, Օտարափետուր ճայեկ, Միմոս Ջիս և վաճառական, Թագաւոր և այր զնեալ յեղս* և այլն: Նկատենք, որ վերնագրերում ևս խոսքն առավել հավաստի դարձնելու նպատակով գործածում է տեղանուններ, ինչպես՝ Մեծանուն Խաչենացի եւ որդին՝ քահանա քրիստոսատես: Ընդ որում, *քրիստոսատես* բառը վավերացված չէ ո՛չ Նոր բառգիրք հայկազյան լեզվի, ո՛չ էլ Միջին հայերենի բառարաններում:

Բուն տեքստում ավելի մանրամասն նշում է. «Ահայ ոմն փառայւորգուն էր ի Վերին Խաչենք . եւ որդի նորա ուսեալ եղև քահանա սուրբ» [7, էջ 47]:

Մի շարք դեպքերում խոսքն առավել ազդեցիկ դարձնելու համար գործածում է այնպիսի բառեր և բառակապակցություններ, որոնց հեղինակը կարող ենք համարել հենց Այգեկցուն, քանի որ Նոր հայկազյան և Միջին հայերենի բառարաններում վկայված չեն, օրինակ՝ *էշառյուծ - իշառյուծ* «գայ ահայ նոր զարմանալի գազան մի, որ կռչի իշառյուծ» [7, էջ 17], *հայրենակորուստ* - «վայ քեզ, ժառանգ անմիտ և հայրենայկորուստ» [7, էջ 40], *հարեալ զփողն - ազդարարել, հայտարարել* իմաստով, ինչպես՝ «Իմաստուն բժիշկ մի ի քաղաք մի հռչակաւոր և *հարեալ զփողն* իւր եւ ժողովեցան բազումք առ նայ, և նա ասէր բարձրայգոյն ձայնիւ, թե գիտեմ ես զպատճառս ամենայն ցաւոց» [7, էջ 32], *քրիստոսատես* - «Մեծանուն Խաչենացի եւ որդին՝ քահանա քրիստոսատես» [7, էջ 47], *քիթահատ* - «ետես այր մի ճաղատ և միայկանի և քիթայիատ և խուլ» [7, էջ 53]:

Հարկ ենք համարում պատկերավորման միջոցների շարքում անդրադառնալ նաև Այգեկցու ստեղծած բառերին, քանի որ դրանք հանդիսանում են հեղինակի լեզվամտածողության անմիջական արտահայտիչը, որով էլ մեծապես պայմանավորված են նաև նրա խոսքի յուրօրինակությունը և արտահայտչականությունը:

Անդրադառնալով հեղինակի գործածած մակդիրներին՝ կարող ենք ասել, որ սրանք ևս կրում են հեղինակի աշխարհընկալման կնիքը, ինչպես՝ վարսավոր ծառ [7, էջ 19], ժառանգ անմիտ և հայրենայկորուստ, քահանա քրիստոսատես [7, էջ 47], գարշելի ձայներգ [7, էջ 131], դև այլակերպ և դժնի սևադեմ [7, էջ 136], լույս երեսդ, գայդ ծովաչերդ [7, էջ 137], հրեշտակքն հրեղեն [7, էջ 138], մատանին աջողութեան [7, էջ 141], իմաստուն մանուկն կարի յոթ աղքատասեր [7, էջ 142]:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Վարդան Այգեկցու առակներում վկայված պատկերավորման միջոցների քննությունը թույլ է տալիս ասել, որ դրանք արտահայտում են հեղինակի անհատական լեզվամտածողությունը, տարբերվող նուրբ հումորը, որոնք միտված են ընթերցողին և ունկնդրին գրավելուն, ուղղորդելուն և նյութը տպավորիչ դարձնելուն:

Հեղինակի անհատականությունը դրսևորվել է նաև բառաստեղծման ասպարեզում. ցանկալի միտքն առավել տպավորիչ դարձնելու նպատակով հեղինակը ստեղծել է մի շարք բառեր, որոնցից մի քանիսը՝ Նոր հայկազյան և Միջին հայերենի բառարաններում վկայված չեն:

Ամփոփելով մեր խոսքը՝ կարող ենք ասել, որ Վ. Այգեկցին, առաջնորդվելով կադապարով և չկաշկանդվելով բովանդակային սահմանափակումով, ստեղծագործաբար է մոտեցել տարբեր աղբյուրներից բխող իմաստնախոսություններին, բանաձևային արժեք ունեցող արտահայտություններին, որն էլ նպաստել է խոսքի արտահայտչականությանը:

Գ ր ա կ ա ն ո լ յ ո ն

1. Արեղյան Մ. *Երկեր*: Հ. Դ: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1970: 623 էջ:
2. Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան*: Հ. I-IV: Երևան: ԵՀ հրատ. 1971-1979: 2705 էջ:
3. Հայ եկեղեցու հայրեր, *Է, Վարդան Այգեկցի*: Ա. *Խրատ քահանաներին և ժողովրդին*: Բ. Խրատներ: Ս. Էջմիածին: 2008: Մայր պառո Ս.Էջմիածնի հրատ.: 288 էջ:
4. *Հայոց լեզվի պատմական քերականություն*: Հ. II: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1975: 382 էջ:
5. Ղազարյան Ս. *Հայոց լեզվի համառոտ պատմություն*: Երևան: ԵՀ հրատ.: 1954: 472 էջ:
6. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ. *Միջին հայերենի բառարան*: Հ. Ա, Բ: Երևան: ԵՀ հրատ.: 1987, 1992: 841 էջ:
7. Մառ Ն. *Ժողովածոյք ասակաց Վարդանայ Նիւթք առ ի պատմութիւն միջին դարուց դպրութեան հայերենի*: Բ մաս: Բնագիր: Ս. Պետերբուրգ: Տպարան Ի. Ն. Սկորոխոդովու: ՌՅԽԳ -1894: 374 էջ:
8. *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*: Հ. Ա, Բ: Երևան: ԵՀ հրատ.: 1979-1981: 2235 էջ:
9. Պատմա-բանասիրական հանդես: Ա. Դորոխանյան: *Սեն-Մարտենը Վարդան Այգեկցու առակների թարգմանիչ*: 138-144 էջեր:

References

1. Abeghan M., Creations [Erker]. v. D., Erevan: Publishing House of the USSR Academy of Sciences. 1970. 623p. (in Armenian)
2. Acharyan H., Armenian Etymological Dictionary [Hayeren armatakan bararan], v. I-IV, 1971-1979. 2705 p. (in Armenian)

3. Fathers of the Armenian Church, E. Vardan Aygektsi, A. Khrat to the priests and the people, B. Khratner [*Hay ekeghecu hayrer, E, Vardan Aygekci, A. Khrat qahananerin ev shoghovrdin*], S. Etchmiadzin, 2008, Mother See Holy Etchmiadzin Publishing House. 288 p.. (in Armenian)
4. Historical grammar of the Armenian language. 1975. [*Hayoc lezvi patmakan qerakanutyun*], v. II, Yerevan. Publishing House of the USSR AS. 382 p.. (in Armenian)
5. Ghazaryan S. A Brief History of the Armenian Language [*Hayots lezvi hamarot patmutyun*], Yerevan, 1954. YU Publishing House. 472 p.. (in Armenian)
6. Ghazaryan R., Avetisyan H. Dictionary of Middle Armenian [*Mijin hayereni bararan*], Vol. A, B, Yerevan, 1987, YU Publishing House. 1992. 841 p..(in Armenian)
7. Mar N., Collection of proverbs by Vardan, Material for the history of school Armenian from the Middle Ages [*Zhoghvatsoy arakats Vardanay Aygekcu arr i patmut'wn mijin daruts dprutean hayereni*], part 2, Original, S. Petersburg, printing house I. N. Skorokhodovu. 1894, 374 p.. (in Armenian)
8. A new dictionary of the Haikazian language [*Nor bargirk haykazean lezui*], vol. A, B Yerevan, YU Publishing House. 1979-1981. 2235 pp. (in Armenian)
9. Historical-philological magazine, Saint-Martin the translator of Vardan Aygektsu's fables [*Vardan Aygektsu arrakneri targmanich*], A. Dolukhanyan, 138-144 pp.. (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: 17.03.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 02.05.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.06.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Աստղիկ Հրաչի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու, Շիրակի պետական համալսարանի հայոց լեզվի և գրակ. ամբիոնի դոցենտ, Գյումրի, ՀՀ
Էլ. հասցե՝ a_hayrapetyan@list.ru, <https://orcid.org/0009-0009-5944-3440>

Astghik Hrach HAYRAPETYAN: PhD in Philology,
Assistant Professor of the Shirak State University, Gyumri, RA,
e-mail: a_hayrapetyan@list.ru, <https://orcid.org/0009-0009-5944-3440>

Астхик Грачевна АЙРАПЕТЯН: кандидат филол. наук, доцент кафедры арм. языка и литературы Ширакского государственного университета, Гюмри, РА,
эл.адрес: a_hayrapetyan@list.ru, <https://orcid.org/0009-0009-5944-3440>

ՅԻՇԱՏԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ

2022թ. դեկտեմբերի 4-ին կարճատև ծանր հիվանդությունից հետո կյանքից հեռացավ Գյումրու երևելի ու լուսավոր մտավորականներից մեկը՝ Համազասպ Հակոբի Խաչատրյանը: Կարծես երեկ էր, երբ հարազատներով և ընկերներով նշում էինք մեր



սիրելի Համազասպի (Համիկի) 70-ամյակը և հիմա ցավից կարկամած չենք հավատում, որ նրա երկրային կյանքն այդպես արագ ու հանկարծակի պիտի ընդհատվեր: Կյանք ու լույս ճառագող, անարձաթ հայրողի ու գործին անմնացորդ նվիրված, լայնախոհ գիտնական, անդավաճան ընկեր ու ընտանիքի բաղձալի հայր, մեր բոլորի Համիկը այլևս մեզ հետ չէ:

Համազասպ Խաչատրյանի ապրած բեղմնավոր կյանքը անկրկնելի մարդու և պրպտող գիտնականի անցած ուղու առհավատչյան է: Հայաստանյան և օտարերկրյա գիտական շրջանակներում մեծ հեղինակություն վայելող Համազասպը աչքի էր ընկնում իր անբռնագրես ու անկրկնելի

կեցվածքով և հնագիտությանը ֆանատիկ նվիրվածությամբ: Շիրակի հնագույն և միջնադարյան մշակութային հուշարձանների հայտնաբերման, դրանց խոր, մանրակրկիտ գիտական ուսումնասիրության և հանրահռչակման հարցը Հ. Խաչատրյան գիտնականի գերխնդիրն էր: Եվ բնավ էլ պատահական չէր, որ 1994 և 1996թթ. Համազասպ Խաչատրյանի ջանքերով աղետի վերքերը չապաքինած Գյումրիում անցկացվեցին Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված առաջին հանրապետական գիտաժողովները, որոնք հետագայում դարձան ավանդական՝ ստանալով միջազգային կարգավիճակ: Գաղափարակից ընկերների ու նրա համառ ջանքերով Գյումրիում 1997թ. ստեղծվեց ՀՀ մայրաքաղաքից դուրս առաջին ակադեմիական հայագիտական կառույցը՝ Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը:

Համազասպ Հակոբի Խաչատրյանը ծնվել է 1952 թ. հուլիսի 15-ին Լենինականում: 1959-1969 թթ. սովորել և ավարտել է Լենինականի թիվ 19 միջնակարգ դպրոցը,

1971-1972 թթ. սովորել է Լենինականի Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում:

1972-1976 թթ. սովորել և ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-աշխարհագրական ֆակուլտետի պատմա-հասարակագիտական բաժինը:

1976-1977 թթ. աշխատում էր Դիլիջանի թիվ 3 միջնակարգ դպրոցում որպես պատմության ուսուցիչ: Ապա մեկ տարի խորհրդային բանակում ծառայելուց հետո 1978-1979 թթ. աշխատանքի է անցնում Լենինականի թեթև արդյունաբերական տեխնիկումում որպես ուսուցիչ, իսկ 1980-1986 թթ.՝ ՆԳ Լենինականի վարչության անչափահասության գործերի տեսչությունում էր որպես տեսուչ:

Հ. Խաչատրյանի կյանքի հետագա երեսունհինգ տարիները անշրջելիորեն կապված են Շիրակի երկրագիտական թանգարանի հետ. 1987-2017թթ. նա թանգարանի տնօրենն էր, ապա մինչև իր կյանքի ավարտը՝ թանգարանի ամենահեղինակավոր գիտաշխատողն ու գլխավոր ֆոնդապահը: Երկրաշարժին զոհ գնաց երիտասարդ կինը, որբացավ մանկահասակ դուստրը: Թվում էր՝ ծանրագույն հարվածը թևաթափ կանի նրան, ինչպես շատերին: Սակայն ուժերի գերլարումով հաղթեց ցավին, որը տեղի տվեց, նահանջեց, բայց չհեռացավ ու պիտի ամեն աստծո օր ցկյանս անգթորեն ցավեցներ հոգին: Հասկացավ, որ միայն աշխատանքի, ամենժամյա սիրած զբաղմունքի մեջ է հոգու ցավերի խլացումը: Նա կ'ամ առավոտից մինչև ուշ մայրամուտ պեղավայրերում էր՝ սարերում, ձորերի մեջ, դաշտերում, կ'ամ թանգարանում՝ աշխատասեղանի առաջ՝ տարված պեղածո նյութերի ուսումնասիրությամբ:

1997 թ.-ից համատեղությամբ աշխատել սկսեց ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնում նախ՝ որպես գիտքարտուղար, ապա՝ ավագ գիտաշխատող՝ հմտորեն կազմակերպելով կենտրոնի հնագիտության բաժնի աշխատանքները ու փայլուն ղեկավարելով Շիրակի հնագիտական հուշարձաններին վերաբերող մի քանի գիտահետազոտական թեմաներ:

1989 թ.-ից անմնացորդ նվիրումով ղեկավարում էր Շիրակի երկրագիտական թանգարանի, ապա նաև ԳԱԱ Շիրակի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի (1997-ից) ամենամյա հնագիտական արշավախմբերը, որոնց արդյունավետ գործունեությամբ մարզի տարածքում գտնվել են ավելի քան 30 նորահայտ հնագիտական հուշարձաններ, որոնց մի մասը միայն հասցրեց պեղել իր կենդանության օրոք:

1996 թվականին Հ.Խաչատրյանը նախաձեռնեց «Հին Հայաստանի գանձերը, ակունքներից մինչև քրիստոնեություն» մեծածավալ ցուցահանդեսը, որը Ֆրանսիայում, մասնավորապես՝ Նանտում, ապա Լիոնում (1997) հսկայական հաջողություն ունեցավ՝ իսկական հեղաշրջում առաջացնելով օտարների՝ մեր նյութական ու հոգևոր մշակույթի և պատմության մասին կիսառ-պռատ պատկերացումներում, արժանիորեն հանրա-հռչակելով Շիրակի հնագիտությունը եվրոպական գիտական շրջանակներում:

1998-2002 թթ. մասնակցում էր հայ-ֆրանսիական համատեղ հնագիտական արշավախմբի աշխատանքներին Բենիամինում, Լուսակերտում և Արզնիում:

2004-2012 թթ. ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի թեմատիկ ծրագրով ղեկավարում էր Հայկաձորի հնագիտական արշավախմբը:

2009-2012 թթ. նրան վստահվեց Շիրակի երկրագիտական թանգարանի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Ֆրանսիայի Էքսան Պրովանսի համալսարանի համատեղ հնագիտական արշավախմբի ղեկավարությունը:

2010 թվականից մինչև 2022թ. դեկտեմբերի 4-ը Խաչատրյանը Շիրակի երկրագիտական թանգարանի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հարավային Մաքսոնիայի հուշարձանների պահպանության և հնագիտական ծառայության Հալլեի Մարտին Լյութեր համալսարանի միացյալ հնագիտական արշավախմբի ղեկավարն էր:

2007-2014 թթ. ֆրանսիացի հատնի հայազետ Ժան Պիեռ Մահեի հետ ղեկավարում էր Շիրակի երկրագիտական թանգարանի և Անիի ֆրանսիական հնագիտական համատեղ արշավախմբի աշխատանքները Շիրակում:

2004-2019 թթ. նա նաև ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի հետազոտական ծրագրով Մեծ Սեպասարի հնագիտական արշավախմբի աշխատանքի մասնակից էր, իսկ 2020-22 թթ. ղեկավարում է այն:

1987-2017թթ.՝ նրա ղեկավարման երեք տասնամյակներում, Երկրագիտական թանգարանի հիմնական ֆոնդի ցուցանմուշների քանակը եռապատկվեց՝ 8157-ից հասնելով 23115-ի:

Հ. Խաչատրյանը հեղինակ է շուրջ 70 գիտական հոդվածների, որոնց մի մասը հրատարակվել է արտասահմանյան հայտնի գիտական ամսագրերում: Ունի հրատարակած մեկ մենագրություն:

Համազասպ Խաչատրյանի գիտական վաստակը նշանակալի ներդրում է հայոց հնագույն մշակութային ժառանգության ուսումնասիրության գործում: Դրասխանակերտի, Հայկաձորի, Մեծ Սեպասարի և շիրակյան այլ հնագիտական հուշարձանների պեղումների արդյունքում հայտնաբերված ու մշակված մեծարժեք գտածոները իսկական գյուտեր են, որոնք ակադեմիական լրջախոհ գիտնական Խաչատրյանի հետազոտությունների և հրապարակումների շնորհիվ իրենց արժանի տեղն են զբաղեցնում հայոց բազմահազարամյա պատմության ու մշակութային ժառանգության անդաստանում: Համազասպ Խաչատրյանի ջանքերի շնորհիվ եվրոպական գիտական շրջանակներին հասանելի դարձան մեր ժողովրդի հարուստ մշակութային արժեքները, և պատահական չէր, որ բազմաթիվ արտերկրյա նշանավոր գիտական կենտրոնների ներկայացուցիչներ և արշավախմբեր անմիջական մասնակցություն ունեցան Շիրակի հնագիտական ուսումնասիրության գործին:

Չկա այլևս մեր Համիկը, մեր պարզ ու առինքնող, մեր բազմագիտուն ու շիտակ, մեր ամենահաս ու օգնական, մեր սիրելի ու անփոխարինելի ընկերը: Թող Տերը լուսավորի հոգիդ, մեր եղբայր ու ընկեր, քո լույսն ու սերը միշտ կմնան մեր հոգում:

**Գ. ԱՂԱՆՅԱՆ,
Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Ա Չ Գ Ա Բ Ա Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Գալստյան Մ. Վ., Հակոբյան Գ. Լ.

Հայաստանից արտագաղթը արևմտյան երկրներ.
Սփյուռքի միգրացիոն ցանցի դերակատարությունը5

Բազեյան Կ. Ռ.

Շիրակի ազգագրական համայնապատկերը Ավ. Իսահակյանի «Ուստա Կարո» վեպում.....19

Գևորգյան Լ. Պ.

Պատմազգագրական թանգարանի որոշ գործառնություններ.....30

Անզեղուշ Լ. Մ.

ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների նկատմամբ
իրականացվող լեզվական քաղաքականության հարցի շուրջ.....42

Բոյաջյան Ա. Գ.

Շիրակի մարզի սպասարկման ոլորտի զարգացման ուղղությունները
և առանձնահատկությունները.....53

Բ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Պետրոսյան Ս. Գ.

Եռյակ դիցանուններ հայկական մանկական խաղերի գուշակման և հաշվերգի բանաձևերում.....64

Հովհաննիսյան Ռ. Պ.

«Տղա Դավիթի և աղջիկ Խանդուխի հեքիաթի» լեզվաոճական քննություն.....75

Ղեկեղյան Լ. Խ.

Շիրակի ասույթաբանական բանահյուսությունը86

Հ Ն Ա Գ Ի Տ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ավագյան Ի. Է.

Գյումրու «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանում
պահպանվող Կարմրաքարի գանձի շուրջ.....100

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Հայրապետյան Ա. Ս.

Բանվոր դասակարգի ձևավորման սոցիալ-տնտեսական պայմանները
Արևելյան Հայաստանում XIX դ. վերջին քառորդին և XX դ. սկզբին
(Ալեքսանդրապոլի գավառի օրինակով)115

Աղուպով Ա.Ա., Նահատակյան Դ. Ս., Հակոբյան Ս. Պ.

Ճակք գավառի պատմաճարտարապետական հուշարձանների
տեղագրության և արդի վիճակի շուրջ.....130

Հովհաննիսյան Ա. Հ.

ԱՄՆ-ի և Պաղեստինյան Ինքնավարության հարաբերությունները 1990-ական թթ.....143

Հայրապետյան Ա. Ս.

«Ժողովրդավարության խթանման» ԱՄՆ-ի քաղաքականության
առանձնահատկությունները Չորջ Բուշ կրտսերի օրոք.....153

Ճ Ա Ր Տ Ա Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նահատակյան Դ. Ս., Ակոպով Ա. Ա., Գրիգորյան Ա. Ա.

Ասիական վանական համալիրը165

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մատիկյան Հ. Հ., Սահակյան Ս. Հ.

Բանաստեղծական բնագրերի թարգմանության առանձնահատկությունները
(Հ. Թումանյանի քառյակների օրինակով).....177

Խաչատրյան Լ. Մ.

Լիակատար արմատակրկնությունը հինգերորդ դարի հայերենում
որպես բարձր ոճի դրսևորում (ըստ Աստվածաշնչի թարգմանական գրքերի).....192

Գալստյան Ն. Բ.

Ազգային ինքնության պահպանման դրսևորումը Քերոլ Էդգարյանի
«Եփրատի մակընթացությունը» վեպում203

Հայրապետյան Ա. Հ.

Վարդան Այգեկցու առակների պատկերավորման միջոցների գեղարվեստական արժեքը.....212

Հ Ր Ա Ժ Ե Շ Տ Ը Ն Վ Ե Ր Ո Ջ Ը221

Содержание

ЭТНОЛОГИЯ

- Галстян М. В., Акопян Г. Л.*
Эмиграция из Армении в западные страны: роль миграционной сети диаспоры.....5
- Базеян К. Р.*
Этнографические зарисовки Ширака в романе Ав. Исаакяна "Уста Каро".....19
- Геворгян Л. П.*
Некоторые функции историко-этнографического музея.....30
- Ангелуш Л. М.*
О вопросе языковой политики РА, осуществляемой в отношении национальных меньшинств.....42
- Бояджян А. Г.*
Особенности и направления развития сферы услуг Ширакской области.....53

ФОЛЬКЛОРИСТИКА

- Петросян С. Г.*
Триада теонимов в формулах гадания и считалки в армянских детских играх.....64
- Оганнисян Р. П.*
Лингво-стилистический анализ "Сказания о Давиде молодце и Хандут ханум".....75
- Креджян Л. Х.*
Паремический фольклор Ширака.....86

АРХЕОЛОГИЯ

- Авагян И. Э.*
О кладе из Кармракара хранившемся в фондах историко-культурного музея-заповедника «Кумайри».....100

ИСТОРИЯ

- Айрапетян А. С.*
Социально-экономические условия формирования рабочего класса в Восточной Армении в последней четверти XIX в. и начале XX в. (на примере Александропольского уезда)115
- Акопов А. А., Наатакян Д. С., Акопян С. П.*
О расположении и современном состоянии исторических и архитектурных памятников провинции Чакк.....130
- Оганнисян А. Г.*
Отношения США и Палестинской автономии в 1990-гг.....143
- Айрапетян А. С.*
Особенности американской политики «продвижения демократии» при Джордже Буше-младшем.....153

АРХИТЕКТУРА

Наатакян Д. С., Аркадий А. А., Григорян А. А.
Монастырский комплекс Аспак.....165

ФИЛОЛОГИЯ

Матикян А. Г., Саакян С. А.
Особенности стихотворного перевода (на материале четверостиший О. Туманяна).....177

Хачатрян Л. М.
Полная редупликация в пятом веке армянского языка как проявление высокого стиля
(на основе переведенных книг Библии).....192

Галстян Н. Б.
Проявление сохранения национальной
идентичности в романе Кэрл Эдгариан "Возвышение Евфрата"203

Айрапетян А. Г.
Художественная ценность образно-выразительных фигур притч Вардана Айгекци.....212

Прощание друга221

Contents

ETHNOLOGY

- Galstyan M. V., Hakobyan G. L.*
Emigration from Armenia to Western Countries: the Role of the Diaspora Migration Networks.....5
- Bazeyan K. R.*
The Ethnographic Overview of Shirak in Av. Isahakyan's Novel "Usta Karo".....19
- Gevorgyan L. P.*
Some Functions of the Historical and Ethnographic Museum.....30
- Angelush L. M.*
On the Issue of the Language Policy of the RA Implemented in Relation to National Minorities.....42
- Boyajyan A. G.*
Characteristics of the Development of the Service Sector of the Shirak Region.....53

FOLKLORE STUDIES

- Petrosyan S. G.*
Triad of Theonyms in Formula of Divination and Count-Out Rhymes
in Armenian Children's Games.....64
- Hovhannisyan R. P.*
Linguo-Stylistic Analysis of "The Tale of Davit the Lad and Khandoot the Lass".....75
- Ghrejyan L. Kh.*
Paremiological Folklore of Shirak.....86

ARCHAEOLOGY

- Avagyan I. E.*
About the Treasure of Karmraqr Stored in the Historical and Cultural Museum-Preserve «Kumayri».....100

HISTORY

- Hayrapetyan A. S.*
The Social-Economic Conditions of the Formation of the Working Class in
Eastern Armenia in the Late XIXth Century – Early XXth Century
(on the example of Alexandropol uezd)115
- Akopov A. A., Nahatkyan D. S., Hakobyan S. P.*
On the Location and Current Condition of the
Historical and Architectural Monuments of Chakq Province.....130
- Hovhannisyan A. H.*
The Relations Between USA and Palestinian Authority in 1990s.....143
- Hayrapetyan A. S.*
Peculiarities of the US Policy of "Democracy Promotion" Under George W. Bush.....153

ARCHITECTURE

David S. Nahatkyan, Arkadi A. Akopov, Ani A. Grigoryan
Monastery Complex of Aspak.....165

PHILOLOGY

Matikyan H. H., Sahakyan S. H.
Peculiarities of Verse Translation (with Special Reference to H. Toumanyán's Quatrains).....177

Khachatryan L. M.
Absolute Reduplication in the Fifth Century Armenian as a Manifestation of High Style
(According to Bible translation books).....192

Galstyan N. B.
The Manifestation of National Identity Preservation in
Carol Edgarian's Novel "Rise The Euphtates ".....203

Hayrapetyan A. H.
The Aesthetic Value of the Expressive Means in the Fables of Vardan Aigektsi.....212

Farewell to Our Friend.....221

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 1 (26) 2023

*Republic of Armenia
National Academy of Sciences
Shirak Centre for Armenological Studies*

SCIENTIFIC WORKS. 1 (26) 2023

*Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований*

НАУЧНЫЕ ТРУДЫ. 1 (26) 2023

Խմբագրումը և սրբագրումը՝ Ռ. Հովհաննիսյանի, Հ. Մատիկյանի, Ա. Ստուշյանի
Համակարգչային և գեղարվեստական ձևավորումը՝ Լ. Կոստանյանի

Ստորագրված է տպագրության՝ 10. 06. 2023թ.

Ծավալը՝ 230 էջ, թուղթը՝ A4, տպաքանակը՝ 120, գինը՝ պայմանագրային

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի-5^ա
<http://shirakcenter.sci.am/>. E-mail: scient.works@shirakcenter.sci.am